ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՕՐԵՐ ՏԱՐԻՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 1999

ԴՏՀ 891.981-1 ՄԱՐՈՒԹՅԱՆ
ԳՄԴ 84Հ7-5
Մ 399

ՄԱՐՈՒԹՅԱՆ Տ.
Մ 399 «ՕՐԵՐ ՏԱՐԻՆԵՐ»: Բանաստեղծ.
Տ. Մարության, - Եր.: «Արտագերս», 1999, 305 էջ:

Իմ բարերարը մեծահարուստ չէ,
Պարզապես բարի, խելացի մի կին,
Զոհ է մատուցում հայրենի հերկին…
Իմ բարերարը մեծահարուստ չէ:

Գիրքը նախապատրաստել են հրատարակության Հարություն և Տաթևիկ Մարությանները:

Մ	4702080201	99 թ.
	0038 (01) 99	

ԳՄԴ 84Հ7-5

ՀԱՃԵԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԻՐԵԼԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ԵՎ ԻՐ ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԵՏ

Այս անհանգիստ աշխարհում հաճախ շատ ծանր է անցել բարձր ձիրքերով օժտված ստեղծագործող մարդկանց ճակատագիրը, մանավանդ մեր խառնակված ժամանակի մոլեգնած ցնցումների մեջ շատերը շաղվել-շփոթվել են ու կայծկլտալով անցել, գնացել:

Բայց եղել են նաև մեծատաղանդ, տոկուն, անզիջող մարդիկ, որոնց ոչինչ, ոչ ոք խանգարել չի կարողացել: Եվ նրանք՝ տասնապատկած իրենց ուժերը, մեծ բարիքներ են ստեղծել ու պարգևել իրենց հայրենիքին ու ժողովրդին: Նման մեծագործ մարդկանց շնորհիվ է լուսարձակելով ընթացել Հայոց պատմությունը: Եվ մեր հանճարածին ժողովրդի սրբազան անունները գալիս ու գործում են մինչև այս օրը: Ահա այս հանճարեղ սերունդների սրբազան գործերը շարունակողներից մեկը և իր անձնական փառահեղ վաստակը մեզ նվիրողներից մեկն է մեր սիրելի վաստակաշատ ճարտարապետ Տիրան Մարությանը. նա շատ գնահատված հեղինակն է մեր բոլոր մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայանների ճարտարապետական նախագծերի, բացի երկուսից. նախագծել և ստեղծել է բազմաթիվ հրաշալի աղբյուր-հուշարձաններ, գծել ու մշակել է տասնյակ նշանավոր բնակավայրերի հատակագծերը:

Եվ ահա գրում են մասնագետները՝ բարձր գնահատված այս աշխատանքներում, բազմաթիվ, բազմազան հրաշագեղ գործերում ճարտարապետը հանդես է բերել իր գործի խորը իմացություն, ինքնուրույնություն, բարձր ճաշակ, գեղարվեստական մտքի ճկունություն: Եվ այս ամենը բարձր է գնահատվել շատ ու շատ նաև արտասահմանյան մասնագետների կողմից: Ճարտարապետների համաշխարհային բիենալեում ստացել է շատ նշանավոր պատվաբեր պարգև՝ հատուկ դիպլոմ ու մեծ մեդալ: Տիրան Մարությանի այս մեծ հաջողությունների հիմքը դրվել է իր մեծ ուսուցիչ Ալեքսանդր Թամանյանի սիրելի աշակերտը եղած օրերից: Եվ ահա արտասահմանյան մեծ պատվիրակության ղեկավարներից Վիլլի Տեգետոֆը Երևանից մեկնելիս հայտարարել է. «Ամբողջ կյանքումս ես Գյումուշի նման գեղեցիկ էլեկտրակայան չէի տեսել»:

Եվ այսքան մեծատաղանդ գործերի հետ, բազում-բազմաձև դժվար ստեղծագործական աշխատանքներին զուգահեռ սիրելի, հարգելի Տիրան Մարությանը ամբողջ կյանքի ընթացքում, վաղ երիտասարդությունից սկսած, թղթին է հանձնել իր շատ բանաստեղծական հոգու զեղումները, գրել է նաև մի քանի գրքի չափով և բովանդակությամբ լուրջ, խորամուխ

բանաստեղծություններ շատ հաճելի, արժանի մակարդակով, և այդ երկար տարիների ընթացքում (այսօր նա 85 տարեկան է) իր գրական գործերը չի տվել տպագրության. դա իր հոգու հաճույքն է եղել երևի:

Երբ հարգելի Տիրան Մարությանը իր բանաստեղծությունների հսկա թղթապանակը ձեռքին եկավ մեր տուն և ասաց, թե «Այս իմ երկար տարիների բանաստեղծություններն են», ես մի քիչ վախով բացեցի թղթապանակը հենց սկզբից ծանոթանալու գոնե մի քանի բանաստեղծական կտորների հետ, ապա թեթև շուչ քաշեցի և ուրախացած շարունակեցի կարդալ՝ նուրբ, հրաշագեղ բանաստեղծություններ էին և հոգեկան զգացումի ու կատարման կուլտուրայով հրաշալի քառյակներ, ութնյակներ, ինչպես նաև լուրջ, ավելի երկարաշունչ գործեր: Ահա իմ սիրած քառյակներից մեկը՝

Աչքս լիքն է արտասուքով
Էն պղտորված ծովի պես.
Եկա ուրախ, անցա սուգով
Աշուղ Սայաթ-Նովի պես:

Երևի, երբ մարդը բացառիկ խորը մտքի ու տաղանդի տեր է, ինչ գործով էլ զբաղվի, կզգացվի տաղանդը. բայց այստեղ կա նաև շատ բանաստեղծական սիրտ ու հոգի: Ահա և իր խոսքը բանաստեղծությամբ՝

Խոհերս բոլոր ու երազներս
Խոսք ու գիր արած թղթին հանձնեցի…

Զգացվում է, որ յուրաքանչյուր ստեղծագործություն հեղինակի հոգին է ու կյանքը: Մեր սիրելի ու հարգելի մեծավաստակ ճարտարապետի համար պոեզիան հոգու սնունդն և ուրախությունն է եղել, բայց քանի որ իսկական բանաստեղծի անկեղծությամբ է զբաղվել իր համար սրբազան նաև այս գործով՝ նրա ողջ կյանքը հուզաշաղախ գույներով նկարվել է այս ազնիվ ու բնաբուխ պոեզիայում:

Զարմանալի հայի ճակատագիր է այս մարդու ճակատագիրը՝ իր մեծ տաղանդով և շատ աղետներով անցած փոքր աշխարհին նվիրումով: Երևում է, որ մեր սիրելի Տիրան Մարությանի ընտանիքը ևս անցել է աղետներով և նա իր պոեզիայում հաճախ է սրտախորով անդրադառնում իր ընտանիքի ծանր ցնցումներին և իր սերնդի ցավալի ճակատագրին: Նա ծնվել է 1911 թ., Մեծ Եղեռնի ժամանակ 4-5 տարեկան երեխա է եղել, մանկության մեծ մասն անցել է մանկատներում: Թեև Արևմտյան Հայաստանում չի ծնվել, բայց մեկ է. ինչպես շատերին, ահռելի Եղեռնի անողոք ալիքները նրան ևս հասած են եղել Ղարաքիլիսայի (Վանաձոր) և Ջալալօղլու (Ստեփանավան) որբանոցներում ու նա հաճախ անդրադառնում է իր շրջապատի աղետյալների կյանքին, հաճախ սրտակեղեք խոսքերով հիշում է իր մորը՝

Հիշում ես, մերիկ,

Որ այցի եկար մեր որբանոցը
Դաղձով լի տեսար իմ ձեռ ու ծոցը
Հիշում ես, մերիկ:

Կարիք էր, կարիք.
Ինչ անջնջելի սպի է թողել էն տարվա խոցը.
Հիշում ես, մերիկ,
Որ այցի եկար մեր որբանոցը:

Երևի բավական դժվար օրեր է ապրել իր ծանր մանկության ժամանակ անկեղծ, սրտագին բանաստեղծը. նույնիսկ մի բանաստեղծության մեջ շատ հուզող ու տպավորիչ նկարագրել է որբանոցի դպրոցը՝

……
Իսկ դասագիրքը, այդ երազանք էր,
Մի բացված էջին տաս աչք էր նայում.
……
Իսկ դասարանը ցուրտ էր, անկրակ,
Կծկվում էինք, միմյանց ջերմացնում.
Թխպոտ օրերին անլույս, անճրագ,
Մեզ անգիր էին դասը հարցնում:
……
Մոռանում էինք, որ շատ ենք քաղցած:

Իր ժողովրդի ծանր օրերը անջնջելի են մնացել Տիրան Մարությանի հոգու մեջ. նա հաճախ նկարագրում կամ ակնարկում է Եղեռնի ահռելի տեսարանները, հիշեցնում Տեր-Զորի անապատներում տանջամահ արված մարդկանց: Հեղինակը հաճախ է հիշում նաև իր սերնդի սրտամորմոք, աղետալի կյանքը:

Մերոնցից ոչ ոք չծերացավ,
Բոլորն էլ ջահել գնացին…
Մեկին պատերազմը տարավ,
Մյուսին «հենց այնպես» զոհեցին:

Եվ այդպես մեր դարը անցավ,
Ճամփեցի առանձին-առանձին.
Մերոնցից ոչ ոք չծերացավ,
Բոլորն էլ ջահել գնացին:

Նա շատ գեղեցիկ բանաստեղծական պատկերներով, վշտահար հիշում է իր նահատակված սերնդակիցներին՝

Իմ երազներում դուք բոլորդ կաք,

Ճիշտ այնպես, ինչպես օրերում այն վաղ,
Երբ անհոգ էինք, ծիծաղ կար ու խաղ…
Իմ երազներում դուք բոլորդ կաք:

Ինչպես իր ճարտարապետական գործերը ներկայացնելիս շատ-շատերը գովել են նրա բարձր ճաշակը, նրբությունն ու գործի գեղեցկությունը, այստեղ ևս բանաստեղծությունները մեծ մասամբ աչքի են ընկնում իրենց նրբությամբ, ազնվագույն, հուզաշաղ անկեղծությամբ՝

Վաղուց անցած ու հուշ դարձած անուններ,
Հավերժաբար բյուրեղացած սրբորեն.
Թող ձեռքերս ձեզ մեղմորեն օրորեն…
Վաղուց անցած ու հուշ դարձած անուններ:

Ամենաբուխն ու հուզաշաղը նորից մայրերին նվիրված տողերն են՝

Կտրվեց մորս թզբեհի թելը,
Ընկան հատիկներ այս ու այն կողմ,
Չէր էլ նկատել շատ բարակելը՝
Տարիներն էին մաշել անողորմ:

Ընկան հատիկներն այս ու այն կողմ
Իր որդիների, դուստրերի նման.
Թվաց փչում է ցրտաշունչ մի հողմ,
Ու փակող չկա դուռ ու պատուհան:

Իսկական մեր կյանքի պատկերներից է՝ «Ու փակող չկա դուռ ու պատուհան». շատ սրտահույզ տողեր են: Ցրված զավակների տեր մոր վիճակի կատարյալ պատկեր: Բայց ահա իր ամենաթանկ խոստովանությունը՝

Ես թշնամուն գերի չընկա,
Ճակատագիրն ինձ խնայեց,
Բարի աչքով վրաս նայեց…
Ես թշնամուն գերի չընկա:

Ճակատագիրը մեր մեծահարգ Տիրանին ոչ միայն բարի աչքով նայեց, այլև օժտեց մեծ տաղանդով, որով մեր «որբ» տղան դարձավ մեծավաստակ ճարտարապետ և պարգևեց մեր տառապած աշխարհին ամենաբարձր բարիքները՝ էլեկտրական լույս շողարձակող հրաշալի հիդրոկայաններ, հոյաշեն կառույցներ և հիմա էլ հրաշալի պոեզիա:

Գլուխգործոցն իմ ես ավարտել եմ,
Երբ ոգեկոչվել ու վարարել եմ.
Օ, երկնային պահ, օրհնվես հավերժ -
Ծիածան մի վառ լուռ կամարել եմ:

Շատ ծիածաններ եք կամարել, սիրելի մեծավաստակ ճարտարապետ, հիմա էլ ես կուզեի, որ օգնեն բոլորը, որպեսզի Ձեր պոեզիայի լուսավոր տողերը տպագրվեն և հասնեն հայրենիքի գրասեր ընթերցողին: Ձեր պոեզիայի մեջ էլ ամբողջապես լուսարձակում է Ձեր ազնիվ հայրենապաշտ կյանքը, և այդ կյանքը նաև գրական գործերով պիտի ճանաչվի մեր արվեստասեր ժողովրդի կողմից:

Սիրով՝ Մարո Մարգարյան

18.11.1996 թ.

Կյանքից վաղ հեռացած իր սիրելի հարազատների,
բարեկամների ու ընկերների պայծառ
հիշատակին է նվիրում հեղինակը
իր այս գիրքը։

Խոհերս բոլոր ու երազներս
Խոսք ու գիր արած թղթին հանձնեցի,
Պահել, պահպանել, օ՜, թախանձեցի,
Խոհերս բոլոր ու երազներս:
Նրանք ծպտվել, որպես սերերս,
Օ՜, սուրբ անթեղին լույս եղիցի...
Խոհերս բոլոր ու երազներս
Խոսք ու գիր արած թղթին հանձնեցի:

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հարատևում

Իմ հայրենիքը հարատևում է
Գոռ մարտնչումով հանուն գալիքի.
Ժամանակներում մեծ արհավիրքի
Իմ հայրենիքը հարատևում է:
Անդուլ վերելքում ծանր հևում է,
Համընթաց հևքին մեծ տիեզերքի.
Իմ հայրենիքը հարատևում է
Գոռ մարտնչումով հանուն գալիքի:

1995

Հուշիկ

Հիշում եմ՝ ամառ էր, արև էր,
Ու հով էր, ու զով էր Ամբերդի ձորում.
Կատարը ձյունել էր, վերև էր,
Քարափից ոսկելից աղբյուր էր ծորում:

Հնչում էր, թռչում էր առվակը,
Կարկաչը թովիչ էր, հուզիչ էր այնքան.
Ավազ էր, ու պարզ էր հատակը՝
Սրտի պես, հոգու պես, աչքի պես մանկան:

Հիշում եմ, ամեն կողմ ծաղիկ էր,
Կարմիր էր, կապույտ էր, կանաչ ու ճերմակ.
Լի ցողով, լի շողով թերթիկնե՛ր...
Սարումն էլ, ձորումն էլ, սրտումս էլ արձակ:

Հովիվն էլ փչում էր, կանչում էր
Իր սիրած, փայփայած մեղեդին սարի.
Դյութանք էր, ու շունչդ հանգչում էր,
Հովիվն էր, կոթնել էր մի թեքված քարի:

Ու դաշտն էր, փռվել էր, շնչում էր,
Դիմացը Մասիսն էր - երկնասույզ ցնորք.
Աշխարհը հավերժ էր, հնչում էր,
Ու կյանքը անվերջ մի սիրերգ էր անհոգ:

Հիշում եմ, պայծառ էր, կայտառ էր,
Ու անմար, անսպառ շուրջս ծով ծիծաղ.
Անտառ էր, մեր ճամփան անծայր էր՝
Թփուտներ, կաճաններ, առվակներ ծանծաղ:

1937

Վայրէջք

Հիշում եմ, ջինջ Արագածի գագաթն էինք բարձրանում,
Ցածում թողած հանդ ու արոտ, գյուղ ու գյուղակ, շոգ ու տապ.
Թեթև սրտով երգում էինք, թռչում, անցնում ափից-ափ,
Ու անսահման երեկոն էր լուռ տարածվում, թանձրանում:

Հիշում եմ և առավոտը, այնքան մաքուր ու հստակ.
Մենք քրքիջով, անհոգ, անցավ հասանք ճերմակ կատարին,
Ողջունեցինք ջերմ արևին, լուրթ երկնքին, ամպերին,
Անոտնակոխ էն լանջերին՝ հագած զգեստ սպիտակ:

Հիշում եմ և մեր վայրէջքը, վտակները կարկաչուն,
Կանչում էին ամեն կողմից աղբյուրները սառնորակ,
Բուրում էին ծաղիկները, երգում հավքերն անքանակ,
Լցված հույզով, սիրով, սրտով, դառնում էինք դեպի տուն:

1939

* * *

Ձյունով էր ծածկվել շիրիմն Արայի,
Ու գոցվել Մհեր դուռը քարայրի.
Մեծ Դավթից հետո ազգս առանց հայր՝
Որբ էր մնացել, երկիրն ամայի:

Բայց ծագեց ահա նորոգ մի արև,
Ու վերաշինվեց աշխարհը հայոց,
Նա ապրելու է հար ու հարատև՝
Քանի կա անշեջ Արեգակը բոց:

1944

Երևան

Խոր քնի մեջ ես, հայրենի քաղաք,
Չի էլ վրդովում հանգիստդ քամին.
Արթուն են սակայն հենց այս ուշ ժամին
Մի ճարտարապետ ու մի ծեր պահակ:

Մեկը անցնում է ու դառնում մայթով,
Մյուսը անվերջ գծում գլխահակ.
Արթուն են ահա անխոնջ, անվրդով
Մի ճարտարապետ ու մի ծեր պահակ:

1954

* * *

Արարատի ստորոտով,
Տագնապահեծ որոտով,
Հազար ու մի կարոտով
Մայր Արաքսն է անց կենում:

Ու սերունդներ են անցել,
Ծնվել, ապրել, մահացել.
Ո՞վ է հավերժ մնացել...
Եվ արդ մե՛նք ենք անց կենում:

1957

Արաքսը

Արաքսը կիսել դաշտը հայրենի,
Ու հորդ, ու պղտոր, ու հավերժ դժգոհ,

Սահմանագծում նորի ու հնի,
Դարերով լքված, որպես բախտի զոհ,
Գնու՛մ է, գնում, ու դադար չունի.
Արաքսը՝ սրտում արյուն, թոհ ու բոհ:

Արաքսը կիսել, Արաքսը կիսվել,
Ու՞մ գետն է հիմա Արաքսը այս հորդ.
Ե՞րբ է Արաքսը այսքան արտասվել,
Այսպես աղմկել ահեղադղորդ:
Նրան ունկնդիր սարսում եմ ես էլ...
Արաքսն է անցնում անտերունչ ու որբ:

1957

Չքնաղ Անահիտ, հզոր Արամազդ

Մեր պապերը մեծ, մեր պապերը քաջ
Կտակել էին հող ու հայրենիք.
Ու մաղթել էին՝ լինել աննահանջ,
Հեգնել ու հաղթել ամեն արհավիրք:

Այո, ունեցանք հզոր նախնիներ,
Ունեցանք Տիրան, Տիգրան, Արտավազդ...
Ունեցանք երկիր, նաև աստվածներ՝
Չքնաղ Անահիտ, խրոխտ Արամազդ:

Բայց դարերը ձիգ և հարափոփոխ,
Երկնքի նման մերթ ամպած, մերթ՝ բաց,
Որոճում էին մերթ աղոթք, մերթ՝ ոխ,
Մեզ բիրտ շանթեցին, և հողմահալած,

Թողած հյուղերը, դաշտերը բերրի,
Թողած ավերված բերդեր ու տաճար,
Թողած հայրենիք (անվարձ, անվճար),
Բոլորը ճարակ նենգ հրդեհների,

Ցրվեցինք, անցանք համայն աշխարհով,
Մեր մեջ խեղդեցինք և լաց, և կական,

Ապրեցինք չնչին ու չոր նշխարով,
Անցանք բոցերով խենթ-եղերական:

Ու մերկ մնացինք, նաև անոթի
Ճանապարհներին տիեզերական.
Երես դարձրին առանց ամոթի
Բարեկամները, օ՜, մեր մարտական:

Արդ որպես բեդուին խեղճ, թափառական,
Անտուն ու անհող մեր փշրանքները
Սպասում են դեռ օրվան փրկական,
Որպես լինում են մերթ հրաշքները:

Մեր պապերը մեծ, մեր պապերը քաջ,
Կտակել էին հող ու հայրենիք...
Մեր բախտը ճեղքվեց, թեքվեց ձախ ու աջ,
Մնացինք անտուն, անհող, աներկինք:

1977

Մեր իսկ խելքից

Աշխարհների խաչմերուկում,
Կայծակներն են ուր մտրակում,
Հողմն աղմկում խելակորույս
Արշալույսից մինչ արշալույս,
Հրաբուխները պոռթկում, ճեղքում,
Լեռներ, ձորեր հարթում, հղկում,

Այդ ահավոր լաբիրինթում,
Ժայթքումների բուն կոկորդում
Մենք բուն դրինք ու տուն դրինք,
Ու հայրենիք այն դարձրինք:
Ու հերկեցինք, ու երգեցինք,
Ու աստվածներ բյուր երկնեցինք:

Վիճակված չէր սակայն հային
Հույսով նայել ապագային:

Այն օրվանից քուն, թե արթուն,
Մեկ նահատակ, մեկ հարություն,
Ու չունեցանք պահ մի դադար
Ճակատագրով մի անարդար:
Ոչ մեր ջանքը վայելեցինք,
Եվ ոչ վստահ վեր քայլեցինք:
Զուրկ մնացինք մեր ծով ինչքից,
Մեր իսկ խելքից, մեր իսկ խելքից:

1978

* * *

Փուշ է բուսնում ու տատասկ
Էն հուռթի հողերում,
Ուր երբեմնի ոսկե հասկ -
Ցորեն հաց էր բուրում:

Անդ լսվում է անողորմ
Քաղցած ոռնոցը գայլի...
Կանցնի՞ մի օր այդ տեղով
«Հողմն ապագայի»:

1978

Ծիրանի ծառ

Նորից ծաղկել ես, ծիրանի ծառ,
Նորահարսի պես զուգվել, զարդարվել,
Գարնան նեկտարով լցվել, վարարել.
Նորից ծաղկել ես, ծիրանի ծառ:
Դու կյանքի զարթոնք, հրաշք պայծառ.
Հայրենի հողն է քեզ արարել.
Նորից ծաղկել ես ծիրանի ծառ,
Նորահարսի պես զուգվել, զարդարվել:

1980

Հավիտենից հավիտյան

Միֆ է արդեն ու պատրանք,
Այն, որ մոտ էր, օ՜, այնքան.
Հազար տարվա երազանք,
Այն, որ մոտ էր, օ՜, այնքան:

Որպես անզուսպ արհավիրք,
Եկավ, տարավ ամեն ինչ.
Կործանարար հրո կիրք,
Եկավ, տարավ ամեն ինչ:

Շողն էլ վերջին մեր հույսի
Ցոլանքի մեջ մոխրացավ.
Այրվող կերոն մեկուսի...
Ցոլանքի մեջ մոխրացավ:

Օ՜, երբեմնի հայրենիք ,
Հրաբխային խառնարան,
Քեզ ունեինք, կորցրինք...
Հավիտենից-հավիտյան:

1980

* * *

Մեր երազը երկարում է,
Հույսի շողերն էլ հանգան.
Մարդուս լեզուն կարկամում է,
Որտեղ ես, սուրբ հանգրվան:

Մեր երազը երկարում է,
Ոչ գիշեր է, ոչ ցերեկ.
Օ՜, երազն այդ անանուն է...
Մեր ցնորքը՝ հուսաբեկ:

1981

Կարոտ

Մի կարոտ է թափառում,
Էն սարերում եղյամոտ,
Էն դարավոր անտառում
Մի կարոտ է թափառում:

Բա՜րձր, բա՜րձր երկնին մոտ,
Անցնող-դարձող ամպերում,
Առանց վարտիք ու բոկոտ
Մի կարոտ է թափառում:

Հեռվի՜ց, հեռվի՜ց, շա՜տ հեռվից
Կանչ մի ծանոթ, որ մարում,
Փախած մանկութ արևից
Մի կարոտ է թափառում:

1982

Երկիր

Ձյունել է, ձյունել մեր Լեռնապարը,
Վաղուց փակվել է այն ճանապարհը,
Որով գնացին հայերը Երկիր,
Իրենց պապերի էն սուրբ աշխարհը:

Գարուն չի գալիս մեր Լեռնապարին,
Ձյուն ու ձմեռ է մեր ճանապարհին,
Մեր կորուստները մնացին անթաղ,
Արյուն լերդացավ սարին ու քարին:

Մեր պատուհասն էր քսաներորդ դարը.
Նորից խոժոռվել մեր Լեռնապարը:
Շատ դաժան եղար, ով ճակատագիր՝
Մեկը մեզ մնաց, գողին՝ հազարը:

1982

* * *

Մեր աղբյուրները հոսել, գնացել,

Դարձել են գետեր Եփրատ ու Տիգրիս.
Ու Միջագետքը ջրդի է դարձել,
Տոչոր են սակայն հողերը երկրիս:

Աշխարհի քանի երկրներ ըմպել,
Մեր ջրով կոտրել պապակը սրտի.
Աստվածը, սակայն հային վրիպել,
Մատնելով սրի, սովի ու ցրտի:

1982

Երկնային Տերը

Ինչպես անտառը արևի հրից
Բոցավառվում է, ծուխն առնում երկինք,
Այդպես երկիրս ոսոխի սրից
Մորթվեց, չմնաց հային հայրենիք:

Այդպես հրդեհվեց հայկական տունը,
Ու հին թոնրատան գերաններն ընկան.
Սուրբ մոմի նման այրվում էր սյունը,
Այրվում էր հողը մեր պապենական:

Արյուն էր հոսում շաղախված հողին,
Ու մթնել էին զուլալ գետերը.
Վաղուց էր լքել երկինք նայողին
Հայի ստեղծած երկնային Տերը:

1982

* * *

Մայր Արաքսից մինչև Կուր,
Հրազդանից մինչ Եփրատ,
Թափառում է մի զեփյուռ
Կարոտներով անփարատ:

Թափառում է, որոնում
Հանգրվաններ երբեմնի՝

Հային հայի օրրանում,
Իր բարբառով մայրենի:

1982

Գողգոթա

Մենք ելանք Գողգոթա մեր կամքին հակառակ,
Խաչեցին անարդար մեզ որպես Քրիստոս,
Խաչեցին, օ՜, այն բիրտ, անպարկեշտ, անառակ
Ցեղերը մարդակեր՝ հավիտյան բարբարոս:

Բայց ոգին, մեր ոգին աննկուն ու շիտակ,
Հավատին նվիրյալ ու կամքով մարտիրոս,
Վերապրեց ու հառնեց միշտ գործին իր գիտակ,
Եվ ազգերը արդար կոչեցին մեզ՝ Հերոս:

1983

* * *

Մի գոռ խորշակ է անցել այս հողով,
Սրբել, տարել է կայք, բերք ու բարիք.
Ինչ որ աճել էր արևի շողով,
Որ մարդը, մարդը չունենա կարիք:

Մի գոռ խորշակ է անցել այս հողով,
Ամեն ինչ այրել, թողել մուր, մոխիր:
Կծկվել, լլկվել են, բռնվել դողով
Ծեր, մայր ու մանուկ... բոլորն անխտիր:

Մի գոռ խորշակ է անցել այս հողով:

1983

Սարդարապատում

Արծիվներն եկել, իջել են քարին,
Իջել են քարին ու ... քարացել,

Հայացքներն հայոց երկնակամարին:
Հմայվել են ու ... անշարժացել:

Ու մերթ ղողանջը զանգակատան
Ցրում է նինջը անխախտ հավատի.
Ուր որ է - հիմա նրանք կարթնանան -
Քաջ զինվորները Սարդարապատի:

1983

* * *

Դարը եկել, անց է կենում,
Ու՞ր է բարու հաղթանակը.
Դարի հետ էլ մենք ենք մեկնում -
Հարաշարժ է ժամանակը:

Դարը եկել, անց է կենում,
- Խոպան մնաց դաշտը բերրի.
Չարն է բարուն հեծնում-հեգնում.
- Կարոտ դարձավ կանչը երկրի:

Դարը եկել, անց է կենում,
Բայց անավարտ են գործերը.
Չեն արծարծում ու չեն քննում,
Է՞ր են լռել մեր մեծերը:

Դարը եկել, անց է կենում,
Դարը պարտք է մնում դարին.
Մեկը անում, տասը կրկնում...
- Հայի աչքը սարին, քարին:

1983

* * *

Հայը խաչվեց գողգոթայում,
Բայց սրբերի շարքը չանցավ.
Վշտակցեցին հետագայում,
Բայց ոչ մի վերք չսպիացավ:

Լուսապսակ չհյուսեցին,
Ու մատնեցին անտերության.
Հոգևարքը չլսեցին
Փոքր ու մեծը մեր տերության:

1983

* * *

Գագաթներն այս երկնասույզ
Հայ լեռնաշխարհի
Արթնացնում են երգ ու հույզ
Եվ մտքեր բարի:
Օ՜, մոտ են, մոտ են հոգուս,
Հպարտ են ու վիթխարի.
Գագաթներն այս երկնասույզ
Հայ լեռնաշխարհի:

1984

Ազնվազարմ պարագիծ

Արարատն էլ վերքեր ունի,
Փլուզումներ մեծամեծ.
Երկինք պարզած ձեռքեր ունի,
Եվ աղոթքներ, և անեծք:

Արարատն էլ վերքեր ունի,
Անջատումի հուր թախիծ.
Անմեկնելի խորքեր ունի,
Ազնվազարմ պարագիծ:

Արարատն էլ վերքեր ունի,
Ծուխ է ելնում իր թամբից.
Վերքն ամոքող երգ էլ ունի -
Աստվածատուր ու անբիծ:

1984

Սիրեցեք

Հայրենիքը սիրեցեք
Միայն, միայն հայի պես.
Հանուն ուխտի կռվեցեք
Քաջ զորապետ Գայի պես:

Անդրանիկի պես նետվեք,
Ուր որ մեր բախտն է լուծվում.
Հայ մնացեք, երդվեցեք
Մերժել ամեն ուծացում:

1984

Օ՜, հապաղում է...

Մեր հայրենիքը մեզնից խլել են,
Ու վայելում են մեր հողն ու ջուրը.
Բերդապատերը խիստ խարխլել են,
Մարել են ուզում մեր հույսի հուրը:

Մեր հայրենիքը մեզնից խլել են,
Ամուր փակել են տունդարձի դուռը.
Սրբությունները մեր կոխկրտել են...
Օ՜... հապաղում է փրկության լուրը:

1984

Տեր-Զոր

Արդ, ուղեկցում են նավին ճայերը
Ուղևորներն են երգում ու ցնծում:
Մինչ անգղներն էին, ավա՜ղ, ուղեկցում,
Երբ Տեր-Զոր էին քշվում հայերը:

Մեզ բաժին ընկան բոլոր մահերը,
Անապատները-ճամփա և անցում:

Արդ ուղեկցում են նավին ճայերը,
Ուղևորներն են երգում ու ցնծում:

1984

Հանուն

Հանուն հայոց հարատևման,
Սերունդների հանուն՝ նորեկ,
Հանուն ջանքի ու արարման,
Գալիքների հանուն՝ անբեկ,
Հանուն ծնման ու վարարման,
Բարձրանալու հանուն՝ վերելք,
Գործել է պետք, անդուլ գործել,
Չմատնվել երկընտրանքի,
Օգնել միմյանց, չքարկոծել,
Ու չտարվել սուտ խաբկանքի,
Եթե պետք է՝ ալեկոծվել,
Մղվել լայնքի ու երկայնքի,
Բայց ոչ երբեք տարրալուծվել՝
Դառնալ առիթ տառապանքի:

Հանուն հայոց հարատևման,
Բարգավաճման հանուն՝ կյանքի,
Հանուն ստեղծման երկնանման,
Հավատարիմ հավատամքի,
Օ, պետք է որ նոր դարեր գան՝
Վերածնման ու վերելքի:

1985

* * *

Էլ չեմ հավատում հարատևմանդ,
Այրվելով հատնում ու պակասում ես.
Ինքդ քեզ անվերջ հա հակասում ես...
Էլ չեմ հավատում հարատևմանդ:
Լուռ ծվարել ես, կծկվել տանդ,
Էլ ոչ հույս ունես, ոչ սպասում ես...

Էլ չեմ հավատում հարատևմանդ,
Այրվելով հատնում ու պակասում ես:

1985

Արտաշեսյան

Ու՞ր մնացին Արտաշեսյան
Սահմանները Հայաստանի,
Ու փթթումը մեր մայիսյան,
Ու բուրմունքը վարդաստանի:

Ու՞ր մնացին Արտաշեսյան
Գագաթները լեռնաստանի,
Ու գահերը հայոց զևսյան
Աստվածային ապաստանի:

1985

* * *

Գալարվում են հորդ ջրերը Արաքսի,
Թավալում են ժայռ ու բեկոր դեպի ցած.
Մինչ խոժոռված հայացքի դեմ Մասիսի
Մեր սերունդն էլ եկավ, հուզվեց ու գնաց:

Գալարվում են հորդ ջրերը Արաքսի,
Ինքը իր հետ, իր աստծու հետ զժտված...
Սպասել ես, սիրտ իմ, քիչ էլ սպասիր,
Որ իմանանք թե Ո՞վ եկավ, Ո՞վ գնաց:

1985

* * *

Խոժոռվել է մեծ Մասիսը,
Մթնդել ահասարսուռ,
Անթեղել է հեղեղ-հուր...
Խոժոռվել է մեծ Մասիսը:
Ու փչում է ցուրտ հյուսիսը,

Ու փակում է փեղկ ու դուռ.
Խոժոռվել է մեծ Մասիսը
Մթնդել ահասարսուռ:

1985

Մոլորվեց, մնաց

Ճանապարհների շեղ կեռմաններում
Մեր քարավանը մոլորվեց, մնաց.
Մեր դեմ խորախոր մի վիհ կար բացված...
Ճանապարհների շեղ կեռմաններում:
Մեզ կողոպտեցին նենգ ու աններում,
Աշխարհում ձմեռ, մինչ մենք մերկացած...
Ճանապարհների շեղ կեռմաններում
Մեր քարավանը մոլորվեց, մնաց:

1985

* * *

Անթագավոր, անտեր երկիր, անտեր հող.
Շուրջը ցեղեր, քոչվոր ցեղեր - խաշնարած.
Մեր ճիգերը սակավ եղան, անկարող
Մութ, խաժամուժ հորձանքի դեմ դաշն արած:

Անթագավոր, անտեր երկիր, անտեր հող,
Ու ոտքի տակ - սմբակներով տրորված.
Ավար մնաց ձիգ դարերով - երկարող...
Ժողովուրդը բոցերի մեջ մոլորված:

Անթագավոր, անտեր երկիր, անտեր հող.
Ուր մնաց մեր հեծելազորն՝ այրուձի...
Գոռ թշնամու սիրտն ու հոգին սարսռող,
Որ կորցրած ճամփաները տունդարձի,

Մեղա գալիս ու տապակվում ոհքի տակ,
Աղերսում էր - կյանք խնայել դեռատի.
Ու Դավիթը հաղթանակող ու շիտակ

Տուն էր ճամփում ախոյանին հավատի:

Դավթից հետո ահ ու սարսափ չքացան,
Ու բարձրացավ յաթաղանը ու շողաց.
Ժողովուրդը մրջյունի պես ցիր ու ցան -
Սարսափահար տուն չդարձավ երկյուղած:

Ու գնում են, դեռ գնում են՝ հեռանում,
Ուծացումը լափլիզում է անզիջում.
Մոր հավատը ու մոր լեզուն մոռանում,
Խարխափում են անհայրենիք - անրջում:

Անթագավոր, անտեր երկիր, անտեր հող,
Ավար մնաց ձիգ դարերով երկարող:

1985

20-րդ դարը

Հայկական Պարը
Թուրքին ենք թողել,
Օ՜, անհնար է
Այդ ցավը մեղմել:

Փլվել է սարը,
Մեզ տակը թողել.
Քսաներորդ դարը
Մեր հոգին մաղել՝

Ոսկին տարել է,
Մոխիր է թողել.
Ուզածն արել է՝
Ողջը ողողել:

Վերջին սահմանն էր,
Եկել, հասել ենք.
Վերջին խոսքը մեր
Վաղուց ասել ենք:

1985

Երկիր

Սարերից այն կողմ թուրքի երկիր է,
Ու այլ լեզվով են այնտեղ խոսում,
Եվ այլ գետեր են երկիրն ակոսում...
Սարերից այն կողմ թուրքի երկիր է:
Տարիներ առաջ հայի երկիր էր,
Հազար ճյուղերով Եփրատն էր հոսում...
Սարերից այն կողմ թուրքի երկիր է,
Ու այլ լեզվով են այնտեղ խոսում:

1985

Էլ չեմ հավատում

Հարատևմանդ էլ չեմ հավատում,
Ու վիշտն այդ երկսայր սիրտս թրատում,
Արյուն է ժայթքում որպես Էտնայից...
Հարատևմանդ էլ չեմ հավատում:

Բայց, օ՜, դու կայիր հինգ հազար տարի,
Առճակատելով հազար վթարի,
Հեգ քարավանդ դարերի միջով
Քայլեց ու քայլեց առանց դադարի:

Մինչ հիմա եկել, իջել ես ծնկի,
Ու մոմի լույսով, բուրմունքով խնկի,
Ձեռքերդ պարզել երկինք՝ առ աստված,
Որ արարիչը գա ու քեզ փրկի:

Նա էլ լռում է, արդեն ուշանում,
Ինչ որ վտանգից սարսում, զգուշանում,
Քեզ հանձնել բախտի քմահաճույքին...
Մինչ լույս ցերեկն է գորշ մշուշանում:

1986

* * *

Մեզ սպանում էին անարգ թուրքերը,
Բայց մենք չմեռանք.
Վեր չպարզեցինք մեր զույգ ձեռքերը
Իբր աղերսանք:
Գոտեպնդվեցինք հույսի գալիքով -
Գոյատևեցինք.
Վերածննդի ելնող ալիքով
Թևավորվեցինք:

Մեր սավառնումի հորիզոնն անծիր
Էլ սահման չունի.
Փյունիկի իմ հավք, վեր-վեր թևածիր
Խանդով թռչունի:
Աստվածային է փառքդ երկրային -
Լուսապսակով,
Դու այն հյուսել ես ջանքով մարդկային -
Արդ ողջ հասակով

Կարող ես պարզվել անմար արևին
Ու ձուլվել նրան.
Ու չընկրկել, օ, ամենևին -
Ապրել անվարան:
Օ՜, Ադամորդի տիեզերական -
Կերտողդ մեր տան,
Ոգորումներիդ աշխարհն է վկա -
Հող իմ՝ Հայաստան:

1986

Նժդեհի քաջերին

Արծիվներն իրենց բարձրերից չիջան,
Պահապան հայոց դարավանդներին,
Եվ հավատարիմ սուրբ ավանդներին՝
Արծիվներն իրենց բարձրերից չիջան:

Թևելով բարձր՝ շրջան առ շրջան,
Ու շրջանցեցին քինոտ անդնդին...
Արծիվներն իրենց բարձրերից չիջան,
Պահապան հայոց դարավանդներին:

1986

Մուշեղ Գալշոյանին

Մարութա սարի ամպերը
Որոտում, գոռում, գոչում են,
Մխում, ծխում են ծերպերը,
Ու ծմակները մնչում են:

Անտառները խուլ մռնչում,
Ջրերը կիրճում կորչում են,
Արտույտները լռում արտում,
Վայրի հավերը ճչում են:

Մարութա սարի տերերը
Աշխարհով ցրվել, կորչում են,
Հասել հեռավոր ափերը -
Կարոտով իրար կանչում են

Մարութա սարի ամպերը
Փերթ-փերթ կախվել են նորից.
Խոժոռվել, մթնել ծերպերը,
Հառաչք է ձգվում ձորից:

Հնում, մնչում են բուերը
Ու անտառն է սարսռում,
Աղերսագին վայ-վույերը
Արձագանքվում են, լռում:

1986

* * *

Հայը Հայկով է Հայ հորջոջվել,

Հայկը Քրիստոսից մեծ է տարիքով.
Հայկը ապրել է բազկով ու զենքով...
Հայը Հայկով է Հայ հորջոջվել:
Հայը հեղեղի ջրով է թրջվել,
Երջանկացել է անամպ երկնքով.
Հայը Հայկով է Հայ հորջոջվել,
Հայկը Քրիստոսից մեծ է տարիքով:

1987

Վահագն Դավթյանին

Արարատին եմ նայում,
Ահա նա էլ ինձ.
Նրան սեր եմ ընծայում,
Իսկ նա ինձ՝ թախիծ:

Արարատին եմ նայում,
Հրաշք է անբիծ.
Նա էր մի օր մեզ փրկեց
Մեծ ջրհեղեղից:

Արարատին եմ նայում,
Ձյուն է, ձմեռ է.
Կարոտս հազարամյա,
Աստված իմ, լեռ է:

1987

* * *

Ճամփի վրա է մեր քարավանը,
Մինչ այն երկարում ու երկարում է.
Մեր սուրբ բաղձանքը ասես մարում է...
Ճամփի վրա է մեր քարավանը:
Կլինե՞նք, արդյոք այնտեղ՝ Մեր տանը,
Օ՜, տիեզերքը լլկվում, լռում է.
Ճամփի վրա է մեր քարավանը,
Մինչ այն երկարում ու երկարում է:

1987

* * *

Տրոփող սիրտ է,
Քարքարոտ, բիրտ է
Իմ Հայաստանը.

Հազիվ մի ափ է,
Տերևի չափ է
Իմ Հայաստանը.

Թվում է հաշտ է...
Հազիվ մի դաշտ է
Իմ Հայաստանը:

Օ՜, բախտ անողորմ,
Արաքսից այն կողմ
էր Հայաստանը:

1987

* * *

Ու՞ր ես, ու՞ր ես, Տիգրան Մեծ,
Ով հեթանոս միահեծ,
Անցար, ու մենք որբացանք,
Ընկանք տապաստ, գահընկեց:

Եվ սուղ պահին օրհասի
Աստված մեզ ձեռք չմեկնեց.
Մեր հավատը անբասիր
Մահը ծաղրեց ու հեգնեց:

Ու՞ր ես, ու՞ր ես Տիգրան Մեծ,
Ո՞վ էր, որ մեզ անիծեց,
Հայոց արգանդն այնուհետ
Մի այլ փրկիչ չընծայեց:

*

Ու՞ր ես, ու՞ր ես Տիգրան Մեծ:

1987

Պապեր

Օրհնվեք պապեր մեր քաջակորով,
Որ թեժ թրծվելով հողմով ու հրով,
Նվաճեցիք մի ժեռոտ հողահատ՝
Դնելով և կյանք, և ջանք, և կորով:

Օրհնվեք պապեր մեր քաջակորով,
Որ կտակեցիք և սեր, և գորով,
Գալիք օրերի և հույս, և հավատ՝
Գոյատևելու դար ու դարերով:

Օրհնվեք պապեր մեր քաջակորով,
Մաքառումներով ձեր պես անխռով,
Երբ բույնն էինք մեր հյուսում անավարտ,
Ցելերում ցանում ցորյանը բռով,

Հայք ներխուժեցին նեռ բանակներով,
Անցան հյուղերով, մեր սուրբ հերկերով,
Մեզ կոտորեցին մնալով անդատ՝
Հողը մեր արյամբ կարմիր ներկելով:

Ու՞ր եք մեր պապեր դուք քաջակորով,
Արդ ձեզ եմ հղում հուզմունքս խռով.
Ոչ բոլորն ունեն մեր դարում հավատ,
Դրանից է, որ այրվում ենք հրով:

1988

* * *

Ինչպես, ինչպես մենք խաբվեցինք,
Հապաղեցինք, չխմբվեցինք.
Սրի տվին մեզ չարաչար,

Որպես որմը՝ խարխլվեցինք:

Ու որմերից սիգահասակ
Բեկորները թափվեցին ցած,
Փշուր դարձավ ամեն քանդակ
Աչքերիս դեմ արցունքացած:

Ինչպես, ինչպես մենք խաբվեցինք,
Աշխարհասփյուռ, օ՜, ցրվեցինք,
Ու մեր երթը ձիգ, դարեդար
Ճակատագիր համարեցինք:

1988

Հայի հող

Այս սարից այն կողմ հայի երկիր էր ու հայի հող,
Ակնապիշ նայում, ինձ պարուրում է սառը մահու դող.
Ու փոթորկվում եմ, ու ալեկոծվում՝ ծով ահագնացող...
Այս սարից այն կողմ հայի երկիր էր ու հայի հող:

Հայից դատարկվեց երկիրը հայի ու ... թուրքացավ,
Թուրքն արյունարբու ինչ էլ որ արեց, արեց, ուրացավ,
Հանդուրժեց աստված, ասես չտեսավ, ասես կուրացավ.
Հայից դատարկվեց երկիրը հայի ու ... թուրքացավ:

1989

Էլ ո՞նց հավատամ

Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ,
Երբ հայերեն չեն բարբառում տանդ,
Երբ միակ հայը քաշվելով անկյուն -
Էս է, քոչում է գրաբար նանդ...
Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ:

Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ,
Երբ որ պղծում են խաչդ, խորանդ.

Մոռացած հավատ, ամեն սրբություն,
Մոխիր են մաղում անեղծ անվանդ...
Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ:

Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ,
Երբ ճեղք են տվել պատերը տանդ.
Երբ հեծանները ճկվել են, կախվել,
Ու սպառնում են ննջած մանկանդ...
Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ:

Էլ ո՞նց հավատամ հարատևմանդ:

1989

Նախատինք

Դուք, որ լքում եք սուրբ հայրենիքը,
Մի՞թե խեղդում է, հաղթում կարիքը,
Եվ ու՞մ եք թողնում, որ գան, տիրանան,
Անհագ ըմբոշխնեն այս լուրթ երկինքը:

Դուք, որ լքում եք սուրբ հայրենիքը,
Ու թլպատում եք սիրո ձեր կիրքը,
Որ ի՞նչ վաստակեք օտարի հողում՝
Դափնի՞ն ճորտության, թե՞ ... արքունիքը:

1989

Չունենք

Այս փոքրիկ հողահատից զատ
Մենք ուրիշ ոչինչ չունենք.
Մի ուրիշ կայան չունենք
Այս փոքրիկ հողահատից զատ:

Թիկունքում կանգնած հարազատ -
Հզոր հարևան չունենք...
Այս փոքրիկ հողահատից զատ

Մենք ուրիշ ոչինչ չունենք:

1990

* * *

Մեր հայրենիքը թուրքին թողեցին
Սուղ Ախուրյանից մինչև հորդ Եփրատ.
Չինայեցին և քեզ, Արարատ...
Մեր հայրենիքը թուրքին թողեցին:
Բյուր սվիններով մեզ խողխողեցին
Ավազակները շեղաչք ու թլփատ.
Մեր հայերնիքը թուրքին թողեցին
Սուղ Ախուրյանից մինչև հորդ Եփրատ:

1990

Հույս

Բացվել է դուռը Մհեր քարայրի,
Լույս է դուրս հորդում.
Երկնակամարն է ահեղ դղրդում -
Շաչ ու շաչյունը Սուրբ Ավարայրի:

Նորից ելել են ցեղերը վայրի,
Կեռ յաթաղանը սրբեր է մորթում...
Բացվել է դուռը Մհեր քարայրի -
Լույս է դուրս հորդում:

1991

Մասիսները

Մասիսները մեզ վեհացնում,
Հայացքներս տանում են վեր,
Մեզ ավելի են հայացնում
Ու առավելս անձնվեր:

Մասիսները մեզ վեհացնում

Ու կոփելով դարձնում են լեռ,
Աստվածացնում, անմահացնում
Ու պարգևում դար ու դարեր:

1991

Տոկա

Տոկա, ազգ իմ, տոկա էլի,
Կյանքը միշտ է դաժան եղել.
Մեկ անգամ չես արյուն հեղել...
Տոկա, ազգ իմ, տոկա էլի:
Միասնացիր, օ՜, ավելի,
Ու մի փորձիր ուղիդ շեղել.
Տոկա, ազգ իմ, տոկա էլի,
Կյանքը միշտ է դաժան եղել:

1992

Պահը

Մենք հարմար պահը ձեռքից բաց թողինք,
Նա թևին տվեց ու անէացավ.
Այն անկրկնելի ու պատրանք դարձավ...
Մենք հարմար պահը ձեռքից բաց թողինք:
Մենք մենակ էինք, լոկ երկիր, երկինք,
Վերինը շրջվեց, խանդեց, դառնացավ...
Մենք հարմար պահը ձեռքից բաց թողինք,
Այն թևին տվեց ու անէացավ:

1992

* * *

Իմ հայրենիքում տերևաթափ է,
Տեղատարափ է իմ հայրենիքում.
Հեղեղատը լի ու ափեափ է,
Ամեն կողմ շփոթ, ամենուր լքում:

Իմ հայրենիքում տերևաթափ է,
Է՞ր բարձրյալն այսօր մեզ չի ամոքում...
Երկիր Նաիրին, օ՜, ուշաթափ է,
Ընդվզումներ կան բզկտված հոգում:

Իմ հայրենիքում տերևաթափ է,
Տեղատարափ է իմ հայրենիքում:

1994

Թուրքը

Թուրքն իր թրքությունը կրկին հավաստեց
Հայոց աշխարհի շրջափակումով,
Մարդատյացության անզուսպ հակումով...
Թուրքն իր թրքությունը կրկին հավաստեց:
Աշխարհը սակայն նրան չսաստեց,
Բավարարվեց լոկ աչքակապումով...
Թուրքն իր թրքությունը կրկին հավաստեց
Հայոց աշխարհի շրջափակումով:

1995

Ձայն որոտի

Բոլորից վաղ Արարատն է ոսկեզօծվում
Արեգական վառ շողերով առավոտի,
Գուրգուրանքով, փաղաքշանքով ջերմ կարոտի
Բոլորից վաղ Արարատն է ոսկեզօծվում:
Էջմիածնի սուրբ մյուռոնով գագաթն օծվում,
Մինչ ընդերքում արձագանքվում ձայն որոտի...
Բոլորից վաղ Արարատն է ոսկեզօծվում
Արեգական վառ շողերով առավոտի:

1995

Կարմիր Վարդան

Ա

Գոյատևելու համար աշխարհում
Մեզ պետք է Կարմիր Վարդան ունենալ,
Ու նրա նման աստծով սրբանալ՝
Գոյատևելու համար աշխարհում:
Ու բազմապատկվել, թրծվել հուրերում...
Ու միաձուլվել և հույժ կարծրանալ...
Գոյատևելու համար աշխարհում
Մեզ պետք է Կարմիր Վարդան ունենալ:

Բ

Գոյատևելու համար աշխարհում
Հայերին պետք է Վարդանանալ
Եվ սրբանալով անմահանալ
Գոյատևելու համար աշխարհում:
Վրեժ բորբոքել ջահել սրտերում
Եվ պապենական հերկին տիրանալ...
Գոյատևելու համար աշխարհում
Հայերին պետք է Վարդանանալ:

1995

Ճանապարհներ

Հեռվից եկող, հեռու մեկնող
Ճանապարհներ լուռ, անհաղորդ.
Մեր քարավանն ահա՝ ձախորդ...
Հեռվից եկող, հեռու մեկնող:
Համառորեն ու մաքառող
Հավերժական ճանապարհորդ...
Հեռվից եկող, հեռու մեկնող
Ճանապարհներ լուռ, անհաղորդ:

1996

Երկրաշարժ

Ժամանա՞կ գտար տեղաշարժելու,
Ընդերքը հողի աշխարհասասան,

Մեզ հետ ի՞նչ ունես դու բաժանելու
Քո ի՞նչ հորդորին արդ մարդիկ անսան:

Հիմա հազիվ-հազ գլուխ ենք հանում,
Որ գոյատևենք մինչ գարնանագալ.
Մեր խաչն ենք մի կերպ շալակած տանում,
Մինչ արև բացվի, ծայր առնի ձնհալ:

Դու մեզ հանգիստ թող, թե աստված ունես,
Ամեն մեկս մեր ցավում տապակվենք.
Գիտենք՝ ուժեղ ես, անտակ, անհուն ես,
Քո ինչի՞ն է պետք բացվի մի նոր ճեղք...

Մենք անգետ եկանք այս աշխարհը մեղկ,
Ու այն օրվանից ահ ու դողի մեջ...
Բավ է, օ, բավ է անգութ բզկտվենք
Արհավիրքներում այսպես անընդմեջ:

1997

* * *

«Քաջ Քար» վայրերում մենք վանքեր ունենք,
Ոսկու, արծաթի շատ հանքեր ունենք,
Սակայն թուրքերն են այնտեղ փորփրում,
Մեզ չեն ճանաչում զավթողներն այն նենգ:

Մեր սեփականն էր, մեզնից գողացել,
Դատ-դատաստանից երբեք դողացել,
Չեն խոստովանում, ծնկի չեն գալիս,
Անմեղ ձևացել, միշտ չքմեղացել:

1997

Մնացորդը

Դու ես մնացել, Հայոց Միջնաշխարհ,
Քո Մասիսներով ու Արագածով,
Սևան լճակով, որ ասում ենք ծով...

Դու ես մնացել, Հայոց Միջնաշխարհ:

Անողորմ կիսված դաշտ Արարատյան,
Շիրակ, դու նույնպես, Տաշիր, դու նույնպես.
Մինչև ե՞րբ, աստված, արդյո՞ք տևապես...
Անողորմ կիսված դաշտ Արարատյան:

Ու դեռ ավելին՝ տեսքով են մեզ հետ
Մեր Մասիսները՝ Հայկյան աշխարհի.
Օ՜, ժամանակներ՝ ահի ու մահի...
Օ՜, Տեր ողորմյա, օ՜, սուրբ Կարապետ:

1997

Եղեռն

Այս էլ Եղեռն է,
Որ գնում, գնում ու հեռանում են,
Տունդարձի ճամփան վաղ մոռանում են,
Սովորում լեզուն, բարքը օտարի,
Ու կամաց-կամաց օտարանում են:

Այս էլ Եղեռն է,
Որ թեպետ տանը՝ հին սուրբ օջախում,
Ողջ ունեցածը տալիս ու ծախում,
Մնում են էլի քաղցած ու տկլոր,
Թե չեն գողանում և կամ խարդախում:
Սա էլ Եղեռն է:

1997

* * *

Աշխարհը սիրո պակաս ունի.
Բարության պակաս,
Հարության պակաս.
Աշխարհը սիրո պակաս ունի:
Այս ուղեծիրը մեզ ու՞ր կտանի.
Օ՜, հոգս հանապազ…

Աշխարհը սիրո պակաս ունի.
Բարության պակաս:

1998

* * *

Ամառը կիսվել է ու շոգեր են դեռ
Քաղցրով լցվում է հայոց խաղողը.
Բերքով ուռճացել հայրենի հողը...
Ամառը կիսվել ու շոգեր են դեռ։
Դեղձի ծառերը մրգով ծանրաբեռ
Թող հավերժ ապրի բերք արարողը.
Ամառը կիսվել է ու շոգեր են դեռ,
Քաղցրով է լցվում հայոց խաղողը։

1998

Մ Ե Ր Ո Ն Ք

* * *

Մերոնցից ոչ ոք չծերացավ,
Բոլորն էլ ջահել գնացին.
Մեկին կռիվը տարավ,
Մյուսին «հենց էնպես» մահացրին:

Եվ այսպես մեր դարը անցավ,
Ճամփեցի առանձին-առանձին.
Մերոնցից ոչ ոք չծերացավ,
Բոլորն էլ ջահել գնացին:

1982

1923 թիվ

Հիշու՞մ ես, մերիկ,
Որ այցի եկար մեր որբանոցը.
Դաղձով լի տեսար իմ ձեռ ու ծոցը.
Հիշու՞մ ես, մերիկ:
Կարիք էր, կարիք,
Օ՜, անջնջելի
Սպի է թողել էն տարվա խոցը.
Հիշու՞մ ես, մերիկ,
Որ այցի եկար մեր որբանոցը:

1943

Սիրելի մայրիկ

Աչքերիս առաջ դու ծերանում ես,
Եվ օրը-օրին դու հեռանում ես.
Դառնում ես կարոտ,
Դառնում ես երազ,
Թռչուն թևավոր.
Դառնում առավոտ,

Անցած ու անհաս,
Եվ խորհրդավոր, սիրելի մայրիկ:

Աչքերիս առաջ դու հեռանում ես,
Եվ հեռանալով, օ՜, բարձրանում ես.
Դառնում ես աղոթք,
Դառնում ես երդում
Խոր ու իմաստուն.
Ով գերաշնորհ
Հավերժող իմ քուրմ,
Ով իմ սրբություն, սիրելի մայրիկ:

1950

Կամսարին

Որտե՞ղ ես, ազնիվ հոգի,
Ահեղ փոթորկով զարկված.
Կանչով հարազատ երգի
Դարձիր հայրենիդ հերկված:

Արցունքով ջերմ կարոտի
Նորոգիր օջախ ու տուն.
Խնդացեք մայր ու որդի,
Կյանքի բերկրանքով լեցուն:

1955

Մանկություն

Չիչխանի դալար գետափ,
Մեղմախոս, հնչուն գետակ.
Ուռիներ, շրշյուն, հեքիաթ,
Զրույցներ, ծիծաղ, կատակ:

Ծաղիկներ, թիթեռ, թռչուն,
Գառնուկներ լանջերն ի վեր.
Անտառներ, հողմեր շաչուն,

Երկնքով չվող ամպեր:

Մանկություն՝ անդարձ անցած
Երազի թևով թեթև,
Հիշատակ ու հուշ դարձած -
Մշուշված սարի ետև:

1957

* * *

Տոտիկ-տոտիկ,
Իրար մոտիկ
Քայլ է գցում իմ բալեն.
Անուշ-անուշ,
Այնպես քնքույշ
Նայում, հրճվում ժպտալեն:

Օ՜, միամիտ
Մանկան ժպիտ,
Հավերժորեն լույս երազ.
Թող ձիգ ճամփիդ
Լալ ու հակինթ,
Ժպիտ լինի հանապազ:

1957

* * *

Մեծանում է օր-օրին,
Ուրախացնում բոլորին,
Իմ բալիկը անուշիկ -
Հարութիկը թութուշիկ:

Արդեն «խոսքեր» է ասում,
Ամեն մեկի հետ «խոսում»
Ծիծաղում է ու փայլում,
Մեզնից բռնում ու քայլում:

Նա մերթ տխրում է, լալիս,

Աչքից արցունք է գալիս.
Մերթ բարկանում-սաստկանում,
- Արդեն բան է հասկանում:

1957

Օ՜, մայր

Որքան վիշտ ենք քեզ պատճառում,
Որքան թախիծ բերում սրտիդ.
Մեր խենթությամբ քեզ չարչարում,
Մենք անզգա, վայրի ու բիրտ:

Դու մայրորեն մեզ ներում ես,
Տրտում, բայց միշտ սրտով բարի.
Եվ հեզությամբ քո - գերում ես
Արդեն քանի՜ - քանի տարի:

Բայց, օ՜, հետո, երբ աշխարհում
Էլ չես լինի, որ մեզ ներես՝
Պիտի տանջվենք մեր հուշերում
Այն, որ հաճախ հուզել ենք քեզ:

1958

Սպասի՛ր

Մա՛յր իմ, սպասի՛ր, պարտք ունեմ տալու.
Անվերջ տանջվում եմ, որ ուշանում եմ.
Ինչ որ լավ ունեմ քեզ եմ բերելու.
Օ՜, մա՛յր, մի՛ շտապիր, պարտք ունեմ տալու:

Դու աստծու նման շռայլ, սրտաբաց,
Իսկ պարտքս այնքա՜ն, այնքան մեծացել,
Օ՜, վախենում եմ, թե մի օր՝ հանկարծ...
Ա՜խ, անուշ մայրիկ, շատ ես ծերացել:

Համբերի՛ր մի քիչ, համբերի՛ր էլի.

Շատ եմ վախենում, չկարողանամ...
Ես կհեկեկամ, մա՛յր իմ սիրելի,
Թե հետո հավերժ պարտապան մնամ:

Մա՛յր իմ, սպասի՛ր, պարտք ունեմ տալու:

1959

* * *

Իմ հայրենիքում, ասում են, հիմա
Գարունն է երգում.
Իմ հայրենիքում ասում են հիմա
Բերք են հավաքում.
Իմ հայրենիքում ասում են հիմա
Ցելերն են հերկում.
Իմ հայրենիքում աշունը հիմա
Աշխարհն է ներկում.
Իմ հայրենիքում ասում են հիմա
Բուքն է մոլեգնում.
Իմ հայրենիքում, մայր իմ, հոգսերդ
Արդ ո՞վ է հոգում:

1959

* * *

Որդիս ձեռքերը մեկնում է լուսնին,
Խնդրում է, որ այն բռնեմ, իրեն տամ.
Օ՜, նա մեծ կարծիք ունի իմ մասին,
Հույս՝ որ կատարեմ այս խնդիրն անգամ:

Եվ ահա ես էլ չեմ մերժում նրան,
Ասում եմ՝ ցատկիր, կանգնիր ուսերիս,
Եվ ի՛նքդ բռնիր ու հեծիր վրան:
Ապարդյուն սակայն: Իջիր սիրելիս -

Ասում եմ նրան ու ջերմ համբուրում,
Որ շատ չտխրի - հավատով մնա.
Լուսինը զգա իրեն ափերում -

Եթե ոչ այսօր, գեթ երբ մեծանա:

1959

* * *

Մի փոքրիկ, փոքրիկ դստրիկ ունեմ ես,
Այնքան նման է ճերմակ թիթեռի.
Նայում եմ երկա՛ր՝ երես առ երես -
Որքան անուշն է, նրբին, անթերի:

Ես աշխարհի չափ սիրում եմ նրան,
Գիտեմ, նա պիտի կյանքս զարդարի.
Հոր պարտք է, աչքս կպահեմ վրան,
Մինչև որ սրտիս զարկը դադարի:

1959

* * *

Դեմքիդ հազար կնճիռ,
Հազար խորունկ ակոս,
Հազար վիշտ ու վճիռ,
Հազար կորուստ, ափսո՛ս...

Որպես հողը հերկված
Բերքը հանձնած մարդուն,
Որպես երգ մի երգված
Զուլված սրտին, հոգուն,
Որպես կարոտ անանց,
Որպես հավատ անհուն,
Որպես բարի աստված
Եկել, մտել ես տուն:

Մայր իմ, պարզև անգին՝
Չարքաշ գեղջուկ անվարձ.
Միակ արդար բագին,
Հոգուս գահին բազմած:

1960

* * *

Մայրս եկել, կանգնել շեմին
Ու նայում է ինձ.
Սրբապատկեր քաշված վեմին,
Ու նայում է ինձ:

Ներս եմ կանչում, ընդառաջում,
Փորձում եմ գրկել.
Թվում է թե չի ճանաչում -
Սխալ է եկել:

Աչք եմ թարթում, մեկ էլ... չկա.
Երա՜զ էր, մորմոք:
Ավա՜ղ, մեկտեղ էին եկել՝
Երազ ու ցնորք:

1980

Բավական տատին

Երեխաները դպրոց գնալիս,
Ուզում էին, որ հանդիպեն տատին.
Ասում էին, թե քննություն տալիս
Նեցուկ է դառնում իրենց հավատին:

Ու դառնում էին առավել վստահ,
Բախտն էր շարունակ ուղեկցում նրանց:
Արդ որպես ճամփորդ եկել եմ ահա,
Կանգնել, սպասում, գուցե թե հանկարծ

Հայտնվի մայրս՝ Բավական տատին,
Եվ օրինի ճամփես, որ երկար է դեռ:
Նա գիտեր կարդալ գիրը ճակատի,
Ոնց տատերն էին մեր աստվածասեր:

1982

Տեսիլք

Կառք էր սլանում երկնակամարով,
Օ՜, այն վարում էր իմ կորած մայրը.
Գահին բազմած էր օջախի հայրը...
Կառք էր սլանում երկնակամարով:
Լույսը հետամուտ նույն ճանապարհով
Ուղեկցեց մինչև երկնքի ծայրը:
Կառք էր սլանում երկնակամարով,
Օ՜, այն վարում էր իմ կորած մայրը:

1982

Մայրս

Սայլակին մրգեր բարձած,
Ու չարքաշ ռիկշի դարձած,
Դեռ վաղ արևածագին,
Իր հին սևերը հագին,
Փոկերը խոնջած քաշում,
Մինչ շուկա ոտք էր մաշում:
Սեղանից մի կողմ կանգնած,
Միրգ էր վաճառում մարդկանց.
Մեզ հաց ու թաց էր բերում...
Օ՜, կյանք-հանցանք աններում:

1982

Որբեր

Ամիրկու ճամբեն երկան ու դուզ է
Ամիրկեն կայնե, մայրիկ ջան,
Որբերուն գուզե:
(20-ական թվականների երգերից)

Մենք որբ էինք, ապրեցինք,
Ահա նույնիսկ ծերացանք.
Ամեն զրկանք կրեցինք
Ու կարծես թե... մոռացանք:

Մենք որբ էինք, ապրեցինք,
Կերտեցինք տուն ու քաղաք,
Դաշտ ու խոպան հերկեցինք,
Հաց ու ջրի տիրացանք:

Մենք որբ էինք, ապրեցինք,
Տեր մնացինք մեր հողին,
Պատիվ առանք ու տվինք
Մեր հաց ու ջուր երկնողին:

Մենք որբ էինք, ապրեցինք,
Դե չունեինք այլ ճամփա.
Կոշտ ձեռքերս դրոշմեցինք
Պատմության ժայռի վրա:

1982

* * *

Հայր իմ, չիմացանք,
Թե վերջին ճամփիդ ո՞վ էր ուղեկցում.
(Դե փոքր էինք ու չհասկացանք),
Ո՞վ շիրմափոսիդ բռով հող գցում:

Լոկ հետո միայն
Մենք մանկահասակ՝ լրջախոհ դարձանք.
Քեզ որոնեցինք՝ չգտանք սակայն,
Ու որբ մնացինք, ու... որբ մեծացանք:

1983

* * *

Է՜խ, մայրիկ, մայրիկ
Իմ չարքաշ մայրիկ.
Տոկացիր երկար,
Հոգացիր երկար,
Մեզ մարդ դարձրիր,
Հագուստ հագցրիր,

Տվիր տեղ ու տուն,
Անուն, ազգանուն:
Ինքդ լոկ քեզ հետ,
Խեղճ-սակավապետ.
Ապա շտապեցիր,
Ելար, գնացիր,
Ու ետ չդարձար,
Ու ետ չդարձար:
Օ՜, մայր իմ անուշ,
Դու երազ ու հուշ,
Իմ կարոտ անծիր,
Ե՛կ, վերադարձի՜ր:

1983

* * *

Դեմքդ, մայրիկ, ծաղկատար էր,
Կնճիռներդ՝ խոր.
Դիմագիծդ կատարյալ էր,
Դեմքի պես սուրբ Աստվածամոր:

Մինչ իրանդ հպարտ ու սեգ,
Հայացքդ բարձր.
Աշխատավոր, չարքաշ իմ հեգ,
Ադամանդե շեղբից կարծր:

Բայց ի վերջո կոտրվեցիր,
Իմ հպարտություն.
Գտել էի՝ կորցրեցի...
Մայր իմ, կրկին դարձիր տուն:

1983

Խոջեվանքում

Երբեմնի աճյունը տաք սիրելի իմ հոր
Վաղուց մի բուռ հող է դարձել Խոջեվանքում.
Այդ հողին արցունք է հեղել աչքը իմ մոր,

Որ այլևս չժպտաց ոչ մի խնջույքում:

Չժպտաց ու չժպտաց, ու մի խորունկ վիշտ
Ժանյակ գործեց այտերին ու ճակատին լայն.
Չխռովեց աշխարհից, բարի էր նա միշտ,
Չլքեց երբեք նրան խոնջենքը, սակայն:

Ու զարդ դարձավ թախիծը նրա այտերին,
Ու այդպես էլ գնաց նա օրերից մի օր.
Աշխարհում իմ միակ, իմ միակ սիրելին,
Որ դարձավ հուշարձան սևաթույր ու ողորկ:

1983

Երեկոն ծովափում

Հայացքիս դեմ լույս արահետ,
Որպես միրաժ հեքիաթում.
Հայտնվում եք, կանչում եք մերթ,
Ականջիս չեմ հավատում:

Հայացքիս դեմ լույս արահետ,
Ձգվում մինչև լուսնկան,
Ալիքներ են ծփում վետ-վետ,
Լույս ու ստվեր ջուրն ընկան:

Արահետն էլ սուզվեց անհետ,
Հեռուն կորավ խավարում
Մութը ինձ էլ տարավ իր հետ,
Անհայտն ի՞նչ է արարում:

Պապանձվել եմ ու թևաթափ
Փլվում եմ հանց խարխուլ պատ.
Գիշերը՝ ծով-լի ափեափ,
Պահն անսփոփ, անփարատ:

1983

* * *

Կտրվեց մորս թզբեհի թելը,
Ընկան հատիկները այս ու այն կողմ,
Չէր էլ նկատել շատ բարակելը...
Տարիներն էին մաշել անողորմ:

Ընկան հատիկները այս ու այն կողմ -
Իր որդիների, դուստրերի նման,
Թվաց՝ փչում է ցրտաշունչ մի հողմ,
Ու փակող չկա դուռ ու պատուհան:

1968

* * *

Մի մայր ունեմ այն հեռվում,
Ու մի խնձորի այգի.
Այնտեղ մի ճրագ վառվում,
Ու հանգչում մի լույս հոգի:

Մի փոքրիկ խարխուլ տնակ,
Մինչ շուրջը ծաղկած գարուն,
Մթնում մարմրող կրակ,
Աղոթող մի լույս անուն:

Այնտեղ թևածող կարոտ,
Անլուռ թավալվող գետակ,
Ափամերձ կանաչ արոտ,
Բարդիներ - ձգված շիտակ:

Այնտեղ աստղալից երկինք,
Անտառի աննինջ սոսափ,
Ու ձայներ հեռու ու ձիգ...
Օ՜... ուշացած ափսոսանք:

1968

* * *

Մերիկ, արդյոք որդուդ գտա՞ր,

Արդյոք հետը խոսեցի՞ր,
Ծով կարոտդ արդյոք առա՞ր,
Անուշ ձենը լսեցի՞ր:

Մերիկ, արդյոք որդուդ գտա՞ր,
Գանգատներին անսացի՞ր.
Հետդ վերքին դարման տարա՞ր,
Կսկիծները մեղմեցի՞ր:

Հեյ վա՜խ, մերիկ, անբա՜խտ մերիկ,
Որ մի ցավդ դարմանես.
Հանգստացիր, բավ է, հերիք,
Դու ե՞րբ, դու ե՞րբ տի քնես:

1969

«Որսկան ախպեր»

Երգելու համար ձայն չենք ունեցել
Ոչ ես, և ոչ էլ եղբայրս ավագ,
Սակայն մայրիկս հաճախ թախանձել,
Որ «Որսկան ախպեր» երգենք... աննվագ:

Ու երգում էինք ձեն-ձենի տված,
Տխուր այդ երգը ի սեր մայրիկի.
Ու՞մ էր նա հիշում, գիտեր լոկ աստված,
Սպանված եղբո՞ր, թե՞ մեր հայրիկին:

...Եղբայրս էլ ընկավ աշխարհամարտում,
Մայրիկս՝ քնեց ու էլ չարթնացավ:
Երգն այդ անսփոփ առավել տրտում
Հոգուս անդորրը հեղեղեց, տարավ:

Այսպես մերթ ընդ մերթ հոգուս մեջ անձայն
Նույն երգն եմ երգում ի սեր անցողաց:
Սիրտս դարձել է դառնության հնձան,
Ուր կարոտներ են խորունկ անթեղված:

1977

Մայրիկ

Իմ չքնաղ, իմ հեռու, իմ անգին մայրիկ,
Ահա եկել ու թիկնել ես հոգուս լուսեղեն գահին,
Աստվածացել ես, ու դեմքիդ շուրջը ծաղկաշար, գողտրիկ
Լուսապսակ է ծիածանի պես բոլորվել կրկին:

Ու ես մանկան պես շփոթվել դեմդ, կարկամել եմ, տես,
Չեմ համարձակվում գրկել, համբուրել, վիհ կա մեր միջև,
Բայց այնպես, այնպես անընդգրկելի կարոտել եմ քեզ,
Ու արդ ծնրադիր, ես հավատավոր, կորվել քո առջև,

Գմբեթարդ գավթում մրմնջում եմ լուռ աղոթքը իմ հին,
Ու թվում է թե դու կաս առհավետ, ապրում ես կրկին,
Նորից եկել ու թիկնել ես հոգուս լուսեղեն գահին,
Իմ չքնաղ, իմ հեռու, իմ անգին մայրիկ:

1977

* * *

Լույս երազում մորս տեսա,
Ինչ որ բարձրում կոթնել էր,
Նա ակնապիշ ինձ էր նայում -
Մտահոգ էր, մթնել էր:

Այսպես հեռվից նա ինձ հսկում,
Աղոթում կյանքիս համար.
Դժվար պահիս սարսում, սոսկում՝
Տառապալից-անդադար:

Հանգստացիր, անուշ մերիկ,
Ի՞նչ է, քեզ քուն չի՞ գալիս.
Այդտեղ էլ է հողմ ու մրրիկ,
Պատսպարվիր, սիրելիս:

1978

* * *

Մայրս շտապում, գնալ էր ուզում,
Ու ներսում մի բան անվերջ ընդվզում,
Ալեկոծում էր հոգին ու հուզում...
Մայրս շտապում, գնալ էր ուզում:

Երևի որդուն տեսել երազում,
Եվ կամ ամուսնուն, որ հիվանդ հազում.
Գուցե եղբորը՝ վիրավոր վազում...
Մայրս շտապում, գնալ էր ուզում:

Եվ գնաց, գնաց, գնաց որ չգա.
Չեկավ, ետ չեկավ... վերջին գնալն էր.
Բայց դեռ սպասում եմ, հույսով, որ կգա,
Բոլորը կգան վշտով կարևեր:

Կգան, դարմանեմ բոլոր վերքերը,
Կգան, վերստին ապրելու համար.
Նորից ծոր կտան գեղջուկ երգերը,
Որ գարուն լինի ու արև անմար:

1979

* * *

Երազիս մեջ մորս տեսա -
Ճամբեն բռնած գնում էր.
Շտապեցի, բայց չհասա -
Լուռ, անմեկին գնում էր:

Նա տեսել էր հեռվում հորս,
Գնում էր, որ բարև տա...
Աչք ածեցի շուրջ բոլորս,
Էլ ոչ մեկին չգտա:

1979

Ես էլ եմ գալու

Իմ ճամփեն պահեք, ես էլ եմ գալու,
Աշխարհում մենակ հո չեմ մնալու.
Կարգ է, ու ես էլ հնազանդ, հլու...
Իմ ճամփեն պահեք, ես էլ եմ գալու:
Աշխարհում մենակ հո չեմ մնալու,
Հոգուս մեջ անվերջ չեմ անձրևելու.
Շատ եմ կարոտել ջերմ համբուրվելու...
Իմ ճամփեն պահեք, ես էլ եմ գալու:

1979

Հուշ

Ծոր են տալիս զանգակատան
Ղողանջները հնամենի.
Արթնանում է մի հին ոստան
Լեռնաշխարհում իմ հայրենի:

Ծոր են տալիս զանգակատան
Աղոթքները հոգեպարար.
Կարոտներս սիրտս մտան,
Կորածներս գտան իրար:

1983

Որբանոցում

Էն տարիներին՝ մեր դպրոցական,
Թանաք-գրիչը դժվար էր ճարվում.
Բացակայում էր, սակայն բացական,
Ուսուցչանոց էր չարուկը տարվում:

Իսկ դասագիրքը, այդ երազանք էր,
Մի բացված էջին տաս աչք էր նայում.
Մեր ուսուցչուհին մի նուրբ նազանք էր,
Պատկառանքով էր գերում, հմայում:

Իսկ դասարանը ցուրտ էր, անկրակ.
Կծկվում էինք, միմյանց ջերմացնում.
Թխպոտ օրերին անլույս, անճրագ,
Մեզ անգիր էին դասը հարցնում:

Մանուկներ էինք՝ տխրություն տեսած.
Հեքիաթով էին մեզ պայծառացնում.
Մոռանում էինք, որ շատ ենք քաղցած,
Որ գունատ քաթան էին հագցնում:

Ուտելուց առաջ աղոթքի ծնկած,
Մերթ խրթին խոսքեր էինք մրմնջում.
Շնորհակալ լինում, որ մեր տեր-աստված
Հաց էր ուղարկում (ինքը չէր իջնում):

Քնելուց առաջ մի տխուր «հայր մեր...»,
Ու հանգչում էինք երազ տեսնելու.
Անհայր մնացած բյուրավոր որբեր...
Հույսով, որ մի օր տուն ենք հասնելու:

1984

* * *

Բոլոր լավերս վերադարձել,
Հյուր էին եկել կարոտած սրտիս.
Աշնանային ճոխ սեղանս բացել,
Ու ծայր էր առել երգը «Ավետի՛ս»:

Բոլոր լավերս վերադարձել,
Ետ էին բերել ջահելությունս.
(Նրանք վաղ էին կյանքից հեռացել),
Արդ խնդությամբ են ողողել տունս:

1986

* * *

Իմ երազներում՝ դուք բոլորդ կաք,
Ճիշտ այնպես, ինչպես օրերում այն վաղ,

Երբ անհոգ էինք, ծիծաղ կար ու խաղ...
Իմ երազներում՝ դուք բոլորդ կաք:
Օ՜, քաղցր խաբկանք, լուսեղեն պատրանք,
Ինձ լուռ պարուրիր, անդորր մթնշաղ...
Իմ երազներում՝ դուք բոլորդ կաք,
Ճիշտ այնպես, ինչպես օրերում այն վաղ:

1986

Գյուղից-քաղաք

Մեր դպրոցը անուն չուներ,
Լոկ համար կար ցուցանակին.
Բայց լուս-մութին ինձ կանչում էր -
Դասի հասնեմ ժամանակին:

Ու հինգ ձմեռ գյուղից-քաղաք,
Քաղաքից-գյուղ վազքով անցա.
Հազար ձևի ցուրտ ու զրկանք
Ճաշակեցի ու հասկացա...

Կիլոմետր, կիլոմետր
Գումարվեցին, եկան ի մի -
Ճամփա դարձան... Արահետնե՜ր,
Արահետնե՜ր, ու՞ր եք հիմի:

1985

* * *

Հասկահավաք էր նոր հնձած արտում,
Մենք ճուտերի պես վազում, կտուտում,
Լրացնում էինք օրվա պաշարը,
Երկանքով աղում, ճաշ սարքում-ուտում:

Հասկահավաք էր նոր հնձած արտում,
Օրը արև էր, այրող էր ու շոգ.
Հիմա որ պատմում, ինձ չեն հավատում...
Մեր երեխեքը որքա՜ն են անհոգ:

1985

Հորթը

Մինաս մորեղբայրս մեզ հորթ նվիրեց,
Տարիներ անցան - հորթը կով դարձավ.
Մեր տանն էլ մածուն ու կարագ մերվեց,
Մենք որբանոցից տուն վերադարձանք:

Հայրս գետափին շատ շիվեր տնկեց,
Նրանք աճեցին - պտղատու դարձան.
Բերք ու բարիքը մեր կյանքը փրկեց,
Մենք «աղքատ» էինք ու «միջակ» դարձանք:

Եվ չարքաշ մայրս մի քիչ շունչ քաշեց,
Դպրոց ուղարկեց, կրթություն առանք.
Ջահել էր մայրս, կյանքն այդպես մաշեց,
Ու մեզ մեծացրեց, ու մենք մարդ դառանք:

Այս է իմ կյանքի կարճ պատմությունը,
Որ շատ նման է պատմություններին -
Ով որբ է եղել ինձ նման՝ նույնը,
Այդ Հայաստանն էր այն նեղ օրերին:

1985

Վարդուշին

Իմ կրտսեր քույրը նույնպես ծերացավ.
Նա էլ ինձ նման բազում վիշտ ու ցավ
Տարավ ուսերին իր նուրբ - կանացի,
Ու տքնեց, տքնեց ու արիացավ:

Իմ կրտսեր քույրը նույնպես ծերացավ,
Ունեցավ դուստրեր, թոռներ ունեցավ.
Ի՞նչ փույթ՝ բոլորը թիկնեղ, առնացի,
Սակայն չպակսեց հոգսն ու՝ մեծացավ:

1985

Աղավնիները

Իմ տան քիվին ծայրից-ծայր
Աղավնիներ են թառել.
Կղկղում են միալար,
Կտուց-կտցի կամարել:

Մեկ էլ մեկեն վեր թռան,
Զույգ-զույգ, զույգ-զույգ ցրվեցին,
Երկնակամարը առան,
Էն կապույտում լուծվեցին:

Ու ոչ մեկը չմնաց,
Որ առիթն իմանայի.
Ո՞վ էր, ի՞նչ էր, ի՞նչ ասաց -
Գուցե ե՞ս էլ գնայի:

1985

* * *

Հորս շիրիմը Խոջեվանքում
Համահարթել են ու քարը տարել.
Հարատևում է ցավն այդ ողջ կյանքում,
Այդ արարողին չեմ ուզում ներել:

Ես պիտի հաճախ այցի գնայի,
Ու բուրվառի մեջ խունկ պիտի ծխեր.
Հանուն հավատի ահագնանայի,
Որ որդիս կյանքում գլուխ չկախեր:

1985

* * *

Հին Խոջեվանքում, սալաքարի տակ
Վաղուց հանգչում է վաղամեռ հայրս.

Այնտեղ երբեմնի վառում էր կրակ,
Ու խունկ էր ծխում մանկամարդ մայրս:

Տարիներ առաջ համահարթեցին,
Լուռ անհետացան շիրմաթմբերը.
Մինչ հոգիները վեր համբարձվեցին,
Որ մխիթարվի Բարձրյալը՝ Տերը:

1987

Կորած այրուձին

Ուռիներ կային գետի եզերքին,
Բարդիներ ձգված սարի ստորոտում.
Ունկնդրում էի նրանց մեղմ երգին,
Իսկ այժմ, այժմ ահա կարոտում՝

Ասես թախծում եմ: Անցած-գնացածին,
Անհետացածին կանչում եմ դարձի.
Ի՞նչ հույս սպասել, վերադարձ չունի
Անապատ մեկնած քաջաց այրուձին:

1987

Թռղի գյուղում

Մանկությունս թռղի գյուղում,
Խնդությունս՝ հողե հյուղում.
Ցողաշաղախ երազներով
Անուշ քունս հարդ-մղեղում:

Ոչինչ, ոչինչ չեմ մոռանում,
Ու որքան էլ այն հեռանում -
Դառնում ցնորք, դառնում կարոտ,
Տարածվում է ու զորանում:

Ինչ փույթ - հեռու, ինչ փույթ որ ուշ,
Բոլորն եկել, դարձել են հուշ.

Օրհնվեք դուք, պահեր անքեն,
Հիշատակներ իմ սրբանուշ:

Մանկությունս թողի գյուղում,
Խնդությունս՝ հողե հյուղում,
Ցողաշաղախ երազներով
Անուշ քունս՝ հարդ-մղեղում:

1987

Բարակել է

Իմ Չիչխանը բարակել է,
Չի աղմկում առաջվա պես.
Տխրությամբ իր համակել է,
Դարձել լռին, համեստ ու հեզ:

Իմ Չիչխանը բարակել է,
Չքացել են ծաղիկ ու սեզ.
Նա էլ մի օր կայլակել է,
Երբ փթթում էր շուրջը պարտեզ:

Իմ Չիչխանը բարակել է,
Ինձ այրում է ցավով իր կեզ.
Քարավանս մեկնարկել է,
Ջրերի հետ ահա և ... ես:

1989

* * *

Քրոջս՝ Մանյակին

Այս կողմերում ոչ ոք չունեմ,
Գնացել են տուն-տեղ թողած.
Նրանց կյանքում լույս չշողաց...
Այս կողմերում ոչ ոք չունեմ:
Սակայն եկել ու կանչում եմ,
Լռության մեջ ձայնս դողաց...

Այս կողմերում ոչ ոք չունեմ,
Գնացել են տուն-տեղ թողած:

1990

Կարոյին

Թոռնիկս փոքր է, դեռ մեկ տարեկան,
Իսկ ես, դե մեծ եմ, գրեթե ութսուն.
Հասկանալի է, շուտով կգնամ,
Իսկ գնացողը էլ չի դառնում տուն:

Բացակայելս նա հազիվ զգա,
Երկու-երեք օր և ոչ ավելի.
Կմտածի թե՝ պապիկ է, կգա,
Ջերմ կգուրգուրի, կսիրի էլի:

Ու... էլ չի հիշի, ու կմոռանա,
Շատ փոքրիկները շուտ են մոռանում.
Կանցնեն տարիներ, նա կմեծանա,
Ինձ կտարբերի լոկ նկարներում:

Բայց չի իմանա, որ պապիկն իր հետ
Շա՜տ, շա՜տ էր կապված, իրենով լցված.
Միակ թոռնիկն էր՝ մի լույս Կարապետ,
Իրենից բացի չուներ այլ աստված:

1990

* * *

Կյանքումս, օ՜, մերթ քնով եմ անցել,
Եվ ուշացել եմ ժամադրությանս.
Դե ափսոսել է ու չի արթնացրել
Օր ու արևիս պահապան նանս:

Ով հար ծխացող դու օջախ տանս,
Մրսած մատերս մերսել, տաքացրել.
Անսուտ աղոթքի ով սուրբ խորանս,

Գիտե՞ս քո շիրմին որքա՜ն եմ լացել:

1991

Գիքոր

Մի խեղճ Գիքոր էլ մենք ունեինք
Այնտեղ՝ քաղաքում, հյուսնի աշկերտ էր.
Բոլորս նրան կարոտում էինք,
Դեռ երկա՜ր պիտի նա աշակերտեր:

Իր անելիքը նա պիտի սերտեր,
Որ վարպետ դառնար, օ՜, վարպետանար.
(Որ գործը ծանր էր, այդ ինքն էլ գիտեր),
Ինչը-ինչոցի գաղտնիքն իմանար:

Ու նա հյուծվում էր, գունատվում, մաշվում,
Որքա՞ն կարող էր այդպես երկարել,
Նա չէր գանգատվում, բոլորից քաշվում,
Այդպես էր Տերը նրան արարել:

Գիքորի վերջը բոլորին հայտնի,
Ու մեր Գիքորն էլ այդպես վերջացավ.
Դեռ քանի արև պիտի մայր մտնի,
Որ ցավն այդ ասեն՝ «մայրը մոռացավ»:

1995

* * *

Կնոջս՝ մանկաբույժ Արփիկին

Ապաքինում եք Դուք հիվանդներին,
Թեթևացնելով հոգսը նրանց.
Ոնց եք հարմարվում այդ դժվար դերին,
Սեփական հոգսը մի կողմ դրած:

Դուք դերասան եք-դերակատար,
Ու պիտի ժպտաք, ինչ էլ լինի.

Լավ է չեք ճչում լեղապատառ...
Համբերություն Ձեզ, կամք ավելի:

1995

* * *

Ա

Երազիս մայրս վերադարձել էր
Ու ջերմացել էր մեր ցուրտ տնակը,
Վառել էր սյունից կախված ճրագը...
Երազիս մայրս վերադարձել էր:
Կյանքում ամեն ինչ անուշացել էր
Իր հետ բերել էր էն ժամանակը...
Երազիս մայրս վերադարձել էր.
Ու ջերմացել էր մեր ցուրտ տնակը:

Բ

Երազիս մայրս վերադարձել էր,
Տուն էին եկել բոլոր բոլորը,
Գարնանային էր, պայծառ էր օրը...
Երազիս մայրս վերադարձել էր:
Մի քիչ ծերացել ու կռացել էր,
Փնտրել, չէր գտել մեր կորած հորը.
Երազիս մայրս վերադարձել էր,
Տուն էին դարձել բոլոր բոլորը:

1995

Խնայիր ինձ

Խնայիր ինձ, օ՜, Տերս,
Չկոտրվի թող Ծերս,
Քո անաղարտ աղոթքով
Ապաքինիր Դստերս:

Թող նա կյանքը վայելի,
Տենչանքներով, սիրով լի.
Մենք էլ զոհությամբ լցվենք -
Չունեմ պատրանք ավելի:

1996

Մերիկ

Մերիկ, առանց քեզ ես ո՞նց ապրեցի
այս քառորդ դարը
Մարդատյացության այս վայրիվերո
անանց ժխորում.
Այսքան ճիգ ու ջա՞նք, այսքան ծառացու՞մ,
անդուլ ոգորու՞մ...
Մերիկ, առանց քեզ ես ո՞նց ապրեցի
այս քառորդ դարը:
Որերոդ անգամ ձյունի մեջ կորավ
սրբության սարը,
Որերորդ անգամ Տերը թաքնվեց
իր հեռուներում...
Մերիկ, առանց քեզ ես ո՞նց ապրեց
այս քառորդ դարը,
Մարդատյացության այս վայրիվերո
անանց ժխորում:

1996

Հրաշք

Լեզուն բացվում է Տիգրանիկի,
Արտաբերում է ինչ որ բառեր,
Բաց թողնելով բաղաձայներ.
Լեզուն բացվում է Տիգրանիկի:
Հայն այս՝ երրորդ հազարամյակի
Դեռ կարտասանի տաք-տաք ճառեր...
Լեզուն բացվում է Տիգրանիկի,
Բլբլացնում է ինչ որ բաներ:

1996

Շիվերը

Տնկածս շիվերը ձգվել են վեր,
Դարձել հաստաբուն ու սաղարթախիտ.
Այդ ե՞րբ չվեցիք, հպարտ տարիներ,
Այդ ե՞րբ զորացաք, շիվեր իմ վտիտ:

Թող մխիթարվեմ ձեզնով, պուրակներ,
Ձեր լճակներով, ջրերով վճիտ...
Ձեր հիշատակով, մարած կրակներ
Հեռվում ծխացող հայրենի խրճիթ:

1996

Մենք տուն չհասանք

Մինչ տուն հասնելը դեռ ճանապարհ կար,
Միասին էինք այդ ճամփի վրա.
Հիանում էինք բնությամբ Լոռվա...
Մինչ տուն հասնելը դեռ ճանապարհ կար:
Մենք տուն չհասանք. ճամփա՞ն էր երկար,
Ես մոռացել եմ առիթը դրա...
Մինչ տուն հասնելը դեռ ճանապարհ կար,
Միասին էինք այդ ճամփի վրա:

1997

Ինձ համար

Այնտե՛ղ, այն բարձրում մի տեղ կա պահված -
Հարազատներիս շիրիմների մոտ.
Դադար չի տալիս ինձ մի ջերմ կարոտ...
Այնտե՛ղ, այն բարձրում մի տեղ կա պահված:
Ողորկ մի կոթող - հանգչողին հակված,
Թվեր, անուններ, գրեր համառոտ...
Այնտե՛ղ, այն բարձրում մի տեղ կա պահված -
Հարազատներիս շիրիմների մոտ:

1997

Հարութին

Որդիս Վանից հող է բերել,
Պտղունց-պտղունց բաժանում է.
Կարոտախտը թեժանում է...
Որդիս Վանից հող է բերել:
Անմարելի դող է բերել,
Ինչ որ մի ոխ վրեժանում է...
Որդիս Վանից հող է բերել,
Պտղունց-պտղունց բաժանում է:

1997

Մածունը

Մայրիկիս մերած մածունը
Անարատ, անքաշ կաթից էր.
Դե երևի մեր բախտից էր…
Մայրիկիս մերած մածունը:
Բրթում էինք չոր բոքոնը,
Դե նա էլ, ինչ խոսք, գարուց էր.
Մայրիկիս մերած մածունը
Անարատ, անքաշ կաթից էր:

1998

Զարուհուն

Քո ծնունդին հայրդ, մայրդ
Դաշնամուր են քեզ նվիրում.
Շնչավորվի թող քանքարդ,
Ժպիտ ցոլա քո բիբերում:

Դե վայելիր, ժիր թոռնիկս,
Ու տարածիր քո նվագը.
Ես օրհնում եմ, թող կատարվի
Քո երազը, քո փափագը:

1998

* * *

Մայրիկս քնեց ու քնած մնաց,
Ինքն էլ չիմացավ, թե ինչպես գնաց.
Ու թե իմանար, գուցե գոհ մնար,
Այդպես հարմար էր նաև իր համար։

1998

ՍԵՐԵՐ, ՍԵՐԵՐ

* * *

Ահա քնքշորեն անձրև է մաղում.
Սարի հետևում շանթեր են խաղում.
Դուռս բացել եմ, բացել գարնան դեմ,
Սիրտս կարոտից այնպե՛ս է դողում:

Գիտեմ, որ դու էլ տրտում ես հիմա,
Լուռ թափառում ես մայթերով այն թաց...
Դարձի՛ր, ով իմ սեր հեռացած օրվա,
Դարձի՛ր, քո դիմաց կարոտ սիրտս է բաց:

1940

* * *

Մ.Կ.-ին

Երբ ամեն անգամ բաժակ եմ առնում, որ ըմպեմ գինի,
Մտքումս լռին ասում եմ՝ ջանս, կենացդ լինի.
Չէ՞ դու էիր, որ իմ անձուկ կյանքում առաջին անգամ
Վայելքի տարար ճանապարհներով կապույտ անհունի:

Ու հեքիաթի պես քո ծով աշխարհը հեքիաթ էլ մնաց,
Տարիներ եկան, տարիներ անցան ու կյանքն էլ գնաց.
Մեն դու մնացիր մութ հեռուներում հանց կանչող փարոս,
Ու իմ նավակը-բիլ առագաստը հողմերի դեմ բաց:

Եվ այժմ էլ ահա՝ խոնարհ, ոտընկայս, ափիս մեջ գինի,
Հուզմունքով լցված կանչում եմ՝ ջանս, կենացդ լինի:

1940-44

* * *

Բարի աչքով նայիր դու ինձ,
Ու մի եղիր անգութ ու չար.

Մի պատճառիր սրտիս թախիծ,
Ես՝ աղոթող, դու՝ սուրբ տաճար:

Բարի աչքով նայիր դու ինձ,
Ու մի գցիր արդ քարեքար.
Մի պղտորիր սերս անբիծ,
Որ պահում եմ մեն քեզ համար:

Բարի աչքով նայիր դու ինձ,
Ու մի մաշիր տառապանքում,
Ընկեր եղիր ու կարեկից,
Ու միշտ բարի մնա կյանքում:

1940

Ցնորք

Ե՛կ, կանգնիր իմ դեմ, ու ժպտա,
Թող, որ շփոթվեմ ես, ու շիկնեմ.
Բայց զգամ, որ քեզ գտա.
Ե՛կ, կանգնիր իմ դեմ, ու ժպտա:

Ու թող երազն այդ չթվա երազ.
Իրական լինի ժպիտդ գերող.
Ու գիտենամ, որ դու նորից կգաս՝
Հոգումդ երազ, սրտումդ անուշ դող:

Ե՛կ, ամեն պահ ե՛կ,
Ու թող իմ օրը քեզնով պարուրվի.
Քո սիրո հրում թող գիշեր, ցերեկ
Իմ սիրվտը այրվի:

1940

Մի պայծառ ծիծաղ

Արձագանքվում է իմ սրտում անվերջ
Սրտաբուխ մի երգ, կարոտի մի կանչ.

Որպես աղբյուրի թովչալի կարկաչ -
Արձագանքվում է իմ սրտում անվերջ:
Ու տարածվում է բոցավառ, անշեջ
Մի պայծառ ծիծաղ... հուշ լուսաճաճանչ.
Արձագանքվում է իմ սրտում անվերջ
Սրտաբուխ մի երգ, կարոտի մի կանչ:

1941

* * *

Մեկ անգամ ես ինձ ժպտացել,
Միայն մեկ անգամ.
Ժպտացել ու ... սիրտ ես բացել
Միայն մեկ անգամ:

Ու պահը այդ հուշ է դարձել
Ու սիրտս է հուզում.
Մեկ անգամ ես ինձ ժպտացել,
Այն էլ ... երազում:

1946

Ու էլ չի գալու

Ինձ հարցրել է մեկն ու գնացել,
Ու չեմ իմանում ո՞վ է եղել նա.
Շա՛տ եմ սպասել, չի վերադարձել,
Ի՞նչ հույս, թե մի օր կվերադառնա:

Հասցես հարցրել, թողել, գնացել,
Ուզել է տեսնե՞լ, իմ նոր տու՞նը գալ.
Վաղուց է, վաղուց. գուցե մոռացե՞լ,
Գուցե գտել է նա հասցե մի ա՞յլ...

Ո՞վ է եղել նա.
Մի սովորական վաղեմի ծանո՞թ,
Գուցե դասընկե՞ր, կամ հայրենակի՞ց,
Գուցե հարազա՞տ, գուցե հոգուս մոտ

Ազնվաբարո իմ ընկերների՞ց...

Գուցե նա՞, որին շատ, շատ տարիներ
Սպասում էի՝ նվիրված, հլու,
Որ երջանկություն ինձ պիտի բերեր,
Ու եկավ, գնաց, ու էլ չի գալու:

1954

* * *

Ում հետ էլ խոսում -
Անունդ եմ տալիս.
Ում էլ սպասում
Դու ես մոտ գալիս.

Շնորհակա՞լ լինեմ
Քեզնից հավիտյան,
Թե՞ հանդիմանեմ
Թշնամիդ դառնամ,

Որ դարձրել ես
Անունիդ գերի.
Ինքդ մնացել
Մուսա երգերի:

1954

* * *

Վիշտ ես պատճառել իմ վաղ օրերում,
Իսկ ես քեզ ահա երգ եմ նվիրում:

Կյանքը իմ կյանքում եղավ քեզ նման,
Դրա համար եմ ներբողում ես այն:

Ու թե մի օր էլ կյանքը ինձ հերքի,
Հոգիս անթեղված նրան կերգի:

1954

* * *

Թե որ սիրում ես,
Ինչու՞ չես ասում,
Ես, որ ասում եմ,
Ինչու՞ չես լսում,
Թե որ սիրում ես,
Թե որ լսում ես,
Թե որ համր չես,
Ինչու՞ չես խոսում:

Ու թե չես սիրում,
Էլ մի հմայիր.
Թե անզուսպ ատում,
Էլ մի խնայիր,
Արդեն հաշտվել եմ
Տխուր մտքի հետ.
Որ հեռանում ես՝
Էլ ետ մի՛ նայիր:

1954

Օ՜, ների՛ր, ների՛ր

Քո սիրուն ձոնած երգերն այրում եմ,
Խարույկ եմ սարքել, ինքս էլ այրվում եմ:

Կդառնամ մոխիր, կդառնամ ես ծուխ,
Կդառնամ աշնան խոնավ մառախուղ,

Որ գնաս, կորչես այդ մառախուղում...
- Օ՜, ներիր, ներիր, չար խոսք եմ հղում:

1954

Սուվենիր

Ես երազեցի, որ դու մի լավ օր

Ժպիտը դեմքիդ գաս, կանգնես իմ դեմ,
Որ ես սիրո մեջ լինեմ բախտավոր,
Առօրյաս դառնա հեքիաթ ու եղեմ:

Եվ մի հրաշք օր, օ՜, մի երեկո
Նայեմ, դեմ ու դեմ կանգնել, ժպտում ես...
Ու էլ չիմացա ինչ եղավ հետո,
Մնացինք հեռու՜, կարոտով այսպես:

Քո տված վիշտը որպես սուվենիր,
Փայփայում եմ արդ, սիրով օրորում.
Ի՞նչ փույթ հեռու են օրերը անծիր.
Այս որ տարին է արդեն բոլորում:

1955

Ինչու՞ չես գալիս

Երբ ամեն անգամ գարուն է գալիս,
Կյանքը աղմուկով ու երգով լցնում,
Երբ ամեն անգամ մտնում ենք մայիս,
Շքեղ ու շռայլ վարդերը բացվում,
Դու ամեն անգամ, ով իմ անձկալիս,
Ինձ պարուրում ես ու կենդանացնում.
Ես ոգեկոչվում, բայց և մերթ լալիս...
Երբ ամեն անգամ գարուն է գալիս:

Ահա և եկավ այս նոր գարունն էլ,
Մայիսն էլ իր բոց վարդերը բերեց.
Ամենուր վարար ջրերը ելել,
Եվ գագաթները բացվել երկնամերձ.
Իսկ դու ինչու՞ չես գալիս, մոլորվե՞լ,
Թե՞ իմ զգվանքը արդ քեզ ձանձրացրեց.
Բայց չէ որ ես քեզ այնքա՜ն եմ ներել...
Ահա և եկավ այս նոր գարունն էլ:

1955

Եվ այսքան ուշ

Աղոթքի պես մի մեղմ մրմունջ,
Անձրևի պես բարակ մանող,
Երազային, որպես անուրջ,
Չսպասված հյուր - լուռ ժամանող,
Մեկնված ձեռք ու ծաղկի փունջ,
Աչքերիս մեջ աչքեր նայող:

Աչքերիս մեջ աչքեր նայող,
Երազիս մեջ երազ քնքուշ.
Մեղմ մի ժպիտ, ջերմ, հմայող,
Խոնջած ճամփորդ կանգնած անուժ,
Անցյալի փառք, սեր ակնարկող,
Եվ այսքան ու՜շ, և այսքան ու՜շ:

1983

* * *

Աղո՞թք ասում, թե՞ օրոր
Մայրը որդու սնարին.
Ձայներգումով մեղմօրոր,
Ներշնչանքով մի վերին:

Ինքն էլ ասես չգիտե,
Թե ինչպես է վերացել.
Երազանքին այդ եդեմ
Անրջանքով տիրացել:

Օրհնանք, հարգանք, խոնարհում
Սուրբ արարքին մայրական,
Կաթի հետ են ներարկում
Վեհ անցյալն ու ապագան:

1983

Ու … չի հեռանում

Լուսինն ահա նայում է ինձ,
Ու ես էլ իրեն.
Կաթկթում է մի նուրբ թախիծ -
Արցունք իրեղեն:

Լուսինն ահա նայում է ինձ,
Ու չի հեռանում.
- Սեր է հայցել մի օր ինձնից -
Ո՞նց եմ մոռանում:

1983

Գերի աչերի

Գերի եմ եղել ես ծով աչերի,
Հիշելը անգամ քաղցր է, հաճելի.
Վաղուց է չկան, մնացին հուշեր,
Որպես արձագանք հեռու կանչերի:

Գերի եմ եղել ես ծով աչերի,
Անսփոփ գերի - անհեռանկար.
Ես կարոտ լույսի ու ճաճանչների,
Ի՞նչ փույթ, որ ծեր եմ ու մի քիչ տկար:

Գերի եմ եղել ես ծով աչերի,
Հիշելը անգամ քաղցր է, հաճելի:

1984

Կենացդ

Թասս բարձրացնեմ,
Խմեմ կենացդ.
Խոսեմ-քաղցրացնեմ,
Օրհնեմ սուրբ հացդ:

Թասս բարձրացնեմ,
Ողջունեմ դարձդ.

Վերադարձնեմ
Սիրով տվածդ:

1984

Երգի մի էջ

Ինչ որ մի բան ինձնից տարար,
Ինչ որ մի բան թողիր իմ մեջ.
Չհասկացանք, այո, իրար,
Վեճ կար մեր մեջ մի անընդմեջ:

Քո տարածից ու թողածից
Հրավառվեց մի ելևէջ,
Ու հեռավոր արձագանքից
Հյուսվեց տխուր երգի մի էջ:

1984

Սպասում

Մանկամարդ մի կին սպասում է ինձ.
Ի՞նչ ակնկալում, ակնածում ինձնից.
Ի՞նչ ցանկության եմ արդ հագուրդ տալու...
Մանկամարդ մի կին սպասում է ինձ:

Ինչ ասես կյանքում, որ չի պատահում,
Ոչ միշտ է, սակայն, մարդը կռահում.
Թե ինչ փորձանք է իր գլխին գալու...
Ինչ ասես կյանքում, որ չի պատահում:

Վեր կենամ, գնամ ու բախտս փորձեմ.
Պահը կամ օրինեմ, և կամ անիծեմ.
Իսկ թե չգնամ - ի՞նչ եմ շահելու...
Վեր կենամ, գնամ ու բախտս փորձեմ:

Թող իմ արարքում չհայտնվի բիծ...
Մանկամարդ մի կին սպասում է ինձ:

1984

* * *

Տես, դուռս բաց եմ թողել,
Ներս եկ, առանց թակելու.
Հույսով, լույսով ողողվել,
Այսօր չեմ առարկելու:

Տես, դուռս բաց եմ թողել,
Արդ սպասում եմ գալուդ,
Դու երբեք չես հապաղել,
Չես ափսոսել մնալուդ:

Բայց ուշանում ես, ահա,
Ու կասկածն է ինձ պատում.
Մտածում եմ ակամա...
Նույնիսկ, նույնիսկ վհատում:

1984

Ես դեռ...

Ես դեռ սիրում ու սիրահարվում եմ,
Ու գեղեցիկով նույնիսկ տարվում եմ.
Ինչ փույթ տարիքս եկել-անցել են,
Մեկ-մեկ շփոթվում ու կարմրում եմ:

Ներեցեք, ես էլ գրկում-գրկվում եմ,
Զսպանակի պես պրկում-պրկվում եմ.
Երբ վտանգվում է խիղճը մարդկային -
Ներածի չափով փրկում փրկվում եմ:

Թե կարիք լինում՝ ձգում-ձգվում եմ,
Սփոփանքի կարոտ ուսը գգվում եմ.
Սուղ պայմաններում աշխատանքային
Անաղարտ մարդկանց հարգում-հարգվում եմ:

Մինչ գծուծներին հրում-հրվում եմ,
Թող չկարծեն թե ներում-մերվում եմ.
Անհաշտ լինելը հեռու չէ ինձնից,
Նույնիսկ կրակում ու կրակվում եմ:

Կյանքն էսպես տանում, կյանքով տարվում եմ,
Լույսերս մեկ-մեկ մարում-մարվում եմ.
Մինչև կհեգնի անէությունը,
Օ՜, միթե արդեն հեռու-հեռվում եմ:

1984

Չեմ գտնում

Երազածիս կորցրել եմ,
Որոնում եմ, չեմ գտնում.
Հազար մարդու հարցրել եմ,
Չեն իմանում, չեմ գտնում:
Էսպես խելքս թռցրել եմ,
Գիշերն իսկ քուն չեմ մտնում.
Երազածիս կորցրել եմ,
Որոնում եմ, չեմ գտնում:

1984

Գուցե թե գա՞ս

Իմ թղթերում քո հասցեն է,
Որ թողել ես վաղու՜ց, վաղու՜ց.
Գիրը գույնը կորցրել է,
Երևի թե... վշտանալուց:

Իմ թղթերում քո հասցեն է,
Օ՜, ապրու՞մ ես, արդյոք դու կա՞ս.
Դարը եկել ու անցել է,
Դեռ սպասում եմ - գուցե թե գա՞ս:

1984

* * *

Վաղուց անցած, արդ հուշ դարձած Անուններ,
Հավերժաբար բյուրեղացած սրբորեն.
Թող ձեռքերս ձեզ մեղմորեն օրորեն...
Վաղուց անցած, արդ հուշ դարձած Անուններ:
Օ՜, ամպամած փայլատակող հեռուներ,
Որ կայծակում, որոտում եք վեհորեն...
Վաղուց անցած, արդ հուշ դարձած Անուններ,
Հավերժաբար բյուրեղացած սրբորեն:

1985

Դավ

Ջրահարս էր ծովում լողում,
Կանչիս անսաց ու ափ եկավ...
Հուզմու՞նքից էր, որ ես դողում,
Թե՞ հյուսվում էր ներքին մի դավ:

Ջրահարսը զվարթ խնդաց,
Ու տնակն իր վերադարձավ.
Իսկ երկինքը վրաս թնդաց,
Երեկոս էլ գիշեր դարձավ:

1985

Կորցրի ես քեզ

Վերջին ժամադրությունը մեր
Տեղի չունեցավ.
Մտքովս անցան ինչե՜ր, օ՜, ինչե՜ր...
Սիրտս դառնացավ -
Վերջին ժամադրությունը մեր
Տեղի չունեցավ:

Եվ այսպես կորցրի ես քեզ,
Ու ցավն այդ չանցավ -

Դարձավ հուր այրող մի հրկեզ -
Ինչ փույթ, թե անցան տարիներ...
Վերջին ժամադրությունը մեր
Տեղի չունեցավ:

1985

* * *

Օ՜, երբեք, ես երբեք
Քեզ մենակ չեմ թողել,
Իմ հոգու ծալքերում
Քո կրակն անթեղել,
Ու մերթ այն առկայծում
Ցոլցլում է ծածուկ -
Որպես լույս հիացում,
Որպես հույս ու նեցուկ:
Արդ ականջիս մի երգ
Սիրտս լուռ հեղեղել...
Օ՜, երբեք, ես երբեք
Քեզ մենակ չեմ թողել:

1986

* * *

Մեր ճամփաները, օ՜, խաչվում էին,
Հանդիպում էինք այդ խաչմերուկում.
Մեր հայացքները ճաճանչվում էին,
Ու մեր սրտերը զարկում, աղմկում:

Արդ մերթ անցնում եմ այդ նույն ճամփեքով,
Նույն խաչմերուկում կանգնում, սպասում.
Թվում է կգաս քո այն նույն հնքով...
Ու երբ սթափվում - սարսում եմ, սարսում:

1986

Մի թռչնակ

Սաղարթներում իմ պուրակի
Մի երգող թռչնակ
Դուրս է կանչում ինձ անհարկի,
Ծվում շարունակ:

Չեմ ըմբռնում ակնարկները,
Ծանոթ չեմ իրեն.
Փույթ չէ, նրա կրակները
Ներսս կավիրեն:

* * *

Իմ սերը սահման չունի,
Ատելությունս՝ նույնպես.
Էությունս է պարզապես...
Իմ սերը սահման չունի:
Համառությամբ գնչուի
Սիրտ, կորովդ չզիջես...
Իմ սերը սահման չունի,
Ատելությունս՝ նույնպես:

1986

Չունեցանք

Օ՜, այդպես էլ մենք միմյանց չունեցանք,
Այդպես էլ կարոտով մնացինք.
Հեռուն մեր կապույտ էր, թափանցիկ...
Այդպես էլ մենք միմյանց չունեցանք:
Երազ էր, անկատար մի բաղձանք,
Ու տարբեր ճամփեքով գնացինք...
Այդպես էլ մենք միմյանց չունեցանք,
Այդպես էլ կարոտով մնացինք:

1986

Այն հեռուներում

Երջանիկ պահ եք դուք ինձ պարգևել

Իմ փնտրումների արահետներում.
Պատանությանս այն հեռուներում
Երջանիկ պահ եք դուք ինձ պարգևել:
Մինչ տարիները սլացքով թևել,
Արդ ոչ մի, ոչ մի պատրանք չեն բերում.
Երջանիկ պահ եք դուք ինձ պարգևել
Իմ փնտրումների արահետներում:

1987

Չկա

Իմ Մանոն Լեսկոն արդեն չկա,
Վերջին ժպիտն է նրա մնացել
Իր մութ աչքերի ու լույս հոգու հետ.
Արդ թվում է թե ես էլ գնացել,
Լոկ հանդիպում եմ այսպես... մերթ ընդ մերթ...
Իմ Մանոն Լեսկոն արդեն չկա:

1987

Էստոնուհին

Այս դեռատի էստոնուհին ինձ գերեց
Իր հրաշքով, հեզությունով ու նազով.
Այրվեց օրս խաբկանքով ու երազով...
Այս դեռատի էստոնուհին ինձ գերեց:
Ծով բարությամբ հափշտակումս ներեց,
Ու շիկնանքն իր ցանցապատեց շեկ մազով.
Այս դեռատի էստոնուհին ինձ գերեց
Իր հրաշքով, հեզությունով ու նազով:

1988

Անթեղ

Կայծկլտում է, պեծպեծում
Սիրո հուրը անթեղված.

Այս կերոն է կանթեղված -
Կայծկլտում է, պեծպեծում:
Ինչ փույթ, որ մերթ հեծեծում,
Առիթը՝ մութ առեղծված.
Կայծկլտում է, պեծպեծում
Սիրո հուրը անթեղված:

1989

Գիրկ

Անիծյալ լինես, սատանայի գիրկ,
Որ շռայլորեն շքեղ ես ու պիրկ.
Օ, փրկում չունեմ քո փաղաքշանքից...
Անիծյալ լինես, սատանայի գիրկ:
Բավ է մոլեգնես, շողոքորթես կիրք,
Չքվիր, խանգարված կայծկլտացող ձիրք.
Անիծյալ լինես, սատանայի գիրկ,
Որ շռայլորեն շքեղ ես ու պիրկ:

1989

Դե հենց այնպես

Այսօր նորից հիշել եմ քեզ,
Պատանությու՛նն եմ մեր հիշել.
Այնպե՜ս լա՜վն էր, լա՜վն էր այնպե՜ս...
Այսօր նորից հիշել եմ քեզ:

Այսօր նորից հիշել եմ քեզ,
Մեղք չեմ գործել - դե հենց այնպես.
Տարիներն են մեղմ մշուշվել...
Այսօր նորից հիշել եմ քեզ:

1983

Լոր էր

Թերեզային

Վախվորած լոր էր,
Քաղաքում նոր էր,
Շուտ աչքի ընկավ՝
Հագին ալ շոր էր:

Հետապնդեցին,
Ուռկան նետեցին.
Խեղճին թակարդում
Մաքուր փետրեցին:

Արևոտ օր էր,
Նորընծա-նոր էր,
Վաղուց էր, անցա՛վ՝
Վախվորած լոր էր:

1990

Շահու՞մ էի

Ձեր տան մոտով անցնելիս
Շունչս պահում էի.
Աննկատ սահում էի
Ձեր տան մոտով անցնելիս:
Չհասկացա, սիրելիս,
Արդյոք շահու՞մ էի...
Ձեր տան մոտով անցնելիս
Շունչս պահում էի:

1990

Լույսի պես մեկը

Այնպե՛ս կուզեի լույսի պես մեկը
Երբեմն, երբեմն հուշիկ այցի գար.
Ու գիշեր դառնար աստծո ցերեկը,
Արևագալը անվերջ ուշանար:

Այնպե՛ս կուզեի, այնպե՛ս կուզեի
Մեր բարի Տերը մեզ լավ հասկանար.
Սիրո աշխարհը, օ՛, կհուզեի,
Ու թող մեզ վրա մարդ չբարկանար:

1990

Անիծվի թող

Դու մի կարոտ հետդ տարար,
Անիծվի թող մեղավորս.
Օ՛, անմոռաց սուրբ աղվորս,
Դու մի կարոտ հետդ տարար:

Փակ էր ճամփան՝ ծով մի վարար,
Մութ էր ու ցուրտ չորսբոլորս...
Դու մի կարոտ հետդ տարար,
Անիծվի թող մեղավորս:

1992

* * *

Դու գնացել ես հեռու, շա՛տ հեռու.
Դարձել ես ցնորք անհասանելի,
Դարձել տրտմություն մի անասելի,
Դու գնացել ես հեռու, շա՛տ հեռու:
Գիտեմ, ես գիտեմ՝ էլ ետ չես գալու,
Դարձդ չեմ տեսնի՝ անսպասելի.
Դու գնացել ես հեռու, շա՛տ հեռու,
Դարձել ես ցնորք անհասանելի:

1993

* * *

Արդ լավ չեմ հիշում - իրակա՞ն էիր,
Թե՞ ստեղծել էի քեզ իմ երազում.
Բայց լավ հիշում եմ, որ սիրում էի,
Ու ... սիրվել ուզում:

Այն էլ չեմ հիշում՝ ինձ սիրու՞մ էիր,
Թե՞ խաղում էիր, նրբորեն նազում.
Այժմ էլ ահա հեռվից կանչում ես,
Քո աղջկական նազերով հուզում:

1993

Եվա

Ուզում եմ նորից հանդիպում լինի,
Լինենք միայն մենք, լինենք անմեկին.
Ես՝ Ադամորդի, դու՝ Եվա, օ՜, կին...
Ուզում եմ նորից հանդիպում լինի:
Սիրով արբենանք, որպես հին գինի,
Այն թող օրորի, վերանանք կրկին...
Ուզում եմ նորից հանդիպում լինի,
Լինենք միայն մենք, լինենք անմեկին:

1994

Ակնածանքով

Օ՜, այսօր մենք համբուրվեցինք
Այնպես սիրով, ակնածանքով.
Պահը լցված էր հանցանքով...
Օ՜, այսօր մենք համբուրվեցինք:
Ու մերվեցինք, ու ներվեցինք,
Թելադրված ջերմ բաղձանքով...
Օ՜, այսօր մենք համբուրվեցինք
Այնպես սիրով, ակնածանքով:

1994

* * *

Դու իմ ցնորքն էիր,
Իմ երազած կինը.
Իմ զենքն ու զորքն էիր,

Հաղթանակիս գինը:

Ճերմակ մշուշ մնաց
Պաստառին հուշերիս.
Ցողաշաղախ անանց,
Անքուն գիշերիս:

1995

Շամիրամը

1

Շոգ Շամիրամը սիրեց Արային,
Վայելել ուզեց սերը առնական
Սերը զգլխիչ և արքայական -
Շոգ Շամիրամը սիրեց Արային:
Արայի սերը անկաս՝ երկրային,
Արայի սերը թունդ՝ թորգոմական
Շոգ Շամիրամը սիրեց Արային,
Վայելել ուզեց սերը առնական:

2

Մինչ հպարտ արքան արքայավայել
Սեր չխոստացավ, հյուր չհրավիրեց,
Շամիրամի բոց սերը ավիրեց -
Օ՜, հպարտ Արան արքայավայել:
Ինչով էր արքան նրան հմայել,
Եվ ինչու սիրո ձեռք չերկարեց.
Օ՜, հպարտ Արա, արքայավայել.
Սեր չխոստացավ, հյուր չհրավիրեց:

3

Եվ Շամիրամը նենգ նետահարեց,
Արքան - արքայի՞ն, օ՜, չէր կարելի
Եվ արարքը այդ խիստ, աններելի...
Եվ Շամիրամը նենգ նետահարեց:
Հետո հասկացավ, թե այդ ինչ արեց,
Անիրավություն պախարակելի...
Եվ Շամիրամը նենգ նետահարեց,

Արքան - արքայի՞ն, օ՜, չէր կարելի:

4

Օ՜, խենթ Շամիրամ, օ՜, նենգ արալեզ.
Փրկե՞լ ես ուզում քո անմեղ որսին,
Ապարդյուն է քո տառապանքը սին,
Օ՜, խենթ Շամիրամ, օ՜, նենգ արալեզ:
Արան անվրդով, ահա դին իր հեզ,
Որպես կայծակով կործանված սոսին.
Օ՜, խենթ Շամիրամ, օ՜, նենգ արալեզ.
Փրկե՞լ ես ուզում քո անմեղ որսին,

1995

Կերանք

Ադամի, Եվայի նման
Արգելված պտուղը կերանք,
Ստեղծողին պարտազանց եղանք
Ադամի, Եվայի նման:
Ի վերջո Տերը գոհ մնաց,
Մարդկությունը կա, մենք կանք.
Ադամի, Եվայի նման
Արգելված պտուղը կերանք:

1995

* * *

Պահեր երջանիկ հանդիպումների,
Լոկ դուք մնացիք արթուն հուշերում.
Դուք մերթ սթափեցրիք անքուն գիշերում,
Պահեր երջանիկ հանդիպումների:
Անդարձ գնացած, կորած օրերի
Կարոտներ հանգչող թաց մշուշներում.
Պահեր երջանիկ հանդիպումների,
Լոկ դուք մնացիք արթուն հուշերում:

1996

Մալու

Օ՜, Մալու, Մալու,
Դու առիթ չունես
Ցավատանջ լալու:

Բոլորը կանցնեն,
Դու, սակայն, Մալու,
Դու ես մնալու:

1996

* * *

Դու այնտե՜ղ,
Ես՝ այստեղ.
Ողջագուրվել չենք կարող,
Ջերմ համբուրվել չենք կարող -
Դու այնտե՜ղ,
Ես՝ այստեղ:

1997

Հարց

Արևածագ է, գարնան առավոտ.
Ես կա՞մ, թե՞ չկամ այդտեղ՝ սրտիդ մոտ.
Հեռավոր իմ, հեռավոր իմ կարոտ.
Արևածագ է, գարնան առավոտ:
Հեռվում՝ հայրենիք, երկինք արևոտ,
Մինչ դարձի ճամփան՝ ձիգ ու քարքարոտ.
Զգվում է թախիծը հայրենակարոտ...
Արևածագ է, գարնան առավոտ:

1997

Աղաթները

Ա՜խ, այն պարզված գավաթները
Սուրբ գինով լի, որ չըմպեցի -
Մեղավորս վրիպեցի...
Ա՜խ, այն պարզված գավաթները:
Ինձ նենգեցին ադաթները,
Ենթարկելով տառապանքի...
Ա՜խ, այն պարզված գավաթները
Սուրբ գինով լի, որ չըմպեցի:

1997

Մարոյին

Այնպես հարազատ ես ինձ,
Քրոջ նման ներող.
Հանգիստ ու նինջ բերող...
Այնպես հարազատ ես ինձ:
Օրհնանք ու հավատ ես ինձ,
Լույս մեղմությամբ գերող.
Այնպես հարազատ ես ինձ,
Քրոջ նման ներող:

1997

Կարոտ

Կարոտել եմ հաճելի
Անակնկալ հանդիպման,
Արևահամ այտերի
Ու շուրթերի ջերմ հպման:

Շռայլ բուրում են վարդեր,
Անկրկնելի յասաման.
Ի՞նչ է, խախտվե՞լ եմ ես, Տեր,
Անցկացել չափ ու սահմա՞ն:

Երևի պահն է լցվում
Անվերադարձ հեռացման.

Քայլերի ձայնն եմ լսում
Ինձ ուղեկցող մոռացման:

1997

Ավա՛ղ

Ես շատ նայեցի անցող-դարձողին,
Փորձեցի նրանց ցավը իմանալ,
Ուզեցի ցավին սպեղանի դառնալ...
Ես շատ նայեցի անցող-դարձողին:
Հոգատար չեղա աչքերիս շողին,
Արդ սկսել եմ, ավաղ, կուրանալ.
Շատ, շատ նայեցի անցող-դարձողին,
Փորձեցի նրանց ցավը իմանալ...

1997

* * *

Դու չիմացար, ոչ, չիմացար,
Որ ես քո՛նը մնացի.
Ի՛նչ փույթ, հեռու գնացի...
Դու չիմացար, ոչ, չիմացար:
Սիրով եկար, անգետ անցար,
Իսկ ես՝ կարոտ քո դարձին...
Դու չիմացար, ոչ, չիմացար,
Որ ես քո՛նը մնացի:

1997

Անցանք, գնացինք

Ինձ համար էիր դու աշխարհ եկել,
Ես՝ մոլորյալս շատ ուշ հասկացա,
Դու անցել էիր ու ես էլ անցա...
Ինձ համար էիր դու աշխարհ եկել:
Անցանք, գնացինք, չենք գալու մեկել,
Մեզ ետ չի տանի էլ ոչ մի կածան...

Ինձ համար էիր դու աշխարհ եկել,
Ես՝ մոլորյալս շատ ուշ հասկացա:

1997

Չգտա

Ես այդպես էլ չգտա,
Այն, ինչ մի օր կորցրի.
Տառապանքս թաքցրի...
Ու այդպես էլ չգտա:
Արևի հետ մայր մտա.
Գիշերս չլուսացրի...
Ես այդպես էլ չգտա,
Այն, ինչ մի օր կորցրի:

1997

* * *

Ափսոսանքով եմ արդ մտաբերում
Սիրո վայելքի պահ մի կորցրած՝
Շրմպելով թասը քո ձեռքով լցված...
Ափսոսանքով եմ արդ մտաբերում:
Անվերջ նախատում ու ինձ չեմ ներում,
Օ՜, անկրկնելի երազ խոցոտված...
Ափսոսանքով եմ, օ, մտաբերում
Սիրո վայելքի պահ մի կորցրած:

1997

* * *

Խոստովանում եմ, մեղավոր էի,
Ու մինչև հիմա չեմ հանգստանում.
Հուշերիս անքեն դատ-դատաստանում
Խոստովանում եմ, մեղավոր էի:
Դու աստվածային, դու աղվոր էիր.
Դրա համար եմ ինձ ամբաստանում...
Խոստովանում եմ, մեղավոր էի,

Ու մինչև այսօր չեմ հանգստանում:

1997

Դեմ-դիմաց

Հարևաններ լինեինք,
Դուռ ու դրկից՝ դեմ-դիմաց,
Փակ չլիներ, ողջը բաց...
Հարևաններ լինեինք:
Մեզ տուն ու բուն հինեինք,
Տանը լիներ աղ ու հաց.
Հարևաններ լինեինք՝
Դուռ ու դրկից՝ դեմ-դիմաց:

1997

Պատրանք

Մենք նոր միայն հանդիպեինք,
Նոր, նոր միայն ու ... հանկարծ.
Երջանկությամբ պայծառացած...
Մենք նոր միայն հանդիպեինք,
Ու գրկվեինք, համբուրվեինք,
Տերը մնար զարմացած.
Մենք նոր միայն հանդիպեինք,
Նոր, նոր միայն ու ... հանկարծ:

1997

* * *

Քեզ ունեի, կորցրի,
Ու այլևս չգտա.
Արևից վաղ մայր մտա...
Քեզ ունեի, կորցրի:
Բոլորեքյան որոնեցի...
Տվայտանքիս հավատա.
Քեզ ունեի, կորցրեցի,

Ու ... այլևս չգտա:

1997

* * *

Եկ մենք էսօր սեր վայելենք,
Մեզ ինչ, վաղը ինչ կլինի,
Լինելիքը թող որ լինի...
Եկ մենք էսօր սեր վայելենք:
Ինչ էլ լինի, միմյանց ներենք,
Փույթ չէ, ծեր ենք, ոչ պատանի...
Եկ մենք էսօր սեր վայելենք,
Մեզ ինչ, վաղը ինչ կլինի:

1998

* * *

Քո գահն իմ հոգում թափուր էլ մնաց,
Նրան տիրանալ ոչ ոք չփորձեց,
Ձի ճանապարհին լեռ կար բարձրաբերձ...
Քո գահն իմ հոգում թափուր էլ մնաց:
Երկնակամարը մաքուր է ու բաց,
Արևի ճամփան ամպը չփակեց...
Քո գահն իմ հոգում թափուր էլ մնաց,
Նրան տիրանալ ոչ ոք չփորձեց:

1998

Մայրեր

Մայրեր, մայրեր որդիների
Եվ դուստրերի, օ՜, դուրեկան -
Ինչ փույթ, թե ոչ օրինական...
Մայրեր, մայրեր որդիների:
Միջնորդեցեք, Տերն ինձ ների -
Անառակիս նվիրական...
Մայրեր, մայրեր որդիների
Եվ դուստրերի, օ՜, դուրեկան:

1998

Կա՞ս

Սուրճիս նստվածքում երկու աչքեր են
հույժ նայում վրաս.
Ում հայացքն է այդ, օ՜, քո՞նն է արդյոք,
դու ապրու՞մ ես, կա՞ս.
Հույս ես փայփայում, որ Տիրոջ կամքով
ետ վերադառնաս...
Սուրճիս նստվածքում երկու աչքեր են
հույժ նայում վրաս:

Նայիր, օ՜, նայիր այնտեղ, իմ ներսում
թափուր է, ունայն
Գահավորակը, ուր բազմում էիր,
ու քոնն էր միայն.
Օ՜, քոնն է դարձյալ, և քինախնդիր
չեն նայում վրան...
Ներսում, իմ ներսում գահավորակը
թափուր է, ունայն:

1998

* * *

Իմ բոլոր սերեր, դուք արդեն չկաք,
Տերն ինձ պահում է, որ ձեզ միշտ հիշեմ,
Տարելիցներդ մեկ առ մեկ նշեմ.
Իմ բոլոր սերեր, դուք արդեն չկաք:
Թե նրա կամքով դուք վերադառնաք,
Չեք գտնի այլևս ծանոթ դուռ ու շեմ...
Իմ բոլոր սերեր, դուք արդեն չկաք,
Տերն ինձ պահում է, որ ձեզ միշտ հիշեմ:

1998

* * *

Ես սպասում եմ քո այն նամակին,
Որ վաղուց գրել, բայց չես առաքել,
Մի հին թախիծ է հոգիդ համակել...
Ես սպասում եմ քո այն նամակին:
Էլ փայտ չեմ դնում մարող կրակին,
Բուխարուս ծուխն է արդեն բարակել...
Ես սպասում եմ քո այն նամակին,
Որ վաղուց գրել, բայց չես առաքել:

1998

* * *

Գեղեցիկ կին էր,
Օ՜, անմեկին էր,
Չարձագանքեցի ես նրա կանչին...
Օ՜, ամբարտավան, ես հոգի չնչին.
Գեղեցիկ կին էր,
Օ՜... անմեկին էր:

1998

* * *

Մենք գտել էինք իրար,
Գրկում էինք ու գրկվում,
Համբուրում ու համբուրվում...
Մենք գտել էինք իրար:
Օ՜, երազն այդ անհնար,
Ավաղ, էլ չի կրկնվում.
Մենք գտել էինք իրար,
Գրկում էինք ու գրկվում:

1998

* * *

Երբ վերջին անգամ մենք հայացքներով
իրար փարվեցինք,
Օ՜, անակնկալ՝ լուռ, հոգեխռով
գեհեն տարվեցինք.

Պատժվածի պես մենք պապանձվեցինք,
ասես քարացանք,
Ու նոր հասկացանք, որ հանցավոր ենք…
ու չներվեցինք:

1998

* * *

Այսքան մոտ ու մերձ ե՞րբ էինք եղել,
Խանգարվում էինք ամեն առիթով.
Ինչ փույթ՝ երազում փարվում հոգեթով...
Այսքան մոտ ու մերձ ե՞րբ էինք եղել:
Ճակատագիրն էր մեր ճամփան շեղել,
Ու մենք քայլեցինք ոչ նույն շքերթով...
Այդքան մոտ ու մերձ ե՞րբ էինք եղել,
Խանգարվում էինք ամեն առիթով:

1998

* * *

Օ՜, նրանք հիմա չկան,
Ում հետ որ մոտ եմ եղել.
Ում հետ սեր եմ մեկտեղել...
Օ՜, նրանք հիմա չկան:
Մենք անեղծ, անապական
Արբունքն էր մեզ հեղեղել...
Օ՜, նրանք հիմա չկան,
Ում հետ որ մոտ եմ եղել:

1998

* * *

Օ՜, անհնար է չհափշտակվել
Անանց հմայքով նազելի կնոջ.
Անանց ծիծաղով - աղբյուրի խոխոջ...
Օ՜, անհնար է չհափշտակվել:
Հնարը գտնել ու ներդաշնակվել
Ընծայել վարդեր ալ-նորաբողբոջ...

Օ՜, անհնար է չհափշտակվել
Անանց հմայքով նազելի կնոջ։

1998

* * *

Սիրո կարոտ կա իմ անխոնջ սրտում,
Ինչ փույթ իմ դարը տեղի է տվել,
Ինչ փույթ անտառը բազմիցս հատվել...
Սիրո կարոտ կա իմ անխոնջ սրտում։

Օ՜, նա մերթ ընդ մերթ այնպես թփրտում,
Ասես վազքի մեջ որմի է բախվել.
Սիրո կարոտ կա իմ անխոնջ սրտում,
Ինչ փույթ իմ դարը տեղի է տվել։

1998

* * *

Մեր կանգառում սպասում էիր,
Հանրակառքի՞, թե՞ իմ գալուն.
Մեր բաղձալի հանդիպելուն
Մեր կանգառում սպասում էիր։
Քո իսկ խոսքից սարսում էիր,
Որ մեկնում ես երկրի հեռուն.
Մեր կանգառում սպասում էիր,
Հանրակառքի՞, թե՞ իմ գալուն։

1998

* * *

Ես համառեցի և արժանացա
քո զուսպ հրավերին՝
Վաղեմի երազ, որ հանկարծ դարձավ
ստույգ իրական.
Օ՜, պահ երջանիկ և անկրկնելի
օ՜, եդեմական.
Ես համառեցի և արժանացա

քո զուսպ հրավերին։
Մեղք մի համարիր, եղիր անաչառ
ու ներիր, Վերին.
Ու... այնուհետև մեր լույս աստղերը
էլ իրար չեկան...
Ես համառեցի և արժանացա
քո զուսպ հրավերին,
Վաղեմի երազ, որ հանկարծ դարձավ
ստույգ իրական։

1998

* * *

Մի էգ, մի արու
Փարվել իրարու
Սեր են ըմբոշխնում
Միտվել են միմյանց
Մի համբույր
Սիրում, սիրվում են
Հանուն մեծ կյանքի
Եվ հանուն բարու։

1998

* * *

Այդ աչք ու ունքիդ լույս դեմքիդ վայել,
Ես երկա՛ր, երկա՛ր, ես անվերջ նայել,
Կործանվելու չափ անհույս հմայվել,
Այդ աչք ու ունքիդ լույս դեմքիդ վայել
Ու մինչև այսօր հուշն այդ փայփայել,
Անսիրտ սպասումից փրկել, խնայել...
Այդ աչք ու ունքիդ լույս դեմքիդ վայել,
Ես երկա՛ր, երկա՛ր, երկա՛ր եմ նայել։

1998

Դու կաս

Ջուլիետին

Իմ բոլոր երգերում դու կաս,
Հրաշք հայուհիս, համեստ ու հեզ,
Փնտրե՞լ, նրանցում գտե՞լ ես քեզ…
Իմ բոլոր երգերում դու կաս։
Դու հանապազ հավերժահաս,
Մինչ կյանքդ նամակ կարոտակեզ…
Իմ բոլոր երգերում դու կաս,
Հրաշք հայուհիս, համեստ ու հեզ։

1998

* * *

Փոստարկղում իմ նամակն է,
Հին օրերի նոր կրակն է.
Մի երկընչիր, առ ձեռքիդ մեջ,
Հավատալու ժամանակն է։

Փոստարկղում իմ նամակն է,
Աղաղակող իմ երակն է.
Տրոփում է առաջվա պես,
Օ՜, այն սրտիս զարկերակն է։

1998

* * *

Սերերիս մեջ ջահելն էիր,
Պայծառ էիր արևի պես.
Տրվել էի ես միայն քեզ...
Սերերիս մեջ ջահելն էիր։
Դու դեռ պիտի վայելեիր.
Մի երկնաթուր սեր բոցակեզ...
Սերերիս մեջ ջահելն էիր,
Պայծառ էիր արևի պես։

1998

ԵՍ ՈՒ ԵՍ

* * *

Ես՝ եռաժանիք արվեստագետս
Ինչ արարել եմ իմ երկար կյանքում,
Ինչ կուտակել եմ իմ սրտում, հոգում,
Թողնում եմ այստեղ, չեմ տանում հետս:

Ես՝ վաստակաշատ ճարտարապետս
Սուրբ կոթողներ եմ կանգնել մայր հողում,
Ու արարքս այդ այժմ ներբողում,
Որ չանհետանա սուղ արահետս:

Ես՝ ուշիմ գիտուն, գրի վարպետս,
Օ՜, չեմ հանդուրժել սխալ ու սուտը,
Փառաբանել եմ գրի օգուտը,
Հատու է եղել արձակած նետս:

Արդ ոչ իմ մեղքով անհայտ պոետս
Գրել եմ, թողել անտեսանելի.
Յուրընտիր լավին մերթ հասանելի,
Զուլալ եմ պահել մշտահոս գետս:

Ես՝ եռաժանիք արվեստագետս…

1998

* * *

Լուռ ծվարեց թևը սրտիս,
Ննջեց հոգուս աղավնին,
Քունը ծանր թիկնեց քունքիս,
Օրոր ասեց եղևնին:

Երազների խոր ծովն ընկա,
Ծով հուշերի լայն հովտով
Անցա, որպես շող լուսնկան՝
Աստղանկար կապույտով:

Մանկությունս՝ շուշան, նարգիզ,
Ընկերներս՝ աստղիկներ.
Բոլորն եկան ու երազիս
Դարձան վարդ ու ծաղիկներ:

Ու ժպտացին պուրակները,
Վառվեցին բյուր աչիկներ,
Խոխոջացին առվակները,
Երգեցին հանց աղջիկներ:

Ու ես անցա նրանց միջով,
Արբած խունկի բուրմունքով.
Հովիտն անցա, անցա լանջով,
Անցա սարի թիկունքով:

*

Այդպես արևն է ծագն առնում,
Ելնում գմբեթն երկնքի.
Ապա իջնում ու հեռանում -
Ավարտում օրն արբունքի:

1937

* * *

Ես լավ եմ հիշում խոսքերդ, նանի -
«Քամու բերածը՝ քամին կտանի.
Միշտ իր ձեռքով է կռում ու կոփում,
Իր կյանքը ձուլում՝ մարդը անվանի»:

Իմաստուն էիր, իմ անուշ նանի,
Քեզ ծնող, սնող ժողովրդի պես.
«Քամու բերածը՝ քամին կտանի,
Լավ է, քո կյանքը՝ քո ձեռքով կռես»:

Դեռ ջահել էի, լավ չհասկացա,
Թվաց, թե «բախտը հանճար կբերի»
Իրար ետևից տարիներ անցան,
Ճերմակն անձրևեց իմ թուխ մազերին:

Ո՛չ բախտը հանճար ինձ նվեր բերեց,
Ո՛չ տարիներիս ջանքը պիտանի.
Խստագույն եղավ կյանքն ու չներեց.
Ու ես հիշեցի խոսքերդ, նանի՝
*
«Քամու բերածը՝ քամին կտանի»:

1937

* * *

Ասի՝ գետակ, աղմկում ես,
Գոռում, գոչում, ցատկռտում.
Ափդ մաշում, լերկ հղկում ես,
Վրան փռվում, հեծկլտում:

Ասեց՝ հունս քարքարոտ է,
Ինչպե՞ս անցնեմ անվրդով.
Թե քո սիրտն էլ արդ վիրոտ է,
Եկ, մեկ անցնենք այս ճամփով:
Ես լռեցի. ու գետն անցավ
Բարձր գոռում-գոչումով.
Նա երևի ծովը հասավ՝
Հանգստության գիրկը մով:

1939

* * *

Աչքս Մասիս սարին առավ,
Սարի էն սուրբ կատարին.
Աչքս սարի ձյունին սառավ,
Ամպի ճերմակ պատառին:

Միտքս ցնորք - երազ դարձավ,
Ճերմակ թռչուն թևավոր.
Գնաց, սարի ձյունին թառավ -
Հանց հեքիաթում - բախտավոր:

1940

* * *

Ինչպես վաղ գարնան ջրերը ելման՝
Հպարտ ծերպերից,
Լույս կատարներից,
Իջնում են կայտառ,
Մտնում ձոր, անտառ,
Ծով ծաղկանց միջով,
Ուրախ քրքիջով
Հյուսվում գետերին,
Պղտոր ջրերին,
Գնում, հեռանում ակունքից հեռու՛,

Այդպես սրտումն իմ ելնում են, հառնում՝
Հուշերս մանկութ,
Հրճվանքս անսուտ,
Ջերմ լացս անվիշտ,
Ծիծաղս առմիշտ,
Երազներս ծով,
Ցնորքներս մով,
Հասակս հպարտ
Համառ ու անպարտ,
Որ էլ չե՛ն դառնում, որ էլ չե՛ն դառնում:

1940

Ծիվ-ծիվ

Ա՛յ փոքրիկ թռչուն, սիրուն, սրաթև
Բաց պատուհանից երբ իմ տուն ընկար,
Էն ի՞նչ ասացիր «ծիվ-ծիվ» ու թեթև
Աչքդ թարթելով նորից դուրս թռար:

Ես չհասկացա քո թռչնի լեզուն.
Ու ծլվլոցդ ինձ գաղտնի մնաց.
Երբ հայտնվեցիր նորից երազում՝
Տեսա, որ աչքդ կարոտով էր թաց:

1941

* * *

Արձագանքվում է իմ սրտում անվերջ
Սրտաբուխ մի երգ, կարոտի մի կանչ,
Որպես առվակի թռվչալի կարկաչ,
Արձագանքվում է իմ սրտում անվերջ:
Ու տարածվում է բոցավառ, անշեջ
Մի պայծառ ծիծաղ… հուշ լուսաճաճանչ.
Արձագանքվում է իմ սրտում անվերջ
Սրտաբուխ մի երգ, կարոտի մի կանչ:

1941

Տխուր երգ

Գիշերվա անհուն պաղ լռության մեջ
Լսում եմ անվերջ
Մի ինչ որ թռչնի կանչը լալագին.
Ո՞վ գիտի, անգին,
Սիրած, փայփայած ձագուկն է կորել,
Ճամփեն մոլորել,
Եվ կամ մնացել անօգ ու գերի
Մի գիշակերի:

Մտքովս հազար բան է անց կենում,
Ու գնու՛մ, գնու՛մ,
Ու վերջ չի գտնում, ու վերջ չի գտնում:
Ու… քուն չեմ մտնում:

1954

* * *

Առավոտյան ելնում եմ վաղ,
Որ տեսնեմ ծագն արևի,
Ճաճանչափայլ, ոսկեշափաղ
Անձեռակերտ թագն արևի:

Առավոտյան ելնում եմ վաղ,
Աղոթքն առնում սուրբ վերևի,
Որ չամպոտի կապույտը պաղ,
Մեր ճանապարհը արևի:

1954

* * *

Իմ կոլեգաներ Յու.-ին և Գ.-ին

Դե շատ չունեի,
Բայց ունեցածիս ամենալավը
Ինձնից գողացան.
Ես պաշտպանվելու
Ոչ թուր ունեի, ոչ էլ հրացան:

Ինձ կողոպտեցին,
Նույնիսկ կոպտեցին.
Կերան, մարսեցին
Սարքովի դավը.
Աչք չթարթեցին,
Ջանք չթափեցին,
Հափշտակեցին ամենալավը:

1951

Մանուկ միամիտ

Թմբուկ եմ զարկել մանուկ հասակում,
Շարքի առջևից հպարտ քայլել եմ,
Ինձ թվացել է շատ եմ հասկանում,
Տեղին, անտեղի - հաճախ փայլել եմ:

Ու կարծել եմ թե՝ երբ որ մեծանամ,
Ինչպես աշխարհում ամեն բան հերթով՝
Ես էլ պիտի որ անվանի դառնամ,
Ու անցնեմ կյանքի առաջին երթով:

Ի՞նչ իմանայիր, մանուկ միամիտ,
Որ կյանքը ջանք է, պայքար անողոք.
Ո՛չ միշտ է մարդը վաստակում ժպիտ,
Ու փառքի հասնում ո՛չ ամենայն ոք:

1954

* * *

Դու պիտի գայիր, այդ ինչու՞ չեկար -
Իմ մանուկ կյանքի դու անուշ երազ.
Ես քեզ սպասեցի երկար, շա՜տ երկար,
Գիտեի՞ր արդյոք, իմ ցնորք անհաս:

Դու պիտի գայիր, չեկար, ոչ, չեկար,
Իմ անհոգ երգը թախծով պարուրվեց.
Մնացիր պատրանք ու դարձար նկար,
Ու նկարդ լոկ սիրտս գուրգուրեց:

*

Դու պիտի գայիր, դու ինչու՞ չեկար:

1955

* * *

Հարությունին, Տաթևիկին

Երբ հասակ առնեք հպարտ, կորովի,
Արդեն չեմ լինի ես այս աշխարհում.
Ձեր կյանքն ի՞նչ ընթացք, ի՞նչ հուն կընդունի -
Ես այդ եմ խորհում:

Ինչպե՞ս կռահեմ գալիքն հեռավոր
Այս հարափոփոխ, անհանգիստ դարում.
Խաղա՞ղ կլինի, խորշա՞կ ահավոր -
Ես այդ եմ խորհում:

Ինչո՞վ օգտակար դառնամ, որ թեթև
Անցնի ձեր ճամփան գալիք օրերում.
Որ դժկամությամբ չնայեք ետև -

Ես այդ եմ խորհում:

1960

* * *

Օրեր եկան,
Օրեր անցան,
Եվ տարիներ, տարիներ.
Ձմեռները գարուն դարձան,
Եվ աշունները՝ ձմեռ:
Ով հայրենիք,
Ով մեր պարծանք,
Մենք քեզ տվինք
Եվ կյանք և ջանք,
Եվ սիրտ և կիրք,
Սեր անկապանք,
Ջահել էինք,
Եվ ծերացանք:
Օրեր եկան,
Օրեր անցան,
Եվ տարիներ, տարիներ.
Ձմեռները գարուն դարձան,
Եվ աշունները՝ ձմեռ:

1962

* * *

Շատ տագնապներ եմ կյանքում ունեցել.
Ալեկոծվել է հոգիս մինչ հատակ:
Զարմանում եմ, թե ոնց եմ դիմացել -
Կյանքը չեմ լքել, օ՜, անժամանակ:

Շատ տագնապներ եմ կյանքում ունեցել,
Խռովքներ անվերջ ընդվզման-շիտակ.
Կյանքի խութերը կշռել, իմացել,
Ողջը համարել երկնային կատակ:

1970

Հունաստանում

Քայլեցի Զևսի ոտնահետքերով,
Մտա տաճարը նրա ավերակ.
Փշաքաղվեցի, թե ինչ ձեռքերով
Նրա կերտողը դեռ այն ժամանակ
Հսկայածավալ բեկորները բյուր
Բերել, դրել է իրարու վրա,
Ինքն էլ երևի զգացել սարսուռ
Հոյակերտության վեհությամբ նրա:

Զարմանալի է մարդ արարածը,
Ինքն է ստեղծել գերբնական Աստծուն.
Աստվածացրել է իրեն արածը,
Նրան պարգևել և երկինք, և տուն:
Ինքը մնացել լոկ մահկանացու,
Զուրկ վայելքներից ռեալ, երկրային,
Մինչ ուրվականն է Զևսի թևածում
Բիլ ոլորտներում բարձր, երկնային:

1977

* * *

Ավարտին է մոտեցել
Իմ ճանապարհը,
Շուտով թափուր կմնա
Իմ անզարդ գահը:

Կհեռանան պալատից
Թիկնապահներս.
Կհանի իր մատյանից
Երկնային տերս:

Բոլորից կմոռացվեմ
Շուտով, շատ շուտով.
Արդյոք նորից կբացվե՞մ
Իմ երգ ու վշտով:

1978

* * *

Թխպոտ, տխուր եղանակ,
Անձրևում է շարունակ.
Սպասումն է երկարում…
Լուռ կանգնել եմ ծառի տակ:

Չունեմ ոչ մի սփոփանք,
Սրսփում եմ անկրակ.
Ջրերն անվերջ վարարում…
Թխպոտ, տխուր եղանակ:

1982

* * *

Ես քեզնից մի քիչ երկար ապրեցի,
Ու ճանապարհս անցա առանց քեզ,
Եվ աշխատեցի, և շտապեցի,
Թվում էր մի քիչ մեղավոր եմ ես:

Ու այդ իմ մեղքը քավելու համար
Ցերեկ ու գիշեր անխոնջ տքնեցի.
Որ չլինի թե մնա անկատար
Այն, ի սեր որի այնքան օգնեցիր:

1982

* * *

Սիրահարվել եմ պայծառ Լուսաստղին,
Խենթացել նրա հրավառությամբ.
Կընկերանայի հախուռն անձկությամբ...
Սիրահարվել եմ պայծառ Լուսաստղին:

Օգնիր, ով Աստված, իմ անմիտ խաղին,
Ու խելք առաքիր քո իմաստությամբ.
Սիրահարվել եմ պայծառ Լուսաստղին,

Խենթացել նրա հրավառությամբ:

1983

* * *

Լուսաստղի հետ արթնանում եմ,
Քունս չի տանում.
Խև մտքերից վարանում եմ,
Քունս չի տանում:

Ալեկոծվում, վարարում եմ,
Էլ չե՛մ դիմանում...
Լուսաստղի հետ արթնանում եմ,
Քունս չի տանում:

1983

* * *

Անձրևոտ է առավոտս,
Ու գետինն է թաց.
Տխրությունս ու կարոտս
Թև-թևի տված

Մեկեն եկան ու լցվեցին
Իմ լուռ տնակը.
Անթեղված էր՝ բորբոքեցին
Հոգուս կրակը:

Անձրևոտ է առավոտս,
Ու... աչքերս են թաց:

1983

* * *

Քեզ չեմ ճանաչում, ով հարազատս,
Ինձ ցույց չեն տվել, թե որ մեկն ես դու.
Ինձ քիչ է մնում, անցել է շատս,
Դրանից է թունդ ցավս ահազդու:

Եղիր համարձակ, եկ ու հայտնվիր,
Ասա ինձ, խնդրեմ, այն, ինչ որ գիտես,
Արբանյակի պես էլ մի պտտվիր,
Ուրախ կլինեմ հանդիպել ի տես:

1983

Հանաք

Ինչ լավ է, որ գրիչ ունեմ,
Ու նրանում թանաք կա.
Այսօր ինչ էլ, որ գրում եմ,
Մեջը անմեղ հանաք կա:

Ինչ լավ է, որ ծիծաղ ունեմ,
Ծիծաղի մեջ լաց էլ կա.
Խոստացել եմ՝ մատաղ անեմ,
Չունեմ ոչ մի բացակա:

Ինչ լավ է, որ գործ շատ ունեմ,
Եղածի մեջ լավն էլ կա.
Լավի համար պարծենում եմ,
Ինչ փույթ նենգող դավ էլ կա:

1983

* * *

Ուսերիս հաճելի մի բեռ,
Քայլերս հաջորդում իրար,
Քամուն ու ցրտին անտարբեր -
Հեզ ճամփորդ, չեմ առնում դադար:
Ճիշտ այսպես պապերն էին մեր
Շտապում՝ գործերն ի կատար:

Ով գարուն, թող դաշինքը մեր
Ունենա կանաչ ճանապարհ.
Թող այսպես էլի տարիներ,
Էլի գարուններ գան աշխարհ.

Դու էլի սիրուն, դու պայծառ,
Ես լինեմ անկոտրում մի ծեր:

1983

* * *

Անվրդով քուն եմ մտնում,
Քնի մեջ երազ գտնում.
Երազն էլ շքեղ պատրանք,
Կարճատև - իսկույն հատնում:

Անվրդով քուն եմ մտնում,
Արթնանում, նորից տրտմում.
Գնում ենք, ինչպես եկանք,
Ինչ գտանք, այն ենք վատնում:

1984

* * *

Ապավինած նեղ կածանին,
Հանդարտ մղվում եմ առաջ.
Աչքս փարված ծիածանին,
Ականջիս մեջ ծանոթ կանչ:

Ու գնում եմ լուռ-անաղմուկ.
Ու գնում եմ անգիտակ -
Կածանով այս սին ու անձուկ
Եզրով ձորի անհատակ:

1984

Դիմանում եմ

Կյանք, հարվածիդ դիմանում եմ,
Ու երբեմն դիմադրում.
Ձեռքդ ծանր է... իմանում եմ,
Իսկ դու, իսկ դու անդադրում...

Կյանք, հարվածիդ դիմանում եմ,
Այնպես համառ, անկոտրում.
Եվ որոշում, և անում եմ,
Ամեն դեպքում ելք փնտրում:

Կյանք, հարվածիդ դիմանում եմ,
Այլ տարբերակ... ուժից վեր...
Քեզ հորջորջել հանդգնում եմ...
Օ՜, ես համառ, իսկ դու՝ նեռ:

1984

Հանկա՞րծ

Կամաց, կամաց դռներս բաց
Աշունն եկել է - գոցում.
Չի աղմկում, թեթև թիկնած
Մտերմորեն զրուցում...
Ես զարմանքից ուշքի չեկած
Հա աչքերս եմ կկոցում:

Նոր է թեքվել շոգ ամառը,
Զովը դեռ չի մտել հուն,
Ու չի դեղնել դեռ անտառը,
Ծայր չի առել թռչնոց չուն,
Թուխպ չի հագել դեմի սարը...
Հանկարծ... գալիս է աշուն:

1984

* * *

Երազումս առյուծ տեսա,
Նա ցատկելու պատրաստ էր,
Կսպանեի, աստված վկա,
Որոշումս հաստատ էր:

Բայց դե ես էլ խելոք եղա,
Նրան առիթ չտվի:

Ի՞նչ երազ էր - մեղա, մեղա,
Լավ է այն չկրկնվի:

1984

* * *

Ծերուկ է անցնում փայտին հենվելով,
Շուրջը չի նայում, մղվում է առաջ.
Ես չեմ ճանաչում - որտեղից է, ով.
Ինչ որ կանչի է գնում ընդառաջ:

Իմ վաղվա օրն է... կանգնել եմ՝ նայում.
Նա շտապում է, փորձում է հասնել...
Հեռուն ինչո՞վ է կանչում, հմայում -
Օ՜, ցանկանում է «վերջին խոսք» ասել:

1984

Տեր

Եղիր մեծահոգի
Ու ներիր, ներիր.
Բարությամբ գերիր...
Եղիր մեծահոգի:
Տուր ինձ ցնորք ոգի
Ու կաց անբասիր.
Եղիր մեծահոգի
Ու ներիր, ներիր:

1984

* * *

Ինչ որ տվել ես մի օր,
Վերադարձնում եմ ահա.
Մահացողի պես ագահ
Երեխի պես կամակոր...
Ինչ որ տվել ես մի օր,
Վերադարձնում եմ ահա:

Թռչունն անգամ թևավոր,
Պարտք է տալիս իր աստծուն.
Ճուտ է հանում այդ ածուն
Անպարտադիր-կամավոր...
Թռչունն անգամ թևավոր,
Պարտք է տալիս իր աստծուն:

Մարդ եմ ես էլ բախտավոր...
Եկել եմ ու կգնամ.
Ո՞վ մնաց, որ ես մնամ
Էս աշխարհում ախտավոր...
Մարդ եմ ես էլ բախտավոր,
Եկել եմ ու... կգնամ:

1984

* * *

Լուռ նստել ու մտածում ես,
Մերթ ժպտում ու մերթ թախծում ես,
Կյանք ու մահի առեղծվածը
Հաճախակի արծարծում ես:

Որ աշխատում ու գործում ես,
Եվ խիզախել դեռ փորձում ես,
Շուրջդ առկա անց ու դարձը
Բացատրում ու մատուցում ես,

Էլ ի՞նչ փույթ, թե ծերանում ես,
Կա՞ս, ապրու՞մ ես, առկայծու՞մ ես,
Թող բաց մնա էդ մի բացը,
Արդ անտեղի հեծեծում ես:

1984

Մշակ

Ես քաշող ուժ եմ, գործի մեջ մշակ.

- Աշխատավորն էլ այդպես է լինում.
Իսկ եթե ունի քանքար ու ճաշակ-
Նրա վաստակը երկար է մնում:

Ես հիսուն տարի արդար տքնանքով
Քաշել եմ լուծը՝ խաչն ինձ վստահված.
Արդ չե՞ն նկատել, թե՞ քամահրանքով
Ճանապարհել են վերև՝ առ աստված:

Գնահատեցե՛ք, եթե կարող եք,
Եթե դուք ևս լույս արարող եք.
Թե չէ համբակը դժվար հասկանա...
Գնահատեցե՛ք, եթե կարող եք:

1984

Կրակները

Ծեգծեգում են կրակները
Իմ ճամփի հեռվում.
Ծուխն է կեռմեռվում...
Ծեգծեգում են կրակները:
Ու լարվում են երակներս
Տքնանքից այրվում.
Ծեգծեգում են կրակները
Իմ ճամփի հեռվում:

1984

* * *

Յոթանասունը անցել եմ արդեն,
Թվում էր հեռու, թվում էր անհաս.
Բայց ահա վերջս մոտ է - հասեհաս...
Յոթանասունը անցել եմ արդեն:
Հույսով եմ, այս մեկ գործն էլ կատարեմ,
Դե շնորհակալ եմ, կյանք իմ, որ դեռ կաս.
Յոթանասունը անցել եմ արդեն,

Թվում էր հեռու, թվում էր անհաս:

1984

Իմ օրորոցը

Իմ օրորոցը, ոչ, ես չեմ հիշում.
Եվ ունեցե՞լ եմ, արդյոք, օրորոց.
Ճաղերից կախված ուլունք ու քորոց...
Իմ օրորոցը, ոչ, ես չեմ հիշում:
Քաթա՞ն է եղել, թե՞ շիք աբրեշում-
Իմ օրորոցին ծալեծալ ծածկոց...
Իմ օրորոցը, ոչ, ես չեմ հիշում,
Եվ ունեցե՞լ եմ, արդյոք, օրորոց:

1984

Ամեն օր

Նույն երազն է կրկնվում,
Օ՜, անընդմեջ, ամեն օր.
Գիշերներին իմ բոլոր
Նույն երազն է կրկնվում:

Մի բաց վերք կա, որ նվում -
Չապաքինված, դարավոր.
Նույն երազն է կրկնվում,
Օ՜, անընդմեջ, ամեն օր:

1984

* * *

Ես այուն եղա շենքում,
Շարունակ ուղիղ կանգնած.
Օգտակար պատի հենքում,
Որ երբևէ, հանկարծ
Պատը չստանա ճեղքում,
Չկործանվի անդարձ:

Ես սյուն եղա շենքում,
Ուսիս հեծաններ տարա.
Երբեք չունեցա բեկում -
Տքնանքում ամենօրյա:
- Ասածիս ոչ մի հերքում-
Գունավորում չկա:

Ես սյուն եղա շենքում,
Կարծրացա ծխից-մրից,
Կլոր լուսանցքն օճորքում
Լույս էր առաքում և ինձ:
Անծայր գիշերն անքուն
Ճրագ էր կախվում ինձնից:

Ես սյուն եղա շենքում,
Պապենական թոնրատան,
Ուր այժմ ծղրիդն է երգում
Երգը իր հավերժական:
Ես սյուն եղա շենքում
Պապենական թոնրատան:

1984

* * *

Մերթ խառնում եմ, չեմ տարբերում,
Ո՞րն է երազ, ո՞րն իրական.
Մերթ էնքան եմ տարուբերվում՝
Շփոթում եմ «կան» ու «չկան»:

Երազն ունի ցնորք թևեր՝
Թեթև, թեթև եթերային,
Որ սավառնում միշտ վե՛ր ու վեր...
Երջանկությու՛ն, օ՛, մարդկային:

Բայց երազը՝ երազ է լոկ,
Առինքնող է կյանքն իրական:
Ի՞նչ փույթ, թե մերթ հոգսն անամոք

Մաշում է քեզ անօգնական:

Լավ է, որ կա և այս, և այն.
Ու թող, որ մերթ խառնեմ իրար,
Ու չիմանամ ո՞րն իրական,
Ո՞րը երազ հոգեպարար:

1984

Ճռճանակը

Ճռճանակն ինձ տանում-բերում,
Օրորում է մանկան պես.
Հանդուրժում եմ ու համբերում,
Վատ չեմ զգում ինձ այսպես:

Ճռճանակն ինձ տանում-բերում...
Նա կռահում է ասես,
Որ իմ ներսում տարուբերվում,
Ծովանում է նինջն անտես:

1984

* * *

Մանուշակագույն, օ՜, վարդագույն էր աշխարհն ինձ համար,
Մինչ որ կոպտորեն մի պինդ զարկեցին քիթ ու մռութիս.
Զարմանալի էր, անեծք չերևաց դողդոջուն շուրթիս.
Մանուշակագույն, օ՜, վարդագույն էր աշխարհն ինձ համար:
Չհավատացի, չէ որ եղել եմ անքեն ու արդար.
Ապավինեցի կավից մարդ կերտող հմուտ բրուտիս...
Մանուշակագույն, օ՜, վարդագույն էր աշխարհն ինձ համար,
Մինչ որ կոպտորեն մի պինդ զարկեցին քիթ ու մռութիս:

1982-84

Ուղտը

Ա

Ուղտ է եկել, կանգնել բակում
Ու որոճում է.
Եկել, բայց դեռ դուռ չի թակում
Ու որոճում է:

Դեռ չի հոգնել ու չի չոքում
Ու որոճում է.
Թաքցնում է մի բան հոգում...
Ու որոճում է:

Հասկանում եմ, ինձ ամոքում...
Ու որոճում է.
Դեռ չի հոգնել ու չի չոքում
Ու որոճում է:

Բ

Անապատներ անցած, դարձած,
Միշտ հավատարիմ,
Չի դժգոհել բեռից բարձած
Ուղտն իմ մտերիմ:

Այսպես հպարտ, վիզը պարզած
Վերև՝ արևին,
Համբերություն ու կամք դարձած
Բարություն վերին…

Ու գնում ենք օրոր-շորոր
Ճամփով արտերի.
Մենք վաղեմի սուրբ ուխտավոր
Կարոտ սրտերի:

1984

* * *

Որոնումների մեջ եմ շարունակ,
Եվ սպասումների, և սպասումների.
Գալիս, անցնում են ժամ ու ժամանակ -
Պահեր խռովքի ու ցասումների:

Որոնումների մեջ եմ շարունակ,
Ու այն ձգվում է դեպի անհայտը.
Մտքեր են ծնվում մեկ-մեկ ու ներհակ...
Գալիս, չի հասնում լույս-ճառագայթը:

*

Որոնումների մեջ եմ շարունակ...

1985

* * *

Գալարվում են հորդ ջրերը Արաքսի,
Թավալում են ժայռ ու բեկոր դեպի ցած.
Մինչ խոժոռված հայացքի դեմ Մասիսի
Մեր սերունդն էլ եկավ, հուզվեց ու գնաց:

Գալարվում են հորդ ջրերը Արաքսի,
Ինքը իր հետ, իր աստծու հետ զժտված...
Սպասել ես, սիրտ իմ, քիչ էլ սպասիր,
Որ իմանանք թե Ո՞վ եկավ, Ո՞վ գնաց:

1985

Կենաց ծառ

Ինչից որ ահ ունեի
Դեմս ելավ չորեքթաթ.
Էլ ինչ, էլ ինչ անեի՝
Կծկվեցի անփարատ:

Դարձավ դեմս բարձրացավ
Փշատերև մի տնկի.
«Կենաց ծառ» ներկայացավ-
Դողդոջ իջա ես ծնկի:

1985

* * *

Ափս մեկնել եմ, նայիր, բախտաբաց,

Մեկնիր, ինձ հեռվում ինչ է սպասում,
Է՞ր են խոսքերդ իրար հակասում...
Ափս մեկնել եմ, նայիր, բախտաբաց:
Ճակատագիրս ափիս մեջ դրված,
Փակագրեր կան, տես ի՞նչ են ասում...
Ափս մեկնել եմ, նայիր, բախտաբաց,
Մեկնիր, ինձ հեռվում ի՞նչ է սպասում:

1986

Բախտ

Բախտը ինձ միշտ հետամուտ,
Նեղ տեղերից փրկել է.
Ես անտեղյակ, բայց մի գութ
Ուր մեկնել եմ՝ եկել է:

Ետ է պահել կրակից,
Ու անկումից անպատեհ.
Ամեն ախտից, վարակից,
Բացառել ամեն հրդեհ:
Ու բերել է, հասցրել
Հայրենական տան շեմին.
Ու անունս վիմագրել
Դռան վրա ու վեմին:

1985

* * *

Չիմացա, ոչ, չիմացա,
Թե այս ե՞րբ ճերմակեցի,
Թե այս ե՞րբ ես ծերացա...
Չիմացա, ոչ, չիմացա:

Ե՞րբ ճանապարհն իմ անցա,
Ե՞րբ խոպանն իմ հերկեցի:
Չիմացա, ոչ, չիմացա,
Թե այս ե՞րբ ճերմակեցի:

1985

* * *

Կյանքս ոտքի վրա անցավ,
Ու վազքի մեջ, ու վազքի մեջ.
Ողջը եկավ ու լրացավ,
Սթափվեցի, մեկ էլ ու... վերջ:

Կյանքս ոտքի վրա անցավ,
Տագնապներում մի անընդմեջ.
Ինչ ծաղկել էր, ամայացավ,
Այրեց, այրվեց արևն անշեջ:

*

Կյանքս ոտքի վրա անցավ:

1985

Ափսոսանք

Թափորը անցավ,
Ես չմոտեցա.
Բայց խորունկ մի ցավ
Ես էլ ունեցա:

Թափորը անցավ,
Ու նոր զգացի,
Ու նոր հասկացա՝
Բոլորից բացի

Ափսոսանք մնաց՝
Խղճահարություն,
Ու մի վիշտ անանց՝
Հանգած բարություն:

1985

Իմ տարիքում

Իմ տարիքում մարդն ավելի
Ետ է նայում, քան թե առաջ.
Ինձ են հասնում դեռ լսելի
Ծանոթ ձայներ ու դարձի կանչ…
Նրանք դեռ թարմ ու սիրելի,
Ու հարազատ-լուսակարկաչ…
Իմ տարիքում մարդն ավելի
Ետ է նայում, քան թե առաջ:

Բյուր պատկերներ համակրելի,
Ու բոլորը ծանոթ-ճանաչ.
Բոլորը մոտ, ընդգրկելի
Ու թովչաձայն-հուզակարկաչ:
Դյութանքով մի անկարելի,
Մեղեդիով հազարականչ…
Իմ տարիքում մարդն ավելի
Ետ է նայում, քան թե առաջ:

1985

Սպասում

Լուրերի եմ սպասում,
Լույս ու բարի լուրերի.
Լավ լուր ինձ ո՞վ կբերի...
Լուրերի եմ սպասում:
Աղաղակներ իմ ներսում,
Թափահարում ձեռքերի.
Լուրերի եմ սպասում,
Լույս ու բարի լուրերի:

1986

Ունենայի

Ունենայի փոքրիկ մի գիրք,
Ու տողերում սիրտս խոսեր.

Լեզու առած աղբյուր հոսեր,
Մեղմ անրջեր լուրթ մի երկինք:

Ունենայի փոքրիկ մի գիրք,
Ու տողերում մեկն ինձ սպասեր,
Հանդիպեի, ուզածն ասեր,
Եվ ընծայեր բերք ու բարիք:

Ունենայի փոքրիկ մի գիրք,
Այնտեղ մանկութ երգ կարկաչեր,
Կրկին մորս ձայնը կանչեր,
Մոռանայի հոգս ու տարիք:
Ունենայի փոքրիկ մի գիրք,
Ու տողերում ծով շառաչեր,
Մեր երազի զանգը հնչեր -
Նավը մեկներ սուրբ Հայրենիք:

1986

* * *

Կանթեղս վառեմ
Քանի դեռ յուղ կա.
Ծպտվեմ, լռեմ-
Ահ ու երկյուղ կա:

Սպասեմ-անցնի
Պահը տագնապող.
Եկ, խուղս լցվիր
Հույս արևաշող:

1986

Երկյուղ

Տագնապում եմ մերթ՝
Անհանգստանում.
Կյանքն այս գոռ մի երթ
Ամեն ինչ տանում

Ու խառնում է իր
Ալեկոծումին,
Ինչ փույթ անհարիր
Խենթ ուծացումին,
Պոկվել ենք ուզում
Անխոհեմ մտքից,
Նույնիսկ ընդվզում
Ու խորշում մուտքից,
Որ տանելու է
Ափն անհայտության…
Օ՜, ճանապարհներ
Ողջակիզված տան:

1986

Գավաթ

Լաբիրինթներ են մութ գծագրվել
Սուրճիս գավաթի շրթների վրա.
Ո՞վ ինձ կմեկնի գաղտնիքը դրա...
Լաբիրինթներ են մութ գծագրվել:
Ճերմակ ձիեր են կողք-կողքի շարվել,
Սլացքի մեջ է մի չքնաղ պախրա...
Լաբիրինթներ են մութ գծագրվել
Սուրճիս գավաթի շրթների վրա:

1986

* * *

Քանի, քանի պատնեշներ
եմ հաղթահարել ճանապարհիս,
Ջրի նման կանգնել, լցվել
ու վարարել ճանապարհիս,
Հոխորտացել, խրոխտացել,
ներել, ներվել, դատապարտվել,
Հանդարտեցրել ու հանդարտվել,
սեր արարել ճանապարհիս:

Պատահել է խենթ զարմանքից
կարկամել եմ ճանապարհիս,
Զերծ եմ եղել գոռ հանցանքից,
ծեղ չեմ այրել ճանապարհիս,
Ամեն անգամ կեղծը հերքել,
բարին երգել գործերիս մեջ,
Չեմ ընդհատվել, չեմ վհատվել,
չեմ... նկատվել ճանապարհիս:

1987

Սրտիս պես

Սրտիս պես դուք էլ բոցավառվում եք,
Օ՜, շքեղորեն փթթող կակաչներ.
Արևադստեր ոսկե ճաճանչներ,
Սրտիս պես դուք էլ բոցավառվում եք:
Ապրիլյան օրեր, նորից հառնում եք,
Ու դեռ լսվում են անլուռ հառաչներ.
Սրտիս պես դուք էլ բոցավառվում եք,
Օ՜, շքեղորեն փթթող կակաչներ:

1987

Ինքս ինձ հետ

Էլ ժամանակ չմնաց
Ինքս ինձ հետ լինելու,
Սրտիս ուզածն անելու
Էլ ժամանակ չմնաց:
Կյանքս գնաց, շուտ գնաց
Մերթ ըմբոստ ու մերթ հլու,
Էլ ժամանակ չմնաց
Ինքս ինձ հետ լինելու:

1987

Իմ կարուսելը

Դեռ պտտվում է իմ կարուսելը,
Ու ձգվում է դեռ սուր ճռնչոցը.
Ոնց ծեր առյուծի խուլ մռնչոցը...
Դեռ պտտվում է իմ կարուսելը:
Արդ հաճելի է ձայնն այդ լսելը,
Ու արձագանքվող մեղմ քչփչոցը.
Դեռ պտտվում է իմ կարուսելը,
Ու ձգվում է դեռ սուր ճռնչոցը:

1987

* * *

Անձև, անմիտ խզբզոցով
Լցրի անգիր էջեր ճերմակ.
Քրքրեցի հոգիս համակ
Անձև, անմիտ խզբզոցով:
Բռնվել եմ ճերմակ բոցով,
Պատսպարիր ինձ, ալ դիմակ...
Անձև, անմիտ խզբզոցով
Լցրի անգիր էջեր ճերմակ:

1987

Ցուցարարներ

Ինձ գրեցեք ձեր ցուցակում,
Ցուցարարներ, ես ձեզ հետ եմ.
Թե դուք աղեղ, ես սուր նետ եմ...
Ինձ գրեցեք ձեր ցուցակում:
Արդ ճչում եմ, աղաղակում՝
Հաղթանակի կարապետ եմ.
Ինձ գրեցեք ձեր ցուցակում,
Ցուցարարներ, ես ձեզ հետ եմ:

1988

Պատանդ

Աստված, ե՞ս էլ եմ պատանդ մի հլու,
Ի՞նձ էլ ես ուզածդ պահին տանելու,
Ժամ ու ժամանակ չե՞ս հարցնելու.
Աստված, ե՞ս էլ եմ պատանդ մի հլու:

Կյանքը կարճ ճամփա գալու-գնալու,
Հույս, հնար չկա երկար մնալու:
Աստված, ե՞ս էլ եմ պատանդ մի հլու,
Ի՞նձ էլ ես ուզածդ պահին տանելու:

1988

* * *

Ո՞նց եմ մոռանում, որ անց եմ կացել,
Էլ ո՞վ է նորից կյանք պարգևելու.
Հանգչող օրերի ճամփորդ եմ հլու...
Ո՞նց եմ մոռանում, որ անց եմ կացել:
Կյանքում և հրճվել, և մթնել, հեծել,
Օ՜, բյուր առիթներ ալեկոծվելու...
Ո՞նց եմ մոռանում, որ անց եմ կացել,
Էլ ո՞վ է նորից կյանք պարգևելու:

1988

Զանգակները

Քարավանիս զանգակները
ծլնգում են օրն ի բուն,
Խլանում է արձագանքը
ժխորներում առօրյա.
Մինչ կանչում է ցուրտ անհայտը
մոտեցնելով իր հեռուն,
Ու գնում եմ ճակատագրով
հավերժ պատանդս նրա:

Ու գնում եմ, ու գնում եմ
դարձ չունեցող այս ճամփով,

Վերելքներով, անկումներով
սրտակեղեք ցավով լի.
Բիրտ հոսանքով, ափսոսանքով,
սրտի անօգ տրոփով,
Հեռանալով, մոռանալով
ջերմ պահերը անձկալի:

1988

* * *

Շնորհ անեիր, վեհափառ Բարձրյալ,
Մի հարմար պահի իջնեիր երկիր,
Ու հանդիպեինք նորից ու դարձյալ,
Դու որպես Աստված, իսկ ես՝ բեռնակիր:

Ու ամեն մեկս մեր դիրքին հարմար,
Որպես հաշվետու մեր կատարածի,
Մեր խոսքը մեկնենք, չափսոսանք իրար,
Վեճ՝ արարողի և արարվածի:

Արդ չեմ կասկածում, որ կբարկանաս,
Եվ կշտամբանքս երես առ երես
Մեղք կհամարես, ապա կսպառնաս
Սակայն գիտենաս՝ չեմ զղջալու ես:

Երբ վերադառնաս և բազմես գահիդ,
Լուռ մտաբերիր բյուր ասածներս,
Ու թե կարող ես արարիր բարիդ,
Գոչիր «օ՜, չար ենք մենք՝ աստվածներս»:

1988

Իմ աստղը

Ուղեկիցներ ենք՝ իմ աստղը ու ես.
Գիշերը նա է ինձ առաջնորդում,
Իսկ ցերեկը՝ ես.
Մի ամբողջ դար է, գնում ենք այսպես,

Մեր միջև մի ջերմ սիրերգ է հորդում...
Օ՜, լա՜վ է այսպես:

Ինձանից հետո ի՞նչ է անելու
Աստղն իմ աշխարհում անսեր, ամբարիշտ-
Ու՞մ հմայելու:
Կարոտն իմ ուսած ու՞մ է տանելու,
Եվ ո՞վ է պատրաստ այդպիսի մի վիշտ
Դիմակայելու:

1986/88

Երկար գիշերներ

Երկա՜ր, երկար գիշերներ,
Ու՜շ եք, ուշ եք լուսանում.
Օ՜, հավատս եք սասանում
Երկա՜ր, երկար գիշերներ:
Նոր ու խրթին հաշիվներ,
Է՞ր ավարտի չեք հասնում...
Երկա՜ր, երկար գիշերներ,
Ու՜շ եք, ուշ եք լուսանում:

1989

* * *

Դեռ ինչքա՜ն էլ սպասեմ,
Մինչև չարը տապալվի,
Որ ասելիքս ասեմ,
Ծունկս ահից չծալվի:

Ավա՜ղ, չարը միշտ եղել,
Հնի տեղ նորն է գալիս.
Միշտ էլ արյուն է հեղել՝
Եվ գալիս, և գնալիս:

Չարից չկա փրկություն,
Օ՜, չարը միշտ չարագործ.

Բարձրյալ, տուր համբերություն
Շրջանցենք փորձանք ու փորձ:

1988

Առյուծ

Եկ մեր տեղերը փոխենք,
Առյուծ, վանդակում փակված.
Ես ազատ, սակայն թակված...
Եկ մեր տեղերը փոխենք:

Միմյանց կրունկ չկոխենք,
Թող հաշտեցնի մեզ աստված.
Եկ մեր տեղերը փոխենք,
Առյուծ, վանդակում փակված:

1988

* * *

Ինձ չեն ատում,
Բայց և, բայց և
Ձևանում ու
Չեն նկատում:

Ես էլ համառ
Չեմ վիատվում.
Անելիքս
Չեմ ընդհատում:

Ամեն մեկին
Չեմ հավատում.
Ոչ սիրում եմ,
Ոչ էլ ատում:

1989

* * *

Արձագանքվում է կանչս մանկական,
Ու հորովելս դեռ երկարում է.
Մորեղբայրս լուռ հողը վարում է,
Գութանի մաճը ձեռքում ռամկական:
Ես հոտաղ էի, երկու զույգ լծկան…
Անանց կարոտս, օ՜, վարարում է.
Արձագանքվում է կանչս մանկական,
Ու հորովելս դեռ երկարում է:

1989

Ինչը ինչոց է

Գլուխ չեմ հանում ես էս աշխարհից
Ու չեմ հասկանում ինչը ինչոց է.
Որը իրական, որը՝ փչոց է...
Գլուխ չեմ հանում ես էս աշխարհից:
Սպասելիք չունենք խենթ ղեկավարից,
Թշվառական է, չարության խոց է...
Գլուխ չեմ հանում ես էս աշխարհից
Ու չեմ հասկանում ինչը ինչոց է:

1990

* * *

Դժվարությամբ եմ արդ զսպում ճիչս,
Զի ցավս խորն է ու անմեղմելի.
Անիծյալ լինես, ահաբեկիչս,
Երիցս անառակ, մեղկ, ողորմելի:
Օգնական կանգնիր, ով արարիչս,
Շուրջս եղեռն է մի զարհուրելի:
Դժվարությամբ եմ արդ զսպում ճիչս,
Զի ցավս խորն է ու անմեղմելի:

1991

* * *

“Ямщик, не гони лошадей”

Կառապան, իմ կառապան,
Մի մտրակիր ձիերին,
Իրենց ճամփեն դժվարին
Օ՜, թող անցնեն անշտապ,
Մնան անսանձ, անկապան,
Մինչև օրերն ավարտվեն,
Մութը ու լույսը զատվեն…
Կառապան իմ, կառապան,
Մի մտրակիր ձիերին:

1991

Տեր

Դու ինձ արարել ես, Տեր,
Որ քեզ երկրպագեմ,
Որ առմիշտ հայացքս վեր
Սուրբ անունդ հեգեմ:

Դու ինձ արարել ես, Տեր,
Որ քեզ իջևան կերտեմ.
Բարձրացնեմ բյուր խորաններ,
Այնտեղ աղոթքներ սերտեմ:

Թող որ ուզածդ լինի,
Ու ես՝ միշտ հավատավոր՝
Կամուրջ նորի ու հնի՝
Աստծո հոտը բախտավոր:

1991

Ոչ այնպես

Ոչ ամեն ինչը եղավ, օ՜, այնպես,
ինչպես որ պետք էր.

Այնպես ցավում եմ ինքս ինձ համար,
այնպես ափսոսում.
Օ՜, կյանքը, կյանքը ելման ջրի պես
Սրընթաց հոսում...
Ոչ ամեն ինչը եղավ, օ՜, այնպես,
ինչպես որ պետք էր:
Ես չհասկացա, ճակատագիր, թե
մաճկալի ձեռք էր,
Որ իր արորով, անվերջ օրերով
սիրտս ակոսում...
Ոչ ամեն ինչը եղավ, օ՜, այնպես,
ինչպես որ պետք էր.
Այնպես ցավում եմ ինքս ինձ համար
այնպես ափսոսում:

1990

Երանի թե

Երանի թե հավատայի
Գոյությանդ, ով Բարձրյալ,
Օրհնությամբ քո ճակատ տայի,
Ընկներ Նեռը անիծյալ:

Թե չէ եկել, շրջափակել -
Ավազակներն այս հեծյալ,
Ցանկանում են ողջ թրատել,
Կյանք պարգևել հանդերձյալ:

Մինչև ե՞րբ մենք մարտիրոսվենք,
Նեռը՝ մնա անպատիժ,
Մենք մանրատվենք և ակոսվենք,
Ճամփա չկա՞ մեկ ուրիշ:

Արդ ինչպե՞ս չհանդիմանեմ,
Անգործությունդ, Բարձրյալ.
Քո մեղքերը ինչքա՞ն տանեմ
Ամեն անգամ ու դարձյալ:

1990

Ինչ որ մի տեղ

Մեջս մի բան խլրտում է տագնապած,
Ինչ որ մի տեղ սրտի արյուն են հեղում,
Ինչ որ մի տեղ կործանվում են հեղեղում...
Մեջս մի բան խլրտում է տագնապած:
Հորիզոնը ալեկոծ է, ամպամած,
Սարը շանթի հետագծերն է շեղում.
Մեջս մի բան խլրտում է տագնապած,
Ինչ որ մի տեղ սրտի արյուն են հեղում:

1989/90

* * *

Աստծո հետ հաճախ կռիվս եմ տալիս,
Դիմակայում եմ, նույնիսկ ընդվզում.
Ու համառում եմ, պատասխան ուզում...
Աստծո հետ հաճախ կռիվս եմ տալիս:
Պատասխան ուզում անբեկ հարցերիս,
Իսկ նա լռում է, ներքուստ՝ գազազում.
Աստծո հետ հաճախ կռիվս եմ տալիս,
Դիմակայում եմ, նույնիսկ ընդվզում:

1990

Ուղիղ ավելի

Որքան էլ թակվում,
Կեռմեռվում, հակվում,
Կանգնում եմ էլի՝
Ուղիղ ավելի:
Կյանքն է պահանջում՝
Պետք է հաղորդվել.
Նույնիսկ նահանջում
Պիրկ գոտեպնդվել:

Կործանարար է
Վաղ ընկրկելը...
Դժվար է դարը,
Դժվար՝ փրկվելը:

1990

* * *

Առոք-փառոք ուղեկցում եմ
Ամեն օրը ու տարին,
Ու ինքս ինձ ցավակցում եմ՝
Չարը շատ էր, քիչ՝ բարին:

Դառնում ու մերթ հարցնում եմ՝
- Դու մեղք չունե՞ս, ով Վերին.
Վերջին հավքն իմ թռցնում եմ -
Ազատաբաղձ իմ գերին:

Ու մնում եմ մեն ու մենակ
Ինքս ինձ հետ ու աստծու.
Չեմ հասկանում, թե ինչու է
Կերածս դառն ու կծու:

1990

* * *

Իմ գնալով աշխարհին
Բան չի պատահի.
Ով արդ տիրում է Գահին
Տնօրինողն է Պահի.
Չեն տարբերվում նոր ու հին
Շահերը Շահի,
Միշտ գերում է պերճուհին
Միջև սիրո ու ահի:

1991

* * *

Ես չեմ ավարտել իմ առևտուրը
այս աշխարհի հետ,
Դեռ որքա՜ն, որքա՜ն տարուբերումներ
ճոճանակի պես,
Որ կանգ չեն առնում ու տեղ չեն գտնում
դնեն վերջակետ...
Եվ այս բոլորին աստված է տեղյակ
ու ականատես:

Բայց դե ով գիտի, ինչ է վիճակված,
որ պիտի գործի,
Ինչպես սահմանված ու որոշված է
Բարձրյալի կողմից.
Կիսատ գործերս ո՞վ, ո՞վ կավարտի
կամ իրագործի,
Չի՞ սարսի մթից, չի՞ բեկվի անսանձ
մոլեգնող հողմից:

1992

Ափսո՜ս

Տեղի եմ տալիս,
Ափսոս, շատ ափսոս.
Ու՞ր եք, օրեր իմ՝
Վայրի-հեթանոս:

Ձայնս չեք լսում,
Ու հետ չեք գալիս.
Դե մինչ տեսություն…
Ափսոս, շա՜տ ափսոս:

1991

* * *

Սպիացել էր սրտիս հին վերքը,
Բայց ահա ճեղք է տվել այն նորից.

Արյուն է զեղում ծալեծալ խորից...
Սպիացել էր սրտիս հին վերքը:
Սանձազերծել ես, տեր իմ, քո ձեռքը,
Ով անողորմդ, նենգդ բոլորից...
Սպիացել էր սրտիս հին վերքը,
Բայց ահա ճեղք է տվել այն նորից:

1991

* * *

Կայծեր կային սրտիս տակ՝
Մեկեն շքեղ բոցավառվող.
Սարսուռներով հրահրվող
Կայծեր կային սրտիս տակ:
Մնաց խուլ մի փլատակ
Մոխիրներում լուռ ծխացող.
Կայծեր կային սրտիս տակ՝
Մեկեն շքեղ բոցավառվող:

1991

* * *

Կյանքը ինձ չի ժպտացել,
Մայր չի եղել խանդակաթ,
Դեմս դռներ չի բացել,
Եղել է ցուրտ ու ժլատ:

Փույթ չէ, որ մերթ դառնացել,
Շատ բան թողել աննկատ,
Բախտիս դեմ չեմ ծառացել,
Գործ չեմ թողել անավարտ:

1991

* * *

Հաշիվ ունեմ պարզելու
Քեզ հետ, ով սուրբ երկնավոր,
Հարկ չունեմ կակազելու

Հայացքիդ դեմ զորավոր:

Նույն դաշինքի մեջ ենք մենք՝
Միմյանց զորավիգ լինել.
Օ՜, չդրժել այն երբեք -
Անհողդողդ ապավինել:

Բայց արի տես, շատ ափսոս,
Թաքնվում ես, երբ պետք ես,
Երբ ոսոխ մի բարբարոս
Հոշոտում է անզութ մեզ:

Մինչ մենք հաստատ մեր ուխտին
Քեզ տաճարներ կերտեցինք,
Սատար եղանք պանդուխտին,
Ու աղոթքներ սերտեցինք:

Ես հայցվոր, դու՝ դատավոր,
Ինչպե՞ս քանդենք կծիկն այս.
Օ՜, պարտապան երկնավոր -
Ինչ պատասխան պիտի տաս:

1992

* * *

Պատառիկներ են, օ՜, մի մեծ երգի
Իմ քերթվածները այս բազում, բազում.
Չեն միատեղվում՝ գալիս համերգի,
Այստեղ ու այնտեղ ձայնում են, նազում:

Գառներ կորցրած որբերի նման,
Որ ձայնում անվերջ, իրար չեն գտնում.
Դեռ երկար պիտի կանչեն ու գնան
Անհույս ու անլույս, վշտով անհատնում:

1992

Զմեռնամուտ

Դեռ չի ավարտվել տերևաթափը,
Մինչ ձյուն է գալիս.
Սառցակալում է ահա գետափը,
Ու ջուրը լալիս:

Դեռ չի ավարտվել տերևաթափը,
Մի փչիր, հյուսիս:
Ձյան ու անձրևի տեղատարափը
Կորուստն է հույսիս:

1992

Օ՜, վարորդ

Իմ ուղեվարձը ես վճարել եմ,
Մեքենան կարող ես քշել, վարորդ.
Ուզում ես արագ, ուզում ես՝ դանդաղ,
Դե, ճանապարհ է՝ անհարթ, խորդուբորդ:

Իմ հանգրվանը, օ՜, այդ վերջինը՝
Մոտ է, շատ մոտ է, կհասնենք շուտով.
Կդիմավորի իմ բարի ջինը,
Օ՜, իմ ավարտի տխուր առիթով:

Իմ ուղեվարձը ես վճարել եմ,
Եվ ընդհանրապես չունեմ ոչ մի պարտք.
Նույնիսկ իմ աստծուն հակաճառել եմ,
Չի գայթակղել կյանքում ոչ մի փառք:

Իմ ուղեվարձը ես վճարել եմ,
Մեքենավարս գոհ է ստացածով.
Չեմ ասի, թե շատ աճապարել եմ,
Չեմ ասի, թե շատ գոհ եմ ապրածով:

1992

Սահմանի վրա

Մի ոտքս այստեղ, մյուսն այնտեղ,
Սահմանի վրա գնում եմ, գալիս.
Էս ի՞նչ արեցիր, աշխարհ խելահեղ,
Շուտ չե՞ս առաքում մեղկ անցավորիս:

Ինձ չգոհացրիր քո սուղ տվածով,
Շնորհ չարեցիր, որ մարդավայել
Ապրեի կյանքս ու գոհ աստուծով
Փորձեի բոլոր ծագերը հայել:

Եվ այժմ, ահա առանց հարցումի,
Կարգավիճակով մի սովորական,
Անհեռանկար լույս համբարձումի,
Անառարկելի ձայնով տիրական

Այն արահետն ես ինձ առաջնորդում,
Որ տանում է մութ տիրույթն անգոյի՝
Սարսափներով լի, ու անհաղորդում -
Անէացումը իմ մի բուռ գոյի:

1992

* * *

Թարթիչներս կես խուփ, կես բաց,
Ոչ քնած եմ, ոչ արթուն.
Ասես վարժվում կամաց-կամաց
Ընդունելու հավերժ քուն:

Երևի թե չիմանամ էլ
Պահը կյանքից պոկվելու...
- Պայմանով ենք աշխարհ եկել՝
Այնպե՛ս, որպես այցելու:

1992

Քուն

Գլուխս հակվում է գրքիս,
Խոնջենքը պարուրում անփույթ.
Կայծկլտում երազներս սուտ...
Գլուխս հակվում է գրքիս:
Թռան արտույտները հերկիս,
Անձրև է, խոնավ է ու ցուրտ.
Գլուխս հակվում է գրքիս,
Խոնջենքը պարուրում անփույթ:

1992

Իմ խաչը

Ես իմ խաչը քանդակեցի
Այս անկոփ ժայռի կողքին,
Հանգիստ սրտով կտակեցի
Ինձ այստեղ հանձնել հողին:

Երբևիցե այս տեղերով
Անցող-դարձողն իմանա,
Որ հավերժի ննջեցյալը
Եղել է հայ-քրիստոնյա:

Խաչաքանդակն այս քանի դեռ
Կշռոյի աչքն անցնողի,
Կվկայի, որ ես անմեռ-
Բնակիչս այս հողի

Իզուր չէր, որ աշխարհ եկա,
Իզուր չէր, որ ապրեցի՝
Եղերական դարի վկաս
Դարի հետ տառապեցի:

Դարի հետ էլ ավարտվում եմ՝
Շարքային մահկանացու.
Չեմ էլ խորհում, թե պարտվում եմ,
Կամքն է իր իսկ՝ Աստծու:

1985-1993

* * *

Վիրահատման սեղանի՞ն,
Ա՞յդ էր միակ սպեղանին՝
Ճաշակել կամքից անկախ
Ամենայն դառն ու աղին:

Օ՜, կյանք, օ՜, կյանք-առեղծված,
Տես թե ինչեր կան պահված
Ճանապարհիս անմեկին՝
Այդպես վերուստ էր հաստված:

22.04.1993

Ջրին տվի

Ջաղացս ջրին տվի,
Չախչախի հետևից ընկա,
Հաշիվս արի մտովի,
Ոչ ոք չկանգնեց վկա:

Հե՜յ, ու՞ր եք, օրեր կորովի,
Լույս ցերեկ, գիշեր լուսնկա...
Ջաղացս ջրին տվի,
Չախչախի հետևից ընկա:

1994

Գտնել է ուզում

Ինչ որ մի բան է կորցրել քամին,
Փնտրում, չի գտնում.
Դեռ հեծեծում է, օ՜, այս ուշ ժամին,
Ու... քուն չի մտնում:

Միք հանդիմանի-
Նա կորցրել է, գտնել է ուզում.

- Գրողը տանի՝
Այդ նույն հոգսն է ինձ շարունակ հուզում:

1995

Նոր տարի

Հին տարվա հետ հաշիվները փակեցինք,
Տաք ու ցրտին դիմացանք ու փափկեցինք.
Ամենքի հետ լեզու գտանք ու անքեն
Առանք, տվինք պարտք ու մուրհակ վաղանցիկ:

Այժմ քեզ հետ, քո օրվա հետ, նոր տարի,
Նոր գործարքներ կերտենք անչար ու բարի.
Հույս-հավատը մեզ երբևէ չլքեն,
Թե դատարկ չեն խոստումները նոր դարի:

1995

Գրողի ծոցը

Կերտել եմ ես իմ գլուխգործոցը,
Մինչ արդ մեկնում եմ գրողի ծոցը.
Բայց ի՞նչ կա այնտեղ ինձ համար պահված՝
Ոչ ես եմ տեղյակ, ոչ էլ ինքն՝ աստված:

Արդ ճամփես է բաց, մինչ հեռվում մութ է,
Այլևս անդարձ, օ՜, բախտն անգութ է.
Երանի նրան, ով ետ է գալու՝
Երջանկությունից, կարոտից լալու:

1995

Օ՜, փրկարար ձեռք

Սպասում եմ, եկ,
Գալդ շեփորիր
Ու դարձրու հանդես.

Օ՜, Փրկարար ձեռք,
Դու ինձ երկարիր,
Աղաչում եմ քեզ:
Ու՞ր ես, դու ու՞ր ես
Ու ո՞ր կողմերում,
Ի՞նչ երկնքի տակ,
Այդ ինչպե՞ս, ինչպե՞ս
Կորար հողմերում
Օ՜, անհիշատակ:
Ո՛չ, չեմ հավատում,
Դու կաս, ապրում ես
Ծով կարոտներով,
Օ՜, անսուտ երդում,
Ինձ հուսադրում ես
Առավոտներով:

1995

Մեծ բանաստեղծին

Այժմ հաճախ եմ քեզ այցի գալիս,
Երբ, ավա՜ղ, արդեն դու մոնումենտ ես,
Երբ ինքդ քո մեջ ու հար քեզ հետ ես...
Այժմ հաճախ եմ քեզ այցի գալիս:
Փույթ չէ՝ խորհում եմ լուռ հեռանալիս,
Որ կաս, կլինես, դու առհավետ ես...
Այժմ հաճախ եմ քեզ այցի գալիս,
Երբ, ավա՜ղ, արդեն դու մոնումենտ ես:

1995

Թող լույս լինի

Ճրագը վառենք, թող լույս լինի,
Լույսից խորշում են չարքերը.
Թող անխախտ մնան բարքերը...
Ճրագը վառենք, թող լույս լինի:
Վաղվա գալստյան թող հույս լինի

Խաղաղ աղոթեն վանքերը...
Ճրագը վառենք, թող լույս լինի,
Լույսից խորշում են չարքերը:

1995

Սաղմոս

Հազարամյակի ալեկոծ շեմին
Ես խաղաղության սաղմոս եմ հյուսում,
Բարեկեցության մաղթանք եմ ասում
Հազարամյակի ալեկոծ շեմին:
Խոսքս մեկնում եմ նաև քեզ, ով Մին…
Թող կամքդ լինի արդար, անկասում...
Հազարամյակի ալեկոծ շեմին
Ես խաղաղության սաղմոս եմ հյուսում:

1996

* * *

Մատչելի չեղավ ինձ Պառնասը,
Մութ ամպեր կային, գոմռում էին,
Ասես դիվահար՝ հռհռում էին,
Մատչելի չեղավ ինձ Պառնասը:
Այդտեղ էլ առա ես իմ դասը՝
Խելամիտ սրբերը լռում էին.
Մատչելի չեղավ ինձ Պառնասը՝
Մութ ամպեր կային, գոմռում էին:

1996

* * *

Գլուխգործոցն իմ ես ավարտել եմ,
Երբ ոգեկոչվել ու վարարել եմ.
Օ՜, երկնային պահ, օրհնվես հավերժ-
Ծիածան մի վառ լուռ կամարել եմ:

Գալիքին միտվել ու հրահրել եմ,

Ամենայն լավը թմբկահարել եմ,
Կանթեղել սիրո սուրբ կրակը թեժ,
Կյանքով արբեցել ու երկարել եմ:

Երկնային Տերը մեզ ականջալուր
Թող բացի մեր դեմ լույս երդիկ ու դուռ,
Եվ առաջնորդի ուր որ հորդ ջրվեժ,
Ուր որ մեր խաչն է աղամանդակուռ:

1996

Ամեն անգամ

Նորից, նորից սխալվեցի,
Ինչպես ամեն անգամ.
Էն նույն սխալը գործեցի,
Ինչպես ամեն անգամ:

Ես ինքս ինձ քարկոծեցի
Ինչպես ամեն անգամ,
Ես ինքս ինձ խոր խոցեցի
Ինչպես ամեն անգամ:

Ու մեղանչել ես փորձեցի
Ինչպես ամեն անգամ,
Երբեք, երբեք հաջողեցի
Ինչպես ամեն անգամ:

Ու տանջում է մեղքս արդ ինձ,
Ինչպես ամեն անգամ,
Չեմ ազատվում ինքս ինձնից
Ինչպես ամեն անգամ:

Աստծու գործն է սա էլ գուցե
Ինչպես ամեն անգամ,
Ամեն անգամ պիտի խոցե
Ինչպես ամեն անգամ:

1996

* * *

Ինձ մի այլ կարծիք այլևս պետք չէ,
Բավարարված եմ արդեն եղածով.
Պարտավորված եմ իմ աղ ու հացով...
Ինձ մի այլ կարծիք այլևս պետք չէ:
Իմ արածներից ես չեմ ամաչել,
Գոյատևում է կյանքն ունեցածով.
Ինձ մի այլ կարծիք այլևս պետք չէ,
Բավարարված եմ արդեն եղածով:

1997

* * *

Ես շա՛տ նայեցի անցող-դարձողին,
Փորձեցի նրանց ցավը իմանալ,
Ուզեցի ցավին սպեղանի դառնալ...
Ես շա՛տ նայեցի անցող-դարձողին:
Հոգատար չեղա աչքերիս շողին,
Արդ սկսել եմ, ավա՛ղ, կուրանալ.
Ես շատ նայեցի անցող-դարձողին,
Փորձեցի նրանց ցավը իմանալ...

1997

* * *

Ես երամի ծեր թռչուն,
Կանխորոշված է իմ չուն.
Կպոկվեմ իմ երամից
Անարձագանք, անհնչուն:

Ես՝ անպարգև, անկոչում,
Որից, օ՛, չեմ ամաչում,
Վաստակն է լոկ հարատև.
Չի բողոքում, չի ճչում,

1997

* * *

Մտքիս հետ ընկած մայթով քայլում եմ,
Մտքիս հետ մթնում ու մերթ փայլում եմ,
Չեմ էլ նկատում անցնող-դարձողին,
Ու ինձ թվում է մերթ այլայլվում եմ...

Էհ, անտեր մնա էս ծերությունը,
Խարխուլ է ինչպես սուրբ հնությունը.
Նա սպասում է մի փուչ պատճառի,
Որ անէանա իր գոյությունը:

1997

* * *

Քաջ եղա իմ գործերում,
Նույնիսկ անմեղ փորձերում.
Հաջողեցի շատ թե քիչ
Կյանքի անցուդարձերում:
Չեղա դարձյալ բարձրերում,
Ուր լիությունն անձրևում,
Ուր մասնահատումն ունեն
Տերունական գանձերում:

1997

* * *

Լևոն Զորյանին

Հանդիպում էինք մենք այս փողոցում,
Բարի ողջույններ ընծայում միմյանց,
Արտակարգ ոչինչ չկար զրույցում,
Իսկ թեման նույնն էր, ու մենք սրտաբաց
Բաժանվում էինք մեղմ քմծիծաղով,
Որ կրկին, կրկին հանդիպենք այստեղ.
Քո նոր լուրերը մի ամբողջ կողով
Պատմեիր պիտի հումորով համեղ:
Մի վերջին անգամ դու չերևացիր,

Չեկար հանդիպման այս ժամադրավայր.
Ճամփեդ շեղելով այլ կողմ գնացիր
Մեր հանդիպումը դարձավ անհնար:

1997

* * *

Հանձնվել եմ ճանապարհիս
Նա ինձ տանու՛մ է, տանում.
Նա գիտի ինչ է անում...
Հանձնվել եմ ճանապարհիս:
Ես վերջին մեկնողը դարիս՝
Մահկանացու անանուն...
Հանձնվել եմ ճանապարհիս
Նա ինձ տանու՛մ է, տանում:

1997

* * *

Սիրտս՝ կանթեղ ծխացող,
Մերթ բորբոքվում, մերթ՝ մարում,
Էլի երգ է արարում...
Սիրտս՝ կանթեղ ծխացող:
Մինչ օրերս հեռացող
Գնում, կորչում անտառում.
Սիրտս՝ կանթեղ ծխացող:
Մերթ բորբոքվում, մերթ՝ մարում:

1997

* * *

Թե աստվածատուր մի բան կա իմ մեջ,
Այդ սերն է կյանքի և հայրենիքի.
Նրանց հուրն է հար հոգումս անշեջ,
Որ փոխարկվում է երգ ու աղոթքի:

Իմ ամեն քայլում, ու գործում ամեն
Իմ անխոնջ սրտի ամեն բաբախում

Նվիրումն է սուրբ, տրվելը անքեն,
Որ երկնում է կամք և վեհ խիզախում:

1997

* * *

Իմ աստղն ինձ համար
Արդեն տագնապում,
Բեռ է կապկապում
Իմ աստղն ինձ համար:
Պահն է անհարմար,
Ես չեմ շտապում.
Իմ աստղն ինձ համար
Վաղ չէ՞ տագնապում:

1997

* * *

Հոգիս հուշերի գիրք է,
Եվ կարոտների, և կարոտների,
Ամպամած երկնի բամբ որոտների...
Հոգիս հուշերի գիրք է:
Էջերում սեր է, կիրք է,
Դիմանկարներ հարազատների...
Հոգիս հուշերի գիրք է,
Եվ կարոտների, և կարոտների:

1997

* * *

Այնպես եմ ուզում մի լավ բան գրել,
Որն ընթերցողին հաճույք պատճառի.
Նման չլինի վերամբարձ ճառի...
Այնպես եմ ուզում մի լավ բան գրել:
Դե ինչ, այսպես է Տերն ինձ արարել,
Մեջս չի դրել ցոլքը հանճարի:
Այնպես եմ ուզում մի լավ բան գրել,
Որն ընթերցողին հաճույք պատճառի:

1997

* * *

Հիասթափվում եմ այսպես երբեմն,
Թվում է մի բան վատ է վերջանում.
Ես պապանձվում եմ, ասես մնջանում...
Հիասթափվում եմ այսպես երբեմն:
Վարագույրն իջնում, փակվում է բեմն,
Տարակուսում եմ, Տերը վարանու՞մ...
Հիասթափվում եմ այսպես երբեմն,
Թվում է մի բան վատ է վերջանում:

1997

* * *

Արդ ես ինձ հետ եմ, իմ վաղ անցյալի ու այսօրվա հետ,
Հենց հիմա միայն ժամանակ գտա ինձ հետ լինելու.
Օ՜, ձերբազատվել ինձ չի հաջողվում, փորձում եմ թեպետ,
Նորից ու նորից առիթներ եկան լրջմիտ խորհելու:

Վիճարկումներով ողջ կյանքս անցավ ու այժմ էլ կրկին
Նույն հոլովույթի մեջ եմ թավալվում ես անբռնազբոս.
Բարձրյալի կամքով ծնունդից ի վեր տրվեցի կյանքին,
Մինչ նա ինձ դարձավ անվերջանալի մի մութ տարտարոս:

1997

* * *

Բարձրյալի հետ են արդեն խոհերս,
Նա՝ ամենօրյա զրուցընկերս.
Արդ նրա հետ եմ խոսում ու կիսվում,
Նա՝ և մտերիմ, և անխոնջ Տերս:

Նա գիտի որքան նուրբ են ձևերս,
Ինչ փույթ՝ լքել են, չվել սերերս.
Ես՝ հարյուրամյա կաղնի հաստաբուն,
Սաղարթախիտ են դալար ճյուղերս:

*

Բարձրյալի հետ են արդեն խոհերս:

1997

* * *

Ա

Մի օր կիմացվի իմ հեռանալը,
Հայտնի կդառնա, որ ես էլ չկամ.
Ոմանք կսթափվեն, կլռեն դժկամ...
Մի օր կիմացվի իմ հեռանալը:
Այժմ դյուրին է շուտ մոռանալը,
Կհիշեն միայն մոտիկ, բարեկամ.
Մի օր կիմացվի իմ հեռանալը,
Հայտնի կդառնա, որ ես էլ չկամ:

Բ

Ոմանք կափսոսեն, կհիշեն դեպքեր
Հանդիպումների՝ այնպես հիշարժան,
Նրանց կթվա պահը խիստ դաժան.
Ոմանք կափսոսեն, կհիշեն դեպքեր...
Դե շատ-շատերն էլ այնպես-անտարբեր
Կշարունակեն իրենց առօրյան.
Ոմանք կափսոսեն, կհիշեն դեպքեր
Հանդիպումների՝ այնպես հիշարժան:

1997

* * *

Իմ գարունը յասամանով է գալիս,
Արբենում եմ նրա անանց բուրմունքով.
Հառնում է նա գարնան հրաշք արբունքով...
Իմ գարունը յասամանով է գալիս:
Յասամանի պուրակներով անցնելիս
Վեհանում եմ ու սրբանում հոգեթով.
Իմ գարունը յասամանով է գալիս,
Արբենում եմ նրա անանց բուրմունքով:

1997

* * *

Խեղճուկրակ կյանք ապրեցինք,
Աղքատության մեջ մեծացանք,
Ազգին եղանք սեր ու պարծանք...
Խեղճուկրակ կյանք ապրեցինք:
Տիրոջ մեղքն էր, մենք ներեցինք,
Անտեսեցինք ամեն հանցանք...
Խեղճուկրակ կյանք ապրեցինք,
Աղքատության մեջ մեծացանք:

1997

* * *

Ես հասու չեղա, աշխարհ, գործերիդ,
Նրանք բարդ էին ու անհարթ էին.
Ասում են, նույնիսկ, որ թակարդ էին...
Ես հասու չեղա, աշխարհ, գործերիդ:
Ունկնդրում էի Ղեկի մեծերիդ՝
Անողորմ էին ու անմարդ էին:
Ես հասու չեղա, աշխարհ, գործերիդ,
Նրանք բարդ էին ու անհարթ էին:

1997

* * *

Աչքերս փակում, շտապ քնում եմ,
Թող որ պահ առաջ երազներս գան,
Լույսերս վառեն - որ մի օր հանգան...
Աչքերս փակում, շտապ քնում եմ:
Սահմանված ճամփեն բռնած գնում եմ՝
Մերոնց հանդիպեմ ևս մեկ անգամ.
Աչքերս փակում, շտապ քնում եմ,
Թող որ պահ առաջ երազներս գան:

1997

Դու իմ կյանքում

Հար չմարող, չմոխրացող
Կրակ եղար դու իմ կյանքում,
Դու միշտ ինձ հետ տառապանքում...
Հար չմարող, չմոխրացող...
Ընդվզումն իմ խրոխտացող
Չմեղմեց հուրն իմ տքնանքում...
Հար չմարող, չմոխրացող
Կրակ եղար դու իմ կյանքում:

1997

* * *

Օ՜, երջանկության պահեր երբեմնի,
Հրաշք իրական՝ վերուստ առաքված.
Մեծ ժամանակի ժխորում կորած...
Օ՜, երջանկության պահեր երբեմնի:
Ինձ պարուրել եք քուն թե արթմնի,
Դուք հար մեզ հետ եք, ու երբեք լքված.
Օ՜, երջանկության պահեր երբեմնի,
Հրաշք իրական՝ վերուստ առաքված:

1997

Որպես թափանիվ

Գլորվելով գնում եմ,
Որպես հին մի թափանիվ,
Շրջանցելով խութ ու վեմ,
Որոգայթներ անազնիվ:

Բաց դռներով անհունի
Օրերիս վերջին զոհին՝
Ինձ սիրով ներս կընդունի
Անէության տիրուհին:

1997

Ափսո՛ս

Ափսոս, ափսոս շուտ արթնացա,
Ու երազս կիսատ մնաց.
Մատդ խառն էր, խանդի աստված...
Ափսոս, ափսոս շուտ արթնացա:
Զվարթ էի ու դալկացա,
Կարոտներիս աչքերը՝ թաց...
Ափսոս, ափսոս շուտ արթնացա,
Ու երազս կիսատ մնաց:

1997

* * *

Աղոթում է մեկն ինձ համար՝
Հեռու մնամ վթարից
Ու առավել վատթարից...
Աղոթում է մեկն ինձ համար:
Շնորհակալ եմ որդիաբար,
Որ հեռու եմ խաթարից.
Աղոթում է մեկն ինձ համար՝
Հեռու մնամ վթարից:

1997

* * *

Ասելիքներս կիսատ մնացին,
Անելիքներս այսպես անկատար.
Տեր, որ տանում ես, տանում ես, դե տար...
Ասելիքներս կիսատ մնացին:
Ունկնդիրներս ոչ միշտ անսացին,
Ցրվեցին, ասես ձկների վտառ...
Ասելիքներս կիսատ մնացին,
Անելիքներս այսպես անկատար:

1998

* * *

Մի նոր անգիր տետր եմ բացել
Ու խորհում եմ ինձ ու ինձ,
Կհասցնե՞մ այն լրացնել,
Արդ վստահե՞մ ինքս ինձ:

Ամեն մի գործ ձեռնարկելիս
Միշտ սարսուռ եմ զգացել,
Ոնց ռանչպարը հող հերկելիս
Տիրոջ խղճին մնացել:
Բախտի բան է մարդուս կյանքն էլ՝
Թե ում ինչքան կտրվի.
Ամենքս ունենք մի բարակ թել,
Վերջը պիտի կտրվի:

1997

* * *

Որքան էլ ապրես, օ՜, միևնույն է,
Կյանքը քեզ պիտի միշտ կարճ երևա,
Ու պիտի սիրտդ թպրտա, հևա...
Որքան էլ ապրես, օ՜, միևնույն է:
Ճակատագիրը անագորույն է,
Եվ այն դաջվել է, երբ դու անլվա...
Որքան էլ ապրես, օ՜, միևնույն է՝
Կյանքը քեզ պիտի միշտ կարճ երևա:

1997

* * *

Գրեցի, գրեցի, գրեցի,
Որքան որ ուժս պատեց,
Տերը գործս չընդհատեց...
Գրեցի, գրեցի, գրեցի:
Տեր, ինձ օր ու արև եղիցի,
Գործս շատ էր՝ չավարտվեց...
Գրեցի, գրեցի, գրեցի,
Որքան որ ուժս պատեց:

1997

* * *

Մի ճամփա է մնացել,
Էլ մի ուրիշը չկա.
Չգնաս, ինքը կգա...
Մի ճամփա է մնացել:
Օ՜, բոլորն են գնացել,
Էս ճամփով, աստված վկա.
Հենց այս մեկն է մնացել,
Էլ մի ուրիշը չկա:

1997

* * *

Եկել, հասել եմ ես իմ սահմանին,
Տերն ինձ ավելին էլ չի հանդուրժում.
Գոհությամբ նա իմ ավարտն է գուժում...
Եկել, հասել եմ ես իմ սահմանին:
Հրաժեշտ եմ հղում իմ Երևանին,
Նրա կարոտն է տնակս խուժում,
Եկել, հասել եմ ես իմ սահմանին,
Տերն ինձ ավելին էլ չի հանդուրժում:

1997

* * *

Երբ մենակ եմ մնում տանը,
Ինքս ինձ հետ եմ մենախոսում՝
Առնում-տալիս ու ափսոսում...
Երբ մենակ եմ մնում տանը:
Ցուրտ է, փակ է պատուհանը,
Առուն սառել ու չի հոսում...
Երբ մենակ եմ մնում տանը,
Ինքս ինձ հետ եմ մենախոսում:

1997

Սիրո աստվածը

Երախտապարտ եմ սիրո աստծուն,
Որ աշխարհ եկա ու ապրում եմ, կամ.
Գոյատևելս, օ՜, աստվածակամ...
Երախտապարտ եմ սիրո աստծուն:
Նրա կամքով ու ջերմությամբ լեցուն,
Գործում անկաշառ ու արիակամ...
Երախտապարտ եմ սիրո աստծուն,
Որ աշխարհ եկա ու ապրում եմ, կամ:

1997

Ավարտ

Հաճախ եմ դիմում քեզ, ավարտ,
Դու այնքան մոտ ես ու մերձ,
Կեղծելուց դու հեռու ու զերծ...
Հաճախ եմ դիմում քեզ, ավարտ:
Օ՜, կյանքը խրթին ու բարդ,
Մինչ ապրելու տենչը միշտ մեծ...
Հաճախ եմ դիմում քեզ, ավարտ,
Օ՜, այնքան մոտ ես ու մերձ:

1997

* * *

Ոտքի վրա եմ, գնում եմ, գալիս,
Համբերությունս հանդուրժում է դեռ.
Կոնակիս վաստակի հին բեռ...
Ոտքի վրա եմ, գնում եմ, գալիս:
Բարին ու չարը իրարով տալիս,
Հավերժական է հարցն այդ ու անմեռ...
Ոտքի վրա եմ, գնում եմ, գալիս,
Համբերությունս հանդուրժում է դեռ:

1997

* * *

Չհանդգնեցի ասպարեզ նետվել,
Հաղթանակների, փառքերի միտվել,
Անցա իմ համեստ արահետներով,
Հույսով՝ ինձ տրված իմ բախտը գտնել:

Ածուխ կլինի այն, թե ադամանդ,
Մարմար, գետաքար, թե տուֆ հնավանդ,
Այն լինելու էր վերուստ առաքված,
Միշտ ընդունելի , սիրով ու անխախտ:

Այդպես, ես եղա այն, ինչ որ արդ կամ,
Աստծուն ու մարդուն մոտ ու բարեկամ,
Այդպես էլ շուտով կանցնեմ աշխարհից,
Աշխարհի մարդկանց միշտ բարյացակամ:

1997

Դարը և ես

Դարը ինձնով ավարտվեց,
Դարը դժգոհ էր ինձնից.
Դարի դեմքին հազար բիծ...
Դարը ինձնով ավարտվեց
Դարը մեղքն իր չքավեց,
Դարին նզովք հայերից.
Դարը ինձնով ավարտվեց,
Դարը դժգոհ էր ինձնից:

1997

Ինձ հետ

Ես իմ հուշերն եմ ինձ հետ տանելու,
Օ՜, նրանք իմն են, իմ սեփականը.
Ինձ հետ են եղել՝ շարունակ տանը.
Ես իմ հուշերն եմ ինձ հետ տանելու:
Դե Տերը գիտի ինչ է անելու,

Ահա ճամպրուկս, վրան փականը.
Ես իմ հուշերն եմ ինձ հետ տանելու,
Օ՜, նրանք իմն են, իմ սեփականը:

1997

* * *

Ինձ ներիր, ներիր,
Իմ գործած բոլոր մեղքերի համար,
Իմ մեղքով բացված վերքերի համար,
Խորունկ կնճռոտված ձեռքերի համար,
Վշտից կարկամած երգերի համար,
Ինձ ներիր, ներիր,
Իմ գործած բոլոր մեղքերի համար:

1997

* * *

Աշխատեցի, աշխատեցի
Տիվ ու գիշեր, տևաբար,
Թողի գործեր օգտակար...
Աշխատեցի, աշխատեցի:
Գանձեր, գանձեր ընծայեցի,
Տքնեցի լավի համար...
Աշխատեցի, աշխատեցի
Տիվ ու գիշեր, տևաբար:

1998

* * *

Երգեր, երգեր հորինեցի՝
Քնքուշ, խրոխտ, հախուռն,
Կանչս ձայնեղ էր՝ բուռն...
Երգեր, երգեր հորինեցի:
Բաշխեցի այն, ընծայեցի,
Ինձ պահեցի մրմուռն.
Երգեր, երգեր հորինեցի՝
Քնքուշ, խրոխտ, հախուռն:

1998

Տրիոլետ

Տրիոլետը, օ՜, գերել է,
Մատչելի է դարձել ինձ՝
Ծանոթ չափ ու պարագիծ...
Տրիոլետը, օ՜, գերել է:
Արդեն հաշտվել ու ներել է՝
Որ պրծում չունի ինձնից...
Տրիոլետը, օ՜, գերել է,
Մատչելի է դարձել ինձ:

1998

Շտապիր

Աչքեր կան պարզված իմ ճանապարհին,
Շտապիր, շտապիր, կառապանս,
Վաղուց է սպասում են տանս...
Աչքեր կան պարզված իմ ճանապարհին:
Դարուփոսվել է արահետս հին,
Օ՜, հավատարիմ, ծեր կառապանս.
Աչքեր կան պարզված իմ ճանապարհին,
Շտապիր, շտապիր, կառապանս:

1998

* * *

Դե գրում եմ,
Օրը մի բան, կամ ավելի.
Միշտ ձգտում եմ
Հասնել լավի, առավելի:
Ու գրում եմ,
Թե որքան եմ այն հաջողում
Լավ զգում եմ,
Այլայլվում եմ, միտքս՝ ճողում:

1998

Թոշակառու

Թոշակառու եմ, երբեմն մենակ,
Ասում-խոսում եմ ես՝ ինքս ինձ հետ,
Գրի եմ առնում մտածածս մերթ...
Թոշակառու եմ, երբեմն մենակ:
Եվ այդ ինձ համար ձեռնափայտ, հենակ,
Ու երբեմն էլ անշուշտ՝ ձեռակերտ...
Թոշակառու եմ, երբեմն մենակ,
Ասում-խոսում եմ ես՝ ինքս ինձ հետ:

1998

Չիմացա

Ես այդպես էլ չիմացա,
Թե ինչ եղա այս կյանքում,
Ինչ ուժի տեր, ինչ հակում,
Ես այդպես էլ չիմացա:
Անցա, անցա, ես անցա,
Երբ աշխարհն էր փոթորկվում,
Ես էդպես էլ չիմացա,
Թե ինչ եղա այս կյանքում:

1998

Մոռացում

Հանրակառքը սլանում է,
Կառապան, սանձիր մի պահ.
- Այս կողմերում կար մի Գահ...
Հանրակառքը սլանում է:
Հիշողությունն ամլանում է,
Մինչ մոռացումն ագահ...
Հանրակառքը սլանում է,

Կառապան, սանձիր մի պահ:

1998

* * *

Հանրակառքը տեղից պոկվեց
Ու սլացքով անէացավ,
Ինձ չսպասեց, ինձ մոռացավ...
Հանրակառքը տեղից պոկվեց:
Երևի թե մեկն ամոքվեց,
Մի ուրիշը խիստ վշտացավ...
Հանրակառքը տեղից պոկվեց
Ու սլացքով անէացավ:

1998

Ոտքի վրա

Ոտքի վրա՝ գնալ-գալով
Հորինեցի երգերս,
Շռայլեցի ներկերս
Ոտքի վրա՝ գնալ-գալով:
Շտապ, շտապ, հա հևալով
Ժողովեցի մտքերս...
Ոտքի վրա՝ գնալ-գալով
Հորինեցի երգերս:

1998

Կիսով չափ

Ես արդեն ծերացել եմ,
Ես արդեն վատ եմ տեսնում,
Ես արդեն վատ եմ լսում,
Ես արդեն ծերացել եմ:
Կիսով չափ գնացել եմ,
Ափսոսում եմ, ափսոսում.
Ես արդեն ծերացել եմ,

Ես արդեն վատ եմ տեսնում:

1998

Անշուք մի քար

Իմ կյանքը գրի առա,
Անմնացորդ՝ ծայրից-ծայր.
Բեռս ուսած անխոնջ տարա,
Ու տեղ հասա անվթար:
Վայելում եմ փոքր-ինչ դադար,
Ականջս կանչին Նրա...
Գահս ժեռոտ անշուք մի քար
Հավերժի ճամփի վրա:

1998

* * *

Ինձ մատչելի չէ այլևս ծովը,
Հմայքը նրա անսահման հեռվի.
Թե որ այդ մեղք է, թող որ ինձ ներվի...
Ինձ մատչելի չէ այլևս ծովը:
Օ՜, գունատվել է երկնքի մովը,
Տե՛ր կանգնիր, օ՜, Տեր, կյանքը չավիրվի...
Ինձ մատչելի չէ այլևս ծովը,
Հմայքը նրա անսահման հեռվի:

1998

* * *

Տանուլ եմ տվել հրաշալիքներս,
Ամեն, ամեն ինչ, այնքա՜ն ունեի.
Ու թվում է, թե ես անհուն էի...
Տանուլ եմ տվել հրաշալիքներս:
Չէի կռահում քաշելիքներս,
Կյանքը ծայրից-ծայր լավ չգիտեի...
Տանուլ եմ տվել հրաշալիքներս,
Ամեն, ամեն ինչ, այնքա՜ն ունեի:

1998

* * *

Սիրտս չի բացվում,
Վերն ամպամած է,
Գետինը թաց է,
Սիրտս չի բացվում:
Աչքս չի գոցվում,
Կարոտաբաղձ է...
Սիրտս չի բացվում,
Վերն ամպամած է:

1998

Հակում

Այսպես՝ գրում եմ բանաստեղծություն,
Այն մերթ ստացվում և կարդացվում է,
Ուրեմն ջանքս արդարացվում է.
Այսպես՝ գրում եմ բանաստեղծություն:
Հատուկ պատվեր չէ, այլ հակվածություն,
Գրելու պահին սիրտս բացվում է.
Այսպես՝ գրում եմ բանաստեղծություն,
Այն մերթ ստացվում և կարդացվում է:

1998

Տեր

Ա

Տեր, աչքիս լույսն ինչու առար,
Ճամփա ունեմ դեռ անցնելու,
Բեռ ունեմ տեղ հասցնելու...
Տեր, աչքիս լույսն ինչու առար:
Քո հին ոխը առաջ տարար՝
Հոնգուր-հոնգուր լացացնելու...
Տեր, աչքիս լույսն ինչու առար,
Ճամփա ունեմ դեռ անցնելու:

Բ

Տեր, աչքիս լույսն ինչու առար,
Քո գովքն էի ես ձեռնարկել.
Արդ ստիպված եմ պախարեկել...
Տեր, աչքիս լույսն ինչու առար:
Քո կրծքի տակ սիրտ չէ, այլ քար.
Վաղուց էիր ինձ ակնարկել...
Տեր, աչքիս լույսն ինչու առար,
Քո գովքն էի ես ձեռնարկել:

Գ

Տեր, վերադարձրու լույսը աչքերիս,
Որ աղոթելիս անքեն վեր նայեմ,
Իմ անեղծ հոգով սիրտդ հմայեմ...
Տեր, վերադարձրու լույսը աչքերիս:
Սուրբ սպեղանի ցանիր վերքերիս,
Որ իմ երկրային սերը վայելեմ...
Տեր, վերադարձրու լույսը աչքերիս,
Որ աղոթելիս անքեն վեր նայեմ:

1998

* * *

Իմ թվարկությունը
Իմ ծնունդով սկսվեց.
Ավաղ, շուտով ավարտվեց
Իմ թվարկությունը:
Մինչ իմ հարությունը
Ափսոս, խստիվ վիճարկվեց...
Իմ թվարկությունը
Իմ ծնունդով պսակվեց:

1998

Գրի առա

Ա

Տիրան-նամեն գրի առա,
Ինձ հայտնի չէ՝ լա՞վ է, թե վատ.
Ուղեկիցս հույս ու հավատ…

Տիրան-նամեն գրի առա:
Չեմ դողացել տողի վրա,
Ստացվել է այն աննկատ...
Տիրան-նամեն գրի առա,
Չեմ իմանում, լա՞վ է, թե վատ:

Բ

Գրի եմ առել կյանքս ծայից-ծայր,
Ճիշտ այնպես, ինչպես այն իրականում.
Ինձ հարց չեմ տվել, թե ինչ եմ անում...
Գրի եմ առել կյանքս ծայից-ծայր:
Գրել, թողել եմ մոտ երեք հազար,
Էլի գրում եմ ու չեմ վարանում.
Գրի եմ առել կյանքս ծայից-ծայր,
Ճիշտ այնպես, ինչպես այն իրականում:

1998

* * *

Խաղաղ, հաշտ էի առօրյայիս հետ,
Կյանքի, վերինի, նաև աստուծո.
Այժմ բոլորն էլ նոր-նոր դրածո...
Ասես հաշտ էի առօրյայիս հետ:
Եղբայրացել են աղվես ու առնետ,
Թակարդներ չկան գեթ հնարածո...
Ասես հաշտ էի առօրյայիս հետ,
Կյանքի, վերինի, նաև աստուծո:

1998

Զոն արեգակին

Ավազներում ծովափի
Ադամանդ եմ որոնում.
Ոգեկոչիր ինձ, արփի,
Մի նոր երգ եմ հորինում:

Այդ բոլորը քեզ ընծա,
Քեզ, որ նորից նորանում.

Պայծառացիր, օ՜, ցնծա,
Ես քեզնով եմ զորանում։

1998

* * *

Կյանքում հաճախ սայթաքել եմ,
Վիրավորվել, արյուն հեղել,
Համբերել եմ, սիրտ չեմ նեղել...
Կյանքում հաճախ սայթաքել եմ։
Ու ինքս ինձ ամոքել եմ,
Ճանապարհս երբեք շեղել...
Կյանքում հաճախ սայթաքել եմ,
Վիրավորվել, արյուն հեղել։

1998

* * *

Վատ չէ լինել միակամ,
Մի խելքի տեր, մի կամքի,
Ասպետ սիրո ու վարքի,
Լավ է լինել միակամ։
Հաճելի է, որ դեռ կամ,
Ես՝ մշակ գործի, ջանքի...
Լավ է լինել միակամ,
Մի խելքի տեր, մի կամքի։

1998

* * *

Ես մոռացել եմ, թե այս երկտողը,
Ում եմ նվիրել, ում հետ եմ կիսվել.
Այդպես սրտառուչ ինչպես է ասվել...
Ես մոռացել եմ, օ՜, այդ երկտողը...
Նորից է փորձում սասանել դողը։
Արդյո՞ք մեկտեղ չենք օ՜, մենք արտասվել.
Ես մոռացել եմ, թե այս երկտողը
Ում եմ նվիրել, ում հետ եմ կիսվել։

1998

* * *

Գիշերային արթնությունս
Ես մենակ եմ վայելում.
Իմ փոխարեն դու ես ահա
Դեմս՝ ողորկ հայելում:

Հավատում եմ՝ մարդուս հոգին
Հրաշքներ է արարում,
Երբ անձրև է տեղատարափ
Ու գետերն են վարարում:

1998

* * *

Էսօր մենակ եմ,
Դուռս թակող չկա,
Բացող, փակող չկա
Էսօր մենակ եմ:
Ես ու տնակն իմ
Ու ոչ մի բացակա...
Էսօր մենակ եմ,
Դուռս թակող չկա:

1998

* * *

Աննինջ, անսփոփ
Հոգիս մտորում,
Թախիծ է թորում
Աննինջ, անսփոփ:
Ով հին լուսամփոփ,
Հույս չես տոգորում...
Աննինջ, անսփոփ
Հոգիս մտորում:

1998

Կորուստ

Իմ կորուստներից ամենամեծը
Համակ կյանքս էր, որ խելքի չեկած
Օ՜, անվերադարձ ու անդարձ գնաց
Իմ կորուստներից ամենամեծը։
Ամեն ինչից վեր ու բարձրաբերձը
Ճակատագրով մի այս աշխարհն եկած...
Իմ կորուստներից ամենամեծը
Համակ կյանքս էր, դեռ ուշքի չեկած։

1998

* * *

Ես վատ տեսնում եմ ու վատ էլ լսում,
Բայց եկ, ականջ դիր, թե ինչ եմ ասում.
Նոր-նոր գործերի անուն եմ տալիս,
Եվ որոշումներ անբեկ, անկասում։

Հաշվի չեմ առնում տարիք, ուժ ու ջանք,
Չէ, բավական չեն որոշում ու կամք.
Հերն էլ անիծած, թե ուր կհասնեմ,
Կարևորն է տամ ոգորում, խոյանք։

1998

* * *

Զայրացած եմ աշխարհի ու աստծո դեմ,
Բայց նրանց ինչ՝ խոշտանգում եմ ինքս ինձ.
Ինչ փույթ, խղճիս չի ստվերում ոչ մի բիծ.
Զայրացած եմ աշխարհի ու աստծո դեմ։
Չեմ երազել ես ոչ դրախտ, ոչ եդեմ,
Բայց չթողին կյանքն այս ապրել անթախիծ.
Զայրացած եմ աշխարհի ու աստծո դեմ,
Բայց նրանց ինչ՝ խոշտանգում եմ ինքս ինձ։

1998

* * *

Տեր, աչքերիս մի քիչ լույս թող
Որ կարենամ Տերյան կարդալ,
Սիրո խոսքեր առնել ու տալ
Տեր, աչքերիս մի քիչ լույս թող:
Օ՜, հավերժի անմեռ կոթող,
Լավ է լավին միշտ հավատալ.
Տեր, աչքերիս մի քիչ լույս թող,
Որ կարենամ Տերյան կարդալ:

1998

Փշատ

Աշխարհի իմ բաժինը շատ էր,
Ես վայելեցի մի մասը միայն.
Կորուստներս, օ՜, քիչ չէին սակայն
Աշխարհի իմ բաժինը շատ էր:
Պայուսակիս մեջ նաև փշատ էր,
Անուշ էր, անսպառ բուրում էր այն,
Աշխարհի իմ բաժինը շատ էր,
Ես վայելեցի մի մասն միայն:

1998

Պրծա

Վրաերթի ենթարկվեցի,
Հրաշքով մահից պրծա,
Կյանք ունեցա նորընծա,
Վրաերթի ենթարկվեցի:
Ու՞մ աղոթքով էր, փրկվեցի,
Ասին «նոր նժույգ հեծա...»
Վրաերթի ենթարկվեցի,
Հրաշքով մահից պրծա:

1998

Վրաերթ

Վրաերթի ենթարկվեցի
Տուն դառնալու ճանապարհին
Անգթորեն տապալվեցի
Սալաքարին անտաշ ու հին։
Մատնվեցի մահու բերան
Ճակատագիրն ինձ ետ պահեց
Եկա, հասա շեմին իմ տան
Այս էլ բախտ էր, թերևս մեծ։
Քանզի ապրում, քանզի արդ կամ
Գոյատևում աստծո շնչով
Սուգ չեն անում մոտ, բարեկամ
Լաց ու կոծով, լաց ու ճիչով։
Երբ է եղել կյանքն անփորձանք
Պատահմունքը՝ զերթ պատահար
Չգործելով ոչ մի հանցանք,
Գլորվում ես, ընկնում ես վար։
Տեր, ազատիր նոր փորձանքից,
Ինչ էլ եղավ, հերիք է ինձ։

1998

* * *

Հիմա մու՞թ է դրսում,
Թե՞ աչքերս են մթնել,
Դեմս բվեճ է կոթնել...
Հիմա մու՞թ է դրսում։
Ես լոկ մթից եմ սարսում,
Աչքերիս լույսն եմ վատնել...
Հիմա մու՞թ է դրսում,
Թե՞ աչքերս են մթնել։

1998

* * *

Ինչ լավ բան որ կար իմ ունեցածում,
Պահպանեցի ես աչքի լույսի պես.
Մաքուր, անխառն, առանց ուծացում...
Պահպանեցի ես աչքի լույսի պես։

Մինչ լույսն աչքերիս, հրաշքն անբասիր
Չպահպանեցի աչքի լույսի պես.
Մի քիչ թող մնա, օ՜, Տեր, սպասիր
Էլ ոչինչ չունեմ աչքի լույսի պես։

1998

* * *

Բյուր աղոթքներս երկինք առաքված
Գալիս, հասնու՞մ են, Տեր, քո ականջին։
Այս մեկն էլ, ահա՝ մրմունջ մի վերջին
Որ առաքվում է նույնպես առ աստված՝
Չի արձագանքվում. ու ես էլ լքված,
Անունկնդիր եմ քո լույս դողանջին։
Բյուր աղոթքներս երկինք առաքված
Գալի՞ս, հասնու՞մ են, Տեր, քո ականջին։

1998

* * *

Իմ աղոթքները աղերսանքեր չեն,
Ընդվզումներ են, պահանջ ու բողոք.
Օ՜, անզիջում են, նույնքան անողոք...
Իմ աղոթքները աղերսանքեր չեն։
Հուսով եմ, մի օր հստակ կհնչեն,
Որպես մարտակոչ խենթ, դյուրաբորբոք.
Իմ աղոթքները աղերսանքներ չեն,
Ընդվզումներ են, պահանջ ու բողոք։

1998

* * *

Պակասում է լույսն աչքիս,

Կաթիլները չեն օգնում.
Փույթ չէ, փորձում, չեմ հոգնում,
Պակասում է լույսն աչքիս։
Վշտացնում է ամենքիս,
Հույս, անելիք չի մնում...
Պակասում է լույսն աչքիս,
Կաթիլները չեն օգնում.

1998

* * *

Եղնիկի պես աղջիկ էիր,
Տես, թե ինչպես պառավել ես.
Հավատա ինձ՝ դրանով էլ
Շատ-շատերից առավել ես,
Նեղացրել են՝ խառնվել ես,
Իզուր, իզուր առնվել ես։

1998

* * *

Ամբողջովին մի կուրացրու,
Տեր, լույսի շող մի քիչ թող
Մի դարձրու խարխափող...
Ամբողջությամբ մի՛ կուրացրու։
Դու ինքդ քեզ պատկերացրու
Իմ վիճակում ողբացող...
Ամբողջովին մի՛ կուրացրու,
Տեր, լույսի շող մի քիչ թող։

1998

* * *

Հենց որ տեղս նեղվում
Հայացքս պարզում եմ վեր,
Գթություն աղերսում, Տեր,
Հենց որ տեղս նեղվում։
Հնարք ու ջանք մեկտեղում

Ըմպում դարմանող հաբեր.
Հենց որ տեղս նեղվում
Հայացքս պարզում եմ վեր։

1998

Մոռացում

Մտքիդ եկածը թե չես գրանցում
Գիսաստղի նման անէանում է.
Ոչինչ չի թողնում, առնում, տանում է՝
Մտքիդ եկածը թե չես գրանցում։
Օ՜, անողոք ես, խարդախ մոռացում,
Ամեն հիացում այրվում, մարում է.
Մտքիդ եկածը թե չես գրանցում
Գիսաստղի նման անէանում է։

1998

* * *

Բանավոր եմ հորինում
Իմ տրիոլետները
Զրուցելով հետները
Բանավոր եմ հորինում։
Ամեն անգամ նորանում
Մնում ինքս իմ տերը.
Բանավոր եմ հորինում
Իմ տրիոլետները։

1998

Կարոտներ

Կարոտներ ունեմ ես բազմապիսի,
Շատ, շատ սիրելի ու միշտ հիշարժան.
Ինչ փույթ, թե կյանքը եղավ խիստ դաժան...
Կարոտներ ունեմ ես բազմապիսի։
Գույներ շողշողուն՝ բալի, կեռասի,

Օ՜, բյուր կածաններ, օ՜, ճամփաբաժան.
Կարոտներ ունեմ ես բազմապիսի,
Շատ, շատ սիրելի ու միշտ հիշարժան։

1998

* * *

Ջ-ին

Պարտապան եմ այժմ ես,
Իսկ դու, ջանս, պարտատեր.
Այդպիսին է կյանքը մեր,
Պարտապան եմ հիմա ես։
Թատերախաղ պարզապես
Բեմահարթակ ու դերեր.
Պարտապան եմ այժմ ես,
Իսկ դու, ջանս, պարտատեր։

1998

* * *

Տրամաբանելու դեռ ուժ կա մեջս,
Այն ինձ շարունակ պատսպարել է,
Ու չի ծուլացել, աճապարել է...
Տրամաբանելու դեռ ուժ կա մեջս։
Սառնասրտորեն ընկալել վերջս,
Անիրավներին հակաճառել...
Տրամաբանելու դեռ ուժ կա մեջս,
Այն ինձ շարունակ պատսպարել է։

1998

ՕՐԵՐ, ՏԱՐԻՆԵՐ

* * *

Օրեր-տարիներ, օրեր-տարիներ՝
Դարավոր մի կյանք՝ ծանր ու դժվարին,
Ամեն քայլափոխ առնում է քարին…
Օրեր-տարիներ, օրեր-տարիներ:
Սակավ, և սակայն եղան բարեբեր.
Փույթ չէ՝ չարն էր շատ ու քիչը՝ բարին:
Օրեր-տարիներ, օրեր-տարիներ
Դարավոր մի կյանք՝ ծանր ու դժվարին:

1999

* * *

Ամպերը մթնում են,
Ամպերը իջնում են
Սարերի վրա.
Աստղերը ելնում են,
Աստղերը վառվում են
Կապույտում: Ահա

Իջավ գիշերս,
Որպես հուշերս
Ոսկեվարս...
Քաղցր է հիշելը
Ատլաս փեշերը
Հեզանազ:

1934

Անցան

Այս գիշեր կանչերով ծածան,
Արծաթե ամպերի թևով,
Հեռավոր պատրանքի հևով
Ոսկեղեն երամներն անցան:

Բարձրագահ սարերի ուսով,
Աստղերի լույսերով օծուն,
Կարոտի բաղձանքով լեցուն,
Կանչեցի՛ն, հնչեցի՛ն, անցա՛ն:

1940

Նոր տարվա գիշեր

Աշխարհի բոլոր ճանապարհներով
Այս գիշեր անվերջ քարվաններ անցան.
Հեքիաթի նման հնչելով անցան
Աշխարհի բոլոր ճանապարհներով:
Եվ անցած տարվա ծանր բեռներով,
Հուշերի նման մթնում քարացան.
Աշխարհի բոլոր ճանապարհներով
Այս գիշեր անվերջ քարվաններ անցան:

1947

Առավոտ

Սլանում են խուռներամ
Ճնճղուկներն ու ճռվողում,
Լուրթ մթնշաղը գարնան
Խենթ աղմուկով ողողում:

Սիրո երգով է բացվում
Առավոտը անխռով.
Աշխարհը զով լվացվում
Երկնի պաղ ցող ու ջրով:

1955

* * *

Ով կյանք, դու խոր ու խրթին,
Բայց այնպես պարզ ես թվում,

Թևատարած լայն թևում...
Ով կյանք, դու խոր ու խրթին:
Մինչ խորքերում քո մթին
Գոյը ցավատանջ նվում...
Ով կյանք, դու խոր ու խրթին,
Բայց այնպես պարզ ես թվում:

1956

Մտքի թևով

Մարդս թառեց մտքի թևին,
Թռավ, ելավ երկինքն ի վեր,
Կտրեց, անցավ հորիզոններ,
Ու մերձեցավ հուր արևին:

Մարդս թառեց մտքի թևին,
Ի՞նչ փույթ, թե ինքն էր հողեղեն.
Միտքն էր հուժկու ու հրեղեն,
Որ անտեղյակ սրտի հևին,

Կայծակնացոլք բոցավառվեց,
Ճեղքեց կուրծքը տիեզերքի,
Հիմնը հնչեց գալոց երգի,
Եվ ուռճացա՛վ, և ծավալվե՛ց:

1957

Շղթա

Օղակ-օղակ, օղակ-օղակ,
Ու ձգվում է մի շղթա
Էն հեռավոր խանձարուրից
Մինչև վերջին գողգոթա:

Ամեն օղակ մի պատմություն
Լի խինդով ու դառնությամբ.
Ամեն օղակ՝ հույս-հարություն,

Հեքիաթի ձի, ոսկե թամբ:

Ու այդ շղթան ձգվում է արդ
Խանձարուրից այն կորած.
Քանի ական, քանի թակարդ,
Քանի շրջան բոլորած:

Ու մի օր էլ շղթայազերծ
Օղակները ցիր ու ցան...
Անէությունը միահեծ
Կկլանի մեզ անձայն:

1957

Բռնադատվածներին

Ամենազոր, անողոք ժամանակն անկողմնակալ,
Իրավունքով վճռաբեկ ահա եղավ վերահաս.
Եվ ոճիրներն արարված բիրտ ձեռքերով ոխակալ,
Եկավ, մաքրեց սրբորեն, այն, որ նենգ էր՝ պատուհաս:

Բայց ոճիրներն անողորմ հեղեղի պես ավերող
Տարել էին իրենց հետ գարնան ծաղիկն ու բողբոջ.
Ի՞նչ փույթ, թե լինենք հիմա խստագույնս՝ աններող,
Չենք գտնելու ոչ մեկին փնտրումներում մեր դողդոջ:

Օ՜, միշտ այսպես կրկնվել, արհավիրքն է հեղեղել,
Սրբել, տարել է առմիշտ ազնիվ պտուղն իմաստուն:
Թող այլևս չլինի. ինչ որ եղել է, եղել.
Թող մեր պանդուխտն էլ ընդմիշտ վերադառնա իրեն տուն:

1957

Ծիտիկ

Ճյուղի վրա մի ծիտիկ
Տիտիկ արել, կծկվել,
Երազում է մի հատիկ.

Ու ծարավից լլկվել,
Անշարժացել, մնացել...
Գուցե ու՞շքն է գնացել:

Ու արդ թե որ մոտենամ,
Մի քիչ օգնել ուզենամ,
Կհասկանա՞, կմնա՞,
Թե՞ կթռնի, կգնա:

1958

Մայրենին

Մայրենի լեզուն հենց այն է, որով
Մայրս բարուրիս նանայ է ասել,
Շունչս ջերմացրել հայրենի հրով,
Մեկնումս մաղթել, դարձիս սպասել:

Մայրենի լեզուն հենց այն է, որով
Առաջին անգամ մայրիկ եմ ասել.
Մայրենի լեզուն տվել է կորով -
Զուլվել եմ կյանքին ու չեմ աղերսել:

Մայրենի լեզուն հենց այն է, որով
Ցնծությունների կանչերն եմ լսել,
Ողջունել գարնան գալուստն են սարով
Եվ խնդացել եմ, և ջերմ արտասվել:

Մանուկներ, սիրեք մայրենի լեզուն,
Ճանաչեք ծնող, տուն ու հայրենիք.
Մայրենի լեզուն սրտեր է հուզում,
Հոգու մեջ դնում ջերմություն ու կիրք:

1960

* * *

Հարևանս քեֆի մեջ է՝
Սարքել է ճոխ կերուխում.

Ծափ ու ծիծաղը անվերջ է՝
Նվագում են ու պարում:

Ես գրում եմ, ջնջում էջը,
Շտապում եմ, համառում.
Չի երևում գործիս վերջը,
Ու ես էլ չեմ դադարում:

Կյանքը միշտ է եղել այսպես՝
Հարևաններ մեզ նման,
Բաժանված լոկ մի հաստաբեստ
Պատով-առանց պատուհան:

Ապրել են ու դեռ ապրում են,
Պիտի ապրեն դեռ էլի,
Ամեն մեկը իր նախընտրած
Միջոցներով մատչելի:

1963

* * *

Շուտով տարին կվերջանա,
Կդառնա երեկ,
Կմոռացվի, կանրջանա,
Հանց գիշեր-ցերեկ:

Փոխարենը նորը կգա,
Ցնծությամբ, գինով,
Ինքն էլ կանցնի, աստված վկա,
Հին տարվա հունով:

Որքան էլ որ փոխվի տարին
Ու հառնի նորը,
Մեկ է, չի գա սարը-սարին...
Գիտեն բոլորը:

Մի օր էլ մենք հին տարվա հետ
Թև-թևի տված,

Կհեռանանք անտես, անհետ
Փուչ կյանքով ծեծկված:

1977

15 թվին

Քսաներորդ դարի տասնևհինգ թվին
Թուրքերը, քրդերը և չերքեզները
Երկու միլիոն հայ սրի տվին:

Հայը զոհ անարգ Մեծերի դավին,
Մինչ նեռը քինոտ, նեռը անպատիժ...
Ու դեռ մխում է վերքը տակավին:

Քսան տարի մնաց մինչև ավարտվի
Քսաներորդ դարը,
Մինչև երկիրը հայից դատարկվի...
Մնա խաչքարը:

1980

* * *

Մոլորակը մոլորվել է,
Թավալվում է օրն ի բուն.
Ինչ որ տեղից գլորվել է,
Ոչ տեղ ունի ու ոչ քուն:

Մոլորակը մոլորվել է,
Դեռ թպրտում է անքուն.
Միլիարդ տարին բոլորել է,
Ոչ տեր ունի, ոչ անուն:

1982

Թուրշին

Թուրշին գնաց, Մարգոն մնաց,

Շուտով նա էլ կգնա.
Գրասեղանը թափուր մնաց...
Միտքս եկան ակամա:

Դե աշխարհիս գործին նայիր,
Ինչ ասես որ չի լինում.
Ինչքան գործեր ու ծրագիր
Հա անավարտ են մնում:

Էսքան, էսքան կիսատ գործեր,
Վերջը ինչ է լինելու:
Աստված ինքն էլ խոնարհ մի ծեր,
Կես ճամփին է մնալու:

1982

1000 տարին մեկ

Երբ լրացավ հազար տարին,
Աստված պիտի աշխարհ գար,
Պիտի օգներ խեղճ տկարին,
Որ տանջվել էր տասը դար:

Բայց նա չեկավ, չեկավ հաստատ,
Ճամփեն վաղուց էր փակվել,
Չէր մնացել սուրբ ու հավատ,
Խեղճը ծեծկվել ու թակվել:

Շուտով կանցնի մեկ հազարն էլ -
Այդ լոկ հույս է, խոսք ասված.
Աշխարհ չեն գա, հո չեն գժվել -
Սուրբ Քրիստոսն ու հայր Աստված:

1982

* * *

Աստված, դու երկրից շատ ես հեռացել,
Աստված, դու էլ ես մեզ պես ծերացել.

Օ՜... դրանից է՝ երկիրն անհաղորդ,
Երկրի ցավերից զերծ ես մնացել:

Ադամորդին էր քո ստեղծածը,
Թե որ դու էիր հայրը-աստվածը,
Էլ ինչու՞ նրա ճամփեն խորդ ու բորդ
Թողեցիր. սա՞ էր դրախտ ասվածը:

Մեծ սխալ գործեց մարդ արարածը,
Որ քեզ հռչակեց իրեն աստվածը:
Է՞ր արդ չես սանձում հեղեղները հորդ,
Խառնել, այրում ես չորի հետ թացը:

1982

Հայեր

Բոլորից խաբված հայեր,
Փոթորկով զարկված հայեր,
Ու՞ր է, թե մի օր Աստված
Աչքերիս ուղիղ նայեր...

Բոլորից խաբված հայեր,
Ազգերին ձուլված հայեր,
Բոլորին ոգի տված,
Բոլորից մերժված հայեր:

Բոլորից խաբված հայեր,
Անօրեն պարտված հայեր,
Մենք ազգով դատապարտված,
Շուրջբոլոր քաղցած գայլեր:
*
Բոլորից խաբված հայեր:

1982

Հանկարծ

Կյանքն ավարտվում է հանկարծ,
Ճամփեն մտնում փակուղի.
Էլ ինչ առիթ երկյուղի...
Կյանքն ավարտվում է հանկարծ:
Ու փոխվում է ճառագած
Օրը՝ մեգ-մառախուղի.
Կյանքն ավարտվում է հանկարծ,
Ճամփեն մտնում փակուղի:

1983

«Այստեղով անցան թուրքերը»

Վիկտոր Հյուգո

«Այստեղով անցան թուրքերը»,
Որպես խորշակ ու արհավիրք.
Խորտակեցին մեր կուռքերը,
«Այստեղով անցան թուրքերը»:
Խոպան դարձան մեր հերկերը,
Ո՞վ էր տեսել այսքան չարիք:
«Այստեղով անցան թուրքերը»,
Որպես խորշակ ու արհավիրք:

1983

Քամին

Քամին մտել է անտառ
Ու դուրս չի գալիս.
Առել-խառնել է իրար,
Հանգիստ չի տալիս:

Քամին մտել է անտառ
Ու աղմկում է.
Հագուստը պատառ-պատառ...
- Վայրի հակում է:

1983

Դաս

Տես ուր է հասել աշխարհիս բանը -
Ինձ դաս է տալիս «Սուտլիկ Որսկանը»,
Ու հորդորում է, ասում, խրատում,
Թե ինչպես ապրել այս շրջապատում:

Ու ես էլ ահա նրան ունկնդիր,
Նրա խրատին անշահախնդիր,
Դասավորում եմ գործերս այնպես -
Մի «Սուտլիկ Որսկան», «Քաջ Նազար» որպես:

Ասում եմ, անում, գործն առաջ տանում,
Հաղթահարելով արգելք անհատնում:
Տես ուր է հասել աշխարհիս բանը -
Ինձ դաս է տալիս «Սուտլիկ Որսկանը»:

1983

Չիմացան

Մեռածները չիմացան,
Ապրողները ինչ արին,
Ինչ տագնապներ ունեցան,
Աշխարհներին ինչ բերին:

Մեռածները չիմացան
Ինչ նոր սերունդ բարձրացավ,
Ինչ որոգայթ ու աքցան
Երկնեց նեռը ու անցավ:

Մեռածները չիմացան,
Թե ինչեր են մեզ սպասում.
Ու չար ուժերն անսասան
Տիեզերքն են ակոսում:

Չիմացան ու չիմացան,

Ու մենք էլ չենք իմանում,
Թե հողմերն այս երկնացան
Աշխարհս ո՞ւր են տանում:

1983

Շողեր

Շողե՛ր, Շողեր.
Ինչու՞ ականջիդ չունես օղեր՝
Ոսկե,
Արծաթե,
Կամ ադամանդե:

Թե ունենայիր
Գուցե մի ջահել շուրջդ տարփողեր,
Եթե ոչ ոսկով,
Գեթ սիրո խոսքով:

Մի քիչ կգովեր,
Մի քիչ կշոյեր,
Սիրտդ տաքանար,
Ու թեթևանար:

Է՛, Շողե՛ր, Շողեր,
Ափսոս ականջիդ չունես օղեր՝
Ոսկե,
Արծաթե,
Կամ ադամանդե:

1983

* * *

Անսպասելին
Հանկարծ է գալիս.
Հորձանք է տալիս
Անսպասելին:
Փորձանքը այդ սին

Չի առնում-տալիս:
Անսպասելին
Հանկարծ է գալիս:

1984

Թուրքերը

Գերել, տարել են մատաղ դուստրերին,
Գեներն են տարել հայ իմաստության.
Կալանել մահճում թուրքի հարսնության...
Գերել, տարել են մատաղ դուստրերին:

Խառնել են արյանն իրենց ցեղերի,
Քնքշանքը կնոջ մեր համեստության.
Գերել, տարել են մատաղ դուստրերին,
Գեներն են տարել հայ իմաստության:

1984

Լաց ու ծիծաղ

Կյանքն ու մահը օրն ի բուն
Պահմտոցի են խաղում.
Սուտմեռուկի են տալիս՝
Երկար ձգվում, նվաղում:

Խորամանկում են այսպես,
Ճիշտն ու կատակը խառնում,
Առևտուր է պարզապես՝
Փոխզիջում ու համառում:

Ու թև-թևի կյանք ու մահ -
Լաց ու ծիծաղ անբաժան՝
Բարեկամներ ակամա,
Թշնամիներ են դաժան:

Կյանքն ու մահը օրն ի բուն

Պահմտոցի են խաղում:

1984

* * *

«Որսկան ախպեր» -
Ե՞րգ է, թե՞ լաց.
Վերք է մի բաց՝
«Որսկան ախպեր»:
Մթին թուխպեր
Ճամփեք անանց...
«Որսկան ախպեր»,
Ե՞րգ է, թե՞ լաց:

1984

Ճակատագիր

Ով անողորմ ճակատագիր,
Դու գաղտնագիր չվերծանված,
Աստծու ձեռքով վավերացված...
Ով անողորմ ճակատագիր:
Կարմիր, կարմիր, կարմիր հագիր,
Ջի դու մորից դահիճ ծնված...
Ով անողորմ ճակատագիր,
Դու գաղտնագիր չվերծանված:

1984

Տերը մեր հին

Մենք բոլորս էլ մահկանացու,
Պտուղն ենք նույն քինոտ աստծու.
Մեզ չտվեց հզոր քանքար,
Ուզեց մնանք կամակատար:

Որ չունենա լուրջ մրցակից,
Վտանգավոր դուռ ու դրկից.

Չմոտենանք թագ ու գահին...
Շատ խանդոտն էր Տերը նորին:

1984

Վետերաններին

Մենք երգել ենք մեր բոլոր երգերը
Ավարտել բոլոր խաղերը մանկութ,
Քաթանին հանձնել բոլոր ներկերը,
Սպառել բարություն, խղճմտանք ու զութ:

Անցել ենք բոլոր ճանապարհները,
Հասել ենք վերջին անսուտ կանգառը.
Մոռացման հանձնել բյուր ավերները,
Ըմպել հաբերը կծու ու դառը:

Մենք և սպառել և սպառվել ենք,
Դժվարանում ենք պարզ խոսելն անգամ,
Պահեստ ենք հանձնել փրկություն ու զենք,
Ու թղթին տվել կտակ ու պատգամ:

Մենք երգել ենք մեր բոլոր երգերը:

1984

Ունեցել ենք

Ունեցել ենք քաջ զինվորներ՝
Արծվաթև, արծվասիրտ.
Բայց և անթիվ թշնամիներ,
Մեկը մեկից վայրի ու բիրտ:

Ունեցել ենք զորավարներ,
Ելնող հզոր Հռոմի դեմ.
Ոտնակոխ են արել դավեր,
Կործանել բերդ, ամրոց ու վեմ:

Միամիտ են եղել սակայն՝
Խաղաղասեր ու բարեսիրտ.
Մինչ թշնամիք հսկայական,
Նենգ, խորամանկ, խարդախ ու բիրտ:

Ու խաբել են նրանք մերոնց,
Ավիրել են շենները մեր,
Ողջը արել կրակ ու բոց,
Ու կործանել հիմերն ի վեր:

Տունը լցրել լաց ու կական,
Քշել բնիկ ժողովրդին,
Որ դարձել է թափառական,
Կարոտ իր հող, ցել ու հանդին:

Ու մինչ էսօր ցաք ու ցրիվ,
Խառնվել են ցեխ ու հարդին.
Օ՜, կձուլվեն շուտով-լրիվ,
Կդառնան զոհ «ճերմակ ջարդին»:

1984

Անտառում

Ա.Օ.-ին

Հա կտցում է փայտփորիկը,
Ու անշշուկ անտառում
Տարածում է իր «տիկ-տիկը» ,
Կտցում, ու չի դադարում:

Անվերջ կտցում ու կտցում է,
Օրվա գործն է կատարում.
Կտտոցներով հասկացնում է,
Որ ինքն էլ կա աշխարհում:

1984

* * *

Օ՜, գեղեցկություն, դու անսահման ես,
Եվ ամեն ինչում, ամենուր դու կաս.
Դու աշխարհով մեկ լի ու անպակաս...
Օ՜, գեղեցկություն, դու անսահման ես:
Դու աստվածային-երկնանման ես,
Թե պատեհ ժամի կանչեմ քեզ՝ կգա՞ս...
Օ՜, գեղեցկություն, դու անսահման ես,
Եվ ամեն ինչում, ամենուր դու կաս:

1984

Պատանդը

Պատանդի կյանքը մազից է կախված,
Պատանդին Փրկիչ առաքիր, աստված.
Հանգամանքները տարբեր են լինում...
Պատանդի կյանքը մազից է կախված:

Պատանդն անմեղ է, բեկանվիր հարված.
(Օ, ժամանակը պարան է լարված).
Ու ակնթարթն է անվերջ այլայլվում...
Պատանդի կյանքը մազից է կախված:

1984

* * *

Կածաններ լանջն ի վեր ելնող,
Կածաններ խոտերում մոլորված,
Կածաններ հուշերում երկարող,
Ծերպերին, ամպերին հասած:

Կածաններ, կածաններ կորած,
Խորթացած, անընտել կածաններ,
Անընկեր լորի պես վախվորած
Իմ մանկութ, քնքուշ կածաններ:

1984

Կանչում են

Աշխարհում որքան շատ վայելքներ կան,
Որ կանչել, կանչել ու կանչում են դեռ.
Օ՜, խոստանում են անանց քնքշանքներ...
Աշխարհում որքան շատ վայելքներ կան:
Բայց մեր օրերում՝ պատերազմ, ական,
Հուսահատ պարզված աղաչող ձեռքեր...
Աշխարհում որքան շատ վայելքներ կան,
Որ կանչել, կանչել ու կանչում են դեռ:

1984

Մի պոետի

Լավ է գրես նոր հայրեն,
Որ տողերը սիրտ այրեն.
Որ տողերի արանքում,
Ոնց սրբի կերպարանքում
Մոմեր այրվեն ու մարեն -
Լավ է գրես նոր հայրեն:

1984

Դար

Մեկից մինչև վաթսուն...
Թվեր են հաջորդում միմյանց՝
Վայրկյան, րոպե, ժամ.
Ապա ժամից անց՝
Օր, շաբաթ, ամիս,
Ապա՝ տարի, դար...
Աստված,
Ավելին հեռու տար:
Այն մեզ համար չէ
Պահված:
Ո՞րն է որից երկար՝

Չես ասի -
Մերթ վայրկյանն է դար,
Մերթ դարը՝ վայրկյան.
Նայած ինչ պահ է՝
Կյա՞նք է, թե՞ մահ է՝
Նայած ինչ պահ է:

1984

Սև ու սպիտակ

Սևն ու սպիտակը շատ են խառնվել,
Իրարով անցել մութը ու լույսը.
Ծովն ու երկինքը խիստ ու առավել,
Էլ ինչպե՞ս մարդուն չլքի հույսը:

Մարդ լլկվում է, ահից առնվում,
Մերթ հանձնվում է կանչող անհայտին.
Ոնց անղեկ նավը ժայռին զարնվում,
Սառչում քրտինքը ջերմող ճակատին:

Ու հաճախ փակում աչքերն ու լռում,
Դառնում անտարբեր տաքին ու ցրտին.
Բանտված վագրի պես տխուր գոմռում,
Ականջը դրած ցավացած սրտին:

1984

Նժար

Կշեռքի պես մեր էս կյանքը
Ունի երկու նախշուն նժար.
Միմյանց զիջող սիրահոժար...
Կշեռքի պես մեր էս կյանքը:
Մի նժարում տառապանքը,
Էն մյուսում սեր մի հոժար.
Կշեռքի պես մեր էս կյանքը
Ունի երկու նախշուն նժար:

1985

Ակնթարթ

Օ՜, խաչվում են ճամփաները
Ու ձգվում են ամեն կողմ,
Շնչավորվում տագնապները,
Որպես սամում, որպես հողմ:

Մենք մեկնում ենք տարբեր կողմեր,
Ու հեռանու՜մ, հեռանում,
Մսխում-մատնում լույս ու շողեր.
Ու մութն իջնու՜մ, թանձրանում:

Ու դառնում ենք կարոտ ու կանչ,
Ու պատրա՜նք անմեկնելի,
Եվ երազնե՜ր լուսաճաճանչ,
Ակնթա՛րթ անկրկնելի:

1985

Հոգս

Միասին են աշխարհ եկել մարդն ու հոգսը,
Անբաժան են եղել ու կան ի սկզբանե.
Սովորել ենք կարգավորել ջրի հոսքը,
Փորձել հոգսը կարգավորել՝ իզուր բան է:

Հոգսը միշտ կա ու կլինի առօրյայում,
Հոգսն է մարդուն մղում մարտի իր՝ հոգսի դեմ.
Հոգսը մարդուն, մարդը հոգսին ներում, այրում,
Ու մնում են միշտ միասին ու դեմ առ դեմ:

1985

* * *

Հյուսիսից է փչում քամին,

Դե ուրեմն ցուրտ է գալիս.
Տաք հագնվիր, ով սիրելիս...
Հյուսիսից է փչում քամին:
Տագնապով լի այս ուշ ժամին
Լուռ երազիր մի նոր մայիս.
Հյուսիսից է փչում քամին,
Դե ուրեմն ցուրտ է գալիս:

1985

* * *

Շատ են, շատ են մեր հոգսերը,
Արդ որ մեկին դիմակայենք.
Արդ որ մեկի խենթ մեղքերը
Մատնանշենք ու վկայենք:

Շատ են, շատ են մեր հոգսերը,
Բեռ են դառել մեր թիկունքին.
Էլ չեն տանում մեր ուսերը,
Էլ չեն նայում վեր՝ երկնքին:

Մոռացել ենք մեր սուրբ սերը,
Առօրյան է մեզ կլանել.
Գունատվել են մեր լույսերը,
Մեր քայլերը կքել անել:

Շատ են, շատ են մեր հոգսերը,
Ծանրանում են ու ծանրանում.
Դերև ելնում մեր հույսերը,
Արցունքները մեր՝... քարանում:

1985

Օ՛

Շատ, շատ են մահերը,
Փլվող գահերը
Մեր էս դարում.

Կյանքն այս անհաստատ է.
Ու ահասաստն է
Տարուբերում:

Թող որ բարի լինի
Վերջը ամենի
Այս արարում...

*

Շատ, շատ են մահերը
Փլվող գահերը
Մեր էս դարում:

1985

ԽՍՀՄ

Ում գործին ասես, որ չենք խառնվում,
Ում գործի համար չենք առնում-տալիս.
Ինչ ժայռի ասես, որ չենք զարնվում,
Որտեղից ասես հարված չի գալիս:

Գլխացավանքը մեր ուղեկիցն է,
Նա էլ մեր օրը դառնացնում անվերջ.
Մեր վարքը, իրոք, մեր հանցակիցն է,
Առիթն առկա է մեր արարքի մեջ:

Մենք մեր գործերը վաղուց մոռացել,
Թողել ենք այնպես՝ հենց երեսն ի վար.
Արևին ընկած քարը կարծրացել,
Չի տաշում-հղկում էլ ոչ մի տապար:

Ի՞նչ է լինելու վերջն այս ամենի,
Ինչ է խոստանում մեր վաղվա օրը.
Դուռը չհասնե՞նք հանկարծ գեհենի՝
Սատանի բաժին մենք ու բոլորը:

1985

Մի ցեղից են

Շունն ու գայլը մի ցեղից են,
Ծնողները նույն տեղից են.
Ասում են, թե երկուսն էլ
Հանցանքներում մեղսակից են:

Սակայն շունը խոստովանել,
Մեղքն իրենից մի կողմ վանել,
Որոշել է իր ողջ կյանքում
Գայլ եղբորը խիստ այպանել:

Ու նա հաստատ իր խոստմանը,
Որ վայել է ազնիվ շանը,
Միշտ հեռու է վանում գայլին՝
Չմոտենա տիրոջ տանը:

1985

Երամ

Կռունկների երամն անցավ
Լեռնապարի վերևներով.
Դյութված հեռվի արևներով-
Կռունկների երամն անցավ:
Կապույտներում անէացավ-
Կռինչներով ու հևերով.
Կռունկների երամն անցավ
Լեռնապարի վերևներով:

1985

Շոպեն

Երբ հնչում է Շոպեն -
Հանգուցյալ են տանում.
Ու թախծում է բոպեն -

Պահը թանձրանում:

Ու պոկվում ես կյանքից,
Ու վերանում.
Ու ներքին հուզմունքից -
Մեկեն ծերանում:

1985

Ռիչարդ Երրորդ

Տեսել եմ ինչ է կառափնարանը.
Աշխարհն է գնում, օ՜, այն տեսնելու.
Այնտեղ ճկվել է կայսրի իրանը,
Հպարտ գլուխը խոնարհվել հլու:

Երբ ազդարարվել վայրկյանագալը
Ու գլխատվել է Ռիչարդ երրորդը,
Աչքը չի թարթել Տրաֆալգարը՝
Նեռից փրկել է նաև իր մորթը:

1985

Գումարվում են

Գումարվում են րոպեները,
Դառնում տարի, դառնում կյանք.
Անհաշիվ են, օ՜, պահերը,
Որ բերում են տառապանք:

Գումարվում են րոպեները,
Ու գումարում խինդ ու լաց.
Ո՞նց ենք տանում այս բոլորը
Այսպես թեթև, սրտաբաց:

1985

Ձմեռ

Դու մոլեգնում ես, ձմեռ,
Փույթ չէ, գարունը կգա.
Քաղցած գայլի պես ագահ
Դու մոլեգնում ես, ձմեռ:
Դրսում բորան-բուք է դեռ,
Ճամփեքին խենթ սառցասահ.
Դու մոլեգնում ես, ձմեռ,
Փույթ չէ, գարունը կգա:

1986

Մեր լեզուն

Օ՜, մեր լեզուն հայավայել
Ում ասես, որ չի հմայել.
Աչքի առաջ այլ ազգերի
Հայոց հանճարն է վկայել:

Մաշտոցն աշխարհ շրջագայել,
Աստվածային գիրն արարել,
Որի հրաշք նկարվածքին
Խև խանդով է աստված նայել:

Մենք էլ հոկել ու փայփայել...
Ինչ փույթ - փորձել են քայքայել
Միությունը՝ ուժը ազգիս,
Եվ ինքնությունը շղթայել:

Բայց շարունակ դիմակայել,
Կռվում մենք մեզ չենք խնայել,
Պահպանել ենք այն անաղարտ
Ու թոռներին մեր ընծայել:

1986

Բուն

Բուն ծանրացել շիրմաքարին
Ու ժամանակն է չափում.
Հաջորդում է դարը-դարին.
Բուն մտքերն է ամփոփում:

Տրոփում է զարկերակը
Մեծ հավերժի՝ անխաթար.
Բորբոքում է բուն կրակը,
Որ չառնի կյանքը դադար:

1986

Պարապ ջրերը

Գունազարդել է ու ոսկեզօծել
Նա իր գրքույկի բոլոր էջերը՝
Սկիզբը, վերջը, նաև մեջերը.
Գունազարդել է ու ոսկեզօծել:
Ես այն բացել եմ և իսկույն գոցել,
Որ դուրս չհորդեն պարապ ջրերը...
Գունազարդել է ու ոսկեզօծել
Նա իր գրքույկի բոլոր էջերը:

1987

Սիրամարգ

Թեպետ հրաշք ես դու գեղեցկության,
Բայց քո կռինչը դուր չի գալիս ինձ.
Նրանում այնքան անթափանց թախիծ...
Թեպետ հրաշք ես դու գեղեցկության:
Այն ահազանգ է, օ՜, մենակության,
Արցունք է կաթում ելևէջներից.
Թեպետ հրաշք ես դու գեղեցկության,
Բայց քո կռինչը դուր չի գալիս ինձ:

1987

Կամակորը

Ա՜խ, այս փոքրիկ թևավորը,
Որ ծղրտում ամբողջ օրը,
Խռնշտել է մոտ ու հեռուն,
Ալեկոծել շուրջ բոլորը:

Ա՜խ, այս փոքրիկ թևավորը
Կորցրել է գուցե մորը,
Չի հեռանում այս կողմերից,
Համառում է կամակորը...

Ա՜խ, այս փոքրիկ թևավորը,
Ա՜խ, այս փոքրիկ թևավորը:

1987

* * *

Լուսինը հաճախ դիմակը փոխում,
Նոր տեսք ընդունում ու նոր պարագիծ.
Երևի հոգնել ինքը իրենից...
Հաճախ, հաճախ է դիմակը փոխում:
Եվ ամեն անգամ, երբ մութը կոխում,
Շեղ ծիկրակում է ամպերի ճեղքից.
Լուսինը հաճախ դիմակը փոխում,
Նոր տեսք ընդունում ու նոր պարագիծ:

1987

Ակնթարթներ

Դարեր երկարող, օ՜, ակնթարթներ,
Որ տիեզերք եք լուռ ալեկոծում,
Այրվում եք դուք էլ արևի բոցում...
Դարեր երկարող, օ՜, ակնթարթներ:
Եվ դուք, մանկական գերող հեքիաթներ,
Ձեր մեջ մեր ոգին անգետ թևածում...

Դարեր երկարող, օ՜, ակնթարթներ,
Դուք տիեզերք եք լուռ ալեկոծում:

1987

Բարձրյալը

Դժնդակ օրերի այս մղձավանջում,
Երբ անմարդկային տենդը թունալից
Սիրտն ու հոգին է կոպտորեն տանջում,
Երբ հեղեղները լեռան ձնհալից
Գահավիժելով ամենը ջնջում,
Երամակները խենթ, աղմկալից
Ականջները սուր ահից վրնջում,
Երբ որոտմունքը ցուրտ, ահագնալից
Բիրտ կայծակում է ու երբ անզիջում
Շանթում, հրդեհում այնպես սաստկալից,
Հողմը քշելով ջարդոտում, շրջում,
Երբ չի հագենում տարերքն ավարից,
Է՞ր է Բարձյալը անհոգ անրջում,
Ի՞նչ ակնկալենք մենք Նավավարից:

1988

Կեղծը

Մենք դարերով ստեղծում ենք,
Իսկ դուք եկել ու կեղծում եք.
Պատկերը մեր աստվածային
Առևանգում ու եղծում եք:

Օ՜, անամոթ արարածներ,
Որ նյութում եք կոտորածներ.
Ձեզ զողգոթա դեռ կուղեկցեն
Ձարհուրամած բյուր աստվածներ:

1988

Իմ մորեղբայր Մինասին

Մաճին է ձեռքը,
Գնում է հերկը,
Ծորում է երգը - հորովել.

Եզը քաշում է,
Ուսը մաշում է,
Տերը ճաշում է - հորովել.

Սերմը ցանում են,
Ցավը տանում են,
Բանում, բանում են - հորովել.

Հնձում, կալսում են,
Աղոթքն ասում են,
Աստծուն լսում են - հորովել:

1988

Չէինք իմանում

Մեր կյանքը անցավ խենթ թոհուբոհում,
Չէինք իմանում
Ուր ենք գրոհում,
Ում ենք գրոհում:
Չէինք իմանում
Ում ենք նզովում
Ինչու ենք զոհվում:
Չէինք իմանում
Ում ումից զատում
Ինչ ենք ազատում:
Չէինք իմանում:
Չէինք վհատվում
Ու չէինք դատվում:
Չէինք իմանում
Կյանքն ուր ենք տանում,
Ինչ ենք տատանում:

Չէինք իմանում
Չէինք իմանում,
Չէինք իմանում:

1988

Բարի եղիր

Բարի եղիր, բարի եղիր
Սրբի նման ու Աստծու.
Մի բարբառիր խոսքեր կծու…
Բարի եղիր, բարի եղիր:

Ճանապարհդ, օ՜, մի շեղիր,
Մի շռայլիր օրհնանք շինծու…
Բարի եղիր, բարի եղիր:
Սրբի նման ու Աստծու:

1989

Շիրմաքարեր

Անգիր, անանուն լուռ շիրմաքարեր,
Խաղաղ հանգչում եք կիսով հողի տակ.
Կյանքն էլ ձեզ նման՝ կես սուտ, կես կատակ…
Անգիր, անանուն լուռ շիրմաքարեր:
Սլացքի մեջ են տարիներ, դարեր,
Մինչ դուք անտարբեր և անհիշատակ…
Անգիր, անանուն լուռ շիրմաքարեր,
Խաղաղ հանգչում եք կիսով հողի տակ:

1989

* * *

Կյանքի հետ եղիր,
Եվ ոչ նրա դեմ սրիր սուսերդ.
Նրա բեռի տակ կոփիր ուսերդ.
Կյանքի հետ եղիր:

Շունչդ մի նեղիր,
Ու ապագային պարզիր հույսերդ.
Կյանքի հետ եղիր,
Եվ ոչ նրա դեմ սրիր սուսերդ:

1989

* * *

Խառնակ օրեր են,
Ցուրտ ժամանակներ իրարանցման,
Ազգ ու հավատի անսիրտ ուրացման
Խառնակ օրեր են:
Մութ գրոհներ են
Գաղտնի սրերի ահեղ մերկացման.
Խառնակ օրեր են,
Ցուրտ ժամանակներ իրարանցման:

1989

Աղոթք

Հոգեհանգիստ,
  Հոգեհանգիստ.
Տեր ողորմյա,
  Տեր ողորմյա:
Օ՜, շա՜տ ես խիստ,
  Օ՜, շատ ես խիստ
Մեր հնամյա
  Տեր անհանգիստ.
Տեր ողորմյա,
  Տեր ողորմյա:

1989

Շունը

Վնգստում է շունը, ոռնում,
Նախազգում է ինչ որ բան.

Չի հեռանում շեմից տան...
Վնգստում է շունը, ոռնում:
Ճանգռտում է, դառնում, խառնում,
Չի բացվում փակ դուռը տան.
Վնգստում է շունը, ոռնում,
Նախազգում է ինչ որ բան:

1989

Խառն են

Խառն են ժամանակները.
Փութաջան սրվում են
Բութ դանակները.
Խառն են ժամանակները:
Հրահրվում են
Կեղտոտ կրքերը,
Կեղծիքով լցվում
Թերթ ու գրքերը:
Պատրաստվել է պետք -
Պաշտպանել մանկան.
Ստուգել մուտք ու ելք,
Փակ դնել դռան:
Ու ոգեկոչվել,
Ու միասնանալ.
Ու զանգեր հնչել,
Ու հայդուկ դառնալ:
Օ՜, զգաստանալ,
Այս ակնարկնե՜րը...
Խառն են, օ՜, խառն են
Ժամանակները:

1989

Կարուսել

Օ՜, կյանք՝ կարուսել,
Մեծ ժամանակը

Եկել է, հասել
Ու իր խոսքն ասել:

Նրան ունկնդիր
Քո թափանիվը
Հույսով ի խնդիր
Դարձյալ պտտիր:

Օ՜, կյանք՝ կարուսել,
Շանթ ու կայծակը
Մեր սիրտն ակոսել,
Մեր հոգին կիսել...

Մենք պատառ-պատառ
Նետվել ցիներին
Բախտը անպատկառ
Այսպես դարեդար

Անիծել է մեզ,
Չարախնդացել,
Շարունակ այսպես
Մնացել ենք հեզ...

Օ՜, կյանք՝ կարուսել,
Պճնավորված կին.
Ցոփ ու փառասեր.
Օ՜, կյանք՝ կարուսել:

1989

Լուսին

Արբանյակն ես դու սին
Մեր անտեր մոլորակի.
Դու անտեր կրկնակի-
Արբանյակն ես դու սին:

Եվ արդ փարած հույսին

Ժպտում ես անհարկի.
Արբանյակն ես դու սին
Մեր անտեր մոլորակի:

1986

* * *

Մեր մորթված կյանքում
Ցուրտ մղձավանջ էր.
Նեռն աննահանջ էր
Մեր մորթված կյանքում:
Անցնելիք ուղին
Դժվարին լանջ էր.
Մեր մորթված կյանքում
Ցուրտ մղձավանջ էր:

1990

Գետաշենում

Աղաղակնե՛ր, ճիչե՛ր, ճիչե՛ր.
Օգնություն են աղերսում.
Անտարբեր են ներսում, դրսում...
Աղաղակնե՛ր, ճիչե՛ր, ճիչե՛ր:
Օ՛, փրկության թե փող հնչեր,
Կանխավ դողում եմ, սարսում.
Աղաղակնե՛ր, ճիչե՛ր, ճիչե՛ր-
Օգնություն են աղերսում:

1990

* * *

Մեզ խաչելու են նորից.
Դե, խաչում են սրբերին.
Մենք՝ ենթակա լրբերին...
Մեզ խաչելու են նորից:
«Մեր ծննդյան փուչ օրից»
Մեզ գողգոթան այս բերին:

Ու խաչելու են նորից.
Դե, խաչում են սրբերին։

1990

* * *

Կարինեին

Օ՜, դուք՝ հայոց բազմազավակ մայրեր,
Խորունկ խոնարհում մայրությանը ձեր՝
Որ միշտ հոգսաշատ եք ու միշտ ծանրաբեռ.
Օ՜, դուք՝ հայոց բազմազավակ մայրեր։
Ահա՝ սիգահասակ պարմանիներ,
Այնքա՜ն սիրունատես, դուստրեր, դուստրեր.
Օ՜, դուք՝ հայոց բազմազավակ մայրեր
Խորունկ խոնարհում մայրությանը ձեր։

1990

* * *

Օ՜, կյանք, օ՜, կյանք գեղեցիկ,
Հանդիպումներ հպանցիկ,
Ու հրաժեշտներ ակամա.
Օ՜, կյանք, օ՜, կյանք գեղեցիկ։
Երազանքներ սլացիկ,
Ու միրաժներ թափանցիկ.
Օ՜, կյանք, օ՜, կյանք գեղեցիկ,
Հանդիպումներ հպանցիկ։

1990

* * *

Տարին եկել է իրենը տանի,
Առաջն առնելը, օ՜, անհնար է.
Կյանքը մաքառում ու ճանապարհ է.
Տարին եկել է իրենը տանի։
Խաղում ենք դերում մեծ աճպարարի,
Եվ ամեն ժամը տարի է, դար է.
Տարին եկել է իրենը տանի,

Առաջն առնելը, օ՜, անհնար է:

1990

* * *

Դեռ աչք չթարթած -
Մի ամբողջ աշխարհ աշխարհից գնաց.
Ու այդ աշխարհից ոչ ոք չմնաց -
Դեռ աչք չթարթած:
Ճամփեն չհարթած
Բյուր քարավաններ եղան ահագնաց...
Դեռ աչք չթարթած
Մի ամբողջ աշխարհ աշխարհից գնաց:

1990

* * *

Մեր դեմը սար է,
Մենք ստորոտում ենք.
Մենք որոտում ենք...
Մեր դեմը սար է:
Մեր դեմը դար է,
Բայց անկոտրում ենք.
Մեր դեմը սար է,
Մենք ստորոտում ենք:

1990

* * *

Ուժի երկիր է,
Ուժի ժամանակ.
Ցոլա, ուժանակ...
Ուժի երկիր է:
Մերկ վերջնագիր է,
Ուժն է հաղթանակ.
Ուժի երկիր է,
Ուժի ժամանակ:

1991

* * *

Նեռը կործանվեց...
Մենք հար անիծում,
Իզուր չէինք այն
Առաքում աստծուն:

Չէինք կասկածում,
Համբերում էինք,
Որքան էլ հածում -
Մեր դերում էինք:

Նեռը կործանվեց,
Մինչ ժողովուրդը -
Օ՜, վերածնվեց...
Մեծ է Խորհուրդը:

1991

Հրաշք

Տիեզերքի հրաշքն ես դու,
Անօգնական մոլորակս,
Օրինական խենթ զավակս,
Տիեզերքի հրաշքն ես դու:
Հավերժության լույս աչքն ես դու,
Քո պարգևն է միակ կյանքս.
Տիեզերքի հրաշքն ես դու,
Անօգնական մոլորակս:

1991

Ու ... մոռացվում են

Աշխարհ են գալիս,
Աշխարհից գնում,
Եկող-գնացողից

Ոչինչ չի մնում:

Լոկ գրանցվում են,
Բացվում, գոցվում են -
Եղած, կամ չեղած,
Ու... մոռացվում են:

Ու մոռացվում են:

1991

* * *

Մեր դեմ ձմեռ է.
Չենք ունենալու փշուր վառելիք.
Չենք ունենալու նաև ուտելիք.
Մեր դեմ ձմեռ է:

Երանի արջին,
Որ ողջ ձմեռը իր որջը մտնում,
Քաղցից ու ցրտից փրկություն գտնում.
Երանի արջին:

Մեր դեմ ձմեռ է.
Թիկունք-թիկունքի ննջենք որբի պես.
Դե մենք մենակ չենք, աշխարհն է այդպես.
Մեր դեմ ձմեռ է:

1991

Չքնեց

Գիշերն՝ ինքը չքնեց.
Խոր ջերմում էր, գալարվում.
Զառանցանքը չլքեց,
Ճարճատում էր ու այրվում:

Գիշերն՝ ինքը չքնեց.
Լուսադեմին սարսուռով

Փշաքաղվեց-գունատվեց,
Անէացավ անխռով:

Մինչ ցերեկը աղմուկով
Ծավալեց իր առօրյան.
Երբեմն ցոփ իր շուքով
Ծեգ-ծեգումով հանց իրան,

Իր շքերթը արարեց,
Ու ծնծղաներ հնչեցին.
Ինքնամոռաց խենթ պարեց
Մինչ ծնկները ծալվեցին:

1991

* * *

Լավ էր՝ եկանք,
Լավ էր՝ եղանք,
Արդ գնում ենք անվերադարձ.
Եռանդ ու ջանք,
Հոգս, տառապանք՝
Ողջը ձրի, ողջը անվարձ,
Անունը՝ կյանք,
Օ՜, անփրկանք՝
Ավարտվում է ահա հանկարծ՝
Որպես խաբկանք,
Կամ զառանցանք՝
Հողե խրճիթ ու քարե բարձ:
Լավ էր՝ եկանք,
Լավ էր՝ եղանք,
Արդ գնում ենք անվերադարձ:

1991

Քուչակ

Սիրո հայրեններ հյուսելու համար
Նահապետ Քուչակ պիտի որ լինես,

Կրակե քանքար ունենաս անմար,
Որ չունենք, սակայն, ոչ դու, ոչ էլ ես:

Արդ համեստորեն, որպես ընթերցող,
Եկ ըմպենք գինին այս աննյութեղեն.
Արբենանք նրա եռքով խնկացող,
Քանի ապրում ենք ու չենք հողեղեն:

1991

Քոչարը

Հոյակապ շենքն այս կերտող
Ճարտարապետ Քոչարը
Փտեց սրա նկուղում,
Երբ մոլեգնում էր չարը:

Օ՜, այդպիսին էր դարը,
Մեր ապրելու վճարը
Մենք անհատույց մարեցինք,
Փրկելով մեր հանճարը:

1992

Շուրջն իր առանցքի

Դեռ երկա՞ր կարող է լուռ պտտվել
Մեր հողագունդը շուրջն իր առանցքի,
Այս բարեհաջող ծիրում գտնվել
Առանց ջերմելու ու զառանցանքի:

Թե՞ կուլ կգնա գոռ տիեզերքի
Խարդավանքներին անտեսանելի,
Կամ պայթուններին հրո ընդերքի՝
Աշխարհակործան մի անկասելի:

Օ՜, անկրկնելի ու աստվածաստեղծ
Արեգակնային թշվառ մոլորակ,

Անտես ծպտված տիեզերքում մեծ,
Մեծ տիեզերքում դու խեղճուկրակ:

1992

Մի կերպ

Մեր այս պայքարը՝ հանուն կյանքի
Ինչպես կավարտի և երբ.
Կյանքը նյութ դարձել երկընտրանքի,
Ու այն փրկում ենք մի կերպ:

Ինչ փույթ, զինվոր չենք դավանանքի,
Աղոթքը մեր՝ անվրեպ,
Կամարների տակ ավեր վանքի
Հնչեղ է, տխուր թեպետ:

1992

Շփոթմունք

Կյանքը գնալով դժվարանում է,
Աղքատությունը իրենը անում.
Խեղճը օրեօր տկարանում է,
Ուղեկցողն անխոս առնում է, տանում:

Տերը շփոթվել ու վարանում է,
Նա մոռացել է իր անելիքը.
Նեռը ակնդետ դեռ դարանում է,
Նա էլ հզոր է, իր Տերն է ինքը:

1992

Դատ

Ճակատագիր է, դե ինչ իմանաս,
Ինչ է դրոշմված մեր մազաղաթին
Ձեռամբ բարձյալի,

Որից չենք փախչի, որքան էլ կորուստ,
Այն գործելու է՝ վճիռ է վերուստ
Անբեկանելի:
Պիտի համառենք ու պիտի տոկանք,
Անտրտունջ տանենք խորշակ ու զրկանք
Անիմանալի:
Եվ հույս ներշնչենք ու կոփենք հավատ,
Մինչ որ կայանա դատաստան ու դատ
Մի ցասումնալի:

1992

* * *

Պետք չէ ընդվզել, երկրից հեռանալ,
Պետք չէ հետևից կամուրջներն այրել,
Դեռ կփափագես լայն թիավարել,
Նորից հայրենի ափ վերադառնալ:

Ճամփիդ եզրերին ծաղիկներ ցանիր,
Որ դարձիդ ծանոթ տեղերով անցնես.
Հին թշնամանքը դու մի կողմ վանիր,
Կյանքդ աշխարհում տանելի դարձնես:

1993

Հայերը

Պանդխտության են մեկնում հայերը
Օտար երկրներ հաց հայթայթելու.
Օ՜, աստծո արև, դու ե՞րբ ես, ե՞րբ ես
Հայոց սուրբ հողում ճառագայթելու:

Պանդխտության են մեկնում հայերը.
Ճակատագիր է դաջված կրակով.
Այդ կրակից են հառնում գեները,
Ու անէանում համաճարակով:

Պանդխտության են մեկնում հայերը

Անավարտ թողած վայելք ու կարոտ.
Երազ է դառնում մարդկային սերը,
Խաթարված աղոթք՝ ամեն առավոտ:

Պանդխտության են մեկնում հայերը,
Տան որբությունը անտերունչ թողած,
Մինչ երկարում են, օ՜, տարիները,
Վշտի արցունքի ջերմով ողողված:

*

Պանդխտության են մեկնում հայերը

1994

Երանի

Երանի նրան, ով գա պիտի դեռ,
Ու տանի պիտի ուժից ծանր բեռ,
Զինվորագրվի մարտիրոսվելու,
Որ գոյատևի հայրենիքը մեր:

Երանի նրան, ով գա պիտի դեռ,
Ինչ փույթ - դեմ ու դեմ հառնի հազար նեռ.
Քաջի մասին է հավերժ խոսվելու -
- Չընկրկեց, անցավ լեռնապար ու լեռ:

1994

* * *

Անձեռակերտ տրիոլետ,
Սեղմ կառույցով յուրընտիր,
Խելոք ասված խոսք ու գիր՝
Անձեռակերտ տրիոլետ:
Թեպետ շուքով չես սոնետ
Ավելի ես սիրալիր.
Անձեռակերտ տրիոլետ,
Սեղմ կառույցով յուրընտիր:

1995

Ներող եղիր

Հավերժ ներող եղիր, տրիոլետյան կարգ,
Որ չարաշահում եմ քո չափ ու ձևը,
Ինձ զերում է նաև ծառի կեղևը...
Հավերժ ներող եղիր, տրիոլետյան կարգ:
Միշտ ունեցել ես դու և պատիվ, և հարգ,
Որպես շքեղ ճախրող արծվաթևը,
Հավերժ ներող եղիր, տրիոլետյան կարգ,
Որ չարաշահում եմ քո չափ ու ձևը:

1995

* * *

Լուռ տողերի ստվերում
Տագնապներ կան ծվարած,
Մոլորված ու շվարած
Լուռ տողերի ստվերում:
Նախատինք կա ու ներում
Եվ խոստովանք վախվորած...
Լուռ տողերի ստվերում
Տագնապներ կան ծվարած:

1995

Դրսում քամի է

Դրսում քամի է, օ՜, սաստիկ քամի,
Ծառերը ճկվում են ու ճռնչում,
Հավքերը փլվող բներից փախչում...
Դրսում քամի է, օ՜, սաստիկ քամի:
Պատսպարվեցեք, ով դրսում հիմի,
Անտարբեր քամին գութ չի ճանաչում...
Դրսում քամի է, օ՜, սաստիկ քամի,
Ծառերը ճկվում են ու ճռնչում:

1995

Մեկ էլ

Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Ըմբոշխնիր վայելքներն այս բոլոր,
Աշխարհը՝ ծագեծագ-չորսբոլոր...
Ով մարդ, որ աշխարհ ես եկել:
Այս է, ու վերջ, չես գալու մեկ էլ.
Ամենն ավարտվում թավալգլոր...
Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Ըմբոշխնիր վայելքներն այս բոլոր:

1996

Վեճ

Բեռն ու բեռնակիրը շարունակ վիճում,
Թե ինչպես է, որ ծանրությունն աճում,
Դառնում անհնար ու անտանելի,
Որ ողնաշարը ոնց սայլ ճռնչում,
Ու բողոքում է, ցավատանջ ճչում.
Բայց դե ինչ արած՝ հաշտվում են էլի
Ու… միմյանց զիջում:

1996

Կյանք

Կյանք՝ հրաշքների աշխարհ,
Կյանք՝ եղելություն անպատմելի,
Կյանք՝ շռայլություն անհատնելի...
Կյանք՝ հրաշքների աշխարհ:
Կյանք՝ հավերժական ու հար,
Երանի նրան, ով վայելի,
Կյանք՝ հրաշքների աշխարհ,
Կյանք՝ եղելություն անպատմելի:

1996

* * *

Գիշերը տեղի է տալիս,
Ցերեկը՝ լույսով ողողում,
Ծլարձակվում սերմը հողում...
Գիշերը տեղի է տալիս:
Օրը անցնում, նորն է գալիս,
Կյանքը սիրով լցվում, դողում...
Գիշերը տեղի է տալիս,
Ցերեկը՝ լույսով ողողվում:

1996

* * *

Աչալուրջ եղիր, Տեր իմ, ավելի,
Չարաշահում են քո բարությունը,
Նենգով խռովում աշխարհի քունը...
Աչալուրջ եղիր, Տեր իմ, ավելի:
Սաստկությամբ սաստիր նորից ու էլի,
Չտեղաշարժվեն ծովն ու իր հունը...
Աչալուրջ եղիր, Տեր իմ, ավելի,
Չարաշահում են քո բարությունը:

1996

* * *

Ճակատագիր է լույս աշխարհ գալը՝
Շնորհ համբույրի, սիրո հանդիպման,
Գրկախառնումի, ջերմագին հպման…
Ճակատագիր է լույս աշխարհ գալը:

Բյուրեղաթասի մեղմ ծլնգալը
Առհավատչյա անխարդախ խոստման…
Ճակատագիր է լույս աշխարհ գալը՝
Շնորհ համբույրի, սիրո հանդիպման:

1996

Անտեղյակ

Իմ սերունդը գնաց անաղմուկ,
Մեկը մյուսից անտեղյակ.
Լքելով խրճիթ ու դղյակ՝
Իմ սերունդը գնաց անաղմուկ:
Լի թոհուբոհով, ցուրտ ու տամուկ,
Կյանք էր, երկփեղկվեց աջ ու ահյակ...
Իմ սերունդը գնաց անաղմուկ,
Մեկը մյուսից անտեղյակ:

1996

Միակը

Երկիր, հրաշք տիեզերքի,
Դու երևի թե միակը,
Դու կյանքի անմար կրակը...
Երկիր, հրաշք Տիեզերքի:
Երկիր, դու հոգս մեր ամենքի...
Քեզ ջերմ պահի Արեգակը.
Երկիր, հրաշք տիեզերքի,
Դու երևի թե միակը:

1996

Մհերը

Ցասման Մհերը Այր վերադարձավ
Ու իր հետևից դուռը պինդ գոցեց.
Նրան հետ պահել ոչ ոք չփորձեց...
Ցասման Մհերը Այր վերադարձավ:
Հայոց լայն հոգին կրկին դառնացավ
Ու անպատմելի խորախոր խոցվեց:
Ցասման Մհերը Այր վերադարձավ
Ու իր հետևից դուռը պինդ գոցեց:

1996

Սևահող

Մեր նախնիների աճյուններն արդար
Հող են դարձել պարարտ՝ սուրբ սևահող.
Գարնանը ծաղկում, բացվում արևկող…
Մեր նախնիների աճյուններն արդար:
Այցի չենք գնում արդեն քանի դար,
Ուխտի մեկնելու դարձել անկարող…
Մեր նախնիների աճյուններն արդար
Հող են դարձել պարարտ՝ սուրբ սևահող:

1997

Առանց այն էլ

Բարի եղիր, կյանք, դե առանց այն էլ
Դժվար են ապրում, օ՜, շատ-շատերը.
Այդ է կամեցել անշռայլ Տերը...
Բարի եղիր, կյանք:

Ամենուր զրկանք, խորխորատ անել,
Հետ են նահանջում «քաղցող վաշտերը»,
Դե ինչ էլ լինի՝ բոլորն են մերը...
Բարի եղիր, կյանք:

Երկինքն ամպոտել, բայց չի անձրևել,
Երաշտ է եղել, այրել դաշտերը.
Խիստ անողոք են ժամանակները...
Բարի եղիր, կյանք:

1997

* * *

Մարդկային վիշտը դժվար տանելի,
Սիրտը բզկտող կրծողներով լի.
Հանգիստ չի տալիս,օ՜, պահ մի դադար,
Ու մաշում է հար, անվերջանալի:

Ու երբ մոլեգնում էլի ու էլի,
Ու միտքն ու հոգին տանջում ավելի,
Ու խախտվում է մարդ ու ճամփեն շեղում
Անմարդավայել ու անդառնալի:

1997

Երկու աշխարհ

Երկու աշխարհ կա - շատ չեն ու բազում,
Մեկը՝ արթմնի, մեկը՝ երազում.
Որն է նրանցից գերադասելի,
Եվ որն է մարդուն առավել հուզում:

Երկուսն էլ անգութ այրում են, կիզում,
Երկուսի դեմ էլ մարդը ընդվզում.
Խութեր են հառնում անսպասելի,
Միմյանց հաջորդում խորշակ, փլուզում:

Տերն իր ստեղծածից հրաշք է ուզում,
Հանում է երկինք, ջրերում սուզում,
Դեպքեր հարուցում պատուհասելի,
Օ՜, և արթմնի, նաև երազում:

1997

Ցասամանը

Շուտով կծաղկի յասամանը,
Ու կխենթացնի շքեղ բուրմունքով.
Հայ պարմանիներ՝ պայծառ աչքունքով...
Շուտով կծաղկի յասամանը:
Դե դուրս թափվեցեք, մի ննջեք տանը,
Ըմբոշխնեք կյանքը անբավ արբունքով.
Շուտով կծաղկի յասամանը,
Ու կխենթացնի շքեղ բուրմունքով:

1997

* * *

Մարդ ուշանալը ուշ է ըմբռնում,
Երբ արդեն ոչինչ անել չի կարող.
Մարմնով անցնում է ցավատանջ մի դող…
Մարդ ուշանալը ուշ է ըմբռնում:
Նա այնուհետև խորունկ դառնանում,
Հոգում կուտակվում ամպեր աղմկող.
Մարդ ուշանալը ուշ է ըմբռնում,
Երբ արդեն ոչինչ անել չի կարող:

1997

* * *

Մի անգամ է աշխարհ գալիս
Մարդն աստծո, մեն մի անգամ,
Իր հետ բերում սեր ու պատգամ...
Մի անգամ է աշխարհ գալիս:
Աշխարհի հետ առնում-տալիս,
Մերժում ամեն փականք ու գամ...
Մի անգամ է աշխարհ գալիս
Մարդն աստծո, մեն մի անգամ:

1997

* * *

Մերթ հեռանում է, մերթ խիստ մոտենում
Երկնային մի աստղ մեր հողագնդին.
Նա սարսուռով է նայում անդունդին…
Մերթ հեռանում է, մերթ խիստ մոտենում:
Նա մեզ ապրել է, օ՜, դեռ արտոնում,
Ձեռնոց է նետում մեր անքեն խանդին…
Մերթ հեռանում է, մերթ խիստ մոտենում
Երկնային մի աստղ մեր հողագնդին:

1997

Դժվար է

Համբերելը, օ՜, նույնպես դժվար է,
Դե ջղեր են պետք դիմագրավելու,
Եվ տոկունություն՝ անվերջ լարվելու...
Համբերելը, օ՜, նույնպես դժվար է:
Մեր ապրած կյանքը՝ սլացքի դար է,
Պարտավորված ենք նրան մերվելու...
Համբերելը, օ՜, նույնպես դժվար է,
Դե ջղեր են պետք դիմագրավելու:

1997

* * *

Ճամփի վերջում, օ՜, կանաչ լույս,
Տեղ հասնելու հավատ ու հույս.
Ամենայն իղձ, օ՜, ի կատար,
Տերը ներկա անտարակույս:

Իրակա՞ն է այն, թե՞ երազ,
Հույսը մեզ հետ, թող հանապազ.
Փայլատակող աշխարհն արար
Մեզ ընդառաջ շող խրախույս:

1997

Հոգեգալուստ

Ուրախանում ենք օրվա ապրուստով,
Մտավորականի համեստ հագուստով,
Հույս փայփայելով վաղվա նկատմամբ,
Ու նաև, նաև հոգեպահուստով:

Դե հայի կյանք է՝ պարզ արտաքուստով,
Շատ էլ տարբեր չենք մեր իսկ ներքուստով.
Գոյատևում ենք, տեսնենք մինչև երբ,
Մեզ հուսադրում են հոգեգալուստով:

1997

* * *

Նրանք ինձնից սպասելիքներ ունեին,
Հույժ պատվաբեր անելիքներ ունեին,
Կյանքը, սակայն, նրանց տարավ՝ խափանեց...
Նրանք խելոք ասելիքներ ունեին:
Ազնվական արժանիքներ ունեին,
Ապագայի հավաստիքներ ունեին,
Եվ գալիքի լուսապայծառ կաճառում
Անտարակույս, շատ հաստիքներ ունեին:

1997

* * *

Մենք ի ծնե հարմարվում ենք բնությանը,
Երբ մեծանում՝ հարմարեցնում նրան մեզ.
Գոյատևում նրան փարված սիրով հեզ...
Մենք ի ծնե հարմարվում ենք բնությանը:
Օ՜, շնորհիվ արգասաբեր տխրությանը
Արդարորեն նվաճում ենք ասպարեզ...
Մենք ի ծնե հարմարվում ենք բնությանը,
Երբ մեծանում՝ հարմարեցնում նրան մեզ:

1997

Ծնունդ ու մահ

Ծնունդն ու մահը սկիզբ ու վերջ են,
Միմյանց խանդում են շարունակաբար՝
Սրընթաց վերելք, հոգնություն, դադար...
Ծնունդն ու մահը սկիզբ ու վերջ են:
Սկիզբ առնելը սեր է ու տենչ է,
Իսկ կյանքը, կյանքը ձգտում անկատար...
Ծնունդն ու մահը սկիզբ ու վերջ են,
Միմյանց խանդում են շարունակաբար:

1997

* * *

Հոգին թևում է, օ՜, հավերժորեն,
Համեստ մարմինը դառնում սևահող.
Տխուր միտքը այս մարդուն համակող՝
Հոգին թևում է, օ՜, հավերժորեն:
Եվ այսպես հոգին ուխտադրժորեն
Դարձավ միաձույլ կյանքը երկատող…
Հոգին թևում է, օ՜, հավերժորեն,
Համեստ մարմինը դառնում սևահող:

1997

* * *

Ի՞նչ է պատահել քեզ հետ,
Տեր իմ, վերևում բազմած,
Պար ես բռնել շրջան կազմած...
Ի՞նչ է պատահել քեզ հետ:
Հետևում ենք քեզ ակնդետ՝
Այլևս չես, օ՜, դյուրիմաց...
Ի՞նչ է պատահել քեզ հետ,
Տեր իմ, վերևում բազմած:

1997

Ձայնը

Մոտի ջաղացի չախչախի ձայնը
ականջումս է դեռ
Ինչ փույթ, անցել են, անդարձ հեռացել
բազում տարիներ.
Ձորակը իջնող արահետները
փակվել են, չկան,
Չկան այդտեղով երբեմնի ծանոթ
անցող-դարձողներ.
Բոլորը նոր են, բոլորն անծանոթ
բոլորն անտարբեր,
Չեն էլ հարցնում ով եմ, որտեղից,

գալու առիթներ:
Ովքեր են սրանք, այս նոր սերունդը,
որտեղից եկան,
Ես՝ հին սերնդի վերջին մոհիկան,
մենակ, անընկեր:

Մոտի ջաղացի չախչախի ձայնը
ականջումս է դեռ
Ինչ փույթ, անցել են, անդարձ հեռացել
շատ-շատ տարիներ:

1997

* * *

Շոգ հուլիսի զով-հաճելի երեկոն
Հավերժորեն զգվում է մեզ հեշտագին,
Օ՜, այս հեքիաթ, պարգև է, որ չունի գին,
Շոգ հուլիսի զով-հաճելի երեկոն:
Լավ ու վատի սահմանն է այս՝ ռուբիկոն,
Դեռ կմուծենք նեղ օրերի փրկագին…
Շոգ հուլիսի զով-հաճելի երեկոն
Հավերժորեն զգվում է մեզ հեշտագին:

1997

Շուռ է եկել

Աշխարհն, իրոք որ շուռ է եկել,
Դժվարացել է գոյատևելը,
Լռել, պապանձվել հին հորովելը...
Աշխարհն, իրոք որ շուռ է եկել:
Ուր կհայտնվենք, թե շուռ գա մեկ էլ,
Չգիտենք որն է արդ առավելը...
Աշխարհն, իրոք որ շուռ է եկել,
Դժվարացել է գոյատևելը:

1997

Շրջանցել

Կյանքը անողոք է ու խիստ,
Զգույշ շրջանցիր խութերը.
Զորավիգ թող լինի Տերը...
Կյանքը անողոք է ու խիստ:
Հեռվում ապարանք վեհանիստ...
Այնտեղ է կանչող քո սերը...
Կյանքը անողոք է ու խիստ,
Զգույշ շրջանցիր խութերը:

1997

* * *

Շատ ենք վշտանում, երբ հեռացողը
Մեր հարազատն է ու մեր սիրելին.
Օ՜, տիրական է անխուսափելին…
Շատ ենք վշտանում, երբ հեռացողը
Գնում է առմիշտ՝ ծածկում է հողը:
Առօրյա դառնում դժվար տանելին…
Շատ ենք վշտանում, երբ հեռացողը
Մեր հարազատն է ու մեր սիրելին:

1997

* * *

Դու գնացիր ու մնացիր
Օտար երկրի երկնքի տակ,
Ուր ծաղրը շատ, ու քիչ՝ կատակ...
Դու գնացիր, դու մնացիր:
Ուժ հավաքիր, վերադարձիր,
Հոգով հանգիստ, մտքով՝ շիտակ.
Դու գնացիր, դու մնացիր
Օտար ու ցուրտ երկնքի տակ:

1997

XX դարը

Օ՜, ավարտվում է քսաներորդ դարը,
Երկու հազարի վերջին տարին.
Սկիզբ է առնում երրորդ հազարը,
Հետը բերելով իր չարն ու բարին:

Մեծ-մեծ գյուտերի հարյուրամյակը,
Կոտորածների խենթ ժամանակը,
Դառնում է ահա նա էլ պատմություն -
Այս հաբն էլ ըմպենք՝ այն դարման կամ՝ թույն:

1997

* * *

Օ՜, հալալ լինի խմածդ գինին,
Թասերով շարված հուշերիդ սինին.
Հեռավորներիդ սուրբ հիշատակին
Օ՜, հալալ լինի խմածդ գինին
Եվ էլ մի տենչա ինչ որ ավելին,
Խինդով պարուրիր սիրելիներին.
Թող խիղճդ մաքուր միշտ թագավորի,
Թող հալալ լինի խմածդ գինին:

1997

Պակաս

Աշխարհը սիրո պակաս ունի,
Ու նաև կարոտի պակաս.
Տագնապիր, ով մարդ, քանի կաս...
Աշխարհը սիրո պակաս ունի:
Երգ մի կեռմեռվում «Անտունի»,
Հավերժ օրհնվես, Կոմիտաս…
Աշխարհը սիրո պակաս ունի,
Ու նաև կարոտի պակաս:

1997

* * *

Ուղևորներ կանգառում չկան,
Հանրակառքը նոր է մեկնել.
Ինձ տանելու կգա՞ մեկ էլ...
Ուղևորներ կանգառում չկան:
Արդյոք նորել է իմ լուսնկան,
Հորդորում են՝ չընկրկել…
Ուղևորներ կանգառում չկան,
Հանրակառքը նոր է մեկնել:

1997

Քունը

Ահա գետափը, ահա իր հունը,
Ջրերն են միայն, որ գալիս-գնում,
Գնում, լցվում են ծովի անհունը:

Ու կլանում են ծովերն ամեն ինչ.
Օ՜, շնչահեղձ է հայրենի տունը,
Այնտեղ ոչ կրակ, ոչ ծիծաղ, ոչ ճիչ:

Ինչ փույթ, տեղում են գետափն ու տունը,
Ինչ փույթ, հոսում են ջրերն անտարբեր,
Հյուղերին իջել, գերել է քունը:

1998

* * *

Երբ դիմացից է բախտը քեզ գալիս,
Գնա ընդառաջ ու մի հապաղիր.
Նրան հարազատ օգնական եղիր,
Երբ դիմացից է բախտը քեզ գալիս:
Երջանկությունից երբեմն լալիս,
Լաց, սակայն դեմքդ մի աղավաղիր...

Երբ դիմացից է բախտը քեզ գալիս,
Գնա ընդառաջ ու մի հապաղիր:

1997

* * *

Կյանքից գնալս, ավա՜ղ, կիմանան
Բոլոր-բոլորը, բացի ինձանից.
Օ՜, խաղաղություն կիջնի մի անբիծ...
Կյանքից գնալս, ավա՜ղ, կիմանան:
Հոգս-հոգնությունից կթեթևանան,
Թերևս ձգվի մի բարա՜կ թախիծ...
Կյանքից գնալս, ավա՜ղ, կիմանան
Բոլոր-բոլորը, բացի ինձանից:

1997

Կամակորները

Նրանք այդպես էլ, օ՜, չհաշտվեցին,
Եվ ամեն մեկը իր ճամփով գնաց.
Ամեն մեկը իր ասածին մնաց...
Նրանք այդպես էլ, օ՜, չհաշտվեցին:
Միմյանց դեմ պահանջ չհարուցեցին,
(Նրանք նույն հորից, նույն մորից էին)…
Նրանք այդպես էլ, օ՜, չհաշտվեցին,
Եվ ամեն մեկը իր ճամփով գնաց:

1997

* * *

Չհանդգնեցի իմ ամբողջ կյանքում,
Այդ էր պատճառը՝ շատ բան կորցրի,
Զգտում չունեցա ավելի բարձրի...
Չհանդգնեցի իմ ամբողջ կյանքում:

Հաղթանակների չունեցա հակում,
Քաշված մնալը կանոն դարձրի...

Չհանդգնեցի իմ ամբողջ կյանքում,
Այդ էր պատճառը՝ շատ բան կորցրի:

1997

* * *

Ամեն մեկն իր աստեղային ժամն ունի,
Դժվար գալիս ու հեշտությամբ հեռանում,
Մարդը պահն այդ, օ՜, չի, օ՜, չի մոռանում...
Ամեն մեկն իր աստեղային ժամն ունի:
Անմեկնելի փայլատակում արքունի,
Բայց երբեմն այրում ու չի վարանում.
Ամեն մեկն իր աստեղային ժամն ունի,
Դժվար գալիս ու հեշտությամբ հեռանում:

1997

* * *

Ես դարի զավակն էի,
Ապրեցի նրա կյանքով.
Առքով, փառքով, զրկանքով...
Ես դարի զավակն էի:
Ես կրտսերն ու ավագն էի,
Ավանդույթով ու բարքով...
Ես դարի զավակն էի,
Ապրեցի նրա կյանքով:

1997

Տեր

Տեր ամենազոր և մեծ բարերար,
Դու, որ աշխարհն ես ողջ դասակարգել,
Եվ ամեն մեկին իր դերում կարգել,
Ինչպես պատահեց, եղար անարդար,
Դու քեզ ստեղծողին, հավատացողին,
Քո իսկ պատկերով մարդ արարածին
Կյանք պարգևելիս եղար քմածին՝

Դեռ չընտելացած ջրին ու հողին
Մյուս աշխարհն ես առաքում անսիրտ,
Ուր թագավորում է անէությունը,
Եվ հավերժական չարթնացող քունը.
Արարք անխոհեմ ու միքիչ էլ բիրտ:
Բավ է, սթափվիր, տեր կաց անվանդ,
Թող մարդը ապրի միշտ մարդավայել,
Օ՜, նա գազանին գիտի հմայել,
Պահպանիր նրան, տեր կարգիր տանդ:

1998

Երգ

Օ՜, կյանքը երգ է, սրտի երգը՝ կյանք.
Ուրեմն երգիր, ով մարդ աստծո…
Երգը գանձ է սուրբ, անգին պեղածո…
Օ՜, կյանքը երգ է, սրտի երգը՝ կյանք:
Կոմիտասն ինքը հավերժող սխրանք,
Լուսեղեն կոթող, ոսկե կոփածո…
Օ՜, կյանքը երգ է, սրտի երգը՝ կյանք.
Ուրեմն երգիր, ով մարդ աստծո:

1998

* * *

Օ՜, մի քիչ էլ, օ՜, մի քիչ էլ, երկնավոր,
Ասելիքս կոկորդումս չմնա,
Արտաբերեմ, գրի առնեմ, որ մնա...
Օ՜, մի քիչ էլ, օ՜, մի քիչ էլ, երկնավոր:
Պատուհանիս թող կամրջվի բարավոր,
Թող պատերիս կտուր-տանիք ծանրանա...
Օ՜, մի քիչ էլ, օ՜, մի քիչ էլ, երկնավոր,
Ասելիքս կոկորդումս չմնա:

1998

* * *

Ձյունել է, ձյունել է սարը,
Սպիտակել է ոտքից գլուխ.
Փչում է հյուսիսը սառը,
Ձյունափոշի է ու մառախուղ:

Աչքը աչքի չի գալիս,
Չեն տարբերվում դեմք ու թիկունք.
Միք ուշանա, գարուն, մայիս,
Կյանքին բերեք սեր ու արբունք:

1998

* * *

Արդարապես գնահատել
Ոչ բոլորն են ի վիճակի.
Երբ կա սիրել, երբ կա ատել,
Հասնել ինչ որ մի վիճակի:

Խառնվում է անարդարը,
Շահն է իսկոյն տեղ գրավում.
Այդպիսին էր մեր այս դարը,
Երբ որդին էր հորը դավում:

1998

* * *

Արդարամիտ են Մեծերը,
Որ արածից չեն վախենում.
Հայտնաբերում են բծերը
Դեմքի վրա, նաև գենում:

Մեծն է Մեծին հեռվից տեսնում,
Գնահատում հորինածը.
Նրանք գնում, միմյանց հասնում,
Ձատում թարմն ու քարացածը:

1998

* * *

Ինչու ես այդտեղ մնում,
Երբ դուռ ու դրկից չունես,
Սրբասիրտ սրտակից չունես,
Ինչու ես այդտեղ մնում:
Երևի չես էլ քնում՝
Գիշերը անում ես կես...
Ինչու ես այդտեղ մնում,
Երբ դուռ ու դրկից չունես:

1998

* * *

Էս ապրածս աշխարհը
Մի փոթորկված երազ էր,
Մի մոլեգնած հովազ էր
Էս ապրածս աշխարհը:
Այդպիսին էր ողջ դարը,
Այն քավության նոխազ էր...
Էս ապրածս աշխարհը:
Մի փոթորկված երազ էր:

1998

* * *

Զմեռը, օ՜, չի նահանջում,
Ձյուն է, սառույց, սառնամանիք.
Ճռնչում են տուն ու տանիք.
Զմեռը, օ՜, չի նահանջում:
Մառախուղը կքել, ննջում,
Ծածկվել են հող ու տանիք…
Զմեռը, օ՜, չի նահանջում,
Ձյուն է, սառույց, սառնամանիք:

1998

Դարը

Դարն այս դառն էր ու դժվար,
Մարդուս համար սոսկալի,
Սարսուռներով, ցավով լի...
Դարն այս դառն էր ու դժվար:
Եղանք շվար ու թշվառ,
Ճամփեն ահով, մահով լի...
Դարն այս դառն էր ու դժվար,
Մարդուս համար սոսկալի:

1998

* * *

Ով արարող մարդ, քո գործին նայիր,
Որքան էլ այն բարդ, երբեմն անհարիր,
Վստահիր ուժիդ, գնա անվարան,
Արգելք ու խութեր տես, հաղթահարիր:

Ջանքդ ի վերջո պտուղներ կտա,
Դու վարձահատույց կլինես, ով մարդ.
Աշխարհի արդար վարքին հավատա,
Փույթ չէ՝ ճամփեքը շեղ լինեն անհարթ:

1998

* * *

Մի երկնչիր, մի դողա,
Ոտքդ ամուր դիր հողին,
Փարվիր արևի շողին…
Մի երկնչիր, մի դողա:
Ձարկիր ծնծղաղ՝ փողփողա,
Ժպտա անցնող-դարձողին.
Մի երկնչիր, մի դողա,
Ոտքդ ամուր դիր հողին:

1998

Տարիներ ի վեր

Ես ձեզ սիրում եմ երգեր իմ գրված տարիներ ի վեր,
Դուք պահպանել եք, այն ինչ ես արդեն, արդեն մոռացել,
Ես այն օրերից, օ՜, որքան, որքան շատ եմ հեռացել...
Ես ձեզ սիրում եմ երգեր իմ գրված տարիներ ի վեր:
Փույթ չէ, արվեստով ոչ միշտ անթերի, երբեմն անվավեր,
Ես ձեզնով լցված և կարոտներով հաճախ վերացել...
Ես ձեզ սիրում եմ երգեր իմ գրված տարիներ ի վեր,
Դուք պահպանել եք, այն ինչ ես արդեն, արդեն մոռացել:

1998

* * *

Օ՜, սխալներս, բյուր սխալներս,
Այն, որ գործել եմ իմ երկար կյանքում,
Մեծ բաժին ունեն իմ տառապանքում...
Օ՜, սխալներս, բյուր սխալներս:
Ավա՜ղ, չէր կանխում հարազատ Տերս,
Իր առօրյան էր հյուսում երկնքում...
Օ՜, սխալներս, բյուր սխալներս,
Այն, որ գործել եմ իմ երկար կյանքում:

1998

* * *

Տարերքը, այո, ամենազոր է,
Ու շատ դժվար է նրա դեմն առնել.
Օ՜, պետք է, պետք է վերստին հառնել...
Տարերքը, այո, ամենազոր է:
Ապրելու տենչը հուր է, բոսոր է...
Միայն ու միայն ապրել, սավառնել...
Տարերքը, այո, ամենազոր է,
Ու շատ դժվար է նրա դեմն առնել:

1998

* * *

Բարի վերադարձ ես քեզ մաղթեցի,
Դու դժկամությամբ «անեծք է» ասիր.

Դեռ ժամանակ կա, քիչ էլ սպասիր...
Բարի վերադարձ ես քեզ մաղթեցի:
Դու հայրենիքը թողած՝ գաղթեցիր.
Այժմ տունդարձը՝ պատրանք անբասիր...
Բարի վերադարձ ես քեզ մաղթեցի,
Դու դժկամությամբ «անեծք է» ասիր:

1998

* * *

Տես, թե որքան եմ ինքնավստահ՝
Անելիքներ եմ նոր, նոր ծրագրում,
Ինձ գերմարդկային ուժ եմ վերագրում,
Տես, թե որքան եմ ինքնավստահ:
Մարդ արարածը ազահ է, անահ.
Երբ տակը ձի կա՝ սլացքով վարգում...
Տես, թե որքան եմ ինքնավստահ՝
Անելիքներ եմ նոր, նոր ծրագրում:

1998

* * *

Շատ-շատերին չեմ հանդիպում,
Նրանք կա՞ն, թե գնացել են.
Հուշ են դարձել, ուծացել են…
Շատ-շատերին չեմ հանդիպում:
Տեր իմ, արդյոք չե՞մ վրիպում,
Ախր մի քիչ կուրացել եմ.
Շատ-շատերին չեմ հանդիպում,
Նրանք կա՞ն, թե՞ գնացել են:

1998

* * *

Անունս պատին վիմագրեցին,
Որպես կոթողի ճարտարապետ,
Որպես իր գործի հմուտ վարպետ...
Անունս պատին վիմագրեցին:

Բյուրեղաթասով գինի բերեցին,
Ըմպեցին նրանք սիրով ինձ հետ.
Անունս պատին վիմագրեցին,
Որպես կոթողի ճարտարապետ:

1998

* * *

Տեսնես ինձ ու՞մ հետ կհամեմատեն,
Լուրջ անուն հանած ո՞ր բանաստեղծի.
Համեմատողը այ թե չկեղծի.
Տեսնես ինձ ու՞մ հետ կհամեմատեն:
Մեղքերիս համար թող որ ինձ ներեն,
Բայց և տուրք չտան ի հարգանք Մեծի:
Տեսնես ինձ ու՞մ հետ կհամեմատեն,
Լուրջ անուն հանած ո՞ր բանստեղծի:

1998

* * *

Աշխարհից գնալը տխուր է շատ,
Գիտես՝ գնում ես անէանալու,
Գիտես՝ գնում ես լոկ հող դառնալու...
Աշխարհից գնալը տխուր է շատ:
Դրանից է, որ մնում ենք անհաշտ...
Օ՜, սահմանագիծ գնալ-մնալու.
Աշխարհից գնալը տխուր է շատ,
Գիտես՝ գնում ես անէանալու:

1998

* * *

Հուշերիս ձգվող արահետներում
Շատ որոնեցի, բայց քեզ չգտա,
Թաքնվե՞լ էիր, բայց ինչ խաղ էր դա...
Հուշերիս ձգվող արահետներում:
Ես նույնիսկ հիմա, օ՜, քեզ չեմ ներում.
Տվայտանքներիս եկ ու հավատա.

Հուշերիս ձգվող արահետներում
Շատ որոնեցի, բայց քեզ չգտա:

1998

* * *

Բոլոր աստղերը արևներ են վառ,
Որ այրվում, այրվում, այրվում են անվերջ,
Ո՞վ կայծն առաջին նետեց նրանց մեջ,
Որ մարելն արդեն դարձավ անհնար:

Ողջ տիեզերքը կրակ ու բոցում,
Այդ ինչպես է, որ երկիրն այս հրաշք,
Կրակը պահած իր խորունկ ծոցում,
Արդ զերծ է պահում ունեցվածքն իր թանկ:

1998

* * *

Տեր մեր,
Ժլատ մի եղիր,
Կյանք ես շնորհել՝
Թող որ վայելեն.
Թող որ աշխարհին
Հրաշք հավելեն…
Տեր մեր,
Ժլատ մի եղիր:
*
Տեր մեր:

1998

* * *

Ես նախազգում եմ մեր գալիք օրը,
Ահազանգում եմ՝ անսան բոլորը.
Ափսոսում եմ, որ միշտ չեմ լսելի,
Ու խառնվում են անցյալն ու նորը:

Այսպես, քայլ առ քայլ ժամանակի հետ,
Երբեմն վիճում ու... զիջում եմ մերթ,
Պարզաբանել եմ փորձում հարցերը՝
Ոչ ոք չմնա անտեղյակ, անգետ:

1998

* * *

Ոտքից-ոտք ես փոխանցում
Հոգնությունդ, փիղ,
Ասես խմոր ես հունցում՝
Լարում մկան ու ջիղ:
Մտքովդ էլ չի անցնում
Հանդարտվես, կանգնես ուղիղ.
Ոտքից-ոտք ես փոխանցում
Հոգնությունդ, փիղ:

1998

Հաշտ էի

Խաղաղ, հաշտ էի առօրյայիս հետ,
Կյանքի, վերինի, նաև աստուծո.
Այժմ բոլորն էլ նոր-նոր դրածո:
Ասես հաշտ էի առօրյայիս հետ:
Եղբայրացել են աղվես ու առնետ,
Թակարդներ չկան գեթ հնարածո…
Խաղաղ, հաշտ էի առօրյայիս հետ,
Կյանքի, վերինի, նաև աստուծո:

1998

* * *

Օ՜, երջանիկ, անմոռաց պահ՝
Երբ գտնում ես որոնածդ,
Քեզ է դառնում կորցրածդ՝
Օ՜, երջանիկ, անմոռաց պահ:
Մոռացվում են տագնապ ու ահ,

Կյանք է առնում երազածդ...
Օ՜, երջանիկ, անմոռաց պահ՝
Երբ գտնում ես որոնածդ:

1998

Ծառ Ծիրանի

Ծաղկիր, ծաղկիր, ծառ ծիրանի,
Ու զարդարիր այս պուրակը,
Ու բորբոքիր հին կրակը...
Ծաղկիր, ծաղկիր, ծեր ծիրանի:
Այլևս չեմ ես պատանի,
Չխնայեց ժամանակը...
Ծաղկիր, ծաղկիր, ծեր ծիրանի,
Բույրով լցրու իմ պուրակը:

1998

* * *

Ինչ էլ որ հղկես
Գույն-փայլ կստանա
Կհարստանա...
Ինչ էլ որ հղկես:

Մենք շատ հղկվեցինք,
Բայց երկփեղկվեցինք,
Ոչ հանգստացանք,
Ոչ հարստացանք:

1998

Լավը

Հանկարծական է հայտնվում լավը,
Օ՜, իբրև պարգև, հրաշք երկնային.
Այն որպես սոխակ թառում քնարին…
Հանկարծական է հայտնվում լավը:

Ու գեղգեղում է սիրահար հավը
Իր հրաշք ձայնով՝ նուրբ, աստվածային…
Հանկարծական է հայտնվում լավը,
Օ՜, իբրև պարգև, հրաշք երկնային:

1998

* * *

Օ՜, շքեղ հարճ էր.
Փույթ չէ, թե կարճ էր,
Նա դեռ չգերված
Ու աննվաճ էր:
Սիգահասակ չէր
Բարի էր, չար չէր.
Օ՜, նաև, նաև
Անօգ, անճար չէր:

1998

Չճանաչեցին

Ճարտարապետիս չճանաչեցին,
Բարի չասացին, գլուխ չտվին,
Շողոքորթեցին վերադաս կկվին…
Ճարտարապետիս չճանաչեցին:
Իրենց արարքից, ո՜չ, չամաչեցին,
Ուշադիր չեղան տարիքիս թվին.
Հետո, շատ հետո ասես հաճեցին,
Ու որոնեցին, և ոչ ավելին.

*

Ճարտարապետիս չճանաչեցին,
Բարի չասացին, գլուխ չտվին:

1998

Կինը

Կինը, թե որ մայր է արդեն,

Օ՜, ուրեմն աստված է նա.
Այդպիսին էլ նա կմնա...
Կինը, թե որ մայր է արդեն:
Նրան պիտի երկրպագեն,
Աղոթեն, որ անմահանա...
Կինը, թե որ մայր է արդեն,
Օ՜, ուրեմն աստված է նա:

1998

* * *

Գիշերները լռության մեջ
Վերհիշում է նա էջ առ էջ
Կյանքը անցած ու գնացած,
Որ դեռ ունի տխուր մի վերջ:
Այդպես ահա միշտ անընդմեջ,
Շատը՝ տխուր, իսկ քիչը՝ պերճ,
Գլորվել են անիվի պես,
Լցվել անհուն ձորերի մեջ:

1998

* * *

Մեր երջանկությանը Տերը սահման դրեց,
Չուզեց, որ այն երկարի ու հարատևի.
Արգելքներ հորինեց ամեն զույնի ու ձևի...
Մեր երջանկությանը Տերը սահման դրեց:
Միջամտեց, մարդկանց միմյանց դեմ գժտեցրեց.
Իրեն, օ՜, այդպես դուր էր գալիս երևի...
Մեր երջանկությանը Տերը սահման դրեց,
Չուզեց, որ այն երկարի ու հարատևի:

1998

* * *

Հույս՝ արարիչ ես,
Փույթ չէ, որ քիչ ես.
Գոյատևելու

Գերազդու ճիչ ես
Կանչ ու կռինչ ես։
*
Հույս՝ արարիչ ես։

1998

Առևտուր

Քաջ առևտուր է կյանքը ծայրից-ծայր.
Խաբել-խաբվելը հույժ օրինական.
Տերն այդ բոլորի անսխալ վկան...
Քաջ առևտուր է կյանքը ծայրից-ծայր։
Մի ուրիշ երկիր, հարմար մի այլ վայր
Գոյություն չունի, լոկ այս է, որ կա...
Քաջ առևտուր է կյանքը ծայրից-ծայր,
Խաբել-խաբվելը հույժ օրինական։

1998

Գեղեցիկը

Գեղեցիկը ամեն ինչում,
Աշխարհով մեկ այդ է հնչում.
Գեղեցկով է աստծո մարդը
Փորձում, գործում, ապրում, շնչում։

Գեղեցիկը նույնիսկ քչում,
Ակն աղբյուրի պես կարկաչում.
Թևավորներն ամենուրեք
Կանչում-ճչում, կանչում-ճչում։

Օ՜, երբ առյուծն է մռնչում,
Կամ արծիվն է սուր կռնչում,
Այդ պահին է մարդ շվարած
Շուրջն իր՝ աշխարհը ճանաչում։

Բվեճն անվերջ մնչում, մնչում,

Կորածները միմյանց կանչում.
Օ՜, վայելիր, մարդ, վայելիր,
Գեղեցիկը ամեն ինչում։

1998

* * *

Ա

Կյանքում ոչինչ չի կրկնվում
Հարկ է փարվենք եղածին.
Փրկվենք ուժից քմածին...
Կյանքում ոչինչ չի կրկնվում։
Կյանքը բարդ է, չի մեկնվում.
Հանգի՛ստ մարդ արարածին.
Կյանքում ոչինչ չի կրկնվում
Հարկ է փարվենք եղածին։

Բ

Կյանքում ոչինչ չի կրկնվում,
Բայց կուզեի կրկնվեր.
Այն, որից մեզ քիչ է տրվում,
Հարատևեր, երկարեր։
Եղանք անհոգ ու անտարբեր,
Ափսոս, թողինք այն հեռվում.
Կյանքում ոչինչ չի կրկնվում,
Բայց կուզեի կրկնվեր։

1998

* * *

Մարդ, քաշվիր անկյուն
Ու կյանքին նայիր.
Տես, թե ինչպես է
Գործերն իր վարում,
Տես, թե ինչպես է
Ելնում, վարարում.
Տես, թե ինչպես է
Սյուներ կամարում
Տես, թե ինչպես է

Աշխարհ արարում...
Մարդ, քաշվիր մի կողմ
Ու կյանքին նայիր։

1998

* * *

Վայելիր, վայելիր քանի ջահել ես,
Կյանքը փոխվում է, չի մնում այսպես.
Հետո գալիս են նոր ժամանակներ
Հետո մեծանում ու դառնում ես ծեր
Դառնում ես այնպես, ինչպես այժմ ես...
Վայելիր, վայելիր քանի ջահել ես։

1998

Գնաց

Նոր, նոր հասկացանք,
Որ արդեն անցանք,
Որ կյանք ապրելը
Ցնորք է, բաղձանք։

Ցնորքն էլ անցավ,
Ահա ծերացանք.
Հազար վիշտ ու ցավ
Ասես մոռացանք։

Ամպ էր, բարձրացավ
Տակը ձյուն մնաց...
Նոր, նոր հասկացանք
Որ կյանքը գնաց։

1998

Տատրակներս

Տատրակներս, փոքրացել եք,

Տարին շոգ էր ու երաշտ.
Բերքից պակաս տոչոր դաշտ...
Տատրակներս, փոքրացել եք։
Մենք էլ ձեզ պես մոռացվել ենք.
Առօրյայի հետ անհաշտ...
Տատրակներս, փոքրացել եք,
Տարին շոգ էր ու երաշտ։

1998

Տրիոլետին

Օրինյալ լինի քո ստեղծողը
Ու միշտ թեթև շիրմահողը.
Դու նրա սուրբ հիշատակը
Հավերժացնող սուրբ կոթողը։

Ընդամենը ութտողանի
Սիգահասակ ու գեղանի.
Տարողունակ ու լուսակերտ
Անուշ գինի ճոխ սեղանի։

1998

* * *

Օ՜, ինչեր անցան մարդկության գլխով,
Եվ ոնց են նրանք ամենն այդ տանում,
Եվ բեռանն անբավ ոնց են դիմանում...
Օ՜, ինչեր անցան մարդկության գլխով։
Տևաբար այսպես բութ վախ ու ոխով,
Հանգստանալու չե՞ն հանգրվանում...
Օ՜, ինչեր անցան մարդկության գլխով,
Եվ ոնց են նրանք ամենն այդ տանում։

1998

Կոլեգաներս

Ինձ անտեսել են կոլեգաներս,
Խիստ աննշան են դիտարկել դերս,
Ասես տեղյակ չեն արած-չարածիս...
Ու չեն ակնարկում կերտած գործերս։

Ինձնից չեն ստացել այն, ինչ սպասել են,
Չեմ արձագանքել մերթ ինչ ասել են,
Իմ իրականն ու իրենց սև խիղճը
Առճակատել են ու հակասել են։

Ես արարել եմ, իրենք՝ կրկնել են,
Հավատացրել են, իբր երկնել են.
Շատ կոչումների, պատվի տիրացել,
Շիկ դափնիներին անհոգ թիկնել են։

Օ՜, Տերը, Տերը թող նրանց ների,
Նման վրիպակներ աշխարհ չբերի,
Որ խաղաղ լինի մարդկանց առօրյան,
Ստին, կեղծիքին չմնանք գերի։

Ժամանակ կանցնի, նորերը կգան,
Ու կողողանջեն, ու կզրնգան.
Օ՜, կտարբերեն կողք-կողքի կանգնած
Որն է սուրբ տաճար, որը՝ բալդախան։

1998

Գնում եմ

Բեռնավորվել եմ իմ ունեցածով
Գնում եմ, գնում, դեռ տեղ չեմ հասել.
Հասնելու օրվան շատ եմ սպասել...
Բեռնավորվել եմ իմ ունեցածով։
Շատ էլ հանգիստ չեմ, դեմս ելման ծով,
Նրան հասնելու գետեր են հոսել...
Բեռնավորվել եմ իմ ունեցածով
Գնում եմ, գնում, դեռ տեղ չեմ հասել։

1998

Պոետները

Սիրտ ու հոգի կրակ դառած
Ոգիացած կապույտ հեռվում
Պոետները այրում-այրվում
Սիրտ ու հոգի կրակ դառած։
Հայացքները երկինք հառած
Անհուններից լույս են բերում,
Սիրտ ու հոգի կրակ դառած
Ոգիացած կապույտ հեռվում:

1998

* * *

Պար է բռնել աշնան քամին
Ծառի դալար ճյուղերի հետ
Տանում, բերում առաջ ու հետ,
Պար է բռնել աշնան քամին։
Դիմադրում է խնձորենին,
Օ՜, ուժից վեր - բողոքում մերթ.
Պար է բռնել աշնան քամին
Ծառի դալար ճյուղերի հետ։

1998

* * *

Ամպ-ամպոտել է երկնակամարը
Ուր որ է շուտով պիտի անձրևի.
Հավանական է, երկար կտևի...
Ամպ-ամպոտել է երկնակամարը։
Արտակարգ շոգ էր տարվա ամառը.
Բացառիկներից դարում երևի...
Ամպ-ամպոտել է երկնակամարը
Ուր որ է շուտով պիտի անձրևի։

1998

Տիգրանին

Թագաժառանգս արիանում է,
Մինչ գոռ ոսոխը իր դարանում է.
Ո՞նց իրար կգան, օ՜, նրանք կյանքում,
Գուշակող հոգիս դեռ վարանում է։
Մարդ մտածելով մերթ քարանում է,
Ու ինքն իրենից խիստ հեռանում է,
Թե ուր կհասնի, Տերն էլ չգիտի,
Նա էլ տունդարձն իր մերթ մոռանում է։

1998

* * *

Տերը ինձ երկար մի կյանք պարգևեց,
Դե փառք աստծո՝ անտեղի չանցավ.
Օրն իմ երկնածով, օ՜, հարստացավ...
Տերը ինձ երկար մի կյանք պարգևեց։
Տերն իմ առօրյան աջ ու ձախ ձևեց,
Իր բաժինն առավ ու հանգստացավ,
Տերը ինձ երկար մի կյանք պարգևեց,
Դե փառք աստծո՝ անտեղի չանցավ։

*

Դե փառք աստծո՝ անտեղի չանցավ։

1998

Վերջ

Ինչ որ մի վերջ է ուրվագծվում
Ձիգ ճանապարհիս ոլորանում.
Այնտեղ մի վիհ է լուռ խորանում...
Ինչ-որ մի վերջ է ուրվագծվում։
Խրտվիլակ մի նենգ խրոխտ ցցվում,
Ձեռքը ընկածին չի խնայում...
Ինչ որ մի վերջ է ուրվագծվում
Ձիգ ճանապարհիս ոլորանում։

1998

* * *

Մի ծուլանա, գրի առ,
Պահը անցնի՝ կմոռացվի.
Անավարտը չի լրացվի,
Մի ծուլանա, գրի առ։
Գնահատիր խոսք ու բառ,
Լավը միշտ էլ կանմահացվի.
Քանի ուշ չէ՝ գրի առ,
Պահը անցնի՝ կմոռացվի։

1998

* * *

Մենք այրվում ենք ու սպառվում,
Ու մոխրանում ենք, քամով տարվում.
Տերն առաքում կայծը միայն,
Մենք՝ վառոդով բոցավառվում։

1998

* * *

Ես ափսոսում եմ, շատ եմ ափսոսում,
Նրանց, որ շատ վաղ, շատ վաղ գնացին,
Կյանքի հմայքը չվայելեցին,
Ես ափսոսում եմ, շատ եմ ափսոսում։
Տեր, քեզ ձայն հասնու՞մ, դու լավ լսու՞մ ես՝
Քեզ ինչ խոսքերով անվանարկեցին։
Ես ափսոսում եմ, շատ եմ ափսոսում,
Նրանց, որ շատ վաղ, շատ վաղ գնացին։

1998

* * *

«Մնաք բարով»-ն ասացին,
Աստծո կամքին անսացին,

(Մերթ զոհ անխոհ արկածին)
Ու գնացին, գնացին։
«Մնաք բարով»-ն ասացին,
Մինչ ներքուստ կյանք տենչացին.
Հոգիներն այդ երկնածին
Գնացին ու գնացին։

1998

* * *

Հայն անդորր է միշտ տենչացել,
Մինչ՝ խենթացել, ալեկոծվել.
Հազար տեղից ծեծկվել, խոցվել,
Ու անհարկի նենգ քարկոծվել։
Հայն աստծուն սիրտ է բացել,
Հազարերանգ սեր խոստացել,
Մեկ է, էլի մերկ մնացել
Նա ողջ կյանքում չի տաքացել։

1998

Խոստովանություն

Վրիպեցիր մայրիկ, սաստիկ վրիպեցիր.
Բախտը իր ոտքով եկել էր տունս,
Խնդրում էր սերս, ձեռքս, անունս,
Եվ դու մերժեցիր. նա գնաց անդարձ
Իր հետ տանելով հանգիստս, քունս...
Վրիպեցիր մայրիկ, սաստիկ վրիպեցիր։

1998

* * *

Արդյոք պիտի հաջողե՞մ
Ավարտեմ գործն այս դժվար.
Մաքառել եմ ողջ մի դար...
Արդյոք պիտի հաջողե՞մ։
Անգամ թե սիրտս ճողեմ

Չեմ առնելու պահ-դադար.
Այո, պիտի հաջողեմ,
Ավարտեմ գործն այս դժվար։

1998

* * *

Ճի՞շտ էր, արդյոք, թե սխալ,
Ճամփան, որով ես անցա՝
Թե ինչ էի, ինչ դարձա...
Ճի՞շտ էր, արդյոք, թե սխալ։
Էլ ինչ ծխալ ու մխալ,
Ակունքից վաղ հեռացա
Ճի՞շտ էր, արդյոք, թե սխալ,
Ճամփան, որով ես անցա։

1998

* * *

Ամպն արևին մեզնից փակել,
Մեր հանդիպումն արգելակել,
Չի թողնում, որ ողջագուրվենք,
Հարազատի պես համբուրվենք,
Ու ջերմանանք, մտերմանանք,
Այցելության գնանք ու գանք,
Մանավանդ զոհ չի պահանջում,
Պարտքի մուրհակ գրվում, դաջվում,
Այն լոկ պարգև աստվածատուր,
Հանց հրեշտակից պոկված փետուր,
Շոյում է քեզ մտերմորեն,
Հույս ներարկում ջերմ-մայրորեն,
Որ չենք մրսի ձմռան ցրտին,
Գարուն կգա մեզ վերստին։

*

Ամպն արևին մեզնից փակել,
Մեր հանդիպումն արգելակել,
Չի թողնում, որ ողջագուրվենք,
Հարազատի պես համբուրվենք։

1998

Սուսանին

Տաս տարի առաջ
Մեր տանը լաց կար,
Մեռելահաց կար
Տաս տարի առաջ։
Դառնագին հառաչ,
Մեր սրտին քար կար.
Տաս տարի առաջ
Մեր տանը լաց կար։

1998

* * *

Փոստարկղին մոտեցիր,
Այնտեղ բարի լուրեր կան.
Այնտեղ ժպիտ կա մանկան,
Փոստարկղին մոտեցիր։
Օ՜, անտարբեր մի անցիր.
Չես լինի անբավական.
Փոստարկղին մոտեցիր,
Այնտեղ բարի լուրեր կան։

1998

Ձ Ո Ն Ե Ր

Սիրի-սիրի

Մկրտիչին, Վահանին

Ծաղիկն ուներ երեք թերթ,
(Օ՜, ցնորքներ լուսակերտ)
Մեկիկ, մեկիկ պոկեցինք,
Ու բախտներս փորձեցինք:

Գայանեն ընկավ մեկիս,
Ծովինարը՝ մյուսիս.
Երրորդը փուչ դուրս եկավ ...
Մեկնեցինք հարավ ... հյուսիս:

Ծաղիկն ուներ երեք թերթ.
Մտաբերում եմ ես մերթ
Մեր մանկությունն անվրդով,
Զվարթ ծաղկով ու վարդով:

1930

Մեծ Վարպետ

Ավետիք Իսահակյանին

Այսօր էլ չկա.
Նա, որ դեռ երեկ մի մեծ աշխարհ էր,
Որ Տիեզերք էր, մի անվերջ դար էր,
Այսօր էլ չկա:

Ավարտեց Վարպետն իր ուղին երկար.
Տուն վերադարձավ ճամփեքից թափառ,
Որ հանգիստ ննջի հայրենի հողում,
Ուր որ Արաքսն է անվերջ ողողում
Ափերն ու քշում ջրերն իր առաջ -
Հոգում հազար վիշտ, երկունք ու հառաչ,
Ուր Արագածն ու Մասիսը վսեմ

Մեր հիմն են երգում, որ ողջը լսեն,
Որ կա երկիրը, ուր անվերջ դարեր
Եղել են ու կան, ապրում են հայեր,
Որ ռհմակները վայրի ցեղերի,
Որ հոշոտեցին ինչքը հյուղերի,
Որ ավերեցին շեն ու սրբավայր,
Բայց չմոռացան դաշտը Ավարայր:

Ահա այդ հողում, ուր մեծապատիվ,
Առասպելական մեր նախնիքն անթիվ,
Իրենց կորովն ու գլուխն են դրել,
Կռվել, բայց երբեք, օ՜, երբեք խնդրել,
Ահա այդ հողում մենք շուտով պիտի
Ամփոփենք վշտով դին մեր Վարպետի:

Նա մինչև այստեղ քայլում էր մեզ հետ,
Իսկ այսօր բռնեց մի նոր արահետ.
Այդ արահետով նա երկար քայլել,
Ամպի պես մթնել, լույսի պես փայլել,
Հայկ Նահապետից եկել, մեզ հասել,
Սրտի և հոգու իր խոսքը ասել.
Եվ հիմա նորից այդ արահետով,
Իր ծով երգերի շնչով, հոգեթով,
Գնում է գալիք դարերի հեռուն -
Հավիտյան պայծառ սիրելի անուն:

1957

* * *

Վարպետը քնեց
Ու ...
Ու չարթնացավ.
Ու ... միթե, միթե
Երազով անցավ:
Ու ...
Միթե երազն այդ
Այդքան հուշիկ էր,
Յարի անունը

Իրոք, Շուշիկ էր:

Վարպետը քնեց
Ու ... չարթնացավ.
Ողջ կյանքը անեղծ
Երազով անցավ:

1982

Արձանի առջև

Ավ.Իսահակյանին

Վարպետ, Մեծ վարպետ,
Եկա հայցելու խորհուրդ իմաստուն.
Անփորձանք անցա ամեն արահետ,
Մատնեցի, սակայն և հանգիստ, և քուն:

Մինչ դու լռում ես,
Անթարթ հայացքդ գամելով վրաս,
Նախատում ես, որ ուշացած այսպես
Փորձեր եմ անում մագլցել Պառնաս:

Վարպետ, Մեծ վարպետ,
Դե մարդկային է ամեն թուլություն,
Ու արդ չեմ հաշտվում մոռացության հետ,
Ինչ փույթ, թե ջանքս կանցնի ապարդյուն:

1991

* * *

Վարպետը խոսք չբացեց,
Պահը սրսուռ-սարսուռ էր,
Այցս երևի զուր էր...
Վարպետը խոսք չբացեց:
Ասես հառաչեց, հածեց,
Սրտի ցավ էր, մրմուռ էր...
Վարպետը խոսք չբացեց,
Պահը սրսուռ-սարսուռ էր:

1998

* * *

Նորից ու նորից կարդում եմ Տերյան,
Համակվում նրա քնքշանքով նրբին,
Եվ ցնորքներով, ցավով նաիրյան -
Ողջը հրկիզված, հանձնված հրին:

Նորից ու նորից կարդում եմ Տերյան,
Ու լցվում, լցվում ծով կարոտներով.
Հուռթի դաշտերը ծաղկունքով բուրյան,
Լեռնալանջերը ծով արոտներով:

Նորից ու նորից կարդում եմ Տերյան,
Ու լռում, լռում, ասես պապանձվում.
Ասես թե նոր եմ հանդիպում նրան,
Ու տառապանքին նրա հանձնվում:

1981

* * *

Այստեղ, պուրակի ստվերում խաղաղ,
Ուր երազներն են շշուկներ մաղում,
Ուր առավոտյան իջնում ցող ու շաղ,
Ու արեգական շողերն են խաղում,

Այս թուխ, այս ողորկ, այս քարի տեղում
Արձան կկանգնեն Վահեն Տերյանին.
Վերջապես մի օր հայրենի հողում
Պսակ կդնեն իր պատվանդանին:

Ես, ես չեմ լինի, ու իմ փոխարեն
Կայտառ թոռնիկս ընծա կբերի
Վահան Տերյանին - օ՜, անձամբ իրեն,
Դաշտի ծաղիկներ՝ բույրը հանդերի:

1992

* * *

Փոքրատառով ես գրել
Անունդ, մեծ բանաստեղծ.
Խոստովանիր, օ՜, անկեղծ
Ջա՞նքդ ես արդյոք խնայել...
Մեծամեծ փառքի վայել
Հանճարդ սուրբ ու անեղծ...
Փոքրատառով ես գրել
Անունդ, մեծ բանաստեղծ:

1997

* * *

Օ՜, նույնիսկ քեզ, Վահան Տերյան
Չընծայեցին դափնի ու գահ,
Անմիջապես, անվերապահ
Օ՜, նույնիսկ քեզ, Վահան Տերյան:
Էլ ուր մնաց Տիրան-Միրան,
Որ գրիչ են շարժում անահ...
Օ՜, նույնիսկ քեզ, Վահան Տերյան,
Չընծայեցին դափնի ու գահ,
Անմիջապես, անվերապահ
Օ՜, նույնիսկ քեզ, օ՜, նույնիսկ քեզ:

1998

* * *

Նստել ու Պարույր Սևակ եմ կարդում,
Ու թվում է թե ես էլ թակարդում,
Պատեպատ զարկվում, փորձում եմ գտնել
Ելք մարդավայել ու այն չեմ գտնում:

Նստել ու Պարույր Սևակ եմ կարդում,
Ու լորձն է սառում իմ սուր կոկորդում,
Որ մի օր պիտի արտաբերեի
Ճչալով, որպես վերջին ակորդում ...

Ձայնալարերս խզվելով հորդում,
Այդպես եզներն են անդանակ մորթվում,
Այդպես տապալվում մի հսկա հասակ,
Կամ աշխարհ բերում մի գաղտնի երդում ...

Նստել ու Պարույր Սևակ եմ կարդում:

1982

* * *

Նշանին

Հեռավոր ափը քեզ գրավել էր,
Բիլ պատրանք դարձած գունավորվել էր.
Ու քեզ հանձնեցիր կապուտակ ծովին,
Մինչ ծովը հեռվում խիստ վարարել էր:

Իսկ ծովը հեռվում ալեկոծվել էր,
Ու դարձիդ դուռը հավետ գոցվել էր.
Կարոտդ մնաց կանչող էն հեռվում,
Մի սև խրտվիլակ դեմդ ցցվել էր:

1982

Ափսոս

Թամարին

Ափսո՜ս, չիմացանք ինչը-ինչոց էր.
Կարծեցին տունն այս անդուռ ամրոց էր.
Եկան, դարպասին դիպան ու անցան ...
Ափսո՜ս, չիմացանք ինչը-ինչոց էր:
Դարպասը բանամ, ա՜խ, ինչու գոց էր,
Թող ճամփորդները անարգել ներս գան.
Ափսո՜ս, չիմացանք ինչը-ինչոց էր,
Կարծեցին տունն այս անդուռ ամրոց էր:

1983

* * *

Միրով Սուրեն Բաբայանին

Ա

Երկար սպասեց մայրը իր որդուն,
Իր պանդուխտ որդուն երկար սպասեց.
Ծեր սրտում անգիր սաղմոսներ հյուսեց ...
Երկար սպասեց մայրը իր որդուն:
Ուզեց, որ որդին վերադառնա տուն.
Մոտալուտ մահից երբեմն սարսեց.
Երկար սպասեց մայրը իր որդուն,
Իր պանդուխտ որդուն երկար սպասեց:

Բ

Որդին տուն դարձավ պանդխտությունից.
Ու մայր ու որդի, օ՜, իրար գտան.
Լուսավորվեցին գորշ պատերը տան.
Որդին տուն դարձավ պանդխտությունից:
Նույն օրը նեթ երջանկությունից
Մի ճերմակ պատանք մայրն առավ վրան:
Որդին տուն դարձավ պանդխտությունց,
Ու մայր ու որդի, օ՜, իրար գտան:

1984

* * *

Միքայելին

Քո շիրմահողին կակաչներ բուսան -
Կարմիր կակաչներ բոցկլտացող.
Թերթերի վրա արյուն ու ցող...
Քո շիրմահողին կակաչներ բուսան:
Ես էլ քո վշտից դարձել եմ գուսան.
Խոսքս շարում եմ ահա տող առ տող...
Քո շիրմահողին կակաչներ բուսան,
Կարմիր կակաչներ բոցկլտացող:

1984

* * *

Հրաչյա Քոչարին

Մի տնակ կա Լուսակերտում -
Տուֆաշեն ու եռակամար,
Դեմը այգի մշտադալար...
Մի տնակ կա Լուսակերտում:
Քոչարն էր իր երգը կերտում,
Ու... այդտեղ էլ առավ դադար...
Մի տնակ կա Լուսակերտում,
Տուֆաշեն ու եռակամար:

1984

* * *

Արծվաքանդակ
Այս քարի տակ
Մեր Ռաֆոն է հանգչում.
Դարձած համակ
Լույս ու կրակ
Կանչում է, կանչում...

1984

* * *

Եղիշե Չարենցին

Այն նեղ օրերում
Դու քո հանճարն էիր հորինում -
Նրան խոր վերքի,
Լուսավոր երգի կերպարանք տված:
Այն նեղ օրերում
Դու նոր եզերքներ էիր որոնում -
Մի նոր վերելքի
Լույս տիեզերքի ոլորաններում:

1984

* * *

Դու ջահել էիր, նույնիսկ պատանի.
Դա ի՞նչ հասակ էր մեռնելու համար.
Ճակատագիրը, սատանան տանի,
Նույնիսկ քեզ համար, գտավ բավարար:

Մարդ չի հավատում, որ այդ հասակում
Երկնել ես այդքան, օ՜, այդքան գանձեր.
Արդ փայլփլում են երգիդ քսակում
Ծիածանագույն բյուր ադամանդներ:

Դու ջերմում էիր լաբիրինթոսում,
Անդադրում հղկում բյուր մարգարիտներ,
Դրա փոխարեն՝ սարսափ ու սոսկում ...
Հատուցումն իրոք, անճոռնի, բիրտ էր:

Քո սերունդն անցավ, ու չկա ոչ ոք.
Ու մոռացվում են հիշատակները.
Մինչ բարձրանում է լուսավոր մի մոգ,
Հառնում են երգիդ աշտարակները:

1984

* * *

Հող դարձար դու էլ,
Եվ հողը քեզնով դարձավ հանճարեղ,
Ու երկնեց գարուն՝ հրաշք փառահեղ...
Հող դարձար դու էլ:
Քանքարիդ վայել
Շիրմիդ վարդեր կան շիկնանքով շքեղ ...
Հող դարձար դու էլ,
Եվ հողը քեզնով դարձավ հանճարեղ:

1986

* * *

Այսօր նշում են իննսուն տարիդ,
Մինչ դու ապրեցիր հազիվ քառասուն.

Ինչ փույթ զարդն էիր ճակատին դարիդ,
Մեր ժամանակի մեծ այր իմաստուն:

Այսօր նշում են իննսուն տարիդ,
Տվածիդ դիմաց ահա պարտասուն
Հարգանքի տուրք են բերում քնարիդ,
Ու դիֆերամբներ, օ՜, բազմախոստում:

Ոչ, գրեր չկան սուրբ շիրմաքարիդ,
Սակայն վկա է վաստակդ խոսուն.
Արարատի դեմ աչքը կամարիդ
Արդ մեծ աշխարհին բացվել ու խոսում,
Եվ ճառագում է շունչը հանճարիդ,
Հարատևումիդ բերրի ակոսում:

1987

* * *

Քո «...Կարուսելը» տխուր է իրոք,
Իսկ հառաչանքդ, օ՜, սրտակեղեք.
Արյուն է զեղում գրիչդ եղեգ...
Քո «...Կարուսելը» տխուր է իրոք:

Տվայտանքներդ սրտի խոր մորմոք,
Կա՛ց մեծահոգի, օ՜, ճամփորդ իմ հեգ.
Քո «...Կարուսելը» տխուր է իրոք:
Իսկ հառաչանքդ, օ՜, սրտակեղեք:

1987

* * *

Վանդալները մեր դարի
Ձեռագրերդ այրեցին,
Որ հիշատակդ մարեն.
Թշնամիներն արդարի
Էլ ինչ ասես չարեցին,
Որ վատ բարքեր հրահրեն:

Եղան հոռի, անխնա,
Անտարբեր տվայտանքիդ,
Վանդակեցին նաև քեզ.
Ասին «ոչինչ չմնա,
Ադամանդներդ հակինթ
Դառնան ածուխ հրակեզ»:

Զնդանում քո անամոք,
Խռովքով սրտակեղեք
Ու կշռույթով իմաստուն
Տեսար աշխարհն անսփոփ
Շպրտված խուլ մի երգերք
Սրտի նման թպրտուն:

Դու վերջին մի հանգերգով,
Եղերական տրտմությամբ,
Շռայլությամբ հանճարի
Դրոշմեցիր քո ձեռքով
Աստվածային զորությամբ
Աղոթագիրք տաճարի:

Ապա անքեն, անմեկին,
Անվրդով ու անտարբեր
Ցուրտ խոնջենքին անձնատուր,
Ականջդ սրտիդ վերքին,
Չվեցիր լուրթ հեռուներ
Հավերժության աստղահուր:

1987

* * *

Իմ Վիրգլիոսը, օ՜, դու եղիր,
Եվ առաջնորդիր քո արահետով.
Լցված հայրենի շնչով, հոգեթով,
Իմ Վիրգիլիոսը, օ՜, դու եղիր:
Ով փոթորկածին, հունս ողողիր,
Լույս մի ցոլանա շանթ ու որոտով ...
Իմ Վիրգիլիոսը, օ՜, դու եղիր,

Եվ առաջնորդիր քո արահետով:

1987

* * *

Ե.Չ.-ին

Քո բանտախցում դու մենակ էիր,
Երբ հոգեառը կոկորդդ սեղմեց.
Քեզ ոչ ոք չօգնեց, ցավդ չմեղմեց...
Քո բանտախցում դու մենակ էիր:
Օ՜, պետք էր, պետք էր խիստ ապտակեիր
Քո իսկ աստծուն, որ բախտդ շեղեց...
Քո բանտախցում դու մենակ էիր,
Երբ հոգեառը կոկորդդ սեղմեց:

1998

* * *

Կոմիտասին

Այստեղ, ողորկ պատվանդանին մի օր
Կկանգնի քարակերտ Կոմիտասը,
Մեղմ կթնածի երգ մի չորսբոլոր
Ու կներձուլվեն տենորն ու բասը:

Եվ արձանացած ոգին պուրակի -
Մաեստրոն փայտիկը առաջ մեկնած
Ներհուն հայացքով սկիզբ կակնարկի
Մի հին համերգի՝ կիսատ մնացած:

Որ ամբողջացած, վերադարձած արդ
Պիտի տարածվի տիեզերքով մեկ.
Ե՛կ, շնչավորի՛ր, ոգեղեն կախարդ ...
Օրհնված ես դու, Կոմիտասյան երգ:

1987

* * *

Տրիոլետ Կոմիտասին

Տերը չլսեց քո «Տեր ողորմյան»,
Նրան չհասավ ձայնդ աղեկեզ.
Հողդ, երկիրդ ծայրից-ծայր հրկեզ ...
Տերը չլսեց քո «Տեր ողորմյան»:
Եվ գորշ գայլերը թափվեցին, կերան,
Օ՜, հոշոտեցին սուրբ երկիրդ հեզ ...
Տերը չլսեց քո «Տեր ողորմյան»,
Նրան չհասավ ձայնդ աղեկեզ:

1987

* * *

Գոհար Գասպարյանին

Երբ «Կռունկ» ես երգում, Գոհար,
Տրոփում են խենթ քունքերս,
Գլորվում են արցունքներս
Շքեղորեն՝ գոհար-գոհար:

Նորեն «Կռունկ» երգիր, Գոհար,
«Կռունկ» երգիր.
Խոպանացած հոգիներս
երգով հերկիր.
Թող օրհնվեն ճամփաներս
դեպի Երկիր...
Նորեն «Կռունկ» երգիր, Գոհար,
«Կռունկ» երգիր:

Երբ «Կռունկ» ես երգում, Գոհար,
Տրոփում են խենթ քունքերս,
Գլորվում են արցունքներս -
Շքեղորեն՝ գոհար, գոհար:

1985

* * *

«Էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մնացել»
Հովհ. Թումանյան

Ձորամիջով մի նեղ կածան
Ոլոր-մոլոր գնում, գնում...
Այդ կածանով էր հեռացան՝
Ով աներկյուղ, ով հանդգնում,
Ով սուր առնում ու հրացան,
Ում հոգում ճիչն էր ահագնում ...
Ու այլևս հետ չդարձան:

Ու թվում է դեռ գնում են
Էն կածանով ձորերն ի վեր,
Լեռներն ի վեր, նորից լեռներ.
Անտառները մթագնում են.
Գնում են ու դեռ գնում են,
Միթե՞, միթե՞ չեն հոգնել դեռ,
Եվ արդ ուր են, տեղ չհասա՞ն...

Ափսո՜ս, ափսո՜ս, դեռ լռում են:

1988

* * *

Տրիոլետ Վազգեն Ա-ին

Ես քո Աջը համբուրեցի,
Որպես անեղծ հավատավոր,
Որպես ձեռքը հարազատ հոր,
Ես քո Աջը համբուրեցի:
Օրհնությունդ գուրգուրեցի,
Ով երկրավոր ու երկնավոր.
Ես քո Աջը համբուրեցի,
Որպես ձեռքը հարազատ հոր:

1989

* * *

Լուսինե Զաքարյանին

Երկնային ցող էր,
Քնքշաշիթ շող էր,
Սրսուռ ու դող էր
  Լուսինեն.
Երկնից էր իջել,
Սրտերով շրջել,
Մյուռոնով թրջվել
  Լուսինեն.
Երկար չմնաց,
Նա նորից գնաց,
Սերերով անանց
  Լուսինեն.
Քաղցր հուշ թողեց,
Ափեր ողողեց
Ու մնաց անեղծ
  Լուսինեն:

1993

* * *

Երախտապարտ եմ Գևորգ Քոչարին,
Որ վաղ օրերում ինձ պես անճարին
Սիրով ուսուցանեց, հասու դարձրեց
Հայոց շինարար վսեմ հանճարին:

Ես՝ նվիրյալը մեր քարարվեստին
Արդ Քոչարին եմ դառնում վերստին.
Փառաբանելու քանքարը նրա
Եվ վարքն՝ արժանի խոսք ու գովեստի

Ու թեպետ նրա կյանքը խանգարվեց
Սերը իր հուշին, ջրին չսպառվեց.
Նա գործեր թողեց օրինակելի,
Ու հիշատակը հավերժին մերվեց:

1997

* * *

Ուսուցչապետ, աշակերտիդ
Այս ի՞նչ ինքնագիր ես թողել.
Հազար օրհնանք անքեն սրտիդ.
Ասես ոսկու փոշի ցողել,
Հայոց ամեն տառը հակինթ
Շնչավորված արևկողել,
Մեկ-մեկ կոթող՝ հպարտ ու կիրթ
Ցոլացրել ու չես սքողել:

Ճարտարապետ, օ՜, Միքայել,
Դու մեծերի մեծ բարեկամ.
Պայծառ փառքիդ քեզ ի՞նչ վայել
Ընծա բերեմ աստվածակամ:
Քեզ Տերն ինքն է Մեծ վկայել,
Դու առինքնող աստծո պատգամ.
Ճարտարապետ, օ՜, Միքայել,
Զոնն ընդունիր, քանի դեռ կամ:

1995

* * *

Մարո Մարգարյանին

Կարոտներով է լցված
Քո սիրտը՝ ծածուկ լացող,
Քո գիշերը լուսացող
Կարոտներով է լցված:
Եվ ծաղիկներիդ բացված
Մաղվում է եղյամ ու ցող ...
Կարոտներով է լցված
Քո սիրտը՝ ծածուկ լացող:

1997

* * *

Ա

Իմ գրածներից Մարոն կարդացել,
Ինչպես երևում՝ գոհ է մնացել.
Դրանից է, որ այնպես անվարան
Ինձ Պառնաս կանչել ու ... Պոետ օծել:

Թումանյանից է Մարոյին անցել,
Նաև Չարենցից՝ առօրյա դարձել,
Որ նկատում են, ընկալում, զգում,
Թե ում հոգին է լույսով արթնացել:

Ու նրանց դիմաց դռներ են բացել,
Խրատ ու խորհուրդ սիրով ծանուցել,
Հասու են դարձրել հանճարին իրենց...
Ու գոհ ժպտացել ու ...անմահացել:

Բ

Իմ գրածներից Մարոն կարդացել,
Հայտնագործել էր հանկարծ ... պոետիս.
Այդ ազդարարել, որպես ավետիս...
Իմ գրածներից Մարոն կարդացել,
Մի նոր աշխարհ է աշխարհին բացել...
Վերծանել գիրը դաջված ճակատիս.
Իմ գրածներից Մարոն կարդացել,
Հայտնագործել էր հանկարծ… պոետիս:

1997

* * *

Օգնիր ինձ, Մարո. Մարո, օգնիր ինձ
Ցրելու տանջող կասկած ու թախիծ.

Օգնիր հավատալ իմ անձին ու գործին
Որ ձեռակերտ է, նաև երկնածին:

Գուցե սխալ եմ, զուր է տառապանք,
Որ արժենում է նվիրյալ մի կյանք:

Օ՜, կյանք, որ լի է սուրբ կարոտներով,
Աղոթքի տանող արահետներով:

Ուր մաքրվում է մարդն իր մեղքերից,
Ու ձերբազատվում մեղսոտ բարքերից:

Ես արարել եմ իմ Տիրաննամեն,
Օ՜, չէի ուզի, որ այն քամահրեն:

Դե օգնիր, Մարո, Մարո, օգնիր ինձ
Ցրելու տանջող կասկած ու թախիծ:

1996

* * *

Մարոն երկտող է տպել «Գարուն» -ում,
Որտեղ պոետ է նա ինձ համարում,
Այն էլ իսկական, այն էլ հրաշալի.
Մարդը ասում է ու չի վարանում:

Օրինակներ է բերում, համոզում,
Որ գրվածքները սրտեր են հուզում,
Որ բնաբուխ են, հուզող, վարակող,
Որոնց մեջ սեր կա և ողջակիզում:

Սրանից ավել ոչինչ չեմ ուզում՝
Ասես տեսիլք է եկած երազում,
Ասես արևից վաղ սարեր ելած
Լույս փերիներ են վերացած նազում:

1998

* * *

Բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանին
(զոհվեց մեքենայի վթարից)

Ճանապարհդ ընդհատվեց
Պատահական դիպվածով,

Ոչ թունդ օղու ըմպածով ...
Ճանապարհդ ընդհատվեց:
Անմիտ վթարով հատվեց
Կենաց ծառդ կսկիծով ...
Ճանապարհդ ընդհատվեց
Պատահական դիպվածով:

1997

* * *

Վարդան Աճեմյանին

Վերջին անգամն էր, պարեց,
Տղամարդու պես պարեց.
Ու... այլևս դադարեց...
Վերջին անգամն էր, պարեց:
Այն դարձավ հուշ, երկարեց,
Եվ պատկերն այդ չմարեց.
Վերջին անգամն էր, պարեց,
Տղամարդու պես պարեց:

1998

* * *

Գևորգ Էմինը
Գիտեր իր գինը,
Միշտ համադրում էր
Նորը ու հինը:

Բայց վերջին անգամ
Նա ինչի հանգեց
Մինչև հագելը
Տերն իրեն զանգեց:
Ու թեպետ անկամ
Նա աճապարեց,
Այս վերջին անգամ
Չուզեց, չպարեց:

1998

* * *

Հայ բանաստեղծ
Գուրգեն Խանը
Հանգավ հեռվում՝
Ոչ իր տանը.
Բերվեց, թաղվեց
Թոխմախանում.
Օ՜, անընկեր՝
Առանց խանում։

1998

Կանչ ափսոսանքի

Գագիկ Սարգսյանին

Դու արդեն խոհուն գիտնական էիր,
Գիտեիր այնպես խոր տրամաբանել,
Մոլորյալներին փակուղուց հանել...
Դու արդեն խոհուն գիտնական էիր։
Դու նոր, նոր պիտի կյանք վայելեիր,
Ապրեիր փառքով վաստակիդ վայել.
Դու արդեն խոհուն գիտնական էիր,
Գիտեիր այնպես խոր տրամաբանել։

1998

* * *

Արփենիկին

Ցնծա, թոռնիկս, ցնծա,
Անունիդ ձոն եմ հյուսել,
Ոսկեղենիկ խոսքեր ասել...
Ցնծա, թոռնիկս, ցնծա։
Ճերմակ նժույգ քեզ ընծա,
Դարձիր, դարձիր կարուսել...
Ցնծա, թոռնիկս, ցնծա,

Անունիդ ձոն եմ հյուսել։

1998

* * *

Ջ.-ին

Ազնվաբարո ով բարերարս
Երբ ավարտին է մոտենում դարս
Ցանկացար կերտել ինձ հուշակոթող՝
Փառքով պսակել պարզ շիրմաքարս։

Երախտապարտ եմ ես խոնարհաբար,
Տերը թող օրհնի՝ նա կամակատար.
Քեզ կյանք պարգևի խնդրածի չափով
Անցնելիք ճամփան անի անվթար։

1998

* * *

Օ՜, իմ բարերար, Դուք Ձեր այդ դերում,
Թվում է, շատ եք Ձեզ զոհաբերում.
Խիղճս տանջում է, նախատում է ինձ
Ոչ մի պայմանով նա ինձ չի ներում։

Բայց դե ինչ արած, մեր այս օրերում
Միայն այդպես են գործ գլուխ բերում.
Իմ բարերարի հոգին մարդկային
Չգոցվեց նույնիսկ իր հեռուներում։

Ուզեց որ ջանքս շատ տարիների
Մատչելի դառնա, հաճույք պատճառի,
Որ հորինողը, իր գործի հանուն
Ազնվությունը, ոչ, չվաճառի։

1998

ՌԱԶՄԻ ՕՐԵՐ

22.06.1941

Այսօր ճակատդ բացել ես, Մասիս,
Այսօր ժպտում ես ալեզարդ հոր պես.
Սուրբ հայրենաբաղձ կտրիճներ որպես
Բյուր որդիներիդ ճամփում ես հյուսիս:

Չեն գա շատերը, երբ գա նոր մայիս.
Շատ մայրերի հետ դու՞ էլ կլացես.
Այսօր ճակատդ բացել ես, Մասիս,
Այսօր ժպտում ես ալեզարդ հոր պես:

1941

Իմ զինվորներին

Դուք դեռ ջահել եք, նույնիսկ պատանի,
Բայց կյանքը, ահա, իր ծանր թևով
Ձեզ շուտով դեպի հեռուն կտանի:

Դուք դեռ ջահել եք, և ձեր աչքերում
Կյանքի հրաշեկ կարոտն է թախծում՝
Այնպես անապակ, այնպես կերկերուն:

Մանկությունն անցավ գարնան երամով,
- Այսպես երազն է կարճ ու խաբուսիկ-
Այժմ դուք այլ եք: Կյանքի բերումով,

Դալար թիկունքով պիտի բեռ առնեք,
Ծանր, ծանր բեռ, նույնիսկ ուժից վեր,
Ու բեռնավորված զառիվեր հառնեք:

Թող թեթև լինի ձեր ուղին դժվար,
Սիրտներդ էլ զվարթ, ջահել զինվորներ,
Անգամ անկումը կրեք քաջաբար:

1941

* * *

Արև, դու վա՞ղն ես գուշակում արդյոք,
Որ հրով անմար և մշտաբորբոք
Քո շեկ բոցերի լեզվակներն ագահ
Ամպերի ծովն են հրդեհում ահա:

Իսկ հորիզոնը բևեռից-բևեռ,
Եվ աշխարհն արար՝ անտառ, սար ու լեռ,
(Ասես թաթախված Ծիրան ծովի մեջ),
Արև, քո հուրն են անթեղում անշեջ:

Անցնում ես, Արև, սարերի ետև,
Ու ծանրանում են ամպերը թեթև.
Աշխարհին թողնում մութ ու մառախուղ,
Ու մի խոր գիշեր, մի գաղտնի երկյուղ:

Արև, դու վաղը նորի՞ց կծագես,
Մի նոր արշալույս կողջունի՞ մեզ,
Թե՞ այս քո վերջին հրաժեշտն էր պայծառ,
Որ մեր կարոտը այրեցիր, անցար:

*

Օ՜, ոչ, մենք գիտենք և հավատում ենք.
Եվ անդուլ դեռ մաքառում ենք,
Որ հորիզոնը բիլ անծայր լինի,
Որ վաղվա օրը՝ շող-պայծառ լինի,
Որ մարդը կյանքում ներկա և գալիք
Ապրի աներկյուղ, ապրի երջանիկ:

*

Արև, դու վա՞ղն ես գուշակում արդյոք,
Ճակատամարտի ե՞լքը անողոք.
Արև, մեր գործը սուրբ է, անապակ.
Գիտե՜մ, մենք պիտի տանենք հաղթանակ:

1941

* * *

Ճամփաները տանում են մեզ,
Ու՞ր են տանում, ո՞վ գիտի.
Քայլում ենք մենք համեստ ու հեզ
Հլու բախտին ճամփորդի:

Ճամփաները տանում են մեզ
Հեռուները, ուր պիտի
Բացվի մեր դեմ հուր ասպարեզ
Առճակատման-հավատի:

Ճամփաները տանում են մեզ
Կեռմանները խրամատի.
Օ՜, հաղթանակ, լսե՞նք պիտի
Հնչող փողերն ավարտի:

1942

Հավատ

Մնաք բարով, սարեր, ձորեր,
Հայրենական հերկ ու հող.
Նորից եկան ծանր օրեր,
Ձեզ չթողնել չեմ կարող:

Մեզ կանչում են հեռուները,
Ուր հրդեհն է լափլիզում,
Ուր բախվում են բանակները,
Աշխարհները՝ ընդվզում:

Ու մենք զինվոր հայրենիքի,
Ահա նետվում ենք ի մարտ.
Վստահ մեր մեծ հաղթանակին՝
Ուժերի դեմ մահապարտ:

1942

Ով լույսի ակունք

Արև՛, գնում ես դեպի արևմուտք,
Ուր որ կռիվ է, ու ծանր երկունք.
Իմ ընկերները այնտեղ են, ա՛րև,
Հույս տուր քաջերին, ով լույսի ակունք:

Ասա, որ մենք էլ ոտքի բարձրացած,
Ու ճամփի ելած ահա զինավառ,
Հուր ատելությամբ ու թույնով լցված,
Խմբերով անթիվ, հազարաբարբառ,
Գալիս ենք, որ ձեզ օգնական լինենք,
Ձեզ նման տոկուն և հերոսությամբ,
Դժվար վերելքը ձեռք-ձեռքի ելնենք,
Այս մեծ պայքարը օծենք հաղթությամբ:

Արև՛, գնում ես դեպի արևմուտք,
Ուր որ կռիվ է, ու ծանր երկունք.
Իմ ընկերները այնտեղ են, ա՛րև,
Հույս տուր քաջերին, ով լույսի ակունք:

1942

Սուխումում

Փողոցի վերջում սեգ սոսիներ կան.
Երբ ամեն անգամ մենք մոտենում ենք՝
Մեղմ օրորվում են, շրշում դուրեկան:

Մեզ մտերմորեն կարծես ասում են,
Որ մոտեցել ենք և հասնում ենք տուն -
Մեր մունջ սրտերը երջանկանում են:

Օ՜, ձիգ ճամփաներ, թե ձեր վերջում էլ
Լինեին այսպես դալար սոսիներ,
Էլ ով կտենչար դրանից ավել...

Սակայն հեռու է ձեր հեռուն անծիր,
Ու չեն նշմարվում այնտեղ սոսիներ,

Լոկ սև ամպեր են քշվում ցան ու ցիր:

1942

Վաղ առավոտյան

Այնպես խաղա՛ղ է ծովն այսօր, այնպե՛ս,
Կարծես աշխարհում պատերազմ չկա.
Կարծես ո՛չ մեկը խորախոց չընկավ,
Այնպես խաղա՛ղ է ծովն այսօր, այնպե՛ս:
Ու այգն է շողում յոթներանգ, պես-պես,
Որպես քնքշաշող ժպիտն աղջկա.
Այնպես խաղա՛ղ է ծովն այսօր, այնպե՛ս,
Կարծես աշխարհում պատերազմ չկա:

1942

Հույս

Նավահանգստում էլ նավեր չկան.
Ճանապարհել եմ բոլորին հեռու՛.
Սի՛րտ իմ, հավատա՞մ, թե նրանք կգան:

Հողմը սուրում է ու թռչում վայրագ,
Ալեկոծվում է ծովը ու եռում.
Արդյո՞ք բոլորը սուզվեցին հատակ:

Նավահանգիստը դատարկ է, ունա՛յն,
Իսկ հորիզոնում կայմ չի երևում...
Այնպե՛ս կուզեի, որ նրանք դառնան:

1942

* * *

Հանգստացիր փոթորիկ,
Մեղմեք, ցասկոտ ալիքներ.
Բացիր երեսդ, երկինք,
Առկայծեցեք, փարոսներ:

Հրաժեշտի սուլոցով
Մեր քարարվանն է մեկնում.
Ի՞նչ փույթ, հողմը ոռնոցով
Մեր խիզախումն է հեգնում:

Այն, ինչ որ նոր է գալիս,
Այն, որ գալիք է բերում
Նրան ճամփա են տալիս,
Նրան պատիվ ու երդում:

1942

Ով առագաստ

Առավոտ էր, խաղա՛ղ, անդո՛ղր,
Մի նավ մեկնեց անանուն.
Ա՞փն է կանչում այն հեռավոր,
Փառքի կարո՞տը անհուն,

Թե՞ վճռված պատշաճ գործով,
Իր սրբազան պարտքի դեմ,
Լուռ, անքննին իջավ նա ծով,
Սառն, անժպիտ, խստադեմ:

Ու պահ անցավ, նա ծածկվեց,
Ափից էլ չի երևում.
Ծովը ելավ. չար, հողմածեծ
Ամպեր իջան այն հեռվում:

Ու ոռնում է ծովն անհաստատ,
Ալիքն ելնում է, վշշում.
Արդ որտե՞ղ ես, ով առագաստ,
Հողմը քեզ ու՞ր է քշում:

1942

Կերչի ճանապարհին

Էս էլ անցանք, ի՞նչ մնաց -
Շատը եկանք՝ քիչ մնաց.
Մինչ սահմանն էն սահմանի
Մի սար ու մի կիրճ մնաց:

Էն էլ ահա սարն ի վեր,
Մագլցում ենք սարն ի վեր.
Այս մեր ուղին է վերջին-
Փառքի՜ ուղին՝ սարն ի վեր:

1942

* * *

Ինչու՞ ճայերը փոթորկի ժամին
Ծովի մոլեգնած ալիքների հետ
Ընկերանում են, ու թևին-թևին
Մտնում են կուրծքը՝ քրքրված փերթ-փերթ:

Արդյո՞ք հուզմունքն են բաժանում նրա,
Ունկնդրում հոգու անհուն հառաչքի՞ն.
Ու շոյու՞մ վերքը մեծ սրտի վրա,
Սիպ թևքով սրբու՞մ արցունքը աչքի:

Օ՜, ո՛չ, հավքն այդ խենթ, որկորի գերի,
Ծովի ընդերքից գանձեր է կորզում.
Ջրի երեսը ելած ձկներին
Իր չար թևն ու սուր կտուցն է պարզում:

*

Աշխարհն էլ այսօր փոթորկված մի ծով,
Ես էլ մի ձկնիկ ջրի երեսին,
Մահն է շարունակ իր չար կտուցով
Փորձում ինձ տանել իր հետ՝ միասին:

1942

Գրոհ

Վազում է զինվորը, գնում հարձակման.
Վազում է, ընկնում, գլորվում մի կողմ.
Նորից բարձրանում ու հաստատակամ
Սլանում առաջ, բայց մի անողորմ,
Օ՜, մի տաք գնդակ խոցում է նրան:
Երկրորդն է գնում, երրորդը, անվերջ.
Անվերջ գնում են, չկա թիվ, սահման:
Տանում են նրանք խորունկ սրտի մեջ
Տենչանքը կյանքի, տագնապը մահվան:
Եվ ահա այսպես անթիվ գնդերով,
Շաչող արկերի՝ մահվան հրի տակ,
Դատարկ, տրորված, այրված հանդերով,
Բռնած սար ու ձոր վազում են նրանք:

1942

* * *

Ա՜խ, որքա՜ն, որքան լացող մայրեր կան,
Եվ մղկտացող որքա՜ն քույրեր.
Հավիտյան հանգչող որքա՜ն հուրեր...
Ա՜խ, որքա՜ն, որքան լացող մայրեր կան:
Աշխարհով մեկ է լացը մանկան,
Փողոց շպրտված որքա՜ն բարուրներ.
Ա՜խ, որքա՜ն, որքան լացող մայրեր կան,
Եվ մղկտացող որքա՜ն քույրեր:

1942

Ճամփի վրա

Հազար տեսակ բան են պատմում,
Հազար անուն են տալիս.
Ես ոչ մեկին չեմ հավատում,
Ես չեմ տրտմում, չեմ լալիս:

Չէ որ ահա ճամփի վրա
Դու ես, ժպտում, մոտ գալիս,
Պայծառ հոգիդ սրտիդ զրահ՝

Քեզ կյանք, արև է տալիս:

Եկ, թող գրկեմ ու զգամ որ
Սիրտդ ջերմ է, աչքդ՝ բաց.
Ա՜խ, ե՜կ, շու՛տ ե՜կ, ի՛մ հեռավոր,
Արդ արթու՞ն ես, թե՞ քնած:

*

Հազար տեսակ բան են պատմում,
Հազար անուն են տալիս.
Բայց... այս ի՞նչ է սիրտս ուտում...
Կարծես ես էլ եմ լալիս:

1943

Ձայն տվեց, գնաց

Գնացքը եկավ, ձայն տվեց, գնաց,
Հարազատները գրկեցին իրար.
Դու՛ ինչու՞ չեկար, սիրելի եղբայր...
Գնացքը եկավ, ձայն տվեց, գնաց:
Մի՞թե այլևս քո ճամփով անցած
Չես գա, չենք տեսնի հայացքդ պայծառ.
Գնացքը եկավ, ձայն տվեց, գնաց,
Հարազատները գրկեցին իրար:

1943

Մայրեր

Ինչպե՞ս շշնջամ՝ մխիթարությու՛ն…
Ինչպե՞ս բերեմ ես նորից տուն
Ձեր բալիկներին,
Ձեր լավիկներին,
Որոնք էլ չկան, չունեն հարություն.
Ինչպե՞ս շշնջամ՝ մխիթարությու՛ն…
Մայրեր:

1945

Աղբյուր-հուշարձան

Հոսում է, հոսում է, հոսում է ջուրը,
Հոսում է, հոսում է, հոսում անդադար.
Ծխում է, բխում է անդադար հուրը,
Լսու՞մ ես, խոսում են սրտեր լեգենդար:

Խաղա՛ղ ու խաղ էր առօրյան նրանց,
Մռայլվեց, խանգարվեց խաղը խանդավառ.
Որոտաց ու պայթեց դժոխք մի անանց՝
Պատերազմ, կործանում, գիշերներ խավար:

Գնացի՛ն, գնացի՛ն, գնացին անվերջ,
Զարկեցի՛ն, զարկվեցի՛ն, հրով կարծրացան.
Գահերի, մահերի հրդեհում անշեջ
Այրվեցի՛ն, հաղթեցի՛ն, փառքով բարձրացան:

Արև է, խաղաղ է, հոսում է, հոսում
Հուշարձան-աղբյուրի ջուրը անդադար.
Հավերժ են, անմահ են, և ահա խոսում՝
Լսու՞մ ես, նրա՛նք են՝ քաջե՛ր լեգենդար:

1945

Անկարելին

Փոթորիկն անցավ, ծովը խաղաղվեց.
Շատերը դարձան հայրենական տուն.
Առաջվա նման կյանքը ծավալվեց,
Կարծես մոռացվեց աղետ ու արյուն:

Դու չկաս սակայն, բաղձալի անուն -
Արդյո՞ք քեզ էլ է ծածկում մի շիրիմ,
Արդյո՞ք հավիտյան անդարձ է քո չուն,
Ինչպե՞ս ընդունեմ այդ անկարելին:

1947

* * *

Եղբորս՝ Գարեգինին

Հիսունամյակդ ահա տոնում եմ
Ես, մեն ու մենակ, անձայն, հոգուս մեջ,
Եվ ամենուրեք քեզ որոնում եմ,
Փնտրում ու ձայնում, կանչում եմ անվերջ:

Դու բացակա ես, դու չկաս ավա՜ղ.
Օ՜, դու ներկա չես քո այս հանդեսում.
Լոկ ես եմ մենակ, որ գլուխս կախ
Անունդ տալիս, օրհներգ եմ ասում:

Բաժակ չեմ զարկում ես այլ բաժակի,
Որ զարկի ձայնը քեզ չվրդովվի.
Արցունքս եմ բերում հիսունամյակիդ,
Եվ ծաղկունք մեղմիվ՝ վշտից օրորվի:

Հիսունամյակդ ահա տոնում եմ,
Հուշերիս գրքում թողնելով մի էջ:
Ես չեմ հավատում ու որոնում եմ
Անու՜շ պատկերդ բյուր, բյուր մարդոց մեջ:

1957

* * *

Եղբորս

Սպասել եմ,
Սպասում եմ,
Սպասելու եմ, որ դու գաս.
Ու չես եկել,
Ու չես գալիս,
Չե՞ս գալու.
Անհուն դողով,
Հույսի շողով
Քեզ ընդառաջ ոտընկայս,

Մինչ ծերություն,
Մինչ գերեզման
Սպասողդ եմ լինելու:
Օ՜, հայտնվիր,
Օ՜, հայտնվիր,
Հանց լուսեղեն երկնային,
Լույս թևերով,
Բյուր ձևերով
Իջիր վար.
Թող խաղաղվի,
Չհեղեղվի
Կյանքն այս հողում նոր ու հին,
Որ չհանգչի
Հյուլեն մարդու
Հողմավար:
*
Հազարականչ
Հույսի ճաճանչ
Քեզ ընդառաջ ոտընկայս,
Սպասել եմ,
Սպասում եմ,
Սպասելու եմ, որ դու գաս:

1959

Սամտրեդիում

Նորոգ քաղաքի այս շքեղ մասում
Տարիներ առաջ վրաններ կային.
Զինվորներ էին՝ ջահել և հասուն,
Իրենց խոհերով, թախծով մարդկային:

Սպասում էին վերուստ հրամանի,
Եվ այն չուշացավ ու նրանք ելան
Դեպի լեռները, ուր որ թշնամին
Եկել, դրել էր չարամիտ դարան:

Ու լեռներում էլ շատերը ընկան,

Ոսոխը չանցավ Կովկասից այս կողմ...
Եղբայրս էլ ուներ այստեղ մի վրան…
Տարիներ էին դժնի, անողորմ:

Նորոգ քաղաքի այս շքեղ մասում
Վաղուց, շատ վաղուց վրաններ կային…
Էլ պատերազմից այստեղ չեն խոսում,
Ապրում են իրենց կյանքով մարդկային:

1977

Մայր չմնաց

Դուք գնացիք ու ետ չեկաք,
Ու՞ր մնացիք, ո՞ր քարի տակ,
Դարձաք մոխիր, հրաճարակ.
Դուք գնացիք ու ետ չեկաք:

Սպասեցին մայրերը ձեզ,
Բայց դուք չեկաք նրանց ի տես.
Ծերացան ու եղան հրկեզ.
Սպասեցին մայրերը ձեզ:

Ու չվեցին, մայր չմնաց.
Սպասումը, սակայն, անանց
Մնալու է վերքի պես բաց...
Ու չվեցին, մայր չմնաց:

1982

Գերի չընկա

Ես թշնամուն գերի չընկա,
Ճակատագիրն ինձ խնայեց,
Բարի աչքով վրաս նայեց...
Ես թշնամուն գերի չընկա:
- Հայրենիքին դեռ պետք կգա -
Վստահելով նա վկայեց:

Ես թշնամուն գերի չընկա,
Ճակատագիրն ինձ խնայեց:

1985

* * *

Ասում են «Ոչ ոք չէր ուզում մեռնել»,
Ինչ մի ուզելու բան է մեռնելը.
Պետք է ապրելու ուղի որոնել,
Մարդուն չի տրված նորից հառնելը:

Հերոսություն է մահու դեմ կռվել,
Հերոսացնում է մարդուն կռվելը,
Սրբազան գործը կերտելիս այրվել,
Թող որ սպանվի նախանձն ու նեռը:

Ասում են «Ոչ ոք չէր ուզում մեռնել»,
Նախընտրելի է կյանքում ապրելը.
Դե մարդ ապրելու համար է ծնվել,
Մարդուն չի տրված նորից հառնելը:

1985

* * *

Ո՞նց կարող է անհայտ լինել
Զինվորը, որ ահեղ մարտում
Նույնիսկ կյանքը չի խնայել,
Ճիչն է խեղդել իր կոկորդում,
Որ քաջին է միայն վայել,
Ո՞նց կարող է անհայտ լինել:

Ո՞նց կարող է անհայտ լինել,
Կամ անանուն, անազգանուն.
Զինակոչել են ու զինել,
Վստահել են գոռ թշնամուն
Պատիժ տա խիստ՝ իրեն վայել...
Ո՞նց կարող է անհայտ լինել:

Ո՞նց կարող է անհայտ լինել,
Որի դարձին սպասում են,
Վաղուց հույսին ապավինել,
Մութ մտքերից դեռ սարսում են…
Բառն այդ շատ է, օ՜, անվայել,
Ո՞նց կարող է անհայտ լինել:

1985

Տղերք

Տղերք, ես ծերացա,
Լրիվ ճերմակեցի.
Դուք ջահել մնացիք,
Տղերք, ես ծերացա:

Դուք պայծառ մնացեք,
Ինչպես առաջ էիք,
Ինչպես որ քաջ էիք,
Դուք պայծառ մնացեք:

Կարոտներս տարեք,
Նա ձեզ կտաքացնի.
Փույթ չէ՝ ինձ լացացնի,
Կարոտներս տարեք:

Ժամանակները նոր
Ձեզ միշտ կհիշեն.
Փառքը ձեր կնշեն
Ժամանակները նոր:

Չվշտանաք, տղերք,
Որ ձեզ չասեմ՝ գնամ.
Ձեր կողմերը կգամ
Կճանաչե՞ք, տղերք:

1987

ԾՈՎԻ ՀԵՏ

* * *

Ծովը խոցվել է.
Ալեկոծվել է,
Կամ մոռացվել է
Ինչ որ մեկից.

Ծովը խոցվել է,
Կամ քարկոծվել է,
Օ՜, մնացել է
Անկարեկից:

1979

Որպես հովազը

Ծովը ելել է, ծովն ալեկոծվել,
Ու չի հանդարտվում, ու չի հանդարտվում.
Տեսնես ում դեմ է նա արդ ծառացել,
Տեսնես ումից է անվերջ գանգատվում:

Ծովը ելել է, ծովն ալեկոծվել,
Ու ծառս են լինում հորդ ալիքները:
Մեկից վշտացել ու չի ամոքվել,
Իրար է խառնել անելիքները:

Ծովը ելել է, ծովը փոթորկվել,
Ու խորքն է տանում ափի ավազը:
Կարծես բռնել են, ամուր բանտարկել,
Խենթ մոնչում է, որպես հովազը:

1982

Երեկոն Գագրիում

Արևը հոգնած էր,

Ծովն ընկավ՝ սուզվեց.
Ծովը քնած էր,
Արթնացավ՝ հուզվեց:

Որոնումները
Անցան ապարդյուն.
Որոնողները
Հոգնած մտան քուն:

1984

Ճայերը

Բոլոր ճայերը քաշվել են ափ,
Ծովն ալեկոծ է.
Ե՞րբ է ալիքը ծառացել այս չափ -
Խուլ մլռտոց է:

Բոլոր ճայերը քաշվել են ափ,
Եվ մտահոգ են.
Օ՜, հուսահատ են և թևաթափ,
Եվ անամոթ են:

1984

Հրաժեշտ

Ցտեսություն, ցտեսություն, ցտեսություն
  կապույտ ծով,
Դե ինչ, գոհ եմ քո ափերում ապրածով ու
  չապրածով.
Հասանելիքս տանում եմ, մխիթարվիր
  մնացածով.
Ցտեսություն, ցտեսություն, ցտեսություն,
  կապույտ ծով:
Ոչինչ չունեմ էլ ասելու, բավարարվիր
  լսածով,
Քեզ հայտնի է ամեն ինչը - եկածով ու

անցածով…
Ցտեսություն, ցտեսություն, ցտեսություն
կապույտ ծով,
Դե ինչ, գոհ եմ քո ափերում ապրածով ու
չապրածով:

1984

Պահը

Ծով է, ծովափ է,
Հորդ ալիքների
Անվերջ տարափ է.
Դեմ ու դեմ հառնող,
Ջրի դեմն առնող
Հսկա քարափ է:

Ու ճայեր, ճայեր,
Կռինչ, վայվայում…
Ես մի կողմ կանգնել,
Նրանց եմ նայում,
Պահն այս անձկալի
Օրհնում, փայփայում:

1985

Հուզված էին

Քո ափերից ես հեռացա,
Երբ ջրերդ հուզված էին,
Երբ նավերդ սուզված էին -
Քո ափերից ես հեռացա:
Պատերազմ էր… հուշ է անցած,
Ծով վշտերով լցված էի.
Քո ափերից ես հեռացա,
Երբ ջրերդ հուզված էին:

1987

Կարոտը

Ճայը ծովից չի երկնչում -
Այդ իր տարերքն է.
Թևածում է ու կռնչում՝
Իր երկնած երգն է:

Ճայը ծովին ընտելացել,
Մնացել մոտը.
Ցրտին, տաքին չի հեռացել՝
Սուրբ է կարոտը:

1987

* * *

Փոթորիկ էր ու անձրև էր տեղատարափ,
Ծովը, ծովը ալեկոծ էր ու գազազած:
Հուզված էի. գեղեցիկ էր անգերազանց,
Փոթորիկ էր ու անձրև էր տեղատարափ:
Ես հեռացա ու թողեցի և ծով, և ափ.
Դեռ մտքումս նույն տարերքն է ահազնացած,
Փոթորիկ էր ու անձրև էր տեղատարափ,
Ծովը, ծովը ալեկոծ էր ու գազազած:

1988

* * *

Իր տարերքում է ծովը կապուտակ,
Մերթ խաղաղվում է ու պայծառանում,
Մերթ ընդվզելով խրոխտ ծառանում…
Իր տարերքում է ծովը կապուտակ:
Ասես հմայված հայացքով հստակ
Մովը կամարվել ծովին է նայում…
Իր տարերքում է ծովը կապուտակ,
Մերթ խաղաղվում է ու պայծառանում:

1990

Բարի լույս

Բարի լույս, ծով,
Անուշ նիրհդ գիշերային.
Արթնացել ես կապույտ բոցով,
Հրացոլքով անհնարին:

Բարի լույս, ծով,
Սեր ու աղոթք քո ափերին.
Ինձ է գալիս աղ ու հացով
Լուրթ ջրերիդ հրաշք փերին:

1990

* * *

Դու չես կարող հետ բերել, ծով,
Ինչ իմ կյանքից անդարձ տարար.
Չմորմոքվենք կորցրածով,
Բարի լինենք, ներենք իրար:

Չեմ բոլորի ես գեթ մի դար,
Մխիթարվեմ ունեցածով.
Վարձատրվիր դու դարեդար
Սերունդներին ընծայածով:

1991

Սահմանագիծ

Կապույտ է ծովը, կապույտ՝ երկինքը,
Ու նրանց միջև ալիքվող մի գիծ.
Այդ արարել է ստեղծողն ինքը՝
Անընդգրկելի և անպարագիծ:

Վերի ու վարի սահմանագծով
Քարավաններ են ծոր տալիս-անցնում.
Աստվածահաճո մեղմ ծլնգոցով

Գնում են, գնում… դեպի մոռացում:

1991

Օ՜, շուտով

Ծովն անհանգիստ է, երկինքը՝ ամպոտ.
Իմ առագաստն է այն հեռուներում
Դեգերում անղեկ, լքված, վեհերոտ:

Օ՜, շուտով, շուտով կսահի, կանցնի,
Ու կմոռացվի, ու Տերը փութկոտ
Աշխարհի աչքից լուռ կթաքցնի:

Կծածկի անքեն հորիզոնը լուրթ,
Անէությունը կգրկի նրան,
Անէությունը՝ հավերժորեն ցուրտ:

1994

Ճեմող կարապ է

Ծով է, ծովափ է,
Մերկությունների
Տեղատարափ է,
Տես, ամեն մեկը
Ճեմող կարապ է:

Երգ է, ծիծաղ է,
Ծնծղա ու դափ է,
Երջանկատեսիլ
Նազանք ու ծափ է.
Ծով է, ծովափ է:

1997

Ու… չի ննջում

Ծովի շռինդն իմ ականջում,
Երկարում է ու չի ննջում.
Ես էլ անքուն մտքերիս հետ
Մտորում եմ ու անրջում:
Ծով հուշերիս էջն եմ շրջում,
Բամբասում եմ ու բարբաջում.
Ծովի շռինդն իմ ականջում
Երկարում է ու չի ննջում:

1998

ԵՍ ՈՒ ԻՄ ՄՈՒՍԱՆ

Սիրունատես

Ծլվլացող դեղձանիկի կերպարանքով,
Իմ մուսան է սիրահոժար, սիրունատես.
Իր ոսկեհյուս վանդակի մեջ պատանդ որպես,
Ծլվլացող դեղձանիկի կերպարանքով:
Մերթ նայում է, ինձ է նայում մի զարմանքով,
Որ անտարբեր գեղգեղանքին լռում եմ ես...
Ծլվլացող դեղձանիկի կերպարանքով,
Իմ մուսան է սիրահոժար, սիրունատես:

1986

Խռովկան

Խռովկանն ես երևում,
Ներշնչումի դիցուհիս.
Հավերժորեն տիրուհիս
Խռովկանն ես երևում:
Դու երբեմն ես արևում,
Չես ժպտում նվիրումիս.
Խռովկանն ես երևում
Ներշնչումի դիցուհիս:

1988

* * *

Հանգստի է մեկնել մուսաս,
Սիրտ, դեռ երկար պիտի հուսաս,
Որ թե հաճի վերադառնա,
Տանը նստի, չհամբառնա:

Հաճախ, հաճախ բացակայում,
Գոյությունս չի վկայում.
Չի հավաստում ոգորումս,

Նվիրումս, տոգորումս:

1991

Ծերացանք

Ծերացանք, Մուսաս, ծերացանք
Մեր մի բուռ հողը հերկելով,
Մեր բերքի բարին երգելով...
Ծերացանք, Մուսաս, ծերացանք:
Ոչ ավել, այդքանն ունեցանք,
Ապրեցինք էն հին վերքերով...
Ծերացանք, Մուսաս, ծերացանք
Մեր մի բուռ հողը հերկելով:

1994

Քամին

Ո՞ր կողմերում ես անհոգ թափառում,
Խենթ-խելառ մուսաս, այս տարաժամին,
Դու նույնքան խելառ, որքան և քամին…
Ո՞ր կողմերում ես անհոգ թափառում:
Արդ ու՞մ կրակն ես մարում ու վառում,
Դու անորսալի, անտես, անմարմին…
Ո՞ր կողմերում ես անհոգ թափառում,
Խենթ-խելառ մուսաս, այս տարաժամին:

1995

* * *

Հակառակում է երբեմն մուսաս,
Փոխում է քայլը ու այլ կողմ մեկնում.
Օտարանում է, դառնում է անհաս
Եվ որպես օտար՝ իմ սերը հեգնում:

Հակառակում է երբեմն մուսաս,
Որտեղի՞ց այդքան անխոհեմ հակում,

Ու մոռանում է և խորհուրդ, և դաս,
Եվ իրեն, և ինձ խենթ պախարակում:

Եվ արդ չգիտեմ, դեռ կա՞ ժամանակ,
Մի քիչ խելքի գա, ետ վերադառնա,
Դե մեկ էլ տեսար դարձավ հրեշտակ,
Մինչ ես անտեղյակ, ինքը՝ համբառնա:

1995

* * *

Քեզ ազատ եմ արձակում,
Մշտագորով ով մուսաս,
Վերադարձիր դու Պառնաս...
Քեզ ազատ եմ արձակում:
Բավ է գրոհ, հարձակում,
Թող մոռացվեն հանապազ.
Քեզ ազատ եմ արձակում,
Մշտագորով խենթ մուսաս:

1996

* * *

Ինձ վաղուց մոռացած մուսաս
Հեռուներից ետ էր եկել,
Տարակույսով նայում վրաս...
Ի՞նչն էր նրան ահաբեկել:

Արդ թե գնա ու գա մեկ էլ,
Բաց կտեսնի դուռ ու դարպաս.
Կհավատա՞, որ ընկրկել,
Շիրմաքար եմ առել վրաս:

1996

Գլուխը խառն էր

Մուսաս եկել էր, գլուխը խառն էր,

Ինչ էլ ճաշակեց, դժգոհեց՝ դառն էր,
Ասել-խոսելը էլի էն Սարն էր...
Դեմը գոցվածը Միերի Այրն էր:

Մուսաս եկել էր, գլուխը խառն էր,
Հեռվից կանչողը նույն Ավարայրն է,
Օ՜, զարմանալին Քսաներորդ դարն էր,
Ցավից մեռնողը էլի էն հայն էր:

Մուսաս եկել էր, գլուխը խառն էր,
Արաքսի ջուրը պղտոր էր, սառն էր,
Բոլոր գետերից խորն էր, վարարն էր...
Կամուրջ էր փլվել, հայոց կամարն էր:

Մուսաս եկել էր, գլուխը խառն էր,
Հայը գեհենի գերին, ավարն էր,
Ինչ էլ որ հիշեր՝ էն «հայ-հավարն» էր...
Մուսաս եկել էր, գլուխը խառն էր:

1997

Մուսաս

Հետապնդում է ինձ կրնկակոխ,
Սիրահարվել է վրաս վերստին.
Ինչքան հանդուրժեմ այդ անհամեստին…
Հետապնդում է ինձ կրնկակոխ:
Հնուց որոճում խանդով լի մի ոխ,
Նոր հավելում է բերում հին փաստին.
Հետապնդում է ինձ կրնկակոխ,
Սիրահարվել է վրաս վերստին:

1997

Կես խոսքից

Լեզու ենք գտել ես ու իմ մուսան,
Եվ հասկանում ենք միմյանց կես խոսքից,

Մենք խուսափում ենք ամեն շեղ հոսքից...
Լեզու ենք գտել ես ու իմ մուսան:
Տա աստված միմյանց բոլորը անսան,
Նեղ օրում դառնան ազնիվ կարեկից...
Լեզու ենք գտել ես ու իմ մուսան,
Եվ հասկանում ենք միմյանց կես խոսքից:

1997

Մուսաս հիշել է

Իմ ամբողջ կյանքում ինձ ուղեկցել,
Ես ինչ մոռացել, ինքը՝ հիշել է,
Անխոնջ ունկնդրել, ու մերթ հուշել է.
Իմ ամբողջ կյանքում ինձ ուղեկցել:
Սրտիս դեմ սիրտն իր վերաբացել,
Ստից, կեղծիքից գարշել, խորշել է.
Իմ ամբողջ կյանքում ինձ ուղեկցել,
Ես ինչ մոռացել, ինքը՝ հիշել է:

1997

Անպատեհ

Մուսաս երբեմն՝ պատեհ, անպատեհ
Գալիս, համառում ու ստիպում է,
Որ գինի ըմպեմ, ու ինքն ըմպում է...
Մուսաս երբեմն՝ պատեհ, անպատեհ:
Ոչ հարսանիք է, ոչ հանդես մի վեհ,
Բաժակներ է, որ շտապ պարպում է.
Մուսաս երբեմն՝ պատեհ, անպատեհ
Գալիս, համառում ու ստիպում է:

1997

* * *

Սիրահարվել եմ ես իմ մուսային,
Այդպես զոքանչն է սիրում փեսային.

Նա լրջանալիս դառնում դասային…
Սիրահարվել եմ ես իմ մուսային,:

Ինձնից չի խորշում, թեպետ ծերացել,
Լուրջ հաշիվներում նույնն եմ մնացել.
Ուր էլ կանչել է, օ՜, չեմ ուշացել...
Ինձնից չի խորշում, թեպետ ծերացել:

Աստվածատուր է սա էլ երևի,
Ես չեմ խառնվում գործին Վերևի.
Օրն արև կանի, կամ թե կանձրևի...
Աստվածատուր է սա էլ երևի:

1997

Խանդոտ մուսաս

Ես անտրտունջ գրի առա
Ինչ թելադրեց խանդոտ մուսաս.
Կասկածով էր նայում վրաս...
Ես անտրտունջ գրի առա:
Մի արասցե չգռմռա
Ու չդառնա խենթ պատուհաս...
Ես անտրտունջ գրի առա
Ինչ թելադրեց խանդոտ մուսաս:

1997

* * *

Գժտվում եմ այսպես հաճախ
Ինքս ինձ հետ ու մուսայիս.
Ես երբ տրտմում, նա չի գալիս...
Գժտվում եմ այսպես հաճախ:
Ինչ փույթ, ցուրտ է՝ անծուխ օջախ,
Ինչ փույթ գարուն չէ կամ մայիս...
Գժտվում եմ այսպես հաճախ
Ինքս ինձ հետ ու մուսայիս:

1997

Ջահել օրերի խենթ-խելառ մուսաս

Սիրահարվել էր մի լավ աղջկա,
Ափսոս, շատ ափսոս որ հիմա չկա:

Նա էլ ծերացավ, հեռացավ, գնաց,
Նրանից մի փունջ կարոտանք մնաց:

Մուսաս, օ՜, մուսաս նույնպես ծերացավ,
Տարիներ անցան, հազիվ լրջացավ:

Բայց և ընկրկեց անվերջ ցավերին,
Մեկեն կորցրեց բոլոր լավերին:

Այժմ հայացքը նրանց ճամփեքին,
Մխում է, ծխում այրումով ներքին:

Ջահել օրերի խենթ-խելառ մուսաս:

1997

* * *

Մուսաս ծլկել է տանից,
Սպասելի էր նրանից.
Բայց թե ուր է հիմա նա,
Մտահոգում է այդ ինձ:

Մուսաս ծլկել է տանից,
Գուցե գերվել է՝ ումի՞ց.
Իրա՞վ է թե խաբուսիկ,
Այդ ո՞ր, այդ ո՞ր օրվանից:

Մուսաս ծլկել է տանից,
Նեղացկոտն ամեն բանից.
Թող գա, թող գա, որ հաշտվենք,
Թե ոչ էսօր, վաղվանից:

1998

Կամակորը

Մուսաները կամակոր են,
Գիտեն ուզածով շարժվել,
Լոկ գիտեցածով վարժվել...
Մուսաները կամակոր են։
Մերթ առյուծ են, մերթ խոճկոր են,
Քանի դեռ չեն պատժվել,
Մուսաները կամակոր են,
Գիտեն ուզածով շարժվել։

1998

* * *

Անժամանակ ես եկել
Չարաճճի, խենթ մուսաս
Առաջին դեպքը չէ այս,
Անժամանակ ես եկել։
Գոհ կլինեմ՝ չկրկնել
Հազար հոգս ունեմ վրաս.
Անժամանակ ես եկել
Չարաճճի, խենթ մուսաս։

1998

* * *

Երկվորյակներ ենք իմ մուսան ու ես
Նա՝ ինձնից ջահել տասնյոթ տարով
Հաճախ չափվում ենք միայն իրարով
Երկվորյակներ ենք իմ մուսան ու ես։
Մերթ գժտվում ենք, մերթ խաղաղ այսպես
Գործում ներդնում քանքար ու կորով.
Երկվորյակներ ենք իմ մուսան ու ես
Նա՝ ինձնից ջահել տասնյոթ տարով։

1998

Մի վերջ

Ես ու իմ մուսան, տարբեր գործի տեր,
Միմյանց գտնում ենք մենակության մեջ,
Որպես փաստաթուղթ գրանցում մի էջ
Ես ու իմ մուսան՝ տարբեր գործի տեր։
Մենք՝ երկուսս էլ տարիք առած ծեր,
Ունենալու ենք երկվորյակ մի վերջ.
Ես ու իմ մուսան, տարբեր գործի տեր,
Միմյանց գտնում ենք մենակության մեջ։

1998

ՔԱՌՅԱԿՆԵՐ

* * *

Արարատին եկա տես,
Արագածին եկա տես,
Հոգիս երկինք խոյացավ
Հզոր, հպարտ նրանց պես:

1930

* * *

Վարա՛ր, վարա՛ր անձրև է,
Աշխարհն արար անձրև է.
Աշխարհն արար սրտիս մեջ,
Սրտումս մառ անձրև է:

1935

* * *

Ծովի հանդարտ ալիքներ,
Ծովի մարմանդ ալիքներ,
Ի՞նչ եք անվերջ քրքջում,
Հավետ անդարդ ալիքներ:

1935

* * *

Աչքս լիքն է արտասուքով,
Էն պղտորված ծովի պես.
Եկա՝ ուրախ, անցա՝ սուգով
Աշուղ Սայաթ-Նովի պես:

1938

* * *

Տեսա, թե ինչպես ջուրն է վարարում,
Տեսա, թե ինչպես ճուղն է դալարում,

Զգացի շունչդ, գարուն կենսալից,
Երբ ձնծաղիկն էր ձյունից բարձրանում:

1939

* * *

Օ՜, դու անցար խնդալով,
Ես՝ լուռ, լռված մնացի.
Դու՝ բոց երգով, թնդալով,
Ես՝ պատրանքով քո դարձի:

1940

* * *

Ա՜յ սարեր,
Ձյուն ու ձմեռ, ա՜յ սարեր,
Ձեր գարունը ե՞րբ կգա,
Որ ես էլ գամ, ա՜յ սարեր:

1940

* * *

Ոտքի վրա է աշխարհը արար,
Գնում է-գալիս, որպես ելման ծով.
Ե՞րբ է հնչելու կանչը փրկարար,
Ընդառաջ գնանք սուրբ աղ ու հացով:

1941

* * *

Դու ո՞ւր էիր, շող Լուսին,
Ես մի ճամփորդ քո հույսին,
Գիշերն անցա խավարով,
Դու ելար լոկ մութ-Լուսին:

1941

* * *

Պահն այս անհուն դար է, դար,
Արյունոտվեց հողն արար.
Չի մոռացվի, կհիշվի
Չար աղետն այս դարեդար:

1941

* * *

Էս էլ անցանք, ի՞նչ մնաց,
Շատը եկանք, քիչ մնաց.
Էն աշխարհի սահմանից
Մեզ վերջին մի ճի՛չ մնաց:

1942

* * *

Դեռ ժամանակ կա սարը սարի գա,
Ժամանակի մեջ օր ու տարի կա.
Բախտս չեմ օրհնում, զի ճամփիս պահված
Դեռ որքա՛ն, որքա՛ն չար ու բարի կա:

1943

* * *

Այս տունը դատարկ մնաց,
Անծուխ ավերակ մնաց.
Մենակ մերիկը լացող,
Հավերժող կրակ մնաց:

1943

* * *

Հորդ շիրմին քար քաշի,
Ապրի, հուշը դար քաշի,
Որդիդ էլ որ հաց ուտի՝
Մշակ դառ ու քար քաշի:

1944

* * *

Իմ լավ ճնճղուկ, իմ ծիվ-ծիվ,
Մի խռովիր, կուտն առ, ծիվ.
Կեր, մեծանաս, զորանաս -
Գուցե դու դառնաս … արծիվ:

1944

* * *

Կուրծքդ գարուն ես արել,
Վարդ ու ծաղիկ, նունուֆար.
Շաղով, շողով զարդարել,
Սիրտս սիրով խոցել, յար:

1949

* * *

Գյուղիս գետակը հորդացած տեսա,
Ցնորք հյուղակս խորթացած տեսա.
Շատ էր անողոք մեր ժամանակը՝
Մորս, սուրբ հարկս ճորտացած տեսա:

1950

Հարութին

(ըստ Քուչակի)

Երբ ծնվեցիր, լալիս էիր,
Ծիծաղեցինք աշխարհն ու ես.
Կաց մաքուր, որ երբ գնաս -
Աշխարհը լա, դու՝ ծիծաղես:

1956

* * *

Միշտ միասին են լինում
Մարդուս չարը ու բարին.

Վայ, թե չարը գազազեց -
Աստված փրկի տկարին:

1957

* * *

Մարտիրոս Սարյանին

Որքան որ մեծ ես դու, ծով,
Նույնքան էլ փոքր եմ ես.
Մինչ ծիծաղով ու լացով
Հավասար եմ քեզ:

1970

* * *

Անեծք եմ հղում
  վերև՝ առ աստված,
Թե մեր աղոթքը
  զու՞ր էր արարված:

1978

* * *

Արարատի դեմ-դիմաց
Կանգնել եմ լուռ-կարկամած.
Մտորում եմ ապշահար,
Թե մեր աստվածն ու՞ր մնաց:

1978

* * *

Շոգից ու տոթից ջերմում,
Ու զառանցում է մեր մոլորակը.
Ինչ անի խեղճը, որ տիեզերքում
Վաղուց խախտվել են օրենքն ու կարգը:

1979

Շեքսպիրին

Խորանի առջև վսեմ տաճարի
Համեստ շիրիմն է հսկա հանճարի.
Ու խոնարհվում են այստեղ բոլորը
Սուրբ ավանդույթով աստծո կաճառի:

1981

* * *

Արծիվներն եկել, թառել են քարին,
Դարձել հուշարձան, հուշակոթող -
Նրանց, որ պատիվ բերին մեր դարին,
Ու դարձան շիրիմ, սրբազան հող:

1983

* * *

Երբ որ Խայամը աշխարհից գնաց,
Հետևից ոչ ոք արեց սուգ ու լաց.
Բայց երբ կարդացին գրերը նրա -
Աշխարհը արար շվարած մնաց:

1983

* * *

Մեր դարն էլ տվեց նոր մեծամեծներ,
Մեր դարն էլ տվեց նոր միահեծներ.
Դարն էր՝ ձի թամբեց, հյուսեց կապ ու սանձ,
Բայց գիտե՞ր արդյոք՝ ով պիտի հեծներ:

1984

* * *

Մեր սուրբ դատը տանուլ տվինք,
Դանդաղեցինք՝ մլուլ տվինք.
Ձիգ դարերի մաղձը թունոտ

Ժողովեցինք ու կուլ տվինք:

1984

* * *

Մուսան ու մահը այցի են գալիս, երբ մարդ մենակ է.
Երկուսն էլ սիրով ողջույն են տալիս, երբ մարդ մենակ է.
Առաջնորդում է մեկը սխրանքի, մինչդեռ մյուսը
Ծնկի է բերում առանց խտրանքի, երբ մարդ մենակ է:

1984

* * *

Ո՛ւշ է, ո՛ւշ է, շա՛տ է ուշ.
Մինչ կյանքն այնքա՛ն է անուշ,
Որ ըմբոշխնել, վայելել -
Էլ ոչ ժամ կա, ոչ էլ ուժ:

1984

* * *

Սրտիս վրա նոր վերք բացվեց ու բաց մնաց.
Մերկ հոգիս էլ հորդ անձրևեց ու թաց մնաց.
Արևն էլ ներս չի թափանցում՝ մարմրում է,
Գործն աշխարհի ինձ չպարզվեց ու հարց մնաց:

1984

* * *

Որքան էլ փորձում,
Միտքս չի գործում.
  Չի մեկը դուռս
Բացում է, գոցում,
Բացում է, գոցում:

1984

Ռիցայում

Աստվածներն են այստեղ իջել խնջույքի.
Սիրել, սիրվել ու հանձնվել հաճույքի.
Երբ լքել են ջրահարսներն ու սուզվել,
Համբարձվել են գահերեցներն երկնքի:

1984

* * *

Քար են քաշել, Ռաֆո, շիրմիդ
Ու քանդակել են.
Այդ քարի տակ (ծանր ու բիրտ)
Քեզ վանդակել են:

1984

* * *

Մեծ են դառնում կամաց-կամաց,
Բայց ոչ երբեք մեկեն՝ հանկարծ.
Կուտակումով է գոյացել
Լեռնաշխարհը մեր կրակված:

1984

* * *

Ամեն անգամ զարմանքով եմ
Դիմավորում քեզ, աշուն,
Քո գույներով ու բերքով եմ
Տարեթվերն իմ հաշվում:

1985

* * *

Ամպերի մեջ է վեհապանծ Սարը,
Ձյուներում կորել Հայկական Պարը.
Էլ հավատ չունեմ, թե մի օր կասեն՝
«Բացվել է Հայոց Տան Ճանապարհը»:

1985

Քաջ Նազար

Ուր է մեր թուր-կեծակին,
Ուր է թլոր Դավթի ձին,
Պիտի կռիվ գնայի,
Տեր կանգնեի մեր հացին:

1986

* * *

Փայլատակիր, Ծովինար
Պճրանքներով անհնար.
Դու դեռ ջահել աղջնակ
Արդեն քանի՜, քանի դար:

1986

* * *

Տարին բոլորեց, եկավ հունվարը,
Քիչ է մնացել, կանցնի և դարը.
Աշխարհի գլխով դեռ ինչե՜ր կանցնեն
Մինչ Արաքսն անցնի, տուն դառնա Սարը:

1987

* * *

Սրբերից որ մեկին ընտրեմ
(Չամաչեմ, որ լինի հարմար),
Գնամ, թողություն խնդրեմ
Գործածս մեղքերի համար:

1987

* * *

Դիմում եմ մեր Համբարձումին
Գոհացում տա իմ հարցումին.

Ինչ գալիք է ակնկալում
Մեր օրերի դարձդարձումին։

1988

* * *

Այստեղ գետը ծովն է թափվում,
Այստեղ փոքր ու մեծը չափվում.
Կուլ է գնում փոքրը մեծին -
Օ՜, այնպես եմ հիասթափվում։

1988

* * *

Անգիր էջը թուղթ է լոկ,
Եվ որքան էլ այն ողորկ -
Գիրն է, գիրն է հանճարեղ,
Գիրը հրաշք ու ցնորք։

1990

* * *

Դու այսօր էլ դեռ խելքից հանում ես,
Առնում, տանում ես դու այսօր էլ դեռ.
Էությունդ՝ սեր, մեղմիկ մանում ես,
Դու այսօր էլ դեռ խելքից հանում ես։

1990

Սուրեն Տ. Երեմյանին

Մենք Մեծ էինք միջնադարում,
Այդ հիշելուց չենք դադարում.
Հին, ճմրթված քարտեզներն ենք
Փաղաքշանքով դեռ հարդարում։

1990

* * *

Հին ճանապարհ լինեի,
Քարափ ու քար լինեի,
Այծյամները անցնեին՝
Տագնապահար լինեի:

1990

* * *

Մերթ վառվում է, մերթ՝ հանգչում,
Մերթ լռում է, մերթ՝ կանչում
Լույսն հեռավոր, հեռավոր -
Ամեն գիշեր, ամեն օր:

1991

* * *

Աստծու հետ են մերձենում
Բանաստեղծները,
Միասին են վերծանում
Առեղծվածները.
Կործանվում են վերջապես
Միահեծները,
Ու նորից աստվածանում
Նախաստեղծները:

1991

* * *

Օ՜, դժվար է շատ՝ հորինել լավը,
Հետապնդում է խանդահեղձ դավը.
Քանքարը քիչ է, պետք է հանդգնել,
Որպես ահից զերծ մրրկահավը:

1992

* * *

Քսաներորդ դարին մի նորն է գալիս փոխարինելու.

Մարդ ինչ իմանա մեր ժողովրդին ի՞նչ է բերելու:
Գուցե ստուգելու՞, թե որքանով ենք պիրկ գոտեպնդվել
Նոր ուրվագծվող արհավիրքները դիմագրավելու:

1993

* * *

Այս իմ կարապի ճիչն էր,
Իմ մեծ կարոտի քիչն էր.
Երամի ծեր կռունկի
Ահասարսուռ կռինչն էր:

1993

* * *

Ծանր գիշեր է եղել,
Արցունք, արյուն է հեղվել.
Ո՞նչ ես, ո՞նց ես սիրտ իմ հեզ
Կյանքն ու մահը մեկտեղել:

1994

* * *

Մեր ճամփաները մերթ խաչվում էին,
Մեր հոգիները ճաճանչվում էին,
Մենք գաղտնի էինք պահում մեր սերը,
Մինչ ուրիշները …պաչպչվում էին:

1994

* * *

Քարին, սարին դեմ առանք,
Էս նենգ դարին դեմ առանք.
Փրկության դռները գոց,
Հոգեառին դեմ առանք:

1994

* * *

Արարատի հետ վիճելով խոսում,
Գոռգոռոցի մեջ միմյանց չենք լսում.
Մինչ Հայաստանի ցավը մեջն առած
Լեռան ստորոտով Արաքսն է հոսում:

1994

* * *

Արդ, միասին ենք՝ ես ու իմ մուսան,
Ես՝ հանդիսատես, իսկ նա՝ դերասան.
Հետո դառնում ենք ու խորհուրդ անում,
Թե էս աշխարհի գործերն ո՞ւր հասան:

1996

* * *

… Քանդեցին նաև շիք պատվանդանը,
Հիմն ի վեր՝ բանտն այս ու զնդանը.
Հուշն էլ չմնաց ամբարտավանի…
Օ՜, այսպիսի՛ն է մեծ դատաստանը:

1996

* * *

Մեր դարը գնաց
Ու մեզ մոռացան՝
Հողն անվար մնաց,
Հերկն՝ անսերմնացան:

1996

* * *

Մեծ Տիեզերքը անհայտներով լի,
Մարդկային մտքին անհասանելի,
Այդպես էլ մնաց, որպես գաղտնագիր՝
Հավիտենապես անվերծանելի:

1996

* * *

Ես ու իմ մուսան մի սուղ մաշկի մեջ
Գոյատևում ենք անխռով, անվեճ.
Գուցե այսպես էլ աշխարհից գնանք
Չտպագրելով լուսեղեն մի էջ:

1996

* * *

Ութսունհինգիս նա ինձ ժպտաց.
- Հույսով մնա, - ասաց, - դեռ կաց,
Դեռ նոր պիտի երջանկացնեմ,
Գոց դռներս քո դեմ միշտ բաց:

1997

Թումանյանի քառյակները

Ամեն քառյակում հանճարի կայծ կա,
Ամեն առակում հումորով խայծ կա.
Ու ծառացում կա ամբարիշտ ոգու,
Իր իսկ աստծու դեմ գանգատ ու հայց կա:

1997

* * *

Կյանքում ունեցա իմ դերը,
Գումարվեց սեփական բեռը,
Շալակած աշխարհով անցա,
Գոհացա՞վ արդյոք իմ Տերը:

1997

* * *

Իմ հայրենիքից ես երբեք, երբեք հեռու չմնացի,
Երբ էլ հեռացա, գործս ավարտած շուտ վերադարձա.

Պաշտամունք չունեմ տուն ու օջախից, ծնողից բացի,
Ցուրտ հեռուներում ես ոչ մրսեցի, ոչ էլ տաքացա:

1997

* * *

Ամեն կորստից սիրտս նեղվում է,
Անկախ ինձանից, քայլս շեղվում է,
Օ՜, կյանք անողոք, ինձ թվում է թե
Անսփոփ մարդը վերջում խեղդվում է:

1997

* * *

Մայրը միշտ էլ մնում է մայր,
Մանուկ լինես, թե հասուն այր,
Նա՝ սպասող վերադարձիդ
Ճամփաներից անհայտ, անծայր:

1997

* * *

Որքան էլ դաժան ճակատագիրը,
Որքան էլ դժվար մարդուս առօրյան,
Բայց էլի կյանքն է հետաքրքիրը.
Ով մարդ արարած, ջերմ փարվիր նրան:

1997

* * *

Հորիզոնում մի նոր աստղ է պեծին տալիս,
Մի Նորածին խրատներ է մեծին տալիս.
Ինչ կբերի վաղվա օրը, չենք իմանում,
Մի մայրիկ է մազը փետում, կոծին տալիս:

1997

* * *

Յար, եկել եմ ծոցիդ համար,
Դեղ եմ բերել խոցիդ համար.
Սիրտս դարձրու վառելափայտ
Էդ թեժացող բոցիդ համար:

1997

* * *

Աստծո աշխարհը, օ՜, գեղեցիկ է,
Երբ կապույտն անամպ ու թափանցիկ է.
Սակայն շատ ափսոս, ափսոս, որ մարդուս
Կյանքն այսքան կարճ է ու վաղանցիկ է:

1997

* * *

Մերթ հյուսիս է փչում քամին
  ու մերթ՝ հարավ
Չհասկացա, որն էր խելքս
  առավ, տարավ.
Տեղում կանգնած պտտվում եմ
  ես հոլի պես.
Օ՜, քամիներ, ցուրտ քամիներ՝
  խենթ, անիրավ:

1997

* * *

Քամուց փքվել է իմ առագաստը,
Սխրանք է տենչում խարխլված լաստը,
Որքան կտևի վերջին զբոսանքն այս՝
Հաշվեկշռում են բաղձանքն ու փաստը:

1997

* * *

Մտքիս հետ ընկած մայթով գնում եմ,
Մտքիս հետ ընկած ներսում փայլում եմ,

Չեմ էլ նկատում, թե ինչպես փոխվում,
Ու ողջ էությամբ, օ՜, այլայլվում եմ:

1997

* * *

Մեկ-մեկ փորձում եմ հայրեններ գրել,
- Տեսնենք կարո՞ղ եմ ինքս ինձ գերել.
Օ՜, չեմ հաջողում, լոկ կարենում եմ
Մեծահոգաբար արարքս ներել:

1997

* * *

Էպիգրամ թող գրեն իրոք մեծերը,
Նրանք են տեսնում բոլոր բծերը.
Նրանցից խորշում են և ճիշտ են անում
Տականքի տեսքով անխիղճ կեղծերը:

1997

* * *

Քառյակը չորս տող է,
Տեղովը դող է.
Ով որ հաջողի -
Նա էլ գրող է:

1997

* * *

Փոքրաչափ են գրածներս,
Փոքր են նաև կերածներս.
Մեծ ուտողն է մեծ-մեծ խոսում,
Լավ է չափենք արածներս:

1997

* * *

Թեպետ աստծուց օծված,
Բոլոր կողմերից խոցված,
Բոլորին պարզված բարի՝
Չվերծանված առեղծված:

1997

* * *

Տիեզերքը իմ գլխում չի տեղավորվում,
Սահմանները տեսնելու չեմ ուղևորվում.
Չեմ հեռանում իմ տնից, իմ հող ու ջրից,
Դրանով եմ անհարկի միշտ մեղավորվում:

1998

* * *

Ժամանակներ են եկել շողոքորթելու,
Մեկը-մեկից գողանալու ու շորթելու.
Օ՜, աչալուրջ եղեք մարդիկ, շրջահայաց,
Դահիճներ կան, որ պատրաստ են մարդ մորթելու:

1998

* * *

Ինչ էլ մտածել,
Սխալ եմ կարծել,
Ճիշտ ճամփեն թողած՝
Շեղ եմ գնացել:

1998

* * *

Ես որքան էլ ծերացել,
Էլ էն նույնն եմ մնացել.
Ընկերներս անհարկի
Շտապել են, գնացել:

1998

* * *

Գնաց, պատմություն դառավ երեկը,
Ընթացքի մեջ է մեր այս ցերեկը.
Երկյուղածությամբ Տիրոջն աղոթենք
Վաղն արև լինի, կանաչի հերկը։

1998

* * *

Դու խորհում ես ամեն պահ,
Խանձարուրից մինչ ի մահ.
Բարի եղիր ու շռայլ,
Ով մարդ, ժլատ ու ագահ։

1998

* * *

Թռչակառու է,
Պղտոր առու է.
Բաց թող, թող գնա,
Սիրտը մռու է։

1998

* * *

Տերյանն ու իր գյուղ Գանձան
Սրբավայրեր մեզ դարձան
Բարի մարդիկ պոետին
Կանգնեցրել են հուշարձան։

1998

* * *

Երդումն ուրացավ,
Անդարձ կուրացավ.
Մեղքն ու հանցանքն իր
Ասես մոռացավ։

1998

* * *

Փոսը պիտի խոր փորեն,
Եվ օրենքներն անօրեն
Լցնեն փոսը ու ծածկեն,
Որ չգործեն կրկնօրեն։

1998

* * *

Ամենքս մի քիչ խախտվել
Կյանքի խութերին բախվել,
Օղակով պարան վզներիս
Եկել, ուզում ենք կախվել։

1998

* * *

Մեծ գողերից թալանվել,
Էլի մենք ենք կալանվել.
Ով ճարպիկ՝ բեռնաթափվել,
Էլի մենք ենք փալանվել։

1998

* * *

Ջանս, քեզ գերելու եմ
Մեր տուն հարս բերելու եմ.
Գժություններ էլ անես,
Տանելու, ներելու եմ։

1998

* * *

Հովհ. Թումանյանին

Քառյակը փոքր է,
Արարողը՝ Մեծ.
Չարենցն այդ Մեծին
Հանճար անվանեց։

1998

* * *

Լուսաստղի աչքը մեր գյուղի վրա,
Օ՜, տեսնես ո՞վ է սիրուհին նրա.
Գնամ, արթնացնեմ, զուգվի-զարդարվի,
Սիրտը կրակվի, հոգին հուրհրա։

1998

* * *

Հիմա կապիկը
Ոչ, մարդ չի ծնում.
Մինչ մարդը՝ կապիկ,
Օ՜, որքան ուզեք։

1998

* * *

Նա կնոջ հետ խիստ բախվել էր,
Ապա կամավոր կախվել էր.
Դեմքը՝ խաղա՜ղ, անվրդով...
Մխիթարվել՝ անկախվել էր։

1998

Գազրիի մեր սեղանատունը

Երկլանջ տանիքի պես էր.
Ամեն ճաշկերույթ ծես էր.
Հիշողություննե՞ր, օ՜, ինչքան ուզեք
Իրիկնահացը՝ մեկ-մեկ համտես էր։

1998

* * *

Որքան պտուղը քաղցր,
Այնքան արժեքը բարձր.
Որքա՞ն է իմ գինը, աշխարհ,
Որ ոչ քաղցր եմ, ոչ բարձր։

1998

* * *

Ոնց են նետվել ասպարեզ
Ճղճիմ սողուն ու խլեզ.
Դիրք ու փառք են վաստակում
Գայլ ու գամփռ՝ արալեզ։

1998

* * *

Տեղում դոփում եմ,
Կամքս կոփում եմ.
Հին-հին մտքերս
Նոր ամփոփում եմ։

1998

* * *

Կոչու՛մ, կոչու՛մ, ճանաչու՛մ,
Որպես փառք ու նվաճում...
Թշվառն այս՝ զուրկ քանքարից,
Լոկ ճառում է ու ճչում։

1998

* * *

Ածան հավը իրավունքով կչկչում,
Նրան տվեք ամենաբարձր կոչում.
Ստերջները ի՞նչ են թողնում աշխարհին,

Իրենցից զատ ոչ ոքի չեն ճանաչում։

1998

* * *

Հոգնել էր կերուխումից,
Վերադասից, կախումից։
Նա իր կյանքին վերջ դրեց,
Փրկվեց դաժան բախումից։

1998

* * *

Նա շնորհալի երաժիշտ էր,
Ինքը իր հետ անբարիշտ էր,
Բայց չիմացվեց, թե նրանցից
Որը սխալ, որը ճիշտ էր։

1998

* * *

Որ պատժեցիր այդպես չարաչար
Ի՞նչ մեղքիս համար, ախր ես անչար...
Օ՜, Տեր իմ, Տեր իմ, շատ ես անհամբեր...
Գեթ դու մնայիր կյանքում անաչառ։

1998

* * *

Կարթս նետեցի գետը,
Գետն էլ ինձ տարավ հետը.
Ինչ էլ մնաց գետի ափին
Հափշտակել էր «առնետը»։

1998

* * *

Օրհնյալ լինեն թող սերերս,

Ներող՝ երկնային Տերերս.
Չծուլացա, ջանք թափեցի,
Որ լավ խաղամ բյուր դերերս։

1998

* * *

Իմ սիրած ճամփան այն քարքարոտն էր,
Ինձ ուղեկցողը՝ սիրո կարոտն էր,
Անձրևող սրտիս տվայտանքներին
Արձագանքողը ամպի որոտն էր։

1998

* * *

Էհ, տնօրեն, տնօրեն,
Շատ ես, շատ ես անօրեն.
Ժառանգաբար է գալիս,
Ուղիղ՝ հորեն ու մորեն։

1998

* * *

Մեծերը նույնպես հող են դառնում,
Նրանք որ գնում, չեն վերադառնում,
Հոգիներն են լոկ մեր էության մեջ,
Բոցավառվելով նորից են հառնում։

1998

* * *

Նա մի չքնաղ աղջնակ էր
Ծիածանվող ուժանակ էր.
Սիրտ է պայթում վերհիշելիս...
Օ՜, այն ուրի՜շ ժամանակ էր։

1998

* * *

Կուրացողը կուրանում է,
Հույս տվողը ուրանում է.
Հիշող, ասող, լսող չկա.
Արարողն էլ մոռանում է։

1998

* * *

Հավը՝ անբասիր իր արդար դերում,
Օրը բոլորեց՝ հավկիթ է բերում.
Փույթ չէ, աղմկոտ իր կչկչոցը
Բարեսրտորեն ներում են, ներում։

1998

* * *

Կին, եկ թոթովեմ բուրող ուսերդ,
Որ ալեկոծվի բոցավառ սերդ,
Ու թե Վերինը խիստ ընդդիմանա,
Պատյան մի դնիր սուրսայր սուսերդ։

1998

* * *

Դժվար գտնում եմ, մինչ հեշտ՝ կորցնում,
Խելքս գլխիցս ո՞նց չեմ թռցնում.
Շատերն են փորձում ինձ մխիթարել,
Կկարողանա՞մ, այդ չեն հարցնում։

1998

* * *

Արդ ամեն ինչից ծանրացած բեկվում,
Փլված, փշրված հողին եմ հակվում.
Ես դուրս եմ գալիս մի անշուք դռնով,
Ու կարոտ դարձած աշխարհից փակվում։

1998

* * *

Աշխարհն ու կյանքը տարբեր բաներ են,
Աշխարհը շռայլ, գունագեղ հովիտ,
Մինչ կյանքը, կյանքը՝ գեհեն անժպիտ...
Աշխարհն ու կյանքը տարբեր բաներ են։

1998

* * *

Այրվում է, հեծում
Ու հեծեծում է.
Պարզվում է, որ նա
Բանաստեղծում է։

1998

* * *

Մարոն իմ կյանքը իմաստավորեց,
Երկունք ու ջանքը իմաստավորեց.
Մարդուն, աշխարհին նվիրաբերած
Սուրբ տառապանքը իմաստավորեց։

1998

* * *

Գժտվել էր մեծերի հետ,
Վատ վարվեցին այս ծերի հետ
Գեհենից ներս տարան-բերին,
Չհաշտվեցին բծերի հետ։

1998

* * *

Ճերմակ, անգիր թուղթ, ինքնահոս գրիչ,
Դուք, որ երբեմնի իմ տարերքն էիք,
Որպես անցած օր դառնում եք անկիրք ...

Խորթանում եմ արդ, մոռացվում քիչ-քիչ:

1998

* * *

Չարենցը Մեծ էր, իրոք վիթխարի,
Որպես լեռները հայոց Պարխարի.
Այդպես են նրանք, օ՜, աստվածատուր
Բոլոր Մեծերն արար աշխարհի:

1998

* * *

Օ՜, կարճ է, կարճ է կյանքն այս աշխարհում,
Կամակոր հարճ է կյանքն այս աշխարհում.
Ինչ փույթ՝ ձևանում, շողոքորթում ենք …
Դժվարահաճ է կյանքն այս աշխարհում:

1998

* * *

Շատ եմ ափսոսում, որ կյանքը գնաց,
Բայց ես չիմացա՝ կյանքը ափսոսե՞ց, որ ես գնացի.
Հարցն այս այդպես էլ ինձ անպարզ մնաց,
Ոչինչ այլևս ինձ չմորմոքեց այդ հարցից բացի:

1998

* * *

Ով մարդ աստծո, թե ավարտված ես,
Ապա գնալու դատապարտված ես:
Ոսկրոտ ճիվաղի հետ մենամարտում,
Կանխավ ընդունիր՝ տարված-պարտված ես:

1998

* * *

Մեր Տերը, որ քեզ կյանք տվեց ու շունչ,

Որ վայելեցիր սիրով անմռունչ,
Ի՞նչ վերադարձրիր, ով մարդ, դու նրան,
Որ քո գործերում մնա աչալուրջ:

1998

* * *

Պարզ, իմաստուն տիրոլետ,
Մարմանդ, մարմանդ խորունկ գետ,
Բազմաբղետ կյանքս արդ
Առել, տանում ես քեզ հետ:

1998

Շտապում եմ

Շտապում եմ գիրս տպվի, գիրք դառնա,
Մեկ էլ տեսար՝ հոգիս երկինք համբառնա.
Ցեխ ու փոշում լավ գործերս կկորչեն,
Թեթև հուշը վայ թե շիրմիս ծանրանա:

1998

Հեղինակի մասին

Տիրան Մարությանը մասնագիտությամբ ճարտարապետ է, Հայաստանի վաստակավոր շինարար (1961), ճարտարապետության դոկտոր: Նա ծնվել է 1911 թ., ներկայումս Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասը կազմող Ղշլաղ գյուղում: Մանուկ տարիներն անց է կացրել Ղարաքիլիսայի և Լոռու որբանոցներում, նախնական կրթությունը ստացել հայրենի գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի շինարարական ինստիտուտի (ներկայումս՝ ճարտարագիտական համալսարան) ճարտարապետության բաժինը: 1935-37 թթ. ունկնդրել է Հայաստանի գրողների միությանն առընթեր Գրական համալսարանի դասընթացը, ուր այդ ժամանակ դասավանդում էին հայ մշակույթի մեծանուն գործիչներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Եղիշե Չարենցը, Արսեն Տերտերյանը, Խաչատուր Կանայանը, Խորեն Սարգսյանը և ուրիշներ: Նա Հայրենական մեծ պատերազմի մասնակից է:

Տ. Մարությանը 1933-35 թթ. աշխատել է ակադեմիկոս Ա. Թամանյանի և ճարտարապետ Գ. Քոչարի արվեստանոցներում, 1935-39 թթ.՝ Հայաստանի հողժողկոմատի հատակագծային բյուրոյում, իսկ 1939-91 թթ.՝ «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտում (1952 թ.-ից՝ գլխավոր ճարտարապետ): Այդ տարիների ընթացքում նա կազմել է Հայաստանի մեծ ու փոքր հիդրոկայանների մասնաշենքերի ճարտարապետական նախագծերը, այդ թվում՝ Սևանի ստորերկրյա ՀԷԿ-ի վերերկրյա շինությունները, Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնիի, Երևանի (նոր), Շամբի, Սպանդարյանի, Տաթևի (վերջինս՝ հեղինակային խմբի կազմում) հիդրոհանգույցների մասնաշենքերն ու կառուցվածքները: Նրա նախագծերով նման շինություններ են կառուցվել նաև Հյուսիսային Օսիայում (Զարամագի I, II), Կաբարդինո-Բալկարիայում, Գանայում:

Տ. Մարությանը կազմել է Արարատյան դաշտի ավելի քան մեկ տասնյակ գյուղերի վերակառուցման հատակագծերը, նրա կազմած գլխավոր հատակագծերով են ստեղծվել մոտ 15 նոր բնակավայրեր, այդ թվում Լուսավանը (ներկայումս՝ Չարենցավան), Աջափնյա Սիսանը, Լուսակերտը, Արզնին (այժմ՝ Առողջարան թիվ 1), Ջերմուկի Կեչուտ բանավանը և այլն: Տ. Մարությանի նախագծերով են իրականացվել 250-ից ավելի կառույցներ, այդ թվում՝ մշակույթի տներ ու ակումբներ, հիվանդանոցներ ու բնակելի շենքեր, փողոցներ, հրապարակներ, աղբյուր-հուշարձաններ: Այս կարգի կառույցներից հիշարժան են Հրազդանի մշակույթի տունը, Կապանի երաժշտական ուսումնարանը, Երևանի կոոպերատիվ տեխնիկումի շենքը (ներկայումս՝ Ճարտարագիտական համալսարանի մասնաշենքերից), Մոսկովյան փողոցի թիվ 8, Ազատության պողոտայի թիվ 1-12 բնակելի շենքերի համալիրը, Ղշլաղ և Օշական գյուղերի աղբյուր-հուշարձանները և այլն:

1959 թ. ի վեր, ամենօրյա աշխատանքային օրվան զուգընթաց Տ. Մարությանը զբաղվել է հայ ճարտարապետության պատմության և տեսության հարցերով, հեղինակել հինգ ծավալուն, բովանդակալից, պրոբլեմատիկ հարցեր ընդգրկող մենագրությունների՝ «Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ» (1963), «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (1972), «Ավանի տաճարը» (1976), «Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք» (1978), «Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анийской Богоматери…» (1989), շուրջ երկու տասնյակ հոդվածների: Վերջին մենագրությունը Տ. Մարությանին դարձրել է Ճարտարապետության համաշխարհային բիենալեի դափնեկիր (1991, Սոֆիա):

Տ. Մարությանը բանաստեղծություններ է գրում դպրոցական տարիներից ի վեր: Նրա գրվածքների վերաբերյալ դրականորեն են արտահայտվել Ավետիք Իսահակյանը, Վահագն Դավթյանը, Մարո Մարգարյանը: Սակայն առ այսօր նա տպագրել է ընդամենը 18 փոքրածավալ բանաստեղծություններ, որոնցից ինը «Կամուրջներ» ալմանախում (1989, էջ 2-4), ինը՝ «Գարուն» հանդեսում (1997, թիվ 2, էջ 54-55): Ներկայացվող գրքում տեղ են գտել հեղինակի տարբեր տարիներին գրված բանաստեղծությունների մեկ քառորդը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարո Մարգարյան.
Հաճելի հանդիպում սիրելի ճարտարապետ Տիրան Մարությանի
և իր սրբազան գործերի հետ

Խոհերս բոլոր ու երազներս

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հարատևում
Հուշիկ
Վայրէջք
Ձյունով էր ծածկվել շիրիմն Արայի
Երևան
Արարատի ստորոտով
Արաքսը
Ձքնաղ Անահիտ, հզոր Արամազդ
Մեր իսկ խելքից
Փուշ է բուսնում ու տատասկ
Ծիրանի ծառ
Հավիտենից հավիտյան
Մեր երազը երկարում է
Կարոտ
Երկիր
Մեր աղբյուրները հոսել, գնացել
Երկնային Տերը
Մայր Արաքսից մինչև Կուր
Գողգոթա
Սարդարապատում
Մի գոռ խորշակ է անցել այս հողով
Դարը եկել, անց է կենում
Հայը խաչվեց Գողգոթայում
Գագաթներն այս երկնասույզ
Ազնվազարմ պարագիծ
Սիրեցեք
Օ՛, հապաղում է
Տեր-Զոր

Հանուն
Էլ չեմ հավատում հարատևմանդ
Արտաշեսյան
Գալարվում են հորդ ջրերը Արաքսի
Խոժոռվել է Մեծ Մասիսը
Մոլորվեց, մնաց
Անթագավոր, անտեր երկիր, անտեր հող
20-րդ դարը
Երկիր
Էլ չեմ հավատում
Մեզ սպանում էին անարգ թուրքերը
Արծիվներն իրենց բարձրերից չիջան
Մարութա սարի ամպերը
Հայը Հայկով է Հայ հորջորջվել
Արարատին եմ նայում
Ճամփի վրա է մեր քարավանը
Տրոփող սիրտ է
Ու՞ր ես, ու՞ր ես, Տիգրան Մեծ
Պապեր
Ինչպես, ինչպես մենք խաբվեցինք
Հայի հող
Էլ ո՞նց հավատամ
Նախատինք
Չունենք
Մեր հայրենիքը թուրքին թողեցին
Հույս
Մասիսները
Տոկա
Պահը
Իմ հայրենիքում տերևաթափ է
Թուրքը
Ձայն որոտի
Կարմիր Վարդան
Ճանապարհներ
Երկրաշարժ
«Քաջ Քար» վայրերում մենք վանքեր ունենք
Մնացորդը
Եղեռն

Աշխարհը սիրո պակաս ունի
Ամառը կիսվել է ու շոգեր են դեռ

ՄԵՐՈՆՔ

Մերոնցից ոչ ոք չծերացավ
Հիշու՞մ ես, մերիկ
Աչքերիս առաջ դու ծերանում ես
Որտե՞ղ ես, ազնիվ հոգի
Մանկություն
Տոտիկ-տոտիկ
Մեծանում է օր-օրին
Օ՜, մայր
Մայր իմ, սպասիր
Իմ հայրենիքում, ասում են, հիմա
Որդիս ձեռքերը մեկնում է լուսնին
Մի փոքրիկ, փոքրիկ դստրիկ ունեմ ես
Դեմքիդ հազար կնճիռ
Կտրվեց մորս թզբեհի թելը
Մի մայր ունեմ այն հեռվում
Մերիկ, արդյոք որդուդ գտա՞ր
«Որսկան ախպեր»
Մայրիկ
Լույս երազում մորս տեսա
Մայրս շտապում, գնալ էր ուզում
Երազիս մեջ մորս տեսա
Ես էլ եմ գալու
Մայրս եկել, կանգնել շեմին
Բավական տատին
Տեսիլք
Մայրս
Որբեր
Հայր իմ, չիմացանք
Է՜խ, մայրիկ, մայրիկ
Դեմքդ, մայրիկ, ծաղկատար էր
Խոջեվանքում
Երեկոն ծովափում
Հուշ

Որբանոցում
Բոլոր լավերս վերադարձել
Իմ երազներում՝ դուք բոլորդ կաք
Գյուղից-քաղաք
Հասկահավաք էր նոր հնձած արտում
Հորթը
Վարդուշին
Աղավնիները
Հորս շիրիմը Խոջեվանքում
Հին Խոջեվանքում, սալաքարի տակ
Կորած այրուձին
Թողի գյուղում
Բարակել է
Այս կողմերում ոչ ոք չունեմ
Կարոյին
Կյանքումս, օ՜, մերթ քնով եմ անցել
Գիքոր
Ապաքինում եք Դուք հիվանդներին
Երազիս մայրս վերադարձել էր
Խնայիր ինձ
Մերիկ
Հրաշք
Շիվերը
Մենք տուն չհասանք
Ինձ համար
Հարութին
Մածունը
Զարուհուն
Մայրիկս քնեց ու քնած մնաց

ՄԵՐԵՐ, ՄԵՐԵՐ

Ահա քնքշորեն անձրև է մաղում
Երբ ամեն անգամ բաժակ եմ առնում, որ ըմպեմ գինի
Բարի աչքով նայիր դու ինձ
Ցնորք
Մի պայծառ ծիծաղ
Մեկ անգամ ես ինձ ժպտացել

Ու էլ չի գալու
Ում հետ էլ խոսում
Վիշտ ես պատճառել իմ վաղ օրերում
Թե որ սիրում ես
Օ՜, ների՜ր, ների՜ր
Սուվենիր
Ինչու՞ չես գալիս
Եվ այսքան ուշ
Աղո՞թք ասում, թե՞ օրոր
Ու չի հեռանում
Գերի աչերի
Կենացդ
Երգի մի էջ
Սպասում
Տես, դուռս բաց եմ թողե
Ես դեռ սիրում ու սիրահարվում եմ
Չեմ գտնում
Գուցե թե գա՞ս
Վաղուց անցած, արդ հուշ դարձած Անուններ
Դավ
Կորցրի ես քեզ
Օ՜, երբեք, ես երբեք
Մեր ճամփաները, օ՜, խաչվում էին
Մի թռչնակ
Չունեցանք
Այն հեռուներում
Չկա
Էստոնուհին
Անթեղ
Անիծյալ լինես, սատանայի գիրկ
Դե հենց այնպես
Լոր էր
Շահու՞մ էի
Լույսի պես մեկը
Անիծվի թող
Դու գնացել ես հեռու, շա՜տ հեռու
Արդ լավ չեմ հիշում՝ իրակա՞ն էիր
Եվա

Ակնածանքով
Դու իմ ցնորքն էիր
Շամիրամը
Կերանք
Պահեր երջանիկ հանդիպումների
Մալու
Դու այնտե՛ղ
Արևածագ է, գարնան առավոտ
Ադաթները
Մարոյին
Կարոտ
Ավա՛ղ
Դու չիմացար, ոչ, չիմացար
Անցանք, գնացինք
Չգտա
Ափսոսանքով եմ արդ մտաբերում
Խոստովանում եմ, մեղավոր էի
Դեմ-դիմաց
Պատրանք
Քեզ ունեի, կորցրի
Եկ մենք էսօր սեր վայելենք
Քո գահն իմ հոգում թափուր էլ մնաց
Մայրեր
Կա՞ս
Իմ բոլոր սերեր, դուք արդեն չկաք
Ես սպասում եմ քո այն նամակին
Գեղեցիկ կին էր
Մենք գտել էինք իրար
Երբ վերջին անգամ մենք հայացքներով
Այսքան մոտ ու մերձ ե՞րբ էինք եղել
Օ՛, նրանք հիմա չկան
Օ՛, անհնար է չհափշտակվել
Սիրո կարոտ կա իմ անխոնջ սրտում
Մեր կանգառում սպասում էիր
Ես համառեցի և արժանացա
Մի էգ, մի արու
Այդ աչք ու ունքիդ լույս դեմքիդ վայել
Դու կաս

Փոստարկղում իմ նամակն է
Սերերիս մեջ ջահելն էիր

ԵՄ ՈՒ ԵՄ

Ես՝ եռաժանիք արվեստագետս
Լուռ ծվարեց թևը սրտիս
Ես լավ եմ հիշում խոսքերդ, նանի
Ասի՝ գետակ, աղմկում ես
Աչքս Մասիս սարին առավ
Ինչպես վաղ գարնան ջրերը ելման
Ծիվ-ծիվ
Արձագանքվում է իմ սրտում անվերջ
Տխուր երգ
Առավոտյան ելնում եմ վաղ
Դե շատ չունեի
Մանուկ միամիտ
Դու պիտի գայիր, այդ ինչու՞ չեկար
Երբ հասակ առնեք հպարտ, կորովի
Օրեր եկան
Շատ տագնապներ եմ կյանքում ունեցել
Հունաստանում
Ավարտին է մոտեցել
Թխպոտ, տխուր եղանակ
Ես քեզնից մի քիչ երկար ապրեցի
Սիրահարվել եմ պայծառ լուսաստղին
Լուսաստղի հետ արթնանում եմ
Անձրևոտ է առավոտս
Քեզ չեմ ճանաչում, ով հարազատս
Հանաք
Ուսերիս հաճելի մի բեռ
Անվրդով քուն եմ մտնում
Ապավինած նեղ կածանին
Դիմանում եմ
Հանկա՞րծ
Երեզումս առյուծ տեսա
Ծերուկ է անցնում փայտին հենվելով
Տեր

Ինչ որ տվել ես մի օր
Լուռ նստել ու մտածում ես
Մշակ
Կրակները
Յոթանասունը անցել եմ արդեն
Իմ օրորոցը
Ամեն օր
Ես այուն եղա շենքում
Մերթ խառնում եմ, չեմ տարբերում
Ճոճանակը
Մանուշակագույն, օ՜, վարդագույն էր աշխարհն ինձ համար
Ուղտը
Որոնումների մեջ եմ շարունակ
Գալարվում են հորդ ջրերը Արաքսի
Կենաց ծառ
Ափս մեկնել եմ, նայիր, բախտաբաց
Բախտ
Չիմացա, ոչ, չիմացա
Կյանքս ոտքի վրա անցավ
Ափսոսանք
Իմ տարիքում
Սպասում
Ունենայի
Կանթեղս վառեմ
Երկյուղ
Գավաթ
Քանի, քանի պատնեշներ
Սրտիս պես
Ինքս ինձ հետ
Իմ կարուսելը
Անձև, անմիտ խզբզոցով
Ցուցարարներ
Պատանդ
Ո՞նց եմ մոռանում, որ անց եմ կացել
Զանգակները
Շնորհ անեիր, վեհափառ Բարձրյալ
Իմ աստղը
Երկար գիշերներ

Դեռ ինչքա՜ն էլ սպասեմ
Առյուծ
Ինձ չեն ատում
Արձագանքվում է կանչս մանկական
Ինչը ինչոց է
Դժվարությամբ եմ արդ զսպում ճիչս
Կառապան, իմ կառապան
Տեր
Ոչ այնպես
Երանի թե
Ինչ որ մի տեղ
Աստծո հետ հաճախ կռիվս եմ տալիս
Ուղիղ ավելի
Առոք-փառոք ուղեկցում եմ
Իմ գնալով աշխարհին
Ես չեմ ավարտել իմ առևտուրը
Ափսո՜ս
Սպիացել էր սրտիս հին վերքը
Կայծեր կային սրտիս տակ
Կյանքը ինձ չի ժպտացել
Հաշիվ ունեմ պարզելու
Պատառիկներ են, օ՜, մի մեծ երգի
Ձմեռնամուտ
Օ՜, վարորդ
Սահմանի վրա
Թարթիչներս կես խուփ, կես բաց
Քուն
Իմ խաչը
Վիրահատման սեղանի՞ն
Ջրին տվի
Գտնել է ուզում
Նոր տարի
Գրողի ծոցը
Օ՜, փրկարար ձեռք
Մեծ բանաստեղծին
Թող լույս լինի
Սաղմոս
Մատչելի չեղավ ինձ Պառնասը

Գլուխգործոցն իմ ես ավարտել եմ
Ամեն անգամ
Ինձ մի այլ կարծիք այլևս պետք չէ
Ես շա՜տ նայեցի անցող-դարձողին
Ես՝ երամի ծեր թռչուն
Մտքիս հետ ընկած մայթով քայլում եմ
Քաջ եղա իմ գործերում
Հանդիպում էինք մենք այս փողոցում
Հանձնվել եմ ճանապարհիս
Սիրտս՝ կանթեղ ծխացող
Թե աստվածատուր մի բան կա իմ մեջ
Իմ աստղն ինձ համար
Հոգիս հուշերի գիրք է
Այնպես եմ ուզում մի լավ բան գրել
Հիասթափվում եմ այսպես երբեմն
Արդ ես ինձ հետ եմ, իմ վաղ անցյալի ու այսօրվա հետ
Բարձրյալի հետ են արդեն խոհերս
Մի օր կիմացվի իմ հեռանալը
Իմ գարունը յասամանով է գալիս
Խեղճուկրակ կյանք ապրեցինք
Ես հասու չեղա, աշխարհ, գործերիդ
Աչքերս փակում, շտապ քնում եմ
Դու իմ կյանքում
Օ՜, երջանկության պահեր երբեմնի
Որպես թափանիվ
Ափսո՜ս
Աղոթում է մեկն ինձ համար
Ասելիքներս կիսատ մնացին
Մի նոր անգիր տետր եմ բացել
Որքան էլ ապրես, օ՜, միևնույն է
Գրեցի, գրեցի, գրեցի
Մի ճամփա է մնացել
Եկել, հասել եմ ես իմ սահմանին
Երբ մենակ եմ մնում տանը
Սիրո աստվածը
Ավարտ
Ոտքի վրա եմ, գնում եմ, գալիս
Չհանդգնեցի ասպարեզ նետվել

Դարը և ես
Ինձ հետ
Ինձ ներիր, ներիր
Աշխատեցի, աշխատեցի
Երգեր, երգեր հորինեցի
Տրիոլետ
Շտապիր
Դե գրում եմ
Թոշակառու
Չիմացա
Մոռացում
Հանրակառքը տեղից պոկվեց
Ոտքի վրա
Կիսով չափ
Անշուք մի քար
Ինձ մատչելի չէ այլևս ծովը
Տանուլ եմ տվել հրաշալիքներս
Սիրտս չի բացվում
Հակում
Տեր
Իմ թվարկությունը
Գրի առա
Խաղաղ, հաշտ էի առօրյայիս հետ
Ձոն արեգակին
Կյանքում հաճախ սայթաքել եմ
Վատ չէ լինել միակամ
Ես մոռացել եմ, թե այս երկտողը
Գիշերային արթնությունս
Էսօր մենակ եմ
Աննինջ, անսփոփ
Կորուստ
Ես վատ տեսնում եմ ու վատ էլ լսում
Ձայրացած եմ աշխարհի ու աստծո դեմ
Տեր, աչքերիս մի քիչ լույս թող
Փշատ
Պրծա
Վրաերթ
Հիմա մու՞թ է դրսում

Ինչ լավ բան որ կա իմ ունեցածում
Բյուր աղոթքներս երկինք առաքված
Իմ աղոթքները աղերսանքներ չեն
Պակասում է լույսն աչքիս
Եղնիկի պես աղջիկ էիր
Ամբողջովին մի՛ կուրացրու
Հենց որ տեղս նեղվում
Մոռացում
Բանավոր եմ հորինում
Կարոտներ
Պարտապան եմ այժմ ես
Տրամաբանելու դեռ ուժ կա մեջս

ՕՐԵՐ, ՏԱՐԻՆԵՐ

Օրեր-տարիներ, օրեր-տարիներ
Ամպերը մթնում են
Իջավ գիշերս
Անցան
Նոր տարվա գիշեր
Առավոտ
Ով կյանք, դու խոր ու խրթին
Մտքի թևով
Շղթա
Բռնադատվածներին
Ծիտիկ
Մայրենին
Հարևանս քեֆի մեջ է
Շուտով տարին կվերջանա
թվին
Մոլորակը մոլորվել է
Թուրշին
տարին մեկ
Աստված, դու երկրից շատ ես հեռացել
Հայեր
Հանկարծ
«Այստեղով անցան թուրքերը»
Քամին

Դաս
Չիմացան
Շողեր
Անսպասելին
Թուրքերը
Լաց ու ծիծաղ
Ճակատագիր
Տերը մեր հին
Վետերաններին
Ունեցել ենք
Անտառում
Օ՜, գեղեցկություն, դու անսահման ես
Պատանդը
Կածաններ լանջն ի վեր ելնող
Կանչում են
Մի պոետի
Դար
Սև ու սպիտակ
Նժար
Ակնթարթ
Հոգս
Հյուսիսից է փչում քամին
Շատ են, շատ են մեր հոգսերը
Օ՜
ԽՍՀՄ
Մի ցեղից են
Երամ
Շոպեն
Ռիչարդ Երրորդ
Գումարվում են
Մեծ Մասիս
Ձմեռ
Մեր լեզուն
Բուն
Պարապ ջրերը
Սիրամարգ
Կամակորը
Լուսինը հաճախ դիմակը փոխում

Ակնթարթներ
Բարձրյալը
Կեղծը
Իմ մորեղբայր Մինասին
Չէինք իմանում
Բարի եղիր
Շիրմաքարեր
Կյանքի հետ եղիր
Խառնակ օրեր են
Աղոթք
Շունը
Խառն են
Կարուսել
Լուսին
Մեր մորթված կյանքում
Գետաշենում
Մեզ խաչելու են նորից
Օ՜, կյանք, օ՜, կյանք գեղեցիկ
Տարին եկել է իրենը տանի
Դեռ աչք չթարթած
Մեր դեմը սար է
Ուժի երկիր է
Նեռը կործանվեց
Հրաշք
Ու մոռացվում են
Մեր դեմ ձմեռ է
Չքնեց
Լավ էր՝ եկանք
Քուչակ
Քոչարը
Շուրջն իր առանցքի
Մի կերպ
Շփոթմունք
Դատ
Պետք չէ ընդվզել, երկրից հեռանալ
Հայերը
Երանի
Անձեռակերտ տրիոլետ

Ներող եղիր
Լուռ տողերի ստվերում
Դրսում քամի է
Մեկ էլ
Վեճ
Կյանք
Գիշերը տեղի է տալիս
Աչալուրջ եղիր, Տերը իմ, ավելի
Ճակատագիր է լույս աշխարհ գալը
Անտեղյակ
Միակը
Միերը
Սևահող
Առանց այն էլ
Մարդկային վիշտը դժվար տանելի
Երկու աշխարհ
Յասամանը
Մարդ ուշանալը ուշ է ըմբռնում
Մի անգամ է աշխարհ գալիս
Մերթ հեռանում է, մերթ՝ խիստ մոտենում
Դժվար է
Ճամփի վերջում, օ՜, կանաչ լույս
Հոգեգալուստ
Նրանք ինձնից սպասելիքներ ունեն
Մենք ի ծնե հարմարվում ենք բնությանը
Ծնունդ ու մահ
Հոգին թևում է, օ՜, հավերժորեն
Ի՞նչ է պատահել քեզ հետ
Ձայնը
Շոգ հուլիսի զով-հաճելի երեկոն
Շուռ է եկել
Շրջանցել
Շատ ենք վշտանում, երբ հեռացողը
Դու գնացիր ու մնացիր
XX դարը
Օ՜, հալալ լինի խմածդ գինին
Պակաս
Ուղևորներ կանգառում չկան

Քունը
Երբ դիմացից է բախտը քեզ գալիս
Կյանքից գնալս, ավա՜ղ, կիմանան
Կամակորները
Չհանդգնեցի իմ ամբողջ կյանքում
Ամեն մեկն իր աստեղային ժամն ունի
Ես դարի զավակն էի
Տեր
Երգ
Օ՜, մի քիչ էլ, օ՜, մի քիչ էլ, երկնավոր
Չյունել է, ձյունել է սարը
Արդարապես գնահատել
Արդարամիտ են Մեծերը
Ինչու ես այդտեղ մնում
Էս ապրածս աշխարհը
Ձմեռը, օ՜, չի նահանջում
Դարը
Ով արարող մարդ, քո գործին նայիր
Մի երկնչիր, մի դողա
Տարիներ ի վեր
Օ՜, սխալներս, բյուր սխալներս
Տարերքը, այո, ամենազոր է
Բարի վերադարձ ես քեզ մաղթեցի
Տես, թե որքան եմ ինքնավստահ
Շատ-շատերին չեմ հանդիպում
Անունս պատին վիմագրեցին
Տեսնես ինձ ու՞մ հետ կհամեմատեն
Աշխարհից գնալը տխուր է շատ
Հուշերիս ձգվող արահետներում
Բոլոր աստղերը արևներ են վառ
Տեր մեր
Ես նախազգում եմ մեր գալիք օրը
Ոտքից-ոտք ես փոխանցում
Հաշտ էի
Օ՜, երջանիկ, անմոռաց պահեր
Ծառ ծիրանի
Ինչ էլ որ հղկես
Լավը

Օ՜, շքեղ հարճ էր
Չճանաչեցին
Կինը
Գիշերները լռության մեջ
Մեր երջանկությանը Տերը սահման դրեց
Հույս՝ արարիչ ես
Առևտուր
Գեղեցիկը
Կյանքում ոչինչ չի կրկնվում
Մարդ, քաշվիր անկյուն
Վայելիր, վայելիր քանի ջահել ես
Տատրակներս
Տրիոլետին
Օ՜, ինչեր անցան մարդկության գլխով
Կոլեգաներս
Գնում եմ
Պոետները
Պար է բռնել աշնան քամին
Ամպ-ամպոտել է երկնակամարը
Տիգրանին
Տերը ինձ երկար մի կյանք պարգևեց
Վերջ
Մի ծուլանա, գրի առ
Մենք այրվում են ու սպառվում
Ես ափսոսում եմ, շատ եմ ափսոսում
«Մնաք բարով»-ն ասացին
Հայն անդորր է միշտ տենչացել
Խոստովանություն
Արդյոք պիտի հաջողե՞մ
Ճի՞շտ էր, արդյոք, թե սխալ
Ամպն արևին մեզնից փակել
Սուսանին
Փոստարկղին մոտեցիր

ՁՈՆԵՐ

Սիրի-սիրի
Մեծ Վարպետ

Վարպետը քնեց
Արձանի առջև
Վարպետը խոսք չբացեց
Նորից ու նորից կարդում եմ Տերյան
Այստեղ, պուրակի ստվերում խաղաղ
Փոքրատառով ես գրել
Օ՜, նույնիսկ քեզ, Վահան Տերյան
Նստել ու Պարույր Սևակ եմ կարդում
Հեռավոր ափը քեզ գրավել էր
Ափսոս
Երկար սպասեց մայրը իր որդուն
Քո շիրմահողին կակաչներ բուսան
Մի տնակ կա Լուսակերտում
Արծվաքանդակ
Այն նեղ օրերում
Դու ջահել էիր, նույնիսկ պատանի
Հող դարձար դու էլ
Այսօր նշում են իննսուն տարիդ
Քո «Կարուսելը» տխուր է իրոք
Վանդալները մեր դարի
Իմ Վիրգիլիոսը, օ՜, դու եղիր
Քո բանտախցում դու մենակ էիր
Այստեղ, ողորկ պատվանդանին մի օր
Տերը չլսեց քո «Տեր ողորմյան»
Երբ «Կռունկ» ես երգում, Գոհար
Ձորամիջով մի նեղ կածան
Ես քո Աջը համբուրեցի
Երկնային ցող էր
[Կարինեին նվիրված բան.]
Երախտապարտ եմ Գևորգ Քոչարին
Ուսուցչապետ, աշակերտիդ
Կարոտներով է լցված
Իմ գրածներից Մարոն կարդացել
Օգնիր ինձ, Մարո. Մարո, օգնիր ինձ
Մարոն երկտող է տպել «Գարուն»-ում
Ճանապարհդ ընդհատվեց
Վերջին անգամն էր, պարեց
Գևորգ Էմինը

Հայ բանաստեղծ
Կանչ ափսոսանքի
Ցնծա, թոռնիկս, ցնծա
Ազնվաբարո ով բարերարս
Օ՜, իմ բարերար, Դուք Ձեր այդ դերում

ՌԱԶՄԻ ՕՐԵՐ

Իմ զինվորներին
Արև, դու վա՞ղն ես գուշակում արդյոք
Ճամփաները տանում են մեզ
Հավատ
Ով լույսի ակունք
Սուխումում
Վաղ առավոտյան
Հույս
Հանգստացիր փոթորիկ
Ով առագաստ
Կերչի ճանապարհին
Ինչու՞ ճայերը փոթորկի ժամին
Գրոհ
Ա՜խ, որքա՜ն, որքան լացող մայրեր կան
Ճամփի վրա
Ձայն տվեց, գնաց
Մայրեր
Աղբյուր-հուշարձան
Անկարելին
Հիսունամյակդ ահա տոնում եմ
Սպասել եմ
Սամտրեդիում
Մայր չմնաց
Գերի չընկա
Ասում են «Ոչ ոք չէր ուզում մեռնել»
Ո՞նց կարող է անհայտ լինել
Տղերք

ԾՈՎԻ ՀԵՏ

Ծովը խոցվել է
Որպես հովազը
Երեկոն Գագրիում
Ճայերը
Հրաժեշտ
Պահը
Հուզված էին
Կարոտը
Փոթորիկ էր ու անձրև էր տեղատարափ
Իր տարերքում է ծովը կապուտակ
Բարի լույս
Դու չես կարող հետ բերել, ծով
Սահմանագիծ
Օ՜, շուտով
Ճեմող կարապ է
Ու չի ննջում

ԵՍ ՈՒ ԻՄ ՄՈՒՍԱՆ

Սիրունատաս
Խռովկան
Հանգստի է մեկնել մուսաս
Ծերացանք
Քամին
Հակառակում է երբեմն մուսաս
Քեզ ազատ եմ արձակում
Ինձ վաղուց մոռացած մուսաս
Գլուխը խառն էր
Մուսաս
Կես խոսքից
Մուսաս հիշել է
Անպատեհ
Սիրահարվել եմ ես իմ մուսային
Խանդոտ մուսաս
Ջահել օրերի խենթ-խելառ մուսաս
Մուսաս ծլկել է տանից
Կամակորը
Անժամանակ ես եկել

Երկվորյակներ ենք իմ մուսան ու ես
Մի վերջ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Հեղինակի մասին